

ԿՈՄԻՏԱՍ ԴԱՄՎԿՆԵՐ

MICRO-ALFILERAS
THERMOCOATINGS



YEGHISHE CHARENTS MUSEUM
OF LITERATURE AND ART



K O M I T A S

L E T T E R S

Yerevan

Publishing House of Museum of Literature and Art
2007

ԵՂԻՃԵ ԶԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱԼԳԱՐԱՆ

ԿՈՄԻՏԱՍԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ

Երկրորդ, լրացված դպրագրություն

ԽԲՀ 4 ՄԱ

ԵՐԵՎԱՆ 2007
Գրականության և արվեստի թանգարանի
հրատարակչություն
2007

ՀՏԴ 891.981-6

ԳՄԴ 843-4

Կ-685

Տեքստը կազմեց ՑՈՂԻԿ ԲԵՔԱՐՅԱՆ
Խմբագիր՝ ՕՖԵԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կոմիտաս,

Նամակներ.- Եր.: ԳԱԹ հրատ., 2007թ., 272 էջ:

Կոմիտասի գրած նամակների սույն ժողովածուն ԳԱԹ-ի 2000թ. փաղագուշ հագործի ճշգրիված և լրացված վերահրադարակությունն է: Հագործում փեղ են գիրել նոր նամակներ, ընդարձակված են ծանոթագրությունները:

Կ 4702080101
841 (01) 2007 թ.

ԳՄԴ 843-4

ISBN 978-99930-60-79-6

ՎԵՐԱՀՐԱԴԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՐԱԴԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱ

© ԳԱԹ հրատ., 2007

ԳՐՔԻ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՎԱՆԱՎՈՐԵԼ Է

ՄՈՆՏԵՎԱՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՏՈՎՈՐԻԶ

ԵԿԵՂԵՑՈՒ «ԿՈՍԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ:

THE REPRINTING OF THIS VOLUME HAS
BEEN SPONSORED BY THE KOMITAS CHOIR
OF ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՀՏԴ 891.981-6

ԳՄԴ 843-4

Կ-685

Տեքստը կազմեց ՅՈՂԻԿ ԲԵՔԱՐՅԱՆ
Խմբագիր՝ ՕՖԵԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կոմիտաս,

Նամակներ.- Եր.: ԳԱԹ հրատ., 2007թ., 272 էջ:

Կոմիտասի գրած նամակների սույն ժողովածուն ԳԱԹ-ի
2000թ. փագրած հագործի ճշգրիված և լրացված վերահրադարա-
կությունն է: Հագործում դեղ են գրել նոր նամակներ, ընդարձակված
են ծանոթագրությունները:

Կ 4702080101
841 (01) 2007 թ.

ԳՄԴ 843-4

ISBN 978-99930-60-79-6

ԱՅԾՎԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՅԱՆԱԿԱՆ ՎՐԱՀԱՅՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՐԱՐ

© ԳԱԹ հրատ., 2007

ԳՐԱԿԱՐԱՎԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎԱՆԱՎՈՐԵԼ Է

ՄՈՆՏԵՎԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՏՈՎՈՐԻԶ

ԵԿԵՂԵՑՈՒ «ԿՈՍԻՏԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄՔԸ:

THE REPRINTING OF THIS VOLUME HAS
BEEN SPONSORED BY THE KOMITAS CHOIR
OF ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ПОДГОТОВКА К ПОСЛЕДНЕМ ИГРАМ

САУНДСКАРД

САУНДСКАРД - это игра на 2-4 игрока, в которой вы должны

помочь своему персонажу пройти по лабиринту и
заполучить золото. Для этого вам придется

использовать различные способности

и умения для того чтобы избежать

врагов и

заполненных

запахом ядов

и т.д.

Игра

имеет

несколько

уровней

и различные виды

врагов.

Եղիշե Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի բազմահարուստ ֆոնդերում իր ուրույն ու պատվավոր տեղն ունի մեծն կոմիտասի արխիվը։ Այն ընդգրկում է հազարավոր նյութեր, նոտային ձեռագրեր, հոդվածների, ուսումնասիրությունների, բանաստեղծությունների ինքնագրեր, գրած և ստացած նամակներ, գանգզան փաստաթղթեր, համերգային ծրագրեր, ընծայագրերով լուսանկարներ, գրքեր, մամուլ, անձնական իրեր, երաժշտական գործիքներ և այլն, և այլն։

Այս հարուստ ու նվիրական ֆոնդի նյութերի հիման վրա գրվել և գրվում են ուսումնասիրություններ, ատենախոսություններ, իրագործվում են ակադեմիական և գիտամասսայական հրատարակություններ։

2000 թվականին Թանգարանի հրատարակչությամբ առաջին անգամ լույս տեսան մեծ արվեստագետի գրած նամակները առանձին հատորով՝ երախտաշատ բարերար Հարություն Սիմոնյանի հովանավորությամբ։ Գիրքը ջերմորեն ընդունվեց թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի գրասեր և երաժշտասեր հանրության կողմից և սպառվեց «ակնթարթորեն»։ Գրքի վերահրատարակության պահանջը վաղուց էր հասունացել։ Եվ ահա Մոնրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու «Կոմիտաս» երգչախմբի ղեկավար, խմբավար Վարուժան Մարգարյանի նախաձեռնությամբ երգչախմբի անդամների հանգանակած գումարով հնարավոր եղավ յոթ տարի անց իրագործել վերահրատարակությունը։ Այդ առթիվ Թանգարանն իր խորին երախտագիտությունն է հայտնում հեռավոր Կանադայում կոմիտասայան երգը վառ պահող մեր սիրելի հայրենակիցներին...

ԿՈՄԻՏԱՍԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ
Հայ երաժշտության պատմության մեջ մի ամբողջ դարաշրջան է կապված Կոմիտասի անվան հետ։ Հանճարեղ երաժիշտ, երգահան, ազգագրագետ, երաժշտագետ, խմբավար, մանկավարժ, կատարող... Կոմիտաս Վարդապետը անձնվիրաբեր ստանձնեց մի հիրավի տիտանական բեռ՝ հայ բազմադարյան ժողովրդական և եկեղեցական երաժշտության հիմնավոր ուսումնասիրությունը, և տարավ այդ բեռը մինչև վերջ։ Նա պատմական մեծ առաքելություն ուներ՝ ապացուցել աշխարհին, որ հայն ունի ինքնուրույն և ինքնատիպ երաժշտություն։ Նա ազգային երգը քաղեց բուն սկզբնաղբյուրից ամենայն զգուշությամբ, հմտությամբ ու հոգատարությամբ, ըստ ամենայնի մաքրեց օտարամուտ տարրերից ու ազգեցություններից և ի ցույց դրեց հայ մելոսն իր անաղարտ էությամբ։ Դա իսկապես հանճարեղ արվեստագետի բարձր առաքելությունն էր։
Կոմիտասի ստեղծագործական ուղին անվերջ որոնումների և հակասությունների մի երկարածիդ շղթա էր։ Նրա կյանքը զուգադիպեց հայ ժողովրդի ամենասոլքերգական իրադարձություններով լի ժամանակաշրջանին, որի հետևանքով և ցավալիորեն կարճատե եղավ նրա գիտակցական ու ստեղծագործական բեղմնավոր ուղին։ Սակայն այդ կարճատե կյանքը պարունակեց պատմական-մշակութային վիթխարի արժեք։ Թվում է, թե հայ երաժշտական գործիչներից ոչ մեկի մասին այնքան չի գրվել, որքան Կոմիտասի։ Թվում է, թե նրա յուրա-

քանչյուրք քայլը արձանագրված ու մեկնաբանված է: Այսուհանդերձ, նրա ստեղծագործության ու երաժշտական գործունեության որոշ կողմեր տակավին բավարար չափով ուսումնասիրված չեն, և կան շատ չլուսաբանված էջեր:

2000 թվականին Գրականության և արվեստի թանգարանի ջանքերով Կոմիտասի նամակների հրատարակությունը, ըստ Էռլինի, առաջին փորձն էր ընթերցողին ներկայացնելու երգահանի ժառանգության այդ բաժնի քիչ թե շատ ամբողջական պատկերը: Նամակները, ինչպես և Կոմիտասյան յուրաքանչյուր վավերագիրը, խիստ արթեքավոր են և հարուստ տվյալներ են պարունակում թե՛ նրա անձնական և թե՛ ժամանակի մշակութային-հասարակական կյանքի վերաբերյալ: Կոմիտասը իր բուռն գործունեության շնորհիվ նամակագրական գործուն կապի մեջ է եղել ժամանակի հայ մտավորականության ու հոգևորականության մի շարք ներկայացուցիչների հետ: Ցավոք, նրա գրած նամակների մի մասը, ինչպես նաև ստացած բազմաթիվ նամակներ, մեզ չեն հասել:

Նամակագրության մեջ գտնում ենք Կոմիտաս-մարդու և ստեղծագործողի պայծառ նկարագիրը, անկաշկանդ ու հստակորեն հեղած նրա խոհերն ու զգացումները, գեղագիտական ու քաղաքական հայացքները:

Մեծ արվեստագետն ամբողջ էությամբ վերապրել է իր ժամանակաշրջանի ողբերգական իրադարձությունները և ձգտել է կիսել իր մտորումները բարեկամների ու համակիրների հետ: Նամակներում կան շատ մոռայլ երանգներ ու հոռետեսական տրամադրություններ, տիրող մթնոլորտի անաչառ քննադատություն: Բայց այդ նույն նամակներից մեր առջև հառնում է նաև «մեկ այլ» Կոմիտաս՝ իր բացառիկ գրավչությամբ ու համեստությամբ, խորա-

թափանց մտքով, հոգատար, կարեկից վերաբերմունքով և ինքնօրինակ սրամտությամբ: Ուշագրավ են Հովհաննես Թումանյանին և իշխանուհի Մարիամ Թումանյանին հասցեագրված նամակները: Դրանք հատկապես լուսաբանում են «Անուշ» պոեմի հիման վրա օպերա ստեղծելու հանգամանքները: Այս նամակներից տեղեկանում ենք, որ Կոմիտասը ստեղծել է օպերայի երգային հատվածների գգալի մասը: Թե հետագայում ինչ ընթացք է ունեցել այդ աշխատանքը և ինչ ճակատագիր են ունեցել Կոմիտասյան օպերայի բնադրերը, մնում է անհայտ: Նրա Փոնդում պահպանվող մի քանի երգային սեագիր հատվածներից զատ օպերայի ստեղծմանն առնչվող ուրիշ ոչ մի վավերագիր, ցավոք, չկա:

Կոմիտասը սերտ բարեկամական կապի մեջ է եղել նաև Արշակ Չոպանյանի հետ, որին ուղղված նամակները մասնավորապես լուսաբանում են մեծ երգահանի գաղափարական դիրքորոշումներն ու քաղաքական ըմբռնումները: Այստեղ՝ Կոմիտասն անդրադարձել է նաև էջմիածնի միաբանության ներքին կյանքում տիրող միջնորդութիւն, շոշափել է մի շարք կարևոր ազգային, քաղաքական խնդիրներ: Նա իրեն հատուկ պարզությամբ ու անմիջականությամբ է գրել, թե ինչպիսի զգուշությամբ է պետք հայ երաժշտությունը ներկայացնել օտարներին...

Կոմիտասի գերխնդիրներից է եղել նաև ստեղծել մի անաղարտ հայկական Պատարագ և պոլիֆոնիկ սկզբունքների լայն օգտագործմամբ հասնել առավել խոր խմբերգային հնչողության: Նա Պատարագը եռաձայնի վերածելն «անմտութիւն» է համարել և ստեղծել է մի այնպիսի տարբերակ, որը սովորական եկեղեցական կատարման հա-

մար «խիստ բարդ էր»: Նրա ֆոնդում պահպանվող Պատարագի ձեռագրերը երգահանի պոլիֆոնիկ ոճի ձևավորումն ուսումնասիրելու համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Իսկ միակ աղբյուրն այն մասին, որ Կոմիտասը հայկական Պատարագն ստեղծել է «եօթ տեսակ բազմաձայն դաշնակած», Ղեռնդ Տայանին հասցեագրված նամակն է:

Թիֆլիսում և Բելինում ուսումնառության տարիներին ի հայտ բերած կոմիտասյան մեծ աշխատասիրության ու տոկուն կամքի, ստեղծագործական անդուլ որոնումների ու նախասիրությունների պերճախոս վկաներն են հատկապես Կարապետ Կոստանյանին ուղղված նամակները: Իսկ Մատթեոս Իզմիրլյանին և Վահրամ Մանկունուն գրած նամակներում գտնում ենք մի շարք հետաքրքիր և արժեքավոր մտքեր ու դատողություններ ժողովրդական երգերի ոճական անաղարտության պահպանման մասին: Մեծ երգահանն անդրադարձել է նաև ժողովրդական երգերի դասակարգման, հետազոտման ու հրապարակման հարցերին՝ անհրաժեշտ համարելով այդ երգերը հրատարակելուց առաջ ենթարկել գիտական լուրջ քննության և ընտրությունը կատարել մեծագույն գգուշությամբ:

Խազերի ուսումնասիրության գործին Կոմիտասը նվիրեց շուրջ երկու տասնամյակ: Նամակներից տեղեկանում ենք, որ հաջորդաբար անցնելով համապատասխան նյութերի հավաքման, դասակարգման, մշակման փուլերը՝ նա աշխատել է հայկական խազերն էապես լուսաբանող մի բազմահատոր ուսումնասիրության վրա: Հնարավոր է, որ վերին աստիճանի բժախնդիր, խստապահանջ Կոմիտասը մինչև 1915 թվականը շարունակելով եր

խազաբանական հետազոտությունները՝ այդպես էլ չի հասել ցանկալի վերջակետին։ Նրա հիշատակած հատորներից դժբախտաբար ոչ մի հատված անդամ չի պահպանվել. դա, անշուշտ, չափազանց մեծ ու անդառնալի կորուստ է հայերաժշտագիտության համար։ Կոմիտասի Փոնդում պահպանվում են որոշ թվով խազաբանական ձեռագրեր, որոնք, ըստ Ն. Թահմիզյանի, անկախ են վերոհիշյալ հատորներից, և հաճախ՝ նաև իրարից և ունեն հատվածական բնույթ։

Կոմիտասի կյանքում խիստ նշանակալից է եղել Մարգարիտ Բաբայանի դերը։ Երգահանի նամակներն ուղղված երգչուհուն ջերմ սիրո և բարեկամության անկեղծ վկաներ են։ Կոմիտասը զմայլվել է Բաբայանի կատարումներով, խանդավառվել նրա հաջողություններով և իր շահեկան խորհուրդներով ու գովեստներով քաջալերել օտարության մեջ ստեղծագործող երգչուհուն։ Այս նամակներն ամփոփում են թե՛ մտերմիկ զրույցներ ու մանեկական կատակներ և թե՛ լուրջ երաժշտագիտական մտորումներ ու մշակութային կյանքին առնչվող բարդ խնդիրներ։

Մենք ընդամենը կատարեցինք Կոմիտասի նամակների շատ ընդհանուր և հպանցիկ ակնարկ։ Հուսով ենք, որ հետագյում այս վավերագրերը խորապես կքննվեն ու կօգտագործվեն երաժշտագիտական ուսումնասիրություններում։ Հանճարեղ արվեստագետի նամակները չափազանց հետաքրքրում են նաև ընթերցող լայն հանրությանը, ինչի վկայությունն է այդ վավերագրերի այս նոր հրատարակությունը...

Նամակների սույն՝ երկրորդ ժողովածուն ընդգրկում է Կոմիտասի մեզ հայտնի ավելի քան 160 նամակներ՝ համապատասխան ծանոթագրություններով։ Մինչև հատորի առաջին հրատարակությունը նամակների փոքր մասն էր միայն հրապարակվել տարբեր ժամանակներում, մամուլի էջերում կամ այլ հրատարակություններում։ Մեծագույն մասը՝ 2000 թվականին տպագրվել էր առաջին անգամ՝ հիմնականում Գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում պահպանվող բնագրերից։ Մի քանի նամակներ էլ տպագրվել էին Մաշտոցյան Մատենադարանի և Հայաստանի Պատմության պետական կենտրոնական արխիվի ֆոնդերից։

Այս հատորում նամակները վերահրատարակվել են որոշ ճշգրտումներով։ Այստեղ նաև առաջին անգամ լույս են տեսնում երկու նորահայտ նամակներ, որոնք Կոմիտասը Փարիզից հասցեագրել է Կ.Պոլսի իր աշակերտներին։ Բացի այդ, համալրված է Մ. Բաբայանին ուղղված նամակների բաժինը՝ վերջինիս հուշերից քաղված չորս այլ նամակներով (ոչ ամբողջական)։

Նամակները հրատարակված են հեղինակի ուղղագրությամբ, արդի կետադրությամբ։ Որոշ երկձև գրություններ բերված են միօրինակության (օրինակ՝ Տպղիս-Տփխիս, հետաքրքրուում-հետաքրքրուում և այլն)։ Պայմանական եղանակի կ և ժխտականի չ մասնիկները կոմիտասը հաճախ արևելահայերեն նամակներում գրել է բայից անջատ (կը և չը գրությամբ)։ Այդ մասնիկները մենք տպագրել ենք բայերին կից, ինչպես հատուկ է արևելահայերենի քերականությանն ու ուղղագրությանը։

Բնագրերում առկա բացթողումները վերականգնել ենք սուրանկյուն փակագծերի մեջ: Այն բառերից հետո, որոնց վերծանումը քիչ թե շատ կասկածելի է, դրել ենք հարցական նշաններ:

Նամակները դասավորել ենք ըստ հասցեատերերի (ազգանունների այբբենական հաջորդականությամբ): պահպանելով ներքին ժամանակագրական կարգը: Բացիկների ու ծրաբների կնիքներից քաղված կամ նամակների բովանդակությունից մեր վերծանած թվականները դրել ենք սուրանկյուն փակագծերի մեջ, թվագրումները ներկայացրել ենք միասնական սկզբունքով (տարեթիվ, ամսաթիվ, վայր): Հայկական տառերով նշված ամիսները տպագրել ենք՝ վերականգնելով ամսանունները: Այն անթվակիր նամակները, որոնց գրության թվականը չենք կարողացել պարզել, դրել ենք տվյալ շարքի վերջում:

Առաջին տպագրության համեմատ բավական ընդարձակված են ծանոթագրությունները, որոնք նոր փաստերով համալրել է Հ. Բախչինյանը:

Նամակներում հիշատակվող այն անձանց անունները, որոնց ինքնությունը հնարավոր չի եղել ճշտել և ծանոթագրել, նշել ենք միայն անվանացանկում:

801ԻԿ ԲԵՔԱՐՅԱՆ

Առաջին տպագրության համեմատ բավական ընդարձակված են ծանոթագրությունները, որոնք նոր փաստերով համալրել է Հ. Բախչինյանը:

Նամակներում հիշատակվող այն անձանց անունները, որոնց ինքնությունը հնարավոր չի եղել ճշտել և ծանոթագրել, նշել ենք միայն անվանացանկում:

ՍՏԵՓԱՆ ԱԿԱՑԵԱՆԻՆ

1910, 22 դեկտեմբեր, Զմիւռնիա

Ազնուաշուք Ստեփան էֆէնտի > Ակայեան,

Երէկ ստացայ Զեր գիրը, այսօր պատասխանում եմ:

Անմիջապէս սկսայ կազմել միութեան¹ հիմնական կանոնադրութիւնն ու ծրագիրը, որովհետեւ դիւրին գործ չէ, ուստի եւ ափ յափոյ չեմ կարող կազմել, մի քանի օր Զեր համբերութիւնը սնուցէք: Եւ որպէսզի ժամանակ վաստակէք, լաւագոյն է արծարծել ընկերութեանս պէտքը եւ դրամը հայթայթելու միջոցներ որոնել: Շնորհաւորում եմ անուանդ տօնը՝ կե՛ր, ա՛ր եւ ուրա՛խ լեր:

Բարեւէ՛ մեր տղաներուն, որուն հանդիպես օձիքէն բռնէ՛, կեցուր ու հաղորդէ՛ ողջոյն քէրթէնքէլէյի²:

Ես լաւ եմ, բայց գործիս համար այնքան էլ գոհ չեմ՝ Baryton ու Bass ձայներ խիստ նուազ են, եթէ 50-60 հոգինոց խումբ կազմուի՝ մեծ բան է:

Հաղորդելիք բաներ կան, բայց առայժմ լո՛ւռ լերուք:

Բարեւս Հարէնց եւ Աշճեան³ էֆէնտիներին:

Վերջնին գրելիքներ ունեմ, սակայն՝ ընկերութեանս կանոնագիրը լրացնելէն յետոյ. որ համբերեսցէ, իսպանադ կերիցէ⁴: Ողջունիւ՝

Կոմիտաս

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

1

1914, 14 յունիս, Փարիզ¹

Սիրելի աշակերտնե՛րս,

Զէք գիտեր, թէ որքան անհանգստութեան մէջն եմ՝ Զեզ մի դրական բան չը կարենալ գրելուս պատճառաւ:

Բաւական մարդոց հետ տեսնուեցայ. Հազար բերան եւ հազար գաղափար՝ մէկը միւսին չը բռնող՝ սկսած տեսուչներէն մինչեւ վարժապետներն ու խորհրդականները: Մէկ բան միայն հաստատ է, որ *Scola Cantorum*-ը², որի վարիչն է *d'Endy*-ն, միանգամայն անշնորհք եւ այլանդակ դասատուներով են լեցուած, իսկ *Conservatoire*-ը որոշ օրէնքներով այնքան է սահմանափակուած, որ շատ քչերին է մատչելի, սակայն եւ այնպէս մէկ բան կայ, որ հնարաւոր է լինելու, եւ բարեկամներս պիտի աշխատին այդ մասին. այն է, որ կարելի է իբր ազատ ունկնդիր մտնել *Conservatoire* եւ օգտուիլ, որ այդ, կարծես թէ, թոյլտութեան կարող պիտի լինեմ ձեռք ձգելու: Բայց միեւնոյն ժամանակ մէկ յայտնի վարժապետի մօտ խմբական դաս առնէք եւ կազմակերպուիք: Այս շատ աւելի ձեռնտու է: Այսօր դեռ նոր փակուեցաւ բոլորովին համաժողովը, բայց զիս ընտրեցին գործադիր մասնաժողովի անդամ, ուստի աշխատանքներս նոյնութեամբ շարունակլում են:

Եկեղեցին խումբ կազմելու եւ Ձեզ ամսական մը չնորհ ընելու մասին եւս խօսել եմ, սակայն <...> են տեղացիք: Տեսնենք ի՞նչ պիտի վճռեն, դեռ պատասխան չեն տուել, թէեւ աշխատողներն անպակաս են:

Ձեր ժամանակէն առաջ գալն ամենեւին բան չունի, զի մի քանի օրէն մարդիկ կը մեկնին (?) և այստեղ օդերն անտանելի կերպով նեղացնող են:

Մանկական երգարանի յառաջաբանն էլ մինչեւ Կ.Պոլիս չը գամ, չեմ կարող գրել, զի համաժողովին մասնակի աշխատանքներն անսպառ են, եւ ես սաստիկ յոգնած, խելքս գլուխս չէ:

Մինչեւ որ այստեղ գործերնիդ բոլորովին կարգի չը ձգուի, պէտք չէ շտապել:

Եթէ որեւէ մէկի համար վտանգ կայ զինուորացրութեան պատճառաւ, մի կերպ թագստի մտնելու է կամ

Նոր միայն գալու է: Կեանքը սաստիկ սղել է. կ'ուզեն, որ պէտք է ունենայ հոգիդ 120-150 ֆրանք դրամագլուխ ամսական: Եթէ եկեղեցին իւրաքանչիւրիդ տրամադրէ 30-ական ֆրանք, բանի մը կարող է ծառայել: Բայց այս հաստագլուխներին բան հասկացնել կարելի չէ: Բաւական շատ են տառապող ուսանողները:

Ահա եկան եւ կը կանչեն ժողովի. ցտեսութիւն եւ սիրալիր ու կարօտով բարեւներս ու համբոյրներս բոլորիդ՝

Զեր Կոմիտաս

2

1914, 22 յունիս, Փարիզ

Սիրելի աշակերտնե՞րս,

Զանագան խոստումներ եղան երաժշտարանում ձրի դասեր շնորհելու, սակայն առանց վերջին (?) մրցումին մասնակցել կարենալու, զի այդ մի շարք նախնական պայմանների հետն է կապուած, որոնք դժբաղդաբար մեզի համար անշնորհակալ են: Միւս դպրոցները բանի պէտք չեն, եւ ոչ ոք խորհուրդ չի տալիս: Կայ եւ մի այլ միջոց. մասնաւոր անձի մօտ դասեր առնել. մի երկուքին դիմեցի եւ յոյս ունիմ այս եւս յաջողեցնելու, այնպէս որ այս կամ այն եւ կամ երկուքն ի միասին մեր գործին կու գան: Գալով դրամական բաժնին, դեռ բան չը կրցայ անել. տեղացիները գրպանափակ են եւ անձեռնմխելի: Իսկ փափածներս էլ այստեղ չեն: Մի քանի կողմնակի մարդիկ ձգեցի, տեսնենք կարո՞ղ պիտի լինենք սրտեր կակղացնել, թէ՞ ոչ: Գալով եկեղեցւոյն, դպիրներին կու տան 30-ական ֆրանք ամսական եւ այն՝ կատարեալ տիրացու լինելու պայմանաւ, որ միանգամայն անյարմար է:

Օտարներն են, որ մեզնով կը յափշտակուին, իսկ մերոնք Աստուած փրկէ, ազատէ...

Եթէ մի բան լինի, անմիջապէս կը գրեմ, առ այժմ մասնաւոր տեղերէն հրաւէր եմ ստացել դասախոսելու մեր երաժշտութեան մասին. Մանչեստերի հայերէն եւ Մարսէլի ֆրանսիացիներէն. առաջնի վերջնական եւ պաշտօնական հրաւէրին եմ սպասում, որ կարենամ մեկնել Անգլիա:

Անտանելի օդեր են անում այստեղ, եւ քաղաքի փողոցները կը փլչեն՝ տասնեակներով մարդիկ կանելով: Ես հրաշքով ազատեցայ մի սոսկալի փլուզումի տակն ընկնելին: 2-3 վայրկեան առաջ անցայ այն տեղէ, ուր յանկարծակի փլաւ եւ բազմաթիւ անցորդներ կառքով, մարդով տակն առաւ՝ հեղեղն ալ վրան գալով՝ բոլորը խեղդեց տղմի տակը՝ 8-10 մետր խորութեան մէջ: Փառք Աստուծոյ, որ զիս փրկեց փորձանքէն:

Անփորձ մնաք, սիրելի՞քս, յոյս Աստուած, Զեր բանն ալ կը յաջողի:

Ողջոյն եւ համբոյր բոլորիդ եւ հարցանող քէրթէնքէլէներին բարեւներս:

Զեր Կոմիտաս

Յ. Գ. Մեր եկեղեցական երաժշտութիւնն եւս հիացում պատճառեց:

ՅՈՎՃԱՆՆԷՍ ԱՐԾԱՐՈՒՆՈՒՆ

1909, 19 մարտ, Ա. Էջմիածին

Բարձր Գերաշնորհ

Տ. Յովհաննէս Արշարունի,

Սրբազն, ելիսկոպոս

Պատրիարքական տեղապահ Հայոց Կ. Պոլսոյ,

Հստ յանձնարարութեան Ազգային Կենտրոնական

վարչութեան կրօնական ժողովի (Համար 56, 1908, 29/ԺԱ)¹, խոստացել էի ընդօրինակել մի-մի օրինակ հայ եւ եւրոպացի նիշերով Ա. Պատարագի միաձայն այն երգեցողութիւը, որ արդ գործածական է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնում: Արդէն մաքուր պատրաստ էր հայ նիշերով՝ ամբողջապէս եւ եւրոպացի՝ մասամբ, երբ 16 տարուան աշխատանքս պտուղ տուաւ. գտայ մեր հին խազերի հիմնական բանալին եւ սկսայ կարդալ պարզ խազերով՝ գրուածներ:

Արդ, պիտի խնդրեմ, որ միառժամանակ կրկին շարունակուի սովորական եղած երգեցողութիւնը, եւ երբ բոլորովին հրապարակ ելնէ մեր հանճարեղ նախնեաց հոգեբուղիս երաժշտութիւնը, այն ժամանակ աւելի յարմար է ընդհանուր պատուիրագիր յղել հայ եկեղեցիներին. մեր անձնուրաց նախնեաց հզօր արիւնով շաղախուած սուրբ Տաճարների հաստահիմն կամարների տակ թող վերստին հնչեցնեն մեր պարզ ու վսեմ հոգեւոր ազգային եղանակները:

Զերումդ Բարձր Գերաշնորհութեան խ<ոնարհ> ծ<առայ> եւ որդի՝

Կոմիտաս

Յ. Գ. Կեսարիոյ Ա. Դանիէլ վանքից երաժշտութեան ձեռագրի իմ ընդօրինակքը տակաւին չեմ ստացել³: Գործը փութացնելու համար շատ կարեւոր է այժմ ամեն մի չնչին տեղեկութիւնն անգամ այս խնդրի մասին: Եթէ ցարդ ընդօրինակած չեն, կիսնդրէի, որ ձեռագիրն ուղարկուէր ինձ, եւ ես արտագրելուց յետոյ անմիջապէս կվերադառնեմ ըստ պատկանելոյն, զի կարող են նման խազերի ձեւերը ծուռ եւ սխալ գրել, որ գործն աւելի կդժուարացնէ ուսումնասիրութեան ժամանակ:

ԱՆԴՐՈՒՇ ԲԱԲԱՄԵՍՆԻՆ

1910, 10 յունիս, Կ. Պոլս

Սիրելի՝ Անդրուշ, ուղիւ առ առ առ առ առ առ առ առ
Ողջ հասայ Կ. Պոլս, մի երկու օրից կերթամ հայրե-
նիքս:

Բարեւներս տիկնոջ եւ հարցնողաց:

Քոյդ Կոմիտաս

ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԵՍՆԻՆ

1 1905, 25 յունիս, Ա. Էջմիածին

Մեծարգոյ օրիորդ Մարգարիտ Բաբայեան,

Ձեր նամակն ստացայ անկողնումն հիւանդ պառկած
ժամանակ: Ուրախութեամբ կուղարկեմ իմ բարեկամ
Օբրիին¹ 100 երգ. աւելին կարող էի, բայց ձեռքիս տակ մի
երկու անյետաձգելի կարեւոր աշխատանք ունեմ: Խընդ-
րեմ, եթէ կարելի է իմանաք եւ նեղութիւն քաշէք ինձ
հաղորդելու, թէ մինչեւ երբ պէտք է հասցնեմ այդ երգե-
լը. այս ամառն ամենեւին աշխատել չեմ կարող. յոգնել
եմ, բժիշկներն էլ արգելել են մինչեւ սեպտեմբերի վերջը
պարապելը: Այս քանի օրս կերթամ Հառիճ եւ ամբողջ
ամառն այնտեղ կմնամ: Թուսով եմ, որ Դուք բոլորդ էլ լաւ էք: Իհարկէ Փարի-
զի պէս երաժշտութեան ծով աշխարհում ո՛չ մի ըոպէ
ձանձրոյթ չէք զգայ: Իսկ մենք ընկած Ասիայի խորքում,
լուսութեան մէջ ենք սնւում. վա՛յ մեզ:
Գործերս յաջող են գնում, փոքրիկ նուագուրդ էլ եմ

կազմել (*Orchester*). ճեմարանում. յոյս ունեմ կամաց-կամաց ընդարձակելու:

Երեւի յաջողութիւն չունեցաւ Զեր իմ մասին պ. Մանթաշեանին² արած միջնորդութիւնը:

Մեր շուրջն՝ արհաւիրք, մարդասպանութիւն, կողոպուտ, աւէր, հրդեհ, մի խօսքով, շունը տիրոջ չի՛ ճանաչում. ամեն բան անորոշութեան մէջ է. ո՛չ մի ապահովութիւն չկայ. տէրութիւնն իր գլուխը կորցրել է:

Ինչպէս գրել էիք, չկարողացայ ուղղակի պ. Օքրիին գրել, որովհետեւ. ես գիտեմ միայն նորա շատ հին հասցէն:

Ինդրեմ, նեղութիւն կրէք յայտնելու երգերի մասին գրածս:

Այլ ուրիշ գրելիք չունեմ, մանաւանդ հիւանդութիւնն էլ ինձ սաստիկ թուլացրել է, գրիչս չէ զօռում:

Հայրիկին, մայրիկին եւ Զեր քոյրերին³ յատկապէս ողջունեցէք:

Զեզ եւս ողջունում է

Զեր խ<ոնարհ> ծ<առայ> եւ միշտ յարգող

Կոմիտաս Վարդապետ

2

1906, Բերլին¹

<...> Ինձ հրաւիրել են նորից պաշտօնապէս ուսուցչութեան, Էջմիածին: Մերժեցի, որովհետեւ վճռել եմ դպրոցական ասպարէզից բոլորովին քաշուել եւ իմ գլխի ճարն անել: Ոչ ոք գրեթէ չի մտածում ինձ ձեռք մեկնել: Ուժերս սպառւում են, եռանդս հատնում, հասակս անցնում: Եթէ ե՛մ այստեղ <Բերլին>, հաւատացէք միայն եւ միայն իմ մի քանի կոպէկ ոռնիկովս, որի վրայ եթէ յոյս

դնեմ, քաղցած կմեռնեմ. ահա այս բոլորը ինձ ստիպում են քաշուել, օր առաջ կեանք ապահովել մի քիչ, ապա թէ գործի կաչել: Այս եօթ տարի է ձրի ծառայելով, թոքերս մաշելով, առողջութիւնս քայքայելով, համբերեցի, ո՛չ մի տրտունջ չհանեցի. բայց փոխանակ խրախոյսի, ոչ թէ նախատինք, երանի՛ նախատինք լինէր. լոկ անտարբերութիւնով վարձատրեցին ինձ: Իհարկէ, վերարկու ենք հագել, պարտական ենք իշու պէս չարքաշ լինել, կարօտ կեանք վարել, վաշ՝ քեզ, թէ բերանդ բաց ես արել, է՛լ ինչ չգիտեմ, անուններ ժառանգես... է՛հ, էլ ինչու ձեր գլուխն եմ ցաւացնում. սիրու կտոր-կտոր է լինում, չեմ իմանում ինչպէ՞ս հովանամ: Ներողութիւն, որ ձեզ անհանգստացնում եմ անձնական բաներով...

3

<1906, 23 հոկտեմբեր, Փարիզ>

Սիրելի՛ օր<իորդ> Մարգարիտ,

Զեր նամակիկն ինձ անչափ ուրախացրեց. հազար ու մի մտքեր անցան. օտարներն են հետաքրքիր հայ եղանակներով. իսկ Ս. Էջմիածնի ջոջե՞րը... Անմիջապէս գրեցինք մեր գրասեղանից այս շտապագիրը, որ, եթէ հնար է, ներումն չնորհեցէք ինձ այս քանի օր է չգալուս համար, թէեւ ներումն տուողն եմ, իբր վարդապետ, ես. էս մէկն էլ a la Սուրբիաս արքեպիսկոպոս էր: Երգերի մի մասի արտադրութեամբն եմ զբաղուած, որ երգիչների բաժինը քարտիպ² պետք է լինի: Հինգշաբթի կգամ եւ հետս կբերեմ թէ՛ երգերի բառերը, թէ՛ մեր չնորհածիր եւ թանկագին օրիորդ Շուշիկի նուագելիք Մշոյ շորորի նախանուագը: Շատ բարեւ մեր սիրելի բարեկամ Լալուային³, օրիորդացդ եւ Զեզ

լուսոյ մէջ պահող մայրիկին. ականջը կանչի բժշկապետի⁴:

Ապագայ մտածողը՝



Զեր Կոմիտաս

4 <1906, 8 դեկտեմբեր, Փարիզ>


Սիրելի՝ օրիորդ Մարգարիտ,

Զեր նամակն ինձ շատ միխթարեց, բայց եւ այնպէս, մարդիկ հաւատում են աւելի վատ լուրերին, քան լաւերին. Եւ անուանարկուածը երկար ջանք պէտք է գործ դնէ, որ կարողանայ անպիտանների միտքն էլ մաքրէ: Բայց կասէք, ի՞նչ փոյթ, թող չարն իր չարութեան մէջ իսեղուկի: Իրաւ է, ես էլ եմ կրկնում ժողովրդի հետ այն վեհ միտքը, թէ՝ «գէշ մարդու օր արեւը սեւ հողի տակով արէք». միեւնոյն ժամանակ աջ ու ձախ եմ նայում, տեսնում, որ մարդիկ առաւել վատահոգի են, քան բարեհոգի. եթէ չկան, չեն երեւում այնպիսիները, որոնք չարերի վերայ արհամարհանք տածեն. ընդհակառակը, մարդկային թոյլ եւ շատ տկար կողմերից մէկն էլ այն է, որ լսածին հաւատալ են ուզում առանց ճշմարտութեան կշիռ ունենալու, այո՛, շատ հեշտ է դատելը՝ մանաւանդ ուրիշին, բայց դատուել ո՞վ է ցանկանում. մարդասպանը նոյնիսկ դատից խուսափում է, ո՞ւր մնաց անմեղն ու անպարտը: Ես էլ, թէեւ ներսս բոլորովին մաքուր ու ջինջ է, ինչպէս պայծառ ու յստակ վտակ, բայց չար մարդիկ քար են ձգում ու պղտորում:

Անշուշտ, կանցնէ պղտորումը, էլի վճիտ կլինի, բայց եւ այնպէս՝ պղտորելուց յետոյ: Գէթ մի այնպիսի չար բան

արած լինէի, որ անպատուաբեր լինէր իմ կոչման, սիրտս
չէր ցաւի, կասէի՝ «Հնձի՛ր ցանածդ»: Բայց չարի բերանը
չոփ է լցրած: Ելի մոռացել եմ բոլոր բաները, իմ ազնիւ,
հաւատարիմ նուագարանս, որ հասարակ սնդուկ է,
մետաղի թելով, նա՛ անգամ ինձ հասկանում է, եւ ես իմ
սիրտը բաց եմ անում նորա առաջ, նա ինձ կարեկցում է,
որպէս ինքս կցանկայի, նա ինձ հասկանում է, որպէս ես
ինքս ինձ, նա ինձ մխիթարում է՝ իմ սրտից բղխած
հեծլլտանքների արձագանքն ինձ անդրադարձնելով, եւ
ես էլի մխիթարում եմ ինձ եւ ասում, որ կայ բնութեան
մէջ մի ազնիւ բան՝ գեղարուեստ, որին ամենքը մատչելի
չեն, եւ հինգ այնտեղ եմ գտնում իմ անդորրութիւնը եւ
հանգստութիւնը եւ զգում եմ, որ մի վայրկեան հեռու եմ
սլացել աշխարհի անօրէնութիւններից: Ցաւն անցաւ,
սպին մնաց:

Աստուած իրանց բարին տայ:
Վաղը կգամ եւ տետրակներն էլ հետս կբերեմ:
Շատ ու շատ բարեւ բոլորիդ:
Զեր անձնուէր



Յ. Գ. Ներսս կկարդաք ներսի թղթերի մէջ, իսկ դուրսմ՝

Բոլոլին նոլից բալեւ եմ գլում, սատ ապլիք, ուշախ
լինէք, չալը չոլում չոլանայ, իսկ սատանան կուշանայ:
Ամէ՞ն:

Կար ու չըկար,
Մի մոծակ կար:
Բըզզաց,
Դըզզաց,
Եկաւ,
Նըստաւ
Ճակտին վերան,
Բացաւ բերան,
Հանեց իր փուշ,
Ու եկաւ կուչ,
Զայնը կըտրեց,
Ինձի խաբեց
Կըծեց, ծակեց,
Թոյնը թափեց,
Նըշան դըրաւ,
Ելաւ, թըռաւ:
«Մոծակ անկոչ,
Երկարապոչ,
Դու բան չունե՞ս,
Դու քուն չունե՞ս,
Իմ ճակատիս
Դու ի՞նչ ունես»:
«Այդ պարտքըս է,
Բայց ինձ լըսէ՞:
Սագով,
Նագով,

Զայն եմ տալիս,
Այնպէս գալիս:
Զգուշացի՛ր
Դու մըլակից,
Որ կըծում է
Կաշու տակից»:

5

<1906, 20 դեկտեմբեր, Փարիզ>

Սիրելի՝ օրիորդ Մարգարիտ,
Ուղարկում եմ Ձեզ յարմար երգելիք երկու տուն
շարական, որ պէտք է երգէք իրար կից, անմիջապէս. միւս
եղանակներն անյարմար են իգական ձայնին:

Այս պէտք է երգէք հէնց սկզբից՝ հալաւ օրհնէքին¹:
Տէր հայրը խնդրեց, որ Զօրականին եկեղեցու² համար
վճարելիք նուէրը նախքան պսակը տրուի, որովհետեւ
իրան՝ տէր հօրն աւելորդ խօսքեր են ասում:

Ուրեմն շաբաթ՝ 22-ին, ժամի 2-ին լինելու է պսակը:
Ուրբաթ առաւօտեան թող Շուշիկը գայ, խոստո-
վանուի, հաղորդուի³:

Եթէ յարմար լինի, նոյն օրը՝ ուրբաթ երեկոյեան կդամ
Ձեզ ընթրիքի: Շատ սիրալիր բարեւ մայրիկին, հայրիկին
եւ բոլոր մանր երեխաներիդ:

Ձեր Կոմիտաս Վարդապետ

6

<1907, 7 փետրուար, Փարիզ>

Սիլելի՝ օլիոլդ Մալգալիտ,
Նախ եւ ալաջ կհալցնեմ Ձել թանկագին ալողջութինը.

մեզ ոլ հալցընէք, փալք եւ գոհութին Աստըծու՝ սատ
տլուզ ենք եւ. ալողջ: Սատ եւ սատ եւ յատուկ բալեւնելս
կմատուցանեմ մայլիկին, հայլիկին, հին ու նոլ հալսելին,
մեծ ու պղտլիկ փեսիկնելին, գոլոլիկ թոլնիկին եւ ամե-
նեցուն, ոլոնք մեզ կհալցանեն: Սատ ու սատ սնոլակալու-
թին Գոհալ ու Մալգալիտ Պէլէս եւ Մելիզանդից¹. ամեն
նուագելիս Զեզ կյիսեմ:

Ելգելի ալտագլութինը դել չեմ վելջացլել, ոլովհետեւ
ջանս դուս գալու ցափ էլի մսակում ու ալտագլում եմ.
բայց սուտով կվելջանայ, ուլա՛խ ելիլ: Աւետալանը ասում
է, թէ ով ոլ համբելի, իսպանալ կելիցէ, դուք էլ, ոլ համ-
բելէք իսպալ՝ կապիկ սատ, իսկ իմ ելգելն էլ լաւ կինեն,
համբելութինը կեանք է, ասում են: Է՛հ, բոլ է, սատ բաց
բելանութինը լաւ ցէ, ասում է գոլծը. հէս ա, սուտով
կվելջացնեմ նամակս եւ կասխատեմ, ասխատելուց լաւ
բան չի կայ, ասում է մէկը:


Սիլելի՛ օլիոլդ, սատ ու սատ սնոլհակալ եմ Զել ուսա-
դլութեան համալ. Պէլէսաը ինձ պիտի յիսեցնի Օպելա
կոմիկի սատախօզ, մեծ ու պղտիկ մել լօզի մօտ նստող
անգլիացինելին, ոլոնք եկած էին օպելա լսելու, բայց էս (շ)
եկան ու էս էլ գնացին, կալծում էին, ոլ պէտք է ծիծալէին,
բայց լալու բանել սկսան լսել, ելեւի կալծում էին, ոլ
օպելան կոմիկ անուն ունենալով՝ իլանց էլ կզուալճացնէ.
սխալմամբ էին ընկել այնտեղ. կալծեմ սըլճանոց էին
սպասում, չէ՞... նոքա հասան իլենց մուլազին, մենք էլ
հասնենք մել մուլազին:

Ամէ՛ն:

Օլիո՛լդ ջան, սատ եմ ցաւում, ոլ այսօր զըլկուելու եմ
համելգից, ոլովհետեւ Մելիքեանի² ոլդոց ես եմ մկլտելու:
Այսօր Դաւիդովից³ հրաւէր երկու հոգու համար ստացայ,

տալիս է համերգ, վաղը, 101, Avenue Victor-Hugo, 8 1/2-ին.
Ես կհանդիպեմ Ձեզ, եթէ գալու լինէք, միասին
կերթանք, 10 ֆր<անկի> ամենալաւ տեղն է ուղարկել:
Շատ կալոտով բալետ է այսօնին պարագաները և այս
բալետ է այսօնին պարագաները և այսօնին պարագաները,
ինձնից:

Էս էլ ես եմ:



7 <1907, 15 փետրուար, Փարիզ>

Սիրելի՝ օրիորդ,
Երեկ երեկոյ Staal-ին էի գնացել այցելութեան: Այս
փաստաբաններից մէկն ու գլխաւորն է, որոնք եկան Մոսկ-
վայից երեւան եւ հայերի դատը պաշտպանեցին ծրիաբար:
Խնդրեց, որ բարեգործական նպատակով երեկոյթ են
տալու, ես եւ Դուք էլ մասնակցենք համերգի բաժինում:
Ես խոստացայ Ձեզ գրելու. ահա պարտքս կատարում եմ:

Տիկին Staal-ը ինքը պէտք է գայ Զեզ մօտ անձամբ խնդրելու. խնդրեց, որ Դուք բաց նամակով յայտնէք նորան, թէ երբ կարող էք եւ ազատ էք մի երկու րոպէ ընդունելու, մի պարթեւ, պատուական կին է. նորա հասցէն՝ 16, Rue Liancourt, M-me Staal. իսկ ես, թէեւ խօսք տուի մասնակցելու, բայց խորն մտածելով եւ տէր հօր իրաւացի նկատումով՝ գրեցի այսօր, որ մասնակցել չեմ կարող: Պատճառն այն է, որ ես, իբր վարդապետ, բեմ պէտք է ելնեմ մի մասնաւոր համերգի մէջ եւ երգեմ, իսկապէս շատ անյարմար է, այնպէս չէ^o, օրիորդ ջան. եթէ գիտական նպատակով լինէր կամ ինքս համերգ տուող լինէի, ուրիշ բան էր. իսկ այստեղ հայ վարդապետի պատիւն էլ եմ պարտական պաշտպանելու: Եթէ Զեզ մօտ այդ մասին խօսք բանայ տիկին Staal-ը (Ստալ, ոչ Շտալ, ոռւս է), Դուք էլ ասացէք, որ իրօք անյարմար է, եւ աւելորդ խօսակցութեանց առիթ տուած կլինենք: Եթէ Դուք յանձն առնէք, շատ լաւ կանէք, որովհետեւ նոքա մեր խեղճ ժողովրդին մեծ ծառայութիւն արին, մենք էլ փոխանակած կլինենք մասսմբ: Իրանք խիստ ազատ մտածող եւ շատ լաւ ոռւաներ են: Իսկապէս ես նոցա յարգում եմ իրանց մաքուր գաղափարների համար:

Շատ բարեւ բոլորիդ: Զեր միշտ անձնուէր

Կոմիտաս

8

1907, 7 յունիս, Լօգան

Սիրելի՛ օրիորդ Մարգարիտ,
Ժընեւի համերգն¹ սքանչելի անցաւ. դասախոսութիւն արի Ժընեւ, Լօգան եւ Բերն: Այսօր կրկին Լօգան եկանք, Արշակը² պէտք է կարդայ հայ բանաստեղծութեան եւ երաժշտութեան մասին, եւ ես պէտք է երգեմ:

Զուիցերիայից լաւ տպաւորութիւններ ունեմ: Յոյս ունեմ, որ կիրակի կամ երկուշաբթի կելնենք եւ կգանք Փարիզ: Կպատմեմ մանրամասն ամեն քան:

Շատ կարօտալի բարեւ Ձեզ բոլորիդ, մեծ ու պղտիկին, լոյսին ու կրակին, ոսկուն, մարգարտին³ եւ մայրիկին ու հայրիկին:

Զեր Կոմիտաս Վարդապետ
9 1907, 14 յուլիս, Բերլին
<...> ես այժմ երգերի տպագրութեամբ եմ զբաղուած¹ եւ շարունակ նորանոր գիտողութիւններ եմ անում. այնպէս, որ երբ գործը վերջանայ շատ հետաքրքրական է լինելու, թէ ինչպէս մեր ժողովորի ամբողջ սիրտն ու հոգին, ներքին ու արտաքին կեանքը խորապէս դրոշմուած է ձայների եւ տաղաչափութեան մէջ<...>

10 <1907, յուլիս 15/20 Բերլին>
Սիրելի՝ Մարգարիտ,

Զեր նամակն ինձ շատ ուրախացրեց: Շուշիկն իր «Բանգին ու հէքիարին»² կստանայ այստեղից, իսկ «Շորորը» այնտեղից:

Սիրելի՝ Մարգարիտ, Լուսիկը² նեղանալու իրաւունք ունի. բայց չէ՞ որ, ինչպէս ո՛չ մի գեղարուեստական գործ վերջակէտ չունի, այնպէս էլ իմը. եթէ երկրորդ տպագրութեան արժանի լինեն նոյն երգերը³, շատ բաներ արդէն ինքս եմ նկատել ու փոխելու՝ պարզելու եմ. երբ մարդ մի բանով երկար ժամանակ ու անընդհատ, տաք զբաղում է, քննական ուշքը կորցնում է, եւ նորա տեղն է բռնում

դէպի միշտ բարձրը մղող եւ նոյնիսկ, մասամբ էլ կոյր եռանդը, որ պարզ գաղափարի ու երեւակայութեան առաջ մի հափշտակիչ, դիւթական, նուրբ քող է քաշում, որ մի առ ժամանակ սխալներն ու անհարթութիւնները կա'մ պարզ ու վսեմ, դիւրըմբռնելի ու գործի ոգուն համապատասխանող, կա'մ նորա բնոյթը որոշող գծերն անյայտացնում ու չքացնում է, եւ մարդ իբր կատարեալ բան է տեսնում: Աւելացրէք այս բոլորի վերայ եւ այն, որ ես ստպուած էի շատպով անել այն բոլորը (ամենքդ էլ ինձ շարունակ նկատում էիք, որ շուտ անեմ, լա՛ւ, բայց շուտն էլ այդպէս կլինի):

Երկրորդ եւ աւելի կարեւորն է այս: Հայ եղանակները, ինչպէս նոցա ոգին պահանջում է, ներդաշնակելը որքան պարզ է, նոյնքան աւելի դժուար է, յետոյ, դեռ մենք՝ հայերս, պէտք է մեզ համար ոճ ստեղծենք ու ապա թէ յամարձակ առաջ գնանք: Ես դեռ ցարդ ստացել եմ ուրիշներից եւ. այժմ նոր եմ սկսում (ըստ իմ հասկացողութեան եւ ճաշակի, նախապատրաստութեան ու պաշարի) հայ եղանակներին համաձայն ոճով դաշնակել: Ժամանակ է լինում, որ ես ընկղմած եմ կատարելապէս միայն հայ երաժշտութեան մէջ եւ ահա այն ժամանակ ես գրում եմ, ստեղծում եմ այնպիսի բան, ինչպիսին յարմար է մեր երաժշտութեան ոգուն. բայց լինում է եւ ժամանակ, որ, առանց իմ կամքի, ընկնում եմ մի այնպիսի երեւակայութեան շաւղի վերայ, որ կա'մ հայկական չէ, կա'մ նորա կողքիցն է անցնում: Բայց եւ այնպէս, ես պիտի հասնեմ նպատակիս, նոյնիսկ, եթէ ամբողջ կեանքս իսկ վրայ զնեմ: Դորա համար շատ թանգ են իմ սրտակից բարեկամներիս իւրաքանչիւր, նոյնիսկ չնչին համարած կամ բծախնդիր

Նկատողութիւնները: Ես կատարեալ չեմ, ինչպէս բոլոր
մարդիկ, բայց՝ կատարելութեան ձգտող, նոյնիսկ այն
դէպքում, երբ ես մերժում <եմ> մէկի կարծիքը, թէեւ
մերժում եմ առժամանակ, բայց այդ ինձ մտածել է տալիս,
թէ ինչո՞ւ այս կամ այն կտորը դուր չէ եկել մէկին կամ
միւսին, եւ ես աշխատում եմ հարցը լուծել: Էլ տեղ չկայ:
Շատ ու շատ սիրալիր բարեւներ քեզ. Շուշիկին, Լուսիկին
ու նորա մօրն ու հօրը, մայրիկին ու թոռնիկին, Արմե-
նուհուն ու բժշկին⁴: Ողջ լինէք բոլորդ էլ:

Շատ կուզէի իմանալ, թէ յատկապէս ո՞ր կտորնե-
րը, ըստ Լուսիկի. անյաջող ու թոյլ կամ օտար են:
Ես կերթամ հոկտեմբերի 1-ին այստեղից:

Զեր Կոմիտաս

11 <1907, Հոկտեմբեր, Ս. Էջմիածին>

Սիրելի՝ Մարգարիտ, վասնական անձնագիր և անձնագիր անձնագիր
Վեհի անակնկալ մահն ինձ այնպիսի աշխատութեան
մէջ ձգեց, որ դեռ նոր է խելքս գիսիս գալիս: Երեւակայէք
մի բանակ կոտրած ձայներ, ապականուած մտքեր,
փչացած անհատներ, որոնք այս կամ այն կերպ ճեմարանի
աշակերտութեանն են արժանացել, միւս կողմից հազար ու
մի կողմից կրթուած պատգամաւորներ, պատուաւոր ներ-
կայացուցիչներ պետութեան, ընտիր հասարակութեան՝ ազ-
գային եւ մանաւանդ օտար, ահա քեզ երկու հակադրութիւն
հաշտեցուր իրար հետ. այսպիսի հանգամանքների մէջ ես էլ
նոր եկած այստեղ, ո՞չ խումբ կայ, ո՞չ ժամանակ:

Փառք Աստուծոյ, մեր հասարակութիւնն էլ՝ իստ

պահանջկոտ, դէ արի խումբ պատրաստիր ու երգել տուր,
որ քո եւ Ս. Էջմիածնի պատիւը բարձր մնայ օտարների
առաջ, այս ընդգծում եմ յատկապէս նորա համար, որ մեր
ժողովրդի համար գին չունի այն, ինչ որ ունի, այլ ա'յն,
ինչ որ չունի կամ չէ կարող ունենալ, այնուամենայնիւ
ձգտում է ունենալ:

Ակսեցի պատրաստութիւն տեսնել: Ահա թէ ինչպէս:
Թէպես ես պատարագն ունեմ ամբողջապէս գրած, բայց
խառն խմբի համար է. այժմ ճեմարանում փոքր աշա-
կերտներ չկան, որովհետեւ Ա եւ Բ դասարաններս փակ են.
ուրեմն պէտք է գործ ակսել մեծ աշակերտների ձեռքով
միայն: Պէտք էր նոր պատրագ գրել արական խմբի
համար: Շատ լաւ ձայն չկայ, եղածները խրպոտ, ագռա-
ւածայն, խարդախ հնչիւնով ձայներ, այն էլ մեծ մասը
փչացած *Tenor*-ներ, մի քիչ *Bariton*, թոյլ, խաւար ու
մեռած հնչիւնով, ահա քեզ խումբ: Ուզած-չուզած պէտք
է պատրաստես: Ժամանակը շատ կարճ, միայն մէկ շաբաթ,
թէ՝ պէտք է պատարագը գրել՝ աչքի առաջ ունենալով
ձայների քանակն ու որակը եւ թ'է սովորեցնել եւ հասցնել
թաղման պատարագին: Ամբողջ մէկ շաբաթ, օրական 14
ժամ զբաղուելով (6-ը տանը պատրաստում էի, 8-ը՝ ճեմա-
րանում ձայն-ձայն պարապում ու սովորեցնում)՝ գլուխ
հանեցի գործը. գլուխ հանեցի, պարզերես ելայ, բայց ինձ
վերայ էժան չնստեց 14 ժամ զբաղմունքը: Թաղումից
յետոյ ամբողջ 3 շաբաթ խելքս զլիս չեկաւ: Այսօր, թէեւ
Ճեռներս դողում են, բայց եւ այնպէս, ծանր գրելով,
ուզում եմ ձեզ տեղեկութիւն եւ հաշիւ տալ իմ արածների
ու անելիքների մասին: Գիտեմ, որ սպասում էք, եւ ձեզ
համար հետաքրքիր է լսել իմ մասին: Ահա գրեմ:

Նախ որ այժմ տունս համերգի մեծ Schröder Concert Flügel ունեմ¹: Դուք կզգաք իմ ուրախութեան չափը, երբ առաջին անգամ դաշնակը հարայ-հրոցով սենեակ բերելուց, սարքելուց, մարդոց ճանապարհ դնելուց յետոյ, մենակ մնացի: Աչքերիս չէի հաւատում, որ վերջապէս ե'ս էլ մարդահաշիւ եմ դառնում, յարմարութիւն ունենում աշխատելու, աշխատելու, էլի՛ աշխատելու: Ուրախութիւնիցս քարացել էի մէկ վայրկեան, ապա արտասուքի հեղեղ սկսաւ գլորուել աչքերիցս, ես էլ, սիրոս էլ, միտքս էլ, կեանքս էլ հանգստացաւ, հաշտուեցայ, որ այժմ աշխատելու միջոց ունեմ եւ այն՝ անհրաժեշտ միջոց: Այսպէս, թէ ինչ եմ արել, այն էլ կարդացէք սիրելի Շուշիկի նամակում: Գրելիքս երկու քոյրերիս մէջ աղբօր-բաժին արի, որ էլի մի անգամ իրար մօտ լինէք եւ մի լաւ հաց ուտէք իմ տեղակ էլ՝ էն պուճուրիկ, սիրունիկ, կոկիկ ճաշանախասենեակի մէջ: Իմ տեղն էլ պատրաստ պահեցէք, էն է, յանկարծ մի գուցէ, այդ ըոպէին ես էլ այնտեղ լինեմ:

Այժմ ուրիշ բան:

Պապին էլ եկաւ մեզ մօտ, էլի մի անգամ էլ տեսնուեցանք: Եկաւ, եկաւ, բայց այլոց մօտ գնաց, այլոց խօսքին լսելով, թէ սենեակս այնքան սառն է, որ մնալ չէ՛ կարելի, ինչ որ է, թող այդպէս լինի: Այս բաւական չէ, մե՛ծ բողոք ունեմ նորանից: Գարեգին վարդապետին ասում է, թէ ճաշից յետոյ ինձ մօտ է գալու: Ես էլ հրաւիրում եմ ուրիշ պատգամաւորներ, որոնք հետաքրքրում են մեր ժողովրդական երգեցողութեամբ, ուզում եմ մի փոքրիկ համերգի պէս բան անեմ տանուց տանու: Պատգամաւորները գալիս են ճաշից յետոյ, դեռ Պապին չկայ, սպասիր, սպասի՛՝ նա ուրիշ տեղեր այցելութիւն է անում: Պատգամաւորները մնում են ինձ մօտ ժամի 3 1/2-ից մինչեւ 7 1/2-ը, էլի Պապին

չկայ. մինչ այս ժողով է նշանակուած ճեմարանի հարցի մասին մասնաւորապէս ճեմարանցիների համար, ես գնում եմ ճեմարան ու այնտեղ էլ Յովհաննիսեանների² մօտ ընթրելու: Մեր Պապին էլ գալիս է այն ժամանակ, երբ ես եւ հիւրերս արդէն տանը չենք. սաստիկ նեղանում է, որ իրա համար ամրող գիշերը չմնացի տանը, այլ պաագամաւորների համար ուղիղ 4 ժամ (3½-7½) երդելուց յետոյ ժողովի եւ յետոյ հանգստի գնացի: Դէ այժմ դուք ասէք, ո՞վ է մեղաւորը: Ամբողջ շաբաթ հոգիդ բերանդ առ, շունչ քաշելու ժամանակ մի՛ ունեցիր յոգնած, դադրած երգի՛ր 4 ժամ ու յեւոոյ էլ Պապին նեղանայ. Աստուած կվերցնի:

...Մախլաս, — ասաց Շէքսպիր ու գնաց մեռաւ: Ինչ որ է, էլի մեր սիրելի Պապին է: Շատ կարօտով բարեւներս աննման մայրիկին, պապիկին, թոռնիկին³, Արմենուհուն, բժիշկին, Շուշիկին, Լուսիկին եւ իմ սիրելի Մարգոյին:

Զեր Կոմիտաս

Յ. Գ. Բարեւներս Bastin-ին եւ սիրելի J. Perier-ին:

Բաց նամակն ստացայ, կպատասխանեմ:

12

1908, յուլիս 2, Ա. Էջմիածին

Սիրելի՝ օրիորդ Մարգարիտ,

Այս ուսումնական տարին անցաւ ինձ համար բաւական շահաւէտ կերպով: Տուի 5 համերգ եւ 6 դասախոսութիւն¹ կարդացի: Մեծ քանակութեամբ երգեր եմ դաշնակել երգի եւ նուագարանի համար: Ակսել եմ «Հայ

քնարի» միաձայն հրատարակութիւնը մեր գպրոցների եւ առձեռն գործածութեան համար փոքրիկ տետրակներով. իւրաքանչիւր տետրակ պարունակելու է միայն մի տասնեակ երգ. երեւի այս աշնան Ա տետրակը կհրատարակեմ²:

Ո՞չ դուք եւ ո՞չ Շուշիկը բան չգրեցիք, հաւանեցի՞ք ուղարկածներիս, թէ՞ չէ, սպասում եմ կարդալու Ձեր կարծիքը: Երեւի շատ էք զբաղուած, որ չէք գրում:

Այս ամառը մեծ մասսամբ մնալու եմ Ս. Էջմիածնում, օգոստոսին միայն կերթամ զանազան գիւղեր երգեր հաւաքելու:

Անդրանիկ աշակերտս՝ Ստեփան սարկաւագը³, որ սովորում էր Բերլինում, այս տարի աւարտեց եւ օգոստոսին գալու է Ս. Էջմիածին: Աշնան միտք ունեմ Մոսկվա եւ Ս. Պետերբուրգ գնալու համերգի եւ դասախոսութեան համար: Դո՞ւք ինչպէս էք՝ մայրիկը, հայրիկը, Բժիշկը, Արմենուհին, պղտղիկը⁴, Շուշիկը, Լուսիկը եւ զուռնաչի Մարգօն:

Կաթողիկոսի⁵ ընտրութիւնից յետոյ էլի կգամ Ձեր կողմերը, եւ մի բոլ երաժշտութիւն կանենք: Մի քիչ հանգստանալուց յետոյ էլի մի քանի երգ եւ նուագ կուղարկեմ Ձեզ եւ Շուշիկի համար:

Շուշիկին ասացէք, որ «Րանգին» պատրաստ է բոլորովին, եւ ո՞չ մի ճապաղ բան չեմ թողել. շատ պարզ ու միաձեւ, միեւնոյն ոճով կազմեցի մինչեւ վերջը, այնպէս որ մի սիրուն ամբողջութիւն է կազմում: «Շորորի», նոր կտորներ եմ ձայնի առել եւ լրացրել. պատրաստ է նոյնպէս, «Հէքիարին»: Տեղական բոլոր պարերը՝ կենտապարերը, կազմել եմ ճիշտ ուղարկածս «Շուշիկի» պարի ձեւով, չեմ իմանում, հաւանեց. ես որ շատ եմ հաւանել, չգիտեմ: Երեւի ամառանոց գնացած կլինէք, բայց ես

գրում եմ էլի Զեր Փարիզի տան հասցէով:

Շատ կարօտալի եւ սիրալիր բարեւներս բոլորիդ: Զեր
միշտ անձնուէր

Կոմիտաս Վարդապետ

Յ. Գ. Ի՞նչ հետեւանքի հասաւ իմ գրերից բնաւորութիւնս ուսումնասիրող կինը:

Նոյն

13

1909, Ա. Էջմիածին

<...> Որքա՛ն ուրախացայ նամակիդ: Յիրաւի վաղուց
բան չեմ գրել քեզ եւ ո՛չ բարեկամներիս, որոնք թէեւ
հեռու, բայց եւ շատ մօտ են ինձ: Ո՛չ խելք են թողել, ո՛չ
միտք, անհանգիստ բան են եղել, հոգիս բերանս է հասել.
Երեւակայիր, որ շրջապատուած եմ թանձր մառախուղով,
ուզում եմ լոյս, պայծառ լոյս տեսնել, հեռանալ վեր, շատ
վեր, այրող արեւի հետ ապրել, բայց ճանապարհ չեմ
գտնում, անիրաւ օդի մէջ խեղդամահ եմ լինում: Մարդ
չկայ, որին բանաս սիրտդ, մարդ չկայ, որից մի բան լսես.
Նստում եմ առաւօտից մինչեւ իրիկուն բուբուկին պէս իմ
սեղանի առաջ, գրում ու գրում... Գալիս է հանգստի ըոպէ,
մարդ ես որոնում, որ գրածդ երգես, նուազես ու կարծիք
լսես, – չես գտնում: Դուրս եմ գալիս ու վագրի պէս այս
ու այն կողմ եմ շուռ գալիս մէն-մինակ, իմ պարտիզում եւ
տանիքի վրայ: Ես զարմանում եմ, թէ ինչու մինչեւ այժմ
դեռ չեմ խելագարուել այս մթնոլորտի խարդախ վայրե-
րում: Մէկ ուզում եմ թոչեմ հեռու միայնակ, մէկ ուզում
եմ փակուեմ մէնակ ու ճգնեմ, բայց ի՞նչ եմ անում որ չեմ
ճգնում... այո՛, բայց ո՛չ այսպիսի, այլ մուսայի՛ս հետն եմ

ուզում միայնակ ապրել, որ սիրտս չպղտորուի, միտքս չխարդախուի, հոգիս չխռով եւ խիղճս չմեռնի... բայց եւ այնպէս չեմ յուսահատուել. աշխատում եմ, շատ բան եմ գրել, շատ բան եմ արել. քեզ էլ չեմ մոռացել եւ քո բաժինն էլ պատրաստել եմ, որ եւ ստացիր այս գրիս հետ միասին, իբր նմուշ շատից: Շուշիկի «Շորորը» եւ միւս սիրած կտորները վերջացրել եմ արդէն, բայց ժամանակ չեմ գտնում արտագրելու. ձեռքս շատ հետաքրքրական գործեր ունեմ, որ չեմ ուզում ձգել<...>

14 1910, 7 դեկտեմբեր, Զմիւռնիա

Սիրելի օրիորդ Մարգօ,

Նամակն ստացայ, շատ ուրախ եմ, որ բոլորդ էլ ողջ եւ առողջ էք, զիս կը յիշէք կոր եղեր:

Սիրելիս, ես այս ամառն այստեղ էի, սկսելով հայրենիքիցմ³ համերգ կազմակերպեցի: Այս նամակն էլ գրում եմ Զմիւռնիայից, ուր 6-ը պատրաստելու վերայ եմ⁴. յետոյ պիտի գառնամ Կ.Պոլիս եւ տամ 7-ը⁵ յօգուտ ազգային հիւանդանոցի, ապա պիտի մեկնեմ Ատաբազար՝ 8-ը տալու, եթէ ուրիշ տեղից հրաւէր չստանամ, ուղղակի Վիեննայի վրայով Փարիզ պիտի գամ, բայց ե՞րբ, չեմ իմանում. այնուամենայնիւ կդրեմ:

Չես կարող երեւակայել, թէ ինչե՛ր քաշեցի, ի՞նչ օյիններ սարքեցին տիսմար տիրացուներն էստեղ, բայց ես յաղթեցի եւ հայ երաժտութիւնը հնչեցրի նորից⁶: Կդամ, կպատմեմ մանրամասն, որ տեսնես, թէ ինչպէս ապականուած է այստեղի բարքը, կեանքը...

Շատ կարօտել եմ Չեր բոլորին, որքան ուրախանում եմ, երբ մտածում եմ, թէ նորից պիտի իրար տեսնենք:

Շատ-շատ բարեւներս բոլորիդ եւ հարցանողներին:
Զեր միշտ անձնուէր՝

Կոմիտաս Վարդապետ

թ. Գ. Շնորհաւոր Նոր տարի, բարի կաղանդ եւ Ա.
Ծնունդ:

15

1911, 25/12 ապրիլ, Alexandria, Eglise Arm.

Սիրելի՝ օր<իորդ> Մարդարիտ,

Հիմա կզարմանաս, որ այստեղ եմ ընկել¹. այս անգամուան ճանապարհորդութիւնս էլ թափառական հրէայինին նմանեց: Շուտով իրար կտեսնենք, բայց եւ այնպէս 2 ամիս յետոյ: Այստեղ մէկ համերգ եմ տալու, ապա անցնելու եմ Քաիրօ եւ Երուսաղէմ ձեռագիրները նայելու եւ ապա Մարսելի վրայով Փարիզ եմ գալու: Շատ ու շատ պատմելիք բաներ ունեմ, որ պիտի ուրախանաս, արդէն գործս ընկաւ արքայազունների շրջանակը, եւ լաւ էլ եղաւ: Կդամ եւ կպատմեմ, նամակներով անհնարին է մի առ մի նկարագրել այն ամէն անցած-դարձածը, որ գլխիս վերայով սահեցաւ, բայց եւ այնպէս՝ յաղթեցի:

Այս նամակը գրելուս բուն պատճառն է հետեւեալը: Կ. Պոլսեցի մի օրիորդ, շատ լաւ ընտանիքից, որի տունն ու տեղը թալանի է մատնուել անցեալ աւերածներէն, շատ լաւ հակումներ ունի դաշնակահար դառնալու, արդէն մեծ վարժութիւն ունի, ընտիր լսողութիւն, կիրթ ճաշակ, բայց պակսում է երաժշտական գարգացումն ու պաշարը, որ սակայն Կ. Պոլսում չէ՝ կարող լրացնել, ես խորհուրդ տուի Փարիզ գալ. ինքը շատ է ուզում, բայց ծնողները վախենում են դուրս ուղարկելու, որովհետեւ շարունակ իրենց աչքի առաջն է եղել: Ես խոստացայ Զեր միջոցաւ դիւրաց-

նելու գործը: Արդ, որքա՞ն փող է պէտք տարեկան մի օպիրդի համար, որ մնայ պանսիօնում եւ սովորէ մասնաւոր տեղում կամ երաժշտանոցում. ինքն ունի ամսական 60 ըուբլի. կարո՞ղ է այս փողով ապրել ու սովորել: Կա՞յ արդեօք մի այնպիսի ընտանիք՝ հայ կամ ֆրանսացի, որ պանսիօն ընդունէին. եթէ չկայ, անշուշտ պանսիօններ շատ կան, ուր ապահով ապրէ: Ինքը շատ վայելուչ է եւ պարզախօս, 20 տարեկան. շատ ընտիր քնաւորութիւն ունի:

Պիտի խնդրեմ, որ անմիջապէս պատասխանես հարցերիս, որ իրան միամտացնեմ եւ ուրախացնեմ. ծնողները համաձայն են, եթէ համոզուին; որ իրենց աղջիկը վսահելի տեղ գտնէ:

Լաւ ուժ կլինի մեզի համար:

Առ այժմ այսքան. շատ եւ շատ սիրալիր բարեւներս բոլորիդ:

Զեր Կոմիտաս Վարդապետ

16

1911, 12 յունիս, ԳաՀիրէ

Սիրելի՛ օրիորդ Մարգարիտ,

Նամակդ ստացայ, սրտագին չնորհակալութիւններս տուածդ լիաբեռն ու կտրուկ բացատրութիւնների համար:

Աղեքսանդրիոյ¹ համերգն էլ շատ յաջողութեամբ պսակուեցաւ, եւ այժմ Գահիրէ² եմ. տեղիս հայութիւնը փափագում է խումբը տեղափոխել եւ համերգը կրկնել: Այստեղէն պիտի անցնեմ Երուսաղէմ եւ ձեռագրատունը նայելուց յետոյ ուղղակի Փարիզ եմ գալու, եթէ գուք այնտեղ չինէք, յուսամ, թէ կուգամ Զեղ կգտնեմ, գէթ մի քանի ժամուան համար:

Շատ բաներ դարձան, բայց գրով չպէտք է կարողանամ հաղորդել, եւ. Աստուծով բանիւ-բերանոյ կիսունք: Յոյս ունեմ Կ.Պոլսոյ մէջ մի երաժշտարան բանալու³, բայց դեռ խնդիրը ծնծւում է խօսքով, երբ որ հոսոսները գործի անցնեն, բանն էլ կպսակուի: Այս տարի տուել եմ 17 համերգ եւ դասախոսել եմ 12 անգամ:

Բոլորիդ էլ ընդօք եւ ընդօծնովք

սիրալիր բարեւներս յայտնէ:

Մնամ միշտ անձնուէր

Կոմիտաս Վարդապետ

17

1911, 18 սեպտեմբեր,

Charlottenburg, Kantstr. 150 A

Մարգօ' ջան,

Քեզ դիմող տղան, կարծեմ Կ. Պոլսի համերգի երգիչներիցն է: Կարծում են, թէ շիլա-փլաւ է երաժշտանոց մտնելը. փող չունի, պատրաստութիւն չունի, եւ որքան յիշում եմ, սովորական խմբական ձայներիցն է, մի քիչ արեւելեան թուլամորթութեամբ շաղախուած: Զեմ իմանում, զգո՞ւշ եղիր, գլխիդ բալա չանես: Այդ տեսակներից բան գուրս չի գայ: Ինձ գրել էր Լոնդոնից, եւ ես պատասխանել էի, թէ չի յաջողուի երաժշտանոց մտնելու:

Արտագրութեամբ եմ զբաղուած, երբ գործերս կարգին լինեն, երկար կգրեմ: Բարեւ բոլորին էլ:

Խնդրեմ, Շուշիկից ուզիր արտագրուած մաքուր պարերը, տպել եմ տալու, մէկ աչքի եմ ուզում անցնել:

Նոր բան գրելու ժամանակ չունեմ, հազիւ կարող եմ արտագրել տպուելիք երգերը. երեւի լաւ տոզած կինես... Շատ ուրախացայ, որ ձայնդ զնդում է, եւ զլում ես ու զլում: Նորից բարեւ բոլորիդ:

Կոմիտաս

<...> Գրելիք շատ ունիմ, բայց սիրուս խաղաղ չէ. ինչպէս տեսնում ես; այժմ Պոլսումն եմ¹: Կարճառօտ գրեմ այս անգամին: Երգերս տպւում են Breitkopf und Hartel-ի² մօտ եւ մէկ կամ երկու ամսից կելնեն՝ մաս-մաս, պզտիկ տետրակներով, որ հարմար է ծախողի ու գնողի համար: Ժողովուրդը շատ սիրով է վերաբերում դէպի իմ գործը, որ ուրախալի է եւ ինձ ուժ տուող: Ա՛խ, չես իմանում, թէ որքա՞ն կուզէի մօտս լինէիր այս վայրկեանիս, որ ամէն բան պատմէի քեզ. շատ հետաքրքրական բաներ: Երգերը բաւական փոփոխութեան ենթարկեցի եւ աւելի գեղեցիկ ձեւ ու օդ, տարածութիւն, պատկեր ստացան <...>

Costantinople, Pangaltı 83 (47)

Սիրելի՛ Մարգօ ջան,

Զես իմանում, թէ որքան եմ գրիչ ձեռս առել քեզ նամակ գրելու եւ միշտ խանգարուել կա՛մ դասերով, կա՛մ այցելութիւններով. այսօր վճռեցի, ով որ էլ գայ՝ սպասեցնել եւ քեզ նամակ գրել, թող սպասեն, հոգիները դուրս գայ. մի քիչ էլ դարդլամիշ լինենք: Ինձ պահեցին. հոգում են բոլոր ծախսերս, տուն, ծառայ, կերակուր եւ այլն, խումբս կազմել եմ եւ պատրաստել երկու համերգ. մէկը նոր կիւրակէին, միւսը՝ յաջորդին. ապա երեւի նոյն բաները կրկնութիւններ կանեմ զանազան թաղերում: Մշտական խումբ¹ ունեմ բազկացած 200 հոգուց, երկսեռ եւ ընտիր ձայներ: Թէ՛ ընդունելութիւնը եւ թէ՛ ընտրութիւնը խիստ եմ կատարել, որպէսզի գործը հիմնաւոր բռնեմ: Այժմ բոլոր ուժերս կրկնապատկել եմ, որ

Երաժշտանոցի գործը գլուխ բերեմ. ուզում եմ նախ շէնքը գլուխ բերել, որ տեւական լինի. ուստի գործը ձգձգւում է մի քիչ, բայց հոգ չէ, յոյսս վառ է, անպատճառ գլուխ պիտի հանեմ եւ քեզ էլ պիտի քաշ տամ էստեղ: Անցեալ օրը եկաւ մի հայ աղջիկ, ձայնը փորձեցի, ա՛խ, Մարգօ ջան, մօտս լինէիր եւ մի լսէիր: Խելագարուելիք բան էր. բնութիւնն ամէն բան կատարեալ է տուել. ձայն, հասակ, գեղեցկութիւն, խելք, շարժուձեւ, զգացում, շնորհալիութիւն... մի խօսքով, ես խելագարուեցայ, բայց..., բայց... ամեն բան վերջացած էր դորանով. մայրը ամուսնացնելու է հէնց էս Զատկից յետոյ, նոր կիւրակէին. մայրն էլ մօտս էր. սաստիկ զայրացայ եւ. ասացի, որ մարդասպան է ինքը. մի այսպիսի հրաշք հանգնում է. աղջիկն սկսաւ լալ եւ խոստովանեցաւ, թէ որքան աղաչել է մօրը, որ ուղարկէ իրան արտասահման, սովորէ, ինքն զգացել է, թէ բան կայ իր մէջ, այրուել է: Լսել է դեռ անցեալ տարի, թէ ես գնալու եմ Եւրոպա, վերջապէս համոզել է մօրը, որ ինձ հետ Եւրոպա ուղարկէ, այն էլ դժբաղդութիւն. ես արդէն մէկ օր առաջ գնացած եմ եղել. եկել են հարցըել ինձ, եւ ես արդէն ճանապարհին էի դէպի եգիպտոս. այսպէս խաւարել է, յուսահատել է. շատ համոզեցի, որ գոնչ նշանածի հետ գնան, եւ մարդ դառնայ, բայց անհնարին է. նշանածը չէ կարող իր գործերը թողնել. ահա ձեզ, թէ ինչե՛ր են կորչում եւ ինչպէս, ինչ տաղանդներ եւ հանճարներ են անյայտանում, այրում տգիտութեան երեսից: Գալով օրիորդ Գաւանոզեանին², որին այնչափ սիրալիը ընդունել ես, չատ լաւ աղջիկ է, այստեղ ուրիշ երգչուհի տեսած չլինելով՝ սաստիկ հպարտ եւ սնապարծ էր, ասում էին, բայց ես գիտէի, որ քու սենեակից ներս մտնելուց յետոյ նա նոր պիտի հասկանար իր ով լինելը եւ դեռ ինչեր

ունի սովորելիքներ: Ուրախ եմ, որ այդպէս էլ դուրս է եկել. երեւակայէ, որ իմ ասածիս մօտ նա ոչի՞նչ է ուղղակի:

Ուղարկել էիր յայտագրերը. շատ ուրախացայ, որ մեր ժողովրդական երգերի փառքը տարածում ես երաժշտական աշխարհում: Իսկ երգի տպագրութեան յանձնելուդ համար նեղանալու բան չունեմ ամենեւին. շատ էլ լաւ ես արել:

Երգերիս տպագրութիւնը փորձանքի է հանդիպել. իմ ձեռագրերը, որ յանձնել է հաշիւ տեսնելու համար Breitkopf Herteli-ին, ուղարկել է էջմիածնի հասցէովս, իսկ էջմիածնում իմ ընկերներից ոչ ոք չկայ. միւսներին էլ վստահութիւն չունեմ. մի քանի ամիս է, ինչ գտնում են Պետերբուրգ՝ դաշնակցականների պատճառն իբր վկայ. ուստի եւ ուշացաւ տպագրութիւնը. մինչեւ ձեռագիրներս չստանամ, չեմ կարող տպագրութեան ուղարկել. սեւագրութիւնները մօտս են, բայց ժամանակ չունեմ արտագրելու համար, ուստի եւ այսպէս էլ մնացել են:

Ա՛խ, որքա՞ն եմ ցանկանում, որ մեր երաժշտանոցը բացուէր, եւ դու էլ դայիր այստեղ, ու միասին առաջ մղէինք երաժշտութիւնը մեր շրջանի մէջ. չես իմանում, թէ ինչ ընդունակութիւններ կան եւ որքան սիրում են գեղարուեստ, թէեւ անպատրաստ են եւ չեն հասկանում. երբ դպրոցը բացուի, մեծ բան կարող ենք անել, հէնց որ մի քիչ ապահով դրութեան մէջ ընկնի գործը, քեզ կգրեմ, եւ կգաս: Մասնաւոր դասերով էլ եմ զբաղւում, թէեւ քիչ. չեմ ուզում ժամերս դասերով վատնել:

Ամեն օր մինչեւ կէսօր աշխատում եմ ինձ համար եւ ապա զբաղւում եմ դասերով, այնպէս որ բաւականին նոր բաներ եմ գրել. գիտեմ, որ շատ պիտի հաւանես:

Երկու հատ էլ տաճկերէն երգ եմ գրել, մէկը Սուլթանի, միւսը՝ սահմանադրութեան նուիրուած, որպէսզի գործերնիս յաջողուին, եւ բաւական ընդարձակ շրջան անեմ պալատի մէջ: Երեկ Սուլթանի արարողապետն էր եկել այցելութեան, չես իմանում, թէ որքան են պոպիկ երաժշտութիւնից, թէ եւ սա բաւականին հասկանում է, մեծ կրթութիւն եւ ուժ ունի: Այսօր այսքան: Շատ բարեւէ բոլոր տնեցոց եւ տղայոց:

Սիրալիր եւ կարօտալիր բարեւներով եւ քեզ օրհնելով
եւ օծելով՝

Կոմիտաս Վարդապետ

Յ. Գ. Հինգ նոր ստացայ վերջին դրկածդ ծրագիրը.
Հնորշակալ եմ. չատ ուրախացայ, որ հայ երգերն ու երա-
ժշտութիւնը ընթացիկ ճանապարհի վերայ դնելու ոչ մի
ջանք չես խնայում. ապրե՞ս:

1912, 12 մայիս, Կ. Պոլիս, Pangaltı N 83 (47)

Սիրելի՝ Մարգօ,
Այս կիրակի 4-րդ եւ վերջին համերգս է¹. անցեալ
շաբաթ էլ գնացի իզմիր, Ատա-Բազար, Արմաշ եւ Պարտի-
զակ՝ դասախոսելու եւ երգելու: Առ այժմ լաւ եմ: Գործերս
այնպէս եմ դասաւորել, որ ամեն օր մինչեւ կեսօր զբաղ-
ւում եմ իմ գործերովս, ապա՝ աշակերտներիս: Երկու շա-
բաթից պիտի գնամ Leipzиг², եթէ փողս ներէ՝ Փարիզ էլ
կհանդիպեմ, յատկապէս ձեզ տեսնելու համար: Խումբս,
որի անունը «Գուսան» եմ դրել (չին Գողթան հայ եր-
գիչների, ժողովրդական աշուղների անունով, որ Գուսան

էին կոչւում), շատ յառաջադիմեց. եկող տարի աւելի կատարեալ կլինի, եւ շատ բան կարող եմ անել: Ժողովրդի մէջ համակրանքս շատ է, բայց դեռ շարժուող չե՞ն. ստրկութիւնն այնպէս է ճգմել, որ ինքնուրոյն ու վստահ գործի եռանդ չէ մնացել մէջերնին:

Ամերիկա գնալու մասին էիր գրել, բայց առ այժմ ստիպուած եմ այդ միտքը յետաձգել, մինչեւ որ մի գործ գլուխ բերեմ:

Ա՛յս, շատ բան ունեմ գրելիք, բայց ժամերս այնպէս են դասաւորուած, որ հնար չունեմ երկարաբանելու:

Ուղարկում եմ քեզ լուսանկարս, որ ուզել էիր, եւ համերգներից մէկի ծրագիրը:

Ուրախ եմ, որ դուն էլ գոհ ես քու աշակերտներից ու ահագին գործ ես կատարում. արդէն իսկ քեզի ճանաչեցին Փարիզում, այս մի մեծ ու ուժեղ գրաւական է գործերիդ յաջողութեանը համար, եւ որ գլխաւորն է, ապագադ պայծառացաւ, ու մի ընդարձակ տեղ գրաւեցիր հայ երաժշտութեան պատմութեան մէջ քո աննկուն ու եռանդուն աշխատութեամբդ օտարութեան մէջ, ուր քեզ աւելի են հասկանում, քան քու հայրենիքումդ. բայց մեր ժողովուրդն էլ մեղաւոր չէ. գեղարուեստը դեռ նոր է ոտք գնում մեր կեանքի ասպարէզը, եւ յոյս ունեմ, թէ շուտով առաջ պիտի երթանք, զի ատաղձ շատ կայ, եւ ընդունակութիւններ պէսպիսի են:

Այստեղ պատերազմի պատճառով գրամը դժուարացել է. ուստի գործերիս մի քիչ ազդեց. բայց պատերազմի դադարելով յանկարծական կերպով պիտի ազդէ, եւ դուռը նորէն պիտի բացուի, ու պիտի գործեմ ու գործեմ:

Միրալիր ու կարօտալիր բարեւներս հայրիկին, մայրի-

կին, Լալուաներին³, Քարբօնէլներին⁴ եւ մեր պատուական գրագէտ ու աղբէր տղաներին, որոնք գիտեմ, որ քո շուրջդ ես խմբել արդէն:

Ողջունելով սիրալիր եւ քեզ՝

քոյդ Կոմիտաս

21

<1912, 10 յունիս, Փարիզ>

Սիրելի՛ Մարդօ ջան,

Այսօր իրիկուն հրաւիրուած՝ եմ ընթրիքի Գարիբեանի¹ մօտ. շատ ու շատ ցաւում եմ, որ քեզ մօտ չեմ կարողանալու մնալ. բայց անպատճառ կհանդիպեմ, կարեւոր բաներ ունեմ հաղորդելու:

Երեւի ես վաղը կերթամ Անգլիա². Հրաւէր եմ ստացել՝ հայ երաժշտութեան մասին դասախոսելու:

Շատ բարեւներով եւ կարօտով՝

քոյդ Կոմիտաս

22

1912, 15 դեկտեմբեր, Կ. Պոլիս

Pangaltı, Pera 83 (47)

Սիրելի՛ Մարդօ,

Իսկապէս ես յանցաւոր եմ. այսքան ժամանակ է քեզ բան չեմ գրում: Ի՞նչ անենք, ես նամակի բարեկամ չեմ:

Շատ եւ շատ ուրախ եմ, որ յաջողութիւն ունես օտար երկնքի տակ եւ դժուարահաճ շրջանի մէջ. այդ ապացոյց է, որ քո մէջ կայ գործելու պաշար, չնորհք ու եռանդ. միշտ էլ այդպէս վառ ու պայծառ մնաս:

Մաննիկին¹ երկու անգամ միայն տեսայ: Ձայնը լաւ է, լեցուն զգացում ունի, բայց անդեկ, անկայուն եւ մանաւանդ ծոյլ է երեւում: Ամբողջ ամառ ոչի՞նչ չէր արել, եւ

որ գլխաւորն է, եկաւ ինձ մօտ, ես առաջարկեցի օգտակար լինելու պատրաստակամութիւնս. մէկ դաս եկաւ, էլ չերեւեցաւ: Ուզում էի հայկական գեղջուկ-երգական հնչիւնները սովորեցնել եւ յետոյ երգեր անցնել: Վերջին անգամին էլ նկատեցի, որ հարբուխ ունի. արգելեցի երգելը՝ մինչեւ առողջանալը, այնուհետեւ էլ չերեւեցաւ: Երեւում է, որ ձայն, ընդունակութիւն եւ ամեն յարմարութիւն ունի, բայց մի փոքրիկ բան՝ կամք չունի. շատ ցըուած է, տարուած եւ ձանձրացող երեւոյթ ունի: Ես ստիպեցի, որ անմիջապէս դառնայ Փարիզ եւ քո մօտ վերջացնէ. քեզ, որ այդքան սիրում է եւ քեզմով հիանում եւ շատ գոհ է:

Ուրախութեամբ պիտի երգել տայի իմ խմբի մեներգներէն, սակայն հանգամանքները գէշ դասաւորուեցան, ու մնաց:

Տիխիս գնալուն ես խորհուրդ չեմ տար, զի չեմ կարծում, թէ նոցա գոհացնէ, այնտեղ պատրաստուած են եւ պահանջկոտ են, մեղք է: Իսկ այստեղ մասնաւոր համերգ տալու եւ շահելու վրայ վստահ չեմ. դեռ չեն ճանաչում:

Միայն՝ ոչինչ չեղած տեղը, այդ էլ բան է:

Տիգրան Նալբանդեանի² մասին բան չէիր գրել: Կարծես մեր հայերիս ընդհանուր յատկութիւնն է, որ չենք կարողանում մի բան մինչեւ, վերջը տանել, մակերեսային կամ բնաւ զարգացում չառնելով՝ միշտ անկատար ու պակասաւոր մարդիկ ենք հասցնում: Պատճառները չեմ ուզում քննել, թերեւս արդարանալի են: Լստ իս, Տիգրանն էլ անկազմ, անկերպարան անձնաւորութիւն է, որ աւելի աշխարհիկ է, քան վերացական-գեղարվեստական կերպով բարձր, բայց ձայնը՝ քնքոյշ թաւշային, անբռնազբօսիկ, թէեւ ոչ ընդարձակ. եւ թովիչ յատկութեան շնորհիւ ուղղակի դիմանում է, բայց առաջ գնալու, բարձր բեմի

ծառայելու դրական հող չունի ոտքի տակ, որքան ես գիտեմ, կեանքն էլ, խիստ անկանոն է վարում: Իմ անձնական կարծիքն է՝ պատրաստուել կատարելապէս եւ այդպէս հրապարակ ելնել, որ իր ապագան հարթուի, անշուշտ, եթէ լրջութեամբ միայն զբաղուի:

Գալով իսկուհին՝ Ղաւանոգեանին, նոյնպէս եռանդ, ընդունակութիւն եւ աշխատասիրութիւն ունի, սակայն վատն այն է, որ աւելի ճգտումն ունի ձայնի ընդարձակման, քան խորութեան, որ կարող է լուրջ արգելք լինել նորա ապագայի համար. մանաւանդ զարգացում չունի, որ գլխաւոր պատճառն <է> նորան դէպի արտաքինը՝ երեւութականը մղելու, քան խորանալու, երգի հոգին ծծելու:

Երկուքն էլ ունեն դրական եւ բացասական առաւելութիւններ, բայց երկուքի մէջն էլ բացասականը տիրապետող լինելով՝ չեմ կարծում, որ բարձր գեղարուեստի ծառայեն կամ յարմարին, ճիշտ այնպէս, որպէս Շահմուրադեան³:

Ես աշխատում եմ մի շարք գիտական եւ ստեղծագործական բաներով, որոնց մասին կտեղեկացնեմ ժամանակին, երբ վերջացնեմ: Կեանքս լաւ է, բնակարանս յարմար, աշակերտներս ուշադիր, մարդիկ եմ պատրաստում գաւառներում ուսուցչութեան եւ խմբեր կազմելու համար: Բայց գիտես, որ ժամերս չեմ վատնում: Օրուան մէջ մինչեւ կէսօր ինձ համար է, աշխատում եմ անձնական գործերովս, իսկ կէսօրէն յետոյ էլ, երբեմն ինձ եւ երբեմն էլ աշակերտներիս համար եմ յատկացրել: Պատերազմների պատճառով խմբիս դասերը դադրեցուցի, խաղաղութիւնը հոչակուելուն պէս կսկսեմ: Այս տարի սովորեցնում եմ հարսնիքի երգերը գլխաւորապէս եւ մի քանի խմբերգեր

Վագներէն ու Վերդիէն, որպէս եւ իմ մեծ ու ընդարձակ պատարագը, որ յոյս ունեմ այս Զատկին երգել տալու, որից արդէն անցել եմ մինչեւ «Սուրբ-սուրբը», եւ շատ յաջող է առաջ գնում:

Ներկայ անվստահութիւնը գեռ չէ վերացել, ուստի ես էլ դեռ երգարաններս Leipziger-էն չեմ ստացել, թէ եւ տպուած ու պատրաստ են միանգամայն: Սպասում եմ պատերազմի ելքին: Ստանալուն պէս կուղարկեմ քեզ: Ուղարկում եմ քեզ իմ ընտիր լուսանկարս, մի պզտիկ յիշատակով քեզ:

Յաջողութիւն ու քաջառողջութիւն: Հայրիկին, մայրիկին, Շարլին, Լոյսին, Արմենուհուն ու Շուշիկին սիրալիր բարեւներս ու մի-մի սիրով պաչիկ մեր պզտիկներին'.

Քեզ բարեւներով ու կարօտով մնամ, քոյդ աղօթարար՝

Կոմիտաս Վարդապետ

23

1913, 9 փետրուար, Կ. Պոլիս

Սիրելի՝ Մարգօ ջան,

Այս նամակովս խնդիրք ունեմ քեզ անելու: Ուզում եմ մէկ Flügel գնել, փոքր տեսակէն, իմ անձնական գործածութեան համար: Արդեօք, իբր արթիստ, չե՞մ կարող մի լաւ Flügel ստանալ քո միջոցաւ, զիջումով, Paris-էն: Ընտրութիւնը քեզ եմ թողնում, թէ ո՛ր գործարանին կդիմես եւ ո՛րը կընտրես, բայց ես սիրում եմ կակուղ, երգող, խաղաղ ու սահուն ձայն ունեցողը: Ուստի խնդրում եմ, անմիջապէս մէկ լաւը գտիր, ձեռնտու պայմանով եւ ուղարկել տուր իմ անուան: Յուսամ, թէ բոլոր հնարքներդ գործ պիտի դնել կարողանաս՝ ինձ համար մի

ընտիր բան ուղարկելու: Կարող եմ անմիջապէս փողն ուղարկել. գնի՛ր ու ինձ մի նամակով յայտնիր, թէ որքա՞ն են ուզում, կամ որքանի՞ ես գնել:

Մեր վիճակն անորոշ է, շատ վատ է. կեանքը կանգ է առած, գործ չկայ. ես էլ խումբս առ այժմ արձակել եմ, անապահովութեան պատճառաւ:

Ամփոփուել եմ մասնաւոր դասերով եւ իմ անձնական աշխատանքներով:

Երգարաններս էլ դեռ չկարողացայ ստանալ Leipzig-էն, գրում են, թէ առաքումն անապահով է:

Շահ-Մուրատն¹ եկաւ, անցաւ Կովկաս. ինձ այցելեց երկու անգամ. երգեց, ինչ որ էր՝ էլի այն է...

Այսպէս, Մարգօ՛ ջան, շատ եմ խնդրում, որ իմ նուագարանի գործը փութով յաջողցնես. Lalois-ն էլ քեզ կօգնէ, խնդրիր իմ կողմից:

Շատ կարօտով եւ սիրալիր բարեւներս մայրիկին, Հայրիկին, Շուշիկին, Արմենուհուն, Քարբոնելին, Լոյսին, պղտղիկներին եւ քեզ:

Յաջողութիւն եւ քաջողջութիւն,

քոյդ կոմիտաս Վարդապետ

Յ.Գ. Փանոսը² շատ բարեւներ է ուղարկում քեզ եւ բոլորիդ:

Սիրելի՛ Մարգօ ջան,
Բաց նամակներդ շատ ուրախացուցին, եւ աւելի եւս՝
յաջողութիւններդ, որ ունեցար եւ կունենաս մայրաքա-

ղաքիդ մէջ. իւրաքանչիւր մի բառ, որ կկարդամ քու գործնէութեան մասին, սիրտս խորապէս կյուզուի, եւ կուրախանամ հայ արուեստի գնահատութիւնը լսելով:

Այս տարի երկու համերգ միայն կարողացայ սարքել, զի պատերազմն ու անապահովութիւնը արգելք եղան աւելին անելու: Բայց ուրախ եմ ասելու, որ արդէն դեպանական մարմինները անխտիր եկել էին համերգիս, եւ քանիցս հրաւիրուել եմ իրենց մօտ մեծարանքի. բոլորն էլ հիացած՝ են մեր գեղարուեստէն, եւ այն եկեղեցին, ուր կերթամ երգելու, միշտ օտարներով կհետաքրքրին:

Մարգօ ջան, այս շաբաթ օր ես գնում եմ կովկաս² երգեր հաւաքելու, կմնամ մինչեւ սեպտեմբեր, երբ կդառնամ կ. Պոլիս: Եթէ յարմարեցնել կարողանանք, կարող եմ մի երկու շարաթով գալ Փարիզ, այն ժամանակ եւ կազմակերպենք մի շքեղ համերգ. իսկական ժամանակն է հայի՝ մարդկութեան պէտք անհատ լինելը ցոյց տալու համար ցուցնել իր ստեղծագործող ուժը. ես այստեղ եմ տեսնում մեր ապագան ու փրկութեան միակ ուղին:

Եգիպտոսէն մի հայ աղջիկ է գալու տեղի՝ Հրանուշ Փոլադ անունով եւ ուզում է ձայնը մշակել, ես քեզ եւ քո դպրոցդ եմ յանձնարարել, եւ ուղղակի կու գայ քեզ մօտ սովորելու, լաւ աղջիկ է, կրթուած է եւ շատ սէր ունի դէպի երգը, ձայնն էլ լաւ է, եթէ չեն խանգարել Եգիպտոսի ապիկար ուսուցիչները, որոնք կոկորդային ձայներ են զարգացնում:

Այսպէս, մնաս բարով եւ ցտեսութիւն թերեւս, սիրալիր բարեւներս բոլորիդ եւ Գաւանոզին ու[...]

Սիրալիր ողջոյնս առ քէրթէնքէլէդ,

Քոյդ Կոմիտաս Վարդապետ

Սիրելի՝ Մարդօ ջան,

Տեսնում ես, որ Էջմիածնում եմ, բայց չե՛մ եկել մնալու. ուզող էլ չկայ, որ մնամ, այլ՝ մատենադարանում աշխատելու եւ գեղջուկ երգեր հաւաքելու։ Առաջին գործս վերջացրի, երկրորդն էլ վաղն եմ սկսելու եւ սեպտեմբերի սկզբին դառնալու եմ Կ. Պոլիս՝ իմ գործի գլխին անցնելու։

Նոր Զօպանեանից էլ նամակ եմ ստացել, գրում է, որ ջրերն է գնացել. գրում է, որ այս ձմեռուան համերգներն ու խմբումները շատ յաջող են անցել, եւ որ շատ ընտիր երգել ես դու եւ քեզ հետ մասնակցողները։ Որքա՞ն ուրախ եւ հպա՞րտ եմ հայի ստեղծագործութեան գնահատումը լսելով։ Մենք ատոնց մտքի եւ սրտի զէնքն էինք բռնելու եւ ոչ թէ փայտի ու մետաղի, որոնք հզօրագոյնի հզօրագոյն հարուածով մէկէն ջախջախուեցան. բայց մեր մտքի ու սրտի զէնքն ա'յնքան թափանցիկ, ա'յնքան կենսունակ է, որ օտար մտքերն ու սրտերը ուզե՞ն-չուզե՞ն՝ պիտի գերեն. ահա՛ կենդանի է զէնքը, որի զինուորն եմ ե՛ւ ես, ե՛ւ դու, ե՛ւ բոլոր նոքա, որոնք իրենց ցեղի ազնիւ միտքն ու, սիրտն են հրապարակ հանում եւ այնո՛ւ շարժում սառն քաղաքակէտի պաղ սիրտը՝ մի փոքր էլ մեր կենսունակ եւ մարդկութեան պիտանի ժողովրդին ու ազգին նայելու, խնայելու եւ նորա մասին մտածելու։

Վանքը շատ խղճալի տպաւորութիւն թողեց վրաս։ Գլուխն՝ անգլուխ, ոտքերը՝ բազմուտանի, խելքը՝ ցամքած, գործը՝ մեռած, կիրքը՝ զարթուն... Մի բերան չասացին նո՛յնիսկ, թէ ինչո՞ւ չես մնալու, ինչո՞ւ չես մնում, ինչո՞ւ հեռացել ես վանքից... Արդէն ոսկի էլ թափէին՝ չէի մնալու, բայց եւ այնպէս

մարդ կարող էր զգալ, թէ մի օր այնտեղ գործ է կատարել եւ կեանք է մաշել՝ ջանք թափելով անձնութիրաբար: Վանքի երգեցողութիւնը դարձել է գիւղականէն ստոր. Ժխոր, աղաղակ, խառնակաձայն ճչեր, ահա քեզ երգեցողութիւն...

Էլ նամակ չգրես, մինչեւ ես Կ. Պոլսից չգրեմ քեզ, թէ հասայ, զի գիւղերումը պիտի լինեմ եւ շարունակ ճանապարհորդելով եմ դառնալու:

Շատ ու շատ կարօտով ու սիրալիր բարեւներս Զերոնց բոլորին:

Քոյդ Կոմիտաս Վարդապետ

26 1913, 20/7 նոյեմբր, Կ. Պոլիս
Pangaltı, Pera, 83 (47)

Սիրելի՝ Մարգօ,

Նամակդ վաղուց եմ ստացել, բայց գործերս այնպէս են խառնաշփոթել, որ մի շնորհքով գրիչ առնել չկարողացայ ձեռս, միշտ գործերս ընդհատուեցան՝ այլ եւ այլ հանդէսների շնորհիւ: Վերջապէս այսօր առաջին նամակս քեզ եմ գրում: Գրածդ յօդուածների շարքը «Ազատամարտ»-ի էջերում շատ լաւ տպաւորութիւն թողեց ժողովրդի վերայ եւ բաւական երկար ժամանակ խօսակցութեան նիւթ եղաւ. քեզ ճանաչեցին, եւ շատ ուրախ եմ: Արդէն տիրացուների ատամները թափել եմ. Էլ ո՞չ ուժ, ո՞չ անուն ունեն, իրենց գրածները խորտակումի պատճառ դարձաւ:

Արմենակ Շահմուրագեանն այստեղ է, ինձ մօտ, տանս. Համերգը շատ յաջող անցաւ, պատրաստում է երկրորդի համար. ապա պիտի գնայ իզմիր, Մոսկվա եւ Պետերբուրգ: Գարնան վերջերում պիտի գամ Փարիզ երաժշտական համաժողովի համար. արդէն հրաւէր ստացայ մասնակ-

ցելու մէկ դասախոսութեամբ, յանձն առայ եւ պիտի խօսեմ «Հայ խազերի եւ գեղջուկ երաժշտութեան» մասին. արդէն գրել էի, թէ պիտի մասնակցեմ եւ խնդրել, որ Reglement-ները դրկեն ինձ, բայց ցարդ տեղեկութիւն չստացայ. արդեօք իմ նամակս հասա՞ւ, թէ՞ ոչ. չեմ իմանում. խնդրեմ մեր Lalois-ից հարցուր եւ իմացիր, թէ արդեօք իմ նամակն ստացել են, թէ՞ ոչ. եթէ չեն ստացել, յայտնէ, որ յանձն եմ առել կարդալու յիշեալ երկու նիւթի մասին.

Ա. Հայ խազերը՝ եկեղեցական ձայնանիշերը:

Բ. Հայ գեղջուկ երաժշտութիւնը:

Նոյնպէս յայտնելու, որ մի մասնակցութիւն եւս չնորհեն մեզ՝ հայերիս, որպէսզի մեր ուժերով եւ մէկ փոքրիկ խմբով մեր երգերէն մի քանի նմոյշ երգենք, մէկ համերգիկ տանք համաժողովի առաջ¹, որ շատ լաւ տպաւորութիւն կթողնէ մեր երաժշտութեան մասին: Եթէ համաձայն ես, մենք բոլորս, ովքեր որ գանք, ես, դու, Շահմուրադն արդէն խոստացաւ ինձ, Մաննիկը, իսկուկը² եւ միւսները՝ երգով, իսկ մեր սիրելի Շուշիկը՝ դաշնակով. չէ՞ լա՞ է. լաւ չե՞մ մտածել, եւ այժմէն կազմենք մեր ծրագիրը, թէ ինչ պիտի անենք եւ ըստ այնմ պատրաստուենք գործի: Առաջին խումբ աշակերտներս հասան եւ վարժարանների մէջ դասաւու են եւ շատ գոհ են թողել բոլորին, ահա՛ այս էր պատճառը մի շարք վլվլուկների, որ Պոլսի տիրացուները հանեցին: Նախանձ, նախանձ, նախանձ...

Աշխատում եմ, նոր-նոր բաներ եմ գրել, կգամ, եւ կտեսնես:

Շատ եւ կարօտալի բարեւներս Զերոնց բոլորին եւ իսկուկին, Մաննիկին եւ բոլոր հարցանողաց:

Քոյդ Կոմիտաս Վարդապետ

Սիրելի՝ Մարգո ջան,

Նամակդ ձեռս հասաւ այն ժամանակ, երբ արդէն բանը բանից անցել էր, բժիշկը յանձնել էր թուղթը Ազգային ժողովի ուշադրութեանը, եւ կարդացուել, ու նոյնիսկ թերթերումն էլ տպել էին. բայց կտակը ո՛չ մի դրամական բան չէ, այլ զուտ հայրիկիդ այն ազգասիրական ու գործունեայ ոգուց բղխած խրատական-առաջարկ՝ ազգային կեանքի վերաբերեալ. լավն էլ այն է, որ առանց որեւէ ազմուկի եւ շատախօսութեան անցաւ-գնաց: Ո՛չ մի անհանգստութեան պատճառ չունէք: Ցաւում եմ, որ նամակդ շատ ուշ հասաւ, թէ չէ այդ էլ չէի թողնի անել եւ բանալ կտայի իմ ներկայութեանը նախապէս, եւ ապա գեկուցանել կտայինք, եթէ զեկուցանելիք բան լինէր, Ազգային ժողովին. ինչ որ է, երեւի բարին այդ է եղել:

Պատմելիքներս կուգամ, եւ մի քանի ամսէն իրար կտեսնենք, եւ մեր ցաւերն ու ուրախութիւնները կպատմենք իրար:

Սիրալիր բարեւներս բոլորիդ: Այս կիրակի՝ 22-ին, համերգ ունեմ. ուղարկում եմ ծրագիրը:

Քոյլ Կոմիտաս Վարդապետ

ՍՈՖԵԱ. ԲԱԲԱՅԵԱՆԻՆ

<1906, 2 Հոկտեմբեր, Փարիզ>

Մեծարգոյ տիկին Բաբայեան,

Արդէն Փարիզում եմ եւ բնակւում եմ Հայոց եկեղեցում. Rue Jean Goujon, 15. անշուշտ մի յարմար օր պէտք

է այցելեմ. առ այժմ խիստ զբաղուած եմ տպագրութեան յանձնուելիք գործերովս¹. ուստի ներողութիւն եմ խնդրում զանց անելուս համար: Օրիորդները Ե՞րբ պէտք է գան: Այս կիւրակէ եկեղեցու տօնն է: Ես կերգեմ, դպրութիւն կանեմ. հաւանական է եւ մի քանի կտոր էլ եռաձայն երգել տամ:

Շատ յարգական ողջոյններով՝ մնամ

Զեր խ<ոնարհ> ծ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

ԲԱԲԿԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

<1909, յունուար, Ս. Էջմիածին>

Հոգեշնո՛ր Տ. Բաբկին վարդապետ,

Սիրելի եղբայր ի Քրիստոս,

Զեզ մի փոքր նեղութիւն պէտք է տամ, յուսով եմ՝ չէք մերժելու:

Մի քանի տարի առաջ Կեսարիոյ առաջնորդ Գերապատիւ Տ. Տրդատ եպիսկոպոս Պալեանը իր վիճակի Ս. Դանիէլ վանքի ձեռագրերի մէջ գտել էր հայ հին երաժտութեան վերաբերեալ ձեռագիր, որի համառոտ բովանդակութիւնը տպել էր տուել «Հանդէս ամսօրեայ»ի մէջ¹: Ես քանիցս դիմեցի Գերապատիւ Հօր, թախանձագին խնդրելով, որ կա՛մ ձեռագիրը, կա՛մ ընդօրինակածը բարեհաճէ դրկելու, որ իբր երաժիշտ, օգտուեմ եւ մեր Ս. Հայրերի հոգեշունչ մըմունջները լոյս հանեմ՝ համեմատելով այլ ազգաց երաժտական խազաբանական օրէնքների հետ, բայց, ի ցաւ, Սրբազն Հայրը պատասխանեց, թէ

Ճեռագիրն ուղարկել չէ կարող, վախենում է՝ ճանապարհին կորչէ, եւ խօսք էր տուած, երբ եպիսկոպոս Ճեռնադրուելու գայ, հետը բերէ, եւ ես արտագրեմ։ Երբ եպիսկոպոսն եկաւ, ես Գերմանիոյ ուսանում էի, բայց խնդրել էի իմ ընկերներին եւ աշակերտներին, որ Սրբազնը Ա. Էջմիածին պէտք է գայ եւ հետը բերէ մի Ճեռագիր, արտագրեն եւ ուղարկեն. Սրբազնը եկաւ, գնաց, բայց Ճեռագիրը չէր բերած հետը։

Ուստի ստիպուեցայ նորից գրելու եւ խնդրելու, որ կա՞մ Ճեռագիրն ուղարկէ, կա՞մ արտագրել տայ, կա՞մ լուսանկարել տայ Էջերը եւ այնպէս ուղարկէ։ Պատասխանեց, թէ Ճեռագիրն ինձ կծախէ 300 ըուբլով, իհարկէ, ես չէի կարող եւ չեմ էլ կարող մի այնպիսի գումար վճարել։ Այժմ յոյսս Դուք էք մնացել, Հայր պատուական. Եթէ Դուք Զեղէն կարող էք իմ փափագս լրացնել, յուսամ, թէ չէք զլանար, իսկ եթէ ոչ, իմ կողմից խոնարհաբար համբուրելով Գերապատիւ Սրբազն Հօր² Ա. Աջը, խնդրեցէք։ Լիայոյս եմ, որ այս անգամ գոնէ Ճեռագիրը կարող կլինեմ ստանալ, արտագրել եւ ապա անմիջապէս յետ դարձնել։ Ուրախութեամբ կկամենայի վճարել 300 ըուբլին եւ գնել Ճեռագիրը, բայց, որպէս գիտէք, իմ ստացած տարեկան 300 ըուբլի ոռնիկովս ե՛ւ եմ ապրում, ե՛ւ իմ թշուառ հօրաքրոջս բազմանդամ ընտանիքը։

Եղբայրաբար խնդրում եմ Զեղ, որ միակ յոյսս էք մնացել, եւ գիտցէք, որ եթէ գլուխ հանէք, անշուշտ մեծ ծառայութիւն մատուցած պէտք է լինէք մեր եկեղեցական երաժշտութեան զարգացման գործին։

Սպասելով Զեր պատասխան գրութեան՝
մնամ աղօթակից՝

Կոմիտաս Վարդապետ

ՄԻՒԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆԻՆ

1896, 4 յունիս, Բերլին

Սիրելի՝ Մինաս,

Անցագրի պատճառով երկար նեղութիւններ կրելուց յետոյ հասայ Բերլին եւ իջեւանեցի Գարեգին սարկաւագի¹ մօտ: Մերոնց բոլորին բարեւ: Հայր սարկաւագ Զէօրէք-չեանին² ասա, որ շուտով նամակ կդրեմ իրան եւս իր խնդրածների մասին: Խարքովում այնպէս շփոթուեցանք, որ մինչեւ իսկ ես եւ Բենիկը³ մնաս բարեաւ չկարողացանք ասել: Առ այժմ կզբաղուեմ գերմաներէնով եւ դաշնակով:

Հասցէս. Berlin Höchstestir, 41 Archidiakonus Garegin Howsepianz. յանձնել եւ այլն: Հայրիկին եւ Զերոնց նոյնպէս ողջոյն բարեմաղթէ:

Աղօթարար Կոմիտաս

ԳՅՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

1911, 26 դեկտեմբեր, Կ.Պոլիս

Ամենապատի՛ւ S. Տեղապահի Հայրապետի

Ամենայն Հայոց

S. Գէորգ Արքեպիսկոպոսի,

Բարձր Սրբազն Հայր,

Որովհետեւ ես մնալու եմ Կ. Պոլիս, ուստի խնդրում եմ, բարի եղէք հրամայելու, որ կարճեն իմ էջմիածնի միաբանական ռոճիկս:

Կուզէի անձամբ գալ ու հրաժեշտ տալ, բայց ռուս կառավարութեան ներկայացուցչութիւնները՝ դեսպանա-

տունն ու հիւպատոսարանը ըստ պահանջման օրինաց, իբր տաճկահպատակ Հոգեւորական, անցագիրս չվաւերացրին (ուղիղ 4 շաբաթ է անցել, որ դիմել եմ Պետերբուրգ եւ ցարդ պատասխան չկայ բարձրագոյն իշխանութիւնից)։ Ես էլ, ժամանակս ի գուրք չանցնելու համար, սկսեցի գործովս զբաղուել։

Մատչելով ի համբոյր Զերդ բարձր Սրբազնութեան Աջին՝ մնամ Ամենապատիւ Տեառնդ իւ<ոնարհ> եւ ծ <առայ> եւ որդի

Կոմիտաս Վարդապետ

ԳԵՂՐԳԵԱՆ ՀՈԳԵԻՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ

1896, 31 դեկտեմբեր, Բերլին

Վարչութեան Գէորգեան Հոգեւոր ճեմարանի

Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի,

ի Կոմիտաս Վարդապետ Գէորգեան

Տեղեկագիր ուսմանցն

ի բարձր բարեհաճ տնօրինութիւն եւ ի ծայրագոյն հրաման Վէհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց Տ.Տ. Մկրտչի Ա՝ յուղի անկեալ ի Գերմանիա, առ ի լցուցանել զթերիսն յուսումն երաժշտութեան, եւ ի հնդետասներորդի ամսեանն յունիսի այսր 1896 ամի ի մայրաքաղաքն ի Բերլին հասեալ զհետ եղէ յառաջագոյն հմտանալոյ ի գերման լեզուի յերեսունն յուլիսի. յորքամ սկիզբն արարեաց հրահանգաց գեղարուեստին երաժշտութեան առ ուսուցչապետի՝ Königlicher Professor und Musik-Direktor Richard Schmidt¹ հնդետասներորդն հոկտեմբերի ի կատար ածի.

ա. Զուսումն երաժշտական ներդաշնակութեան (Harmonielehre):

բ. Զուսումն դարձուածոց դասական երաժշտապետաց (Modulation der klassischen Meister). անտի ցարդ, ի ձմեռնային կիսամեակի, ցկատարած:

գ. Զիմստ ոճ (զեկեղեցականն իմա) երաժշտական շարադրութեան (Der strenge Satz in der musikalischen Compositionslehre), եւ արդ սկսեալ է իմ լսել:

դ. Զազատ ոճն (Contrapunkt und Fuge im freien (modernen) Tonsatz einschliesslich Chorcomposition):

ե. Զդաշնակն (Klavier) ընդ յար:

Համանգամայն, իբրեւ զուսանող, ի համալսարանի մայրաքաղաքիս լսեմ ժամս ութն զհետագայսս.

զ. Զպատմութիւն երաժշտութեան ի ԺԶ դարու անտի ի վեր (Musikgeschichte vom 16. Jahrhundert an. Professor Fleischer²):

է. Զերաժշտական գիտնական զհրահանգս (Musikwissenschaftliche Uebungen im Instrumenten-Museum. Professor Fleischer):

ը. Զտարերս երաժշտականի շարադրութեան (Die Elemente der musikalischen Composition):

Զայսպիսի աւարտեալ եւ թերի պարապմանցս իմոց խոնարհաբար զեկուցանել Վարչութեանդ զանձինս վարկանեմ զպատիւ:

Խոնարհ սան ճեմարանիդ՝

Կոմիտաս Վարդապետ Գէորգեան

ՀՐԻՓՍԻՒՄԸ ԵՆԳԻԲԱՐԵԱՆԻՆ

1

<1907, 7 մայիս, Փարիզ>

Սիրելի՝ Հռիփսիկ,

Այս երկու անգամ է, մեր Վարդուկն ինձ գրում է, թէ
քո հասցէն ուղարկում է, բայց մոռանում է. նա էլ չի
իմանում, որ ես արդէն գտել եմ: Էս ա, էս մարդոց հետ
գալու եմ քեզ մօտ ու ծեծելու:

Շատ բարեւ՝

Կոմիտաս

2

<1907, Փարիզ>

Սիրելի՝ Հռիփսիկ,

Շատ ես իք ելել, էլի շատ ես իք լինելու, որ իք արիր
ու իք չասացիր, թէեւ իքեր էիր ասելու:

Քո Կոմիտաս

ՄԱՐԻԱՄ ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

1

1904, 22 յունուար, Ա. Էջմիածին

Ենորհափայլ իշխանուհի,

Ուրախութեամբ կարդացի պ. Յ. Թումանեանի «Անու
շը» եւ շա'տ անուշ գտայ. պատրաստ եմ Ձեր փափագն
իրագործելու¹ բայց՝

ա) խնդրեցէք, իմ կողմից, պ. Բանաստեղծին 1) կարճէ՝
ծերուկի խօսքերը (երես 113-114). 2) լրացնէ՝ «Հալալ է
տըղին» (երես 115, վեր). 3) կանանց կոծը պակաս է (120),

կարող է օգտուել վերջին «Ազգագրական հանդէսից». 4) նոր գրել՝ սարերի ոգիների ու ջրերի ալքերի երգը, որ գրաւում է Անուշին, եւ ջուրն է ընկնում (միայն 3 տուն լինի, վերջին տունն արդէն կայ «Վուշ-վուշ») (126-127): Լրացնելուց յետոյ արտագրէ ինքը եւ ինձ ուղարկէ, եթէ երաժշտութեան բարեձայնութեան համար փոխելու բառեր լինեն՝ նշանակեմ: Իւրաքանչիւր գերակատարի անունը նշանակէ իր երգելիքից առաջ՝ տողասկզբին: Որքան կարելի է խոյս տայ թուրքերէն բառերից, երգի ոգին պահելու համար: Ամբողջութեան կապն իբրեւ երաժշտական երկ թերի է, կիսնդրեմ՝ լրացնէ. օրինակ, մայրը ձորն ի վայր ձայն է տալի (100), իսկ աղջիկն ու հովիւր խօսակցում են, ուրեմն բեմի վերայ չեն երեւայ, որ անյարձար է:

բ) Գրուածքը շուտ պատրաստէ, որ ես էլ ուսումնասիրել կարողանամ ու երաժշտութեան ծրագիրը մշակեմ: Զեմ կարող որոշ ասել, թէ երբ պատրաստ կլինի, որովհետեւ ես մենակ եմ, եւ բոլոր գործերն ինձ վերայ են ծանրացած. ԳՀԿՐՔԵԱՆ> ճեմարանում դաս ունեմ, Մայր Աթոռի խումբն եմ վարում², Միջազգային երաժշտական ընկերութեան գիտական ժողովածուին ուսումնասիրութիւններ եմ տալիս³, վերջերս աւելացաւ եւ պ. Տ. Նազարեանցը⁴: Կ.Պոլսից Վահրամ արքեպիսկոպոս Մանկունու⁵ յանձնարարութեամբ դասագրքեր եմ պատրաստում, պ. Մ. Աբեղեանի⁶ հետ ժողովրդական երգերի բառերն ենք խմբագրում. պատրաստում եմ եղանակները տպագրել տալու, աւելացրէք եւ իմ մասնաւոր զբաղմունքներս, կտեսնէք, որ բացի ամառնային հանգստի ժամերից ուրիշ ազատ ժամանակ չունեմ, բայց եւ այնպէս ուրախ եմ Ձեր իդան իրագործելու համար:

գ) Մեծչարիքն այն է, որ երաժշտական գործիքներ չու-

նեմ, որ գրածներս անմիջապէս փորձել կարողանամ եւ
ուղղեմ, կոկեմ. խցումս մի շատ փոքրիկ (4 ութեակ) երգե-
հոն ունեմ (Harmonium)⁷. ի՞նչ արած, անճարը կերել է բան-
ջարը:

ի սրտէ յաջողութիւն եմ ցանկանում Ձեր բոլոր ձեռ-

նարկութիւններին:

Ողջոյն յատկապէս պ. Բանաստեղծին:

Քեզ ծառայելու միշտ պատրաստ է դժու այս մասնաւու-
թան առ առ

Կոմիտաս Վարդապետ

2 1905, 28 փետրուար, Ս. Էջմիածին

Ազնուափայլ իշխանուհի,
Խնդրեմ, եթէ կարելի է, շուտով պատասխանէք՝
ա) Քանի համերգ պիտի լինի¹. բ) իւրաքանչիւրը
որքա՞ն պէտք է տեւի՝ առ առաւելն կամ առնուազն: Այս
հարցերը տալիս եմ, որորհետեւ շնորհաշուք տիկին
Ղամբարեանը² հեռագրով՝ ուզել էր համերգի բառերը:
Ինձ համար դեռ պարզ չեղաւ՝ արդեօք գրաքննիչին
բառե՞րը, թէ՞ ծրագիրն է ներկայացուելու: Խնդրեմ,
հաճէք մի երկտողով պարզել³:

Ձեր միշտ պատրաստակամ խ <ոնարհ> ծ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

3 1909, 12 փետրուար, Ս. Էջմիածին

Ազնուափայլ իշխանուհի

Մարիամ Թումանեան,

Արդեօք յարմա՞ր էր այն օրը՝ մարտ 14 կամ 15-ը, մեր

Համերգի համար, եթէ չէ՝ կարող էք նոյնպէս 21-ին նշանակել, եթէ այդ օրը թոյլատրելի է:

Խնդրեմ, մի երկտողով, իմաց արէք, որովհետեւ գիւղի օրիորդներն ուզում են միատեսակ զգեստ կարել տալ:

Հոգեւոր բաժին եւս աւելացրի, 7 կամ 8 կտոր բան:

Ստացայ մանկական պատկերազարդ տետրերը¹: Հիանալի են: Այդ հրատարակութեամբ Դուք լեցրիք մեր բոլորովին դատարկ մանկական գրադարանը: Յանկանում եմ կատարեալ յաջողութիւն շարունակելու:

Մաղթելով Ձեզ քաջողջութիւն՝ մնամ Ձեր միշտ անձնուէր

Կոմիտաս Վարդապետ

4 1909, 14 փետրուար, Ա. Էջմիածին

Ազնուախայլ իշխանուհի

Մարիամ Թումանեան,

Ձեր նամակն ստացայ հէնց ուրբաթ օրը եւ անմիջապէս հեռագրեցի Ձեզ: Թատրոնի վարձուած լինելն արդէն խիստ մեծ անյարմարութիւն է համերգի համար, իսկ բարեգործական երեկոյթներին վճռել եմ այլեւս չմասնակցել, որովհետեւ ինձ միայն շահագործում են: Լաւ է թողնենք մի այլ աւելի բարեյաջող ժամանակի, մի բան, որ իմ խումբն արդէն պատրաստ կլինի ամեն մի ըոպէ համերգ տալու:

Մանաւանդ, որ բարեգործական մի շարք երեկոյթներ են ծրագրուած, ինչպէս գրել էք, աւելի շուտ այնտեղ կերթան, քան համերգ կգան: Եթէ յարմարութիւն ունենամ, երեւի կգամ մի երկու դասախոսութիւն կանեմ մեր երաժշտութեան մասին առհասարակ:

Մեր Յովհաննէսի չարձակուելը¹ շատ վատ տպաւորութիւն թողեց վերաս, որքա՞ն զրկում է մեր գրականբանաստեղծական կեանքը նորա անգործ բանտումն ընկած մնալովը:

Ի հարկէ, երեւի դեռ երկար կպահեն, մինչեւ ամբողջ կծիկը բաց անեն: Լսում է, որ շատ խիստ որոնում են զանազան տեղերում մի շարք անձանց: Այս խմորը դեռ չատ ջուր կառնի:

Ուրեմն այս անգամ համերգը չենք տայ եւ կսպասենք յարմարութիւնների:

«Անուշն» առաջ է գնում, էլի մի շարք նոր բաներ գրեցի: Մնացել եմ մոլորուած, Յովհաննէսի բանտարկութիւնն էր պակաս, էլի կիսատ մնաց «Անուշ»ի երգական խմբագրութիւնը. յոյս ունէի, որ կդար այս տօներին, եւ վերջ կտայինք, այդ էլ այդպէս մնաց:

Ողջունելով Ձեզ՝ ցանկանում եմ Ձեզ քաջողութիւն: Ձեր միշտ անձնուէր

Կոմիտաս Վարդապետ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

1 1908, 24 մայիս, Ս. էջմիածին

Սիրելի Յովհաննէս,

Ափսոս, որ Տփխիս եղած ժամանակս քեզ տեսնել չկարողացայ. պէտք է մի լաւ ծեծէի: Այս աղբէր, քեզ սպասելով աչքս ջուր դառաւ, չէ՞ որ դու ասել էիր, թէ Զատկի տօներից յետոյ կդաս մի քանի օրով: Էսա Համբարձումն էլ անցաւ, դեռ դու չերեւացիր, եւ ես ստիպուած, յոյս էլ

կտրած, առայ գրիչս, որ քեզ լաւ հայհոյեմ, բայց ջահել ջիւանիդ ախոսացի, էս անդամ ձեռիցս պրծար:

Աղբէ՛ր, վաղուց է սկսել եմ եւ բաւական բան գրել քո «Անուշ»-ից², բայց դեռ պակասաւոր բաներ շատ կան, որպէսզի մի ամբողջութիւն դառնայ: Այս գիրս առնելուն պէս գրիչդ կառնես եւ ինձ մի դրական բան կգրես: Այս ամառուան արձակուրդին պէտք է զբաղուեմ առաւելապէս «Անուշ»ով: Գրի՛ր, թէ ե՞րբ կարող ես մի քանի օրով ինձ մօտ հիւր գալ, եւ այստեղ միասին վերջացնենք, եւ ես հանգիստ շարունակեմ. ամեն անգամ, երբ տրամադրութիւնս տեղն է, ձեռքերս թուլանում են, որովհետեւ երգի յարմարեցրած չեն դեռ բաներ, եւ պակասներ էլ կան:

Սպասում եմ պատասխանիդ:

Կգաս եւ առանց այլ եւ այլութեան կիջնես ինձ մօտ, եւ միասին կաշխատենք: Գալուդ օրը եւ ժամը հեռագրով իմացուր, որ կառք ուղարկեմ քեզ համար կայարան:

Շատ բարեւներ տիկնոջ, օրհնութիւն սիրասուն զաւակներիդ եւ քեզ մի լաւ համբոյր:

Քո Կոմիտաս

Հասցէս գրի՛ր այսպէս՝ Թշմաաձին, Կոմիտաս Վար-
ձառետ

Յ. Գ. Ստեփան Լիսիցեանին³ եւ տիկնոջ յատկապէս բարեւներս. նոյնպէս եւ Շանթին⁴ ու տիկնոջը: Ստեփանին ասա, որ եթէ հնար է, մի քանի օրինակ ուղարկէ ինձ համար իմ գրած «Կաքաւի երգ»ից⁵. զանազան երաժիշտներին, հաստատութիւններին եմ նուէր ուղարկելու, որոնք հետաքրքրում են իմ գրուածներով:

Սիրելի՝ Յովհաննէս,

Էջմիածին չեկար, մոծակից վախեցար. Էղ պիծի մոծակն ի՞նչ է, որ մարդս նորանէն վախենայ, ես քեզ այն պիսի տեղ տայի, որ մոծակ չէ, մոծակի աղբէրն իր ճտերով չէր կարող մուտք գործել:

Բան չունեմ ասելու: Ուզում ես Դիլիջան, բարի՛. դաշնամուրի հոգ մի՛ անիր. իմ գալու կամ քո գալուդ նպատակն է լինելու միայն եւէթ բառերը՝ բանաստեղծութիւնը լրացնել գերակատարներով եւ երգերով, մի խօսքով՝ կազմել լիբրէթօն: Իսկ միւս բաները՝ երաժշտականը, կկազմեմ ես միայն Էջմիածնում, ուր իմ սենեակում հարկաւոր յարմարութիւններն էլ կան ինձ համար:

Մանրամասն ծրագիրներս կպատմեմ, երբ տեսնուենք, շատ դժուար է երաժշտութեան մասին գրով խօսել-բացատրուելը:

Առ այժմ ես էլ եմ զբաղուած. մինչեւ ամսիս վերջը շտապ գործեր ունեմ հասցնելու եւրոպական թերթերի համար, յետոյ մասամբ ազատ եմ: Ես որոշել եմ այս ամառն անցնել Էջմիածնում, բայց մի 10 օրով կգամ Դիլիջան, մինչեւ «Անուշը» լրացնենք:

Իշխանուհի Թումանեանին յատկապէս բարեւներս յիշիր:

Քեզ, տիկնոջ, ճտիկներիդ էլ մի բոլ գնացքով սիրալիր ողջոյններս:

Համբոյրներով՝

Գո Կոմիտաս

3 1908, 2 յուլիս, Ա. Էջմիածին

Սիրելի՝ Յովհաննէս,

Երեկ Լիպարիտն այստեղ էր, ասաց, որ Դիլիջան չես գնում: Ճի՞շտ է, եթէ այո՛, ինչո՞ւ ինձ չես գրում մի երկտողով, ես արդէն պատրաստում էի ճանապարհ ընկնելու ասաց, որ Ձեր գիւղն ես գնալու, շատ լաւ. եթէ այդպէս է, էլի՛ գրիր, կարող եմ Ձեր գիւղն էլ գալ եւ տեղական խօսակցութեան ձայնաստիճանը եւ ուրիշ կարեւոր նիւթեր կգրեմ եւ կուսումնասիրեմ: Շուտով գրի՛ր, որովհետեւ գործերիս դասաւորութիւնը քեզնից է կախուած:

Մինչեւ ամսիս 10-ը կսպասեմ, յետոյ կելնեմ, երեւի Տփխիս, մի քանի բաներ ունեմ տպագրել տալու:

Շատ սիրալիր բարեւներով, համբոյրներս՝

քո Կոմիտաս

4 1913, 19 յուլիս, Ա. Էջմիածին

Սիրելի՝ Յովհաննէս,

Հակառակ բոլոր փափագիս, չկարողացայ քեզ տեսնել Տփխիսում:

Ես եկել եմ, սիրելի՛ս, միայն շատ կարճ ժամանակով, այստեղ: Ձեռագիրներ եմ նայում եւ գեղջուկ երգեր հաւաքում: Իսկ սեպտեմբերին պիտի գտնուեմ անպատճառ Պոլիս, ուր արդէն հաստատուել եմ եւ գործ եմ սկսել: Ունեմ ինձ համար անձնական դպրոց, ուր պատրաստում եմ խմբապետներ եւ երգիչներ. ունեմ 300 հոգուց բաղկացած երկսեռ խումբ, որի անունն է «Գուսան»:

Համերգներ եմ սարքում եւ դասեր տալի. ահա կար-
ճովի իմ կեանքս՝ նո՞ր կեանքս:

Շատ եմ ցաւում, որ չեմ կարողանալու «Հայ գրողների
ընկերութեան» սարքելիք գրական երեկոյթին մասնակցել,
զի, որպէս ասացի, պաշտօնովս կապուած եմ Պոլսում:

Յաջողութիւն եմ ցանկանում ընկերութեանդ:

Ողջոյններս քոնոնց եւ ծանօթ հարցնողներին:

Միրալիր բարեւներով՝

քո Կոմիտաս Վարդապետ

ՄԱՍԹԷՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆԻՆ

1

<1908-ի վերջ կամ 1909-ի սկիզբ, Ա. Էջմիածին>

Նորին Ամենապատութեան Պատրիարքի Կ. Պոլսոյ
Տ. Մատթէոս Արքեպիսկոպոսի Խզմիրլեան
Ամենապատի՛ւ Բարձր Սրբազն Հայը,

Ստացայ եւ սրտիս անպատմելի յուզումով կարդացի
Ազգային Կենտրոնական Վարչութեան կրօնական ժողովի
համար 56, 1908, 29/ԺԱ յանձնարարագիրը: Սրբազն
պարտքս եմ համարում անմիջապէս պատասխանել:

Ա. Ա. Էջմիածնի մէջ երգուող արդի Պատարագի՝ իմ
սրբագրած եղանակները տակաւին անտիպ են¹: Կարտա-
գրեմ եւ կարելոյն չափ շուտով մէկ օրինակ հայ եւ մէկ՝
եւրոպացի նիշերով կուղարկեմ: Ուղարկելիքս է միաձայն
երգեցողութեան սրբագրուած կտորները միայն:

Բ. Երկձայն Պատարագ չեմ գրել: Աչքի առաջ ունե-
նալով պատարագի երգեցողութեան այլազան բովանդա-
կութիւնը՝ չէ կարելի միապաղաղ, սկզբից մինչեւ վերջ

միայն երկձայն, եռաձայն, քառաձայն եւ այլն գրել, այլ ըստ պահանջման երաժշտական, փիլիսոփայական եւ գեղագիտական օրէնքների, պէտք է լինի երբեմն մէկ, երբեմն երկու-երեք, չորս, հինգ, վեց եւ այլն ձայնով դաշնակուած:

Իմ կազմած բազմաձայն Պատարագը միանգամայն անյարմար է Կ. Պոլսոյ եւ ազգեցութեան տակ եղած վայրերի համար:

Նախ՝ անհրաժեշտ է վերականգնել ազգային երգական հնչիւնը, որ Տաճկաստանի հայաբնակ քաղաքների եւ նոցա յարակից գիւղերի մէջ, ըստ մեծի մասին, կորած է եւ բացառապէս սնունդ է առնում մի այնպիսի հնչիւնից, որ օտար-մեղկ է եւ զուրկ հոգեւոր-յատակ ջերմութիւնից. Ընդհակառակը թմրեցնող ու աւելի զուարճացնող է, քան ջերմեռանդրւթեան եւ աղօթքի տրամադրութիւն առաջ բերող:

Երկրորդ՝ ազգային հնչիւնը, որ ազգային երաժշտութեան կեանքի զարկերակն է, վերականգնելու համար պէտք է նախապատրաստել դպրապետներ՝ հայ երաժշտական ոգով եւ ապա շատ զգուշավոր մերձենալ բազմաձայն երգեցողութեան կիրառութեան, որպէսզի չխեղուի բնիկ ազգային ճաշակը, հնչիւնը, երգը, ելեւէջը, ուրեմն եւ ազգային երաժշտութեան ոգին:

Խիստ բաւարար է նոյնիսկ միաձայն երգեցողութիւնը, եթէ Պատարագի երգերի ուրոյն բովանդակութեան համաձայն հոգեւոր գգացմունքները որսան մեր դպրապետները եւ փչելով եղանակների ելեւէջների մէջ հաւատացեալ շունչ, առանց գոռում-գոչումի, առանց քիմքը պարուրող գեղգեղանքների, միայն բառերի իմաստի մէջ թագնուած ելեւէջները ի վեր հանեն:

Յիրաւի բազմաձայն երգեցողութիւնը սքանչելեաց սքանչելիք է, բայց եթէ անդէտ մարդու ձեռքով՝ պատրաստուի, կարող է միայն բազմութիւն ձայների, նոյնիսկ գողտը երգուած դէպքում, անմիաբան զուգահեռականութիւն առաջ բերել, որ բոլովվին հակառակ է բուն բազմաձայն գեղարուեստի նպատակին ու ոգուն:

<...>

2 1909, 19 յուլիս, Ս. Էջմիածին

Ամենապատիւ Բարձր Սրբազն Հայր Տէղապահ և
Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան Պատրիարք Կ. Պոլսոյ.
Ամենապատիւ Տէր, Համարձակութիւն եմ առնում մի
կարեւոր խնդիր անելու:

Պաշտօնական պատասխանագրիս մէջ¹ յիշուած Պատարագի սրբագրուած երգերը մեծ մասով յոյն, տաճիկ, պարսիկ եւ արաբ խառնաշփոթ եղանակներով են կազմուած. ես ջանացի եղածը հնարաւոր չափով յարմարեցնելու մեր լեզուի առողանութեան օրենքներին: Բայց, որքան էլ յաջողեցայ մի ընդհանուր կապ հաստատել, այնուամենայնիւ օտար են եւ մուրացածոյ. նոցա շարժած զգացումները չեն համապատասխանում մեր սրտի սեփական յուզումներին:

Որպէսզի կարողանամ իմովսանն օժանդակած լինել ընիկ ազգային երաժշտութեան հիմնաւոր հաստատութեան, նախ՝ սկսայ շատ մանուկ հասակիցս հետեւել-ժողովել եւ գրի առնել հայ հոգեւոր եւ աշխարհիկ-գեղջուկ եղանակները: Երկրորդ՝ Ս. Էջմիածնի, Վենետիկի, Բերլինի,

Փարիզի հայ ձեռագրերը պրատելով՝ հանեցի եւ ի մի ժողովեցի բոլոր հին հայ երաժտութեան խազաբանութեան վերաբերեալ կանոններն ու օրէնքները եւ կազմեցի մի երաժտարան-դասագիրք: Թէեւ ջուրն իր ճանապարհն է գտել, սակայն դեռ պակասում են ինչ-ինչ կարեւոր տուեալներ:

Արդ, Ամենապատի՛ւ Տէր իմ, Կեսարիոյ Ս. Դանիէլ վանքի ձեռագրերի մէջ Տրդատ Սրբազան Պալեան գտել էր ուղիղ 14 տարի առաջ մի կանոնագիրք հայ խազաբանութեան մասին: Անմիջապէս դիմեցի եւ խնդրեցի, որ կա՛մ ուղարկէ, կա՛մ արտագրել տայ եւ կա՛մ լուսանկարել տայ իմ հաշուին: Սակայն ի զարմանս ստացայ մի գիր, որով առաջարկում էր ինձ վճարել 300 ըուբլի եւ ձեռք բերել այդ նորագիւտ ձեռագիրն՝ իբր սեփականութիւն²: Ես ի վիճակի չէի մի այդպիսի ապօրէն գործ կատարելու, ուստի, մինչեւ օրս, ուղիղ 14 տարուան ընթացքում արածս բոլոր յուսադրող դիմումներն ապարդիւն անցան՝ այդ ձեռագիրը ձեռք բերելու եւ ուսումնասիրելու համար: Ոչ ոք չհասկացաւ այն դառն կսկիծը, որ ես զգացի: Դիմեցի նոյնիսկ հանգուցեալ Հայրապետին³, բայց անտարբերութեամբ վարձատրուեցայ:

Կատարելապէս վստահ Զերդ Տիրութեան վերայ, խնդրում եմ հրամանագրել տաք, որ այդ ձեռագիրն ուղարկուի ինձ՝ գոնէ արտագրելու համար:

Միակ ցանկութիւնս եւ բուռն փափազս է բանալ այն վարագոյրը, որով ծածկուած են մեր հին եւ բնիկ եղանակները մեր սրտի եւ հոգու առաջ:

Երբ այդ ձեռագիրն անցնէ ձեռս, ունեցածս օրէնքների վերայ անշուշտ աւելանալու են նորերը, որոնք աւելի դիւրութիւն են ընձեռնելու ինձ՝ օր առաջ հրապարակ հանելու

մեր երկնային-մաքուր եղանակները։ Մեր եղանակների գիւտը համաշխարհային երաժշտութեան համար մեծ նշանակութիւն ունի։

Յոյս է [...] , որ Զերդ Ամենապատութեան հզօր Զայնը վերջակէտ պիտի դնէ այս տխուր-անլուր իրականութեանը։

Ներողութիւն հայցելով Զերդ Բարձր Սրբազնութիւնից պատճառածս նեղութեան համար, գալիս եմ կրկին խնդրելու, որ Զեր բազմազբաղ կեանքի մի վայրկեանն էլ հաճէք ինձ շնորհելու։

Մատչելով խորին ակնածութեամբ ի համբոյր Սրբազն Աջոյն՝ մնամ լուսակացնելու համար կամ Զերումդ Ամենապատութեան խոնարհ ծառայ եւ անձնուէր որդի՝

3. 1909, 5 սեպտեմբեր, U. Էջմիածին
Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց
Տ.Տ. Մատթէոս Բ-ի.

Վեհափառ Տէր, ա մասն Խոնարհ ծառայ միաբան միաբան տարի է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան եմ։
Մտել եմ այս հաստատութեանը ծառայելու նպատակով։
Քսան տարուան ընթացքում շրջապատն ինձ թոյլ չէ տուել այն անելու, ինչ կարող էի, որովհետեւ տեսայ միայն որոգայթ եւ ոչ արդարութիւն։ Նեարդերս թուլացել են, այլեւս տոկալու ճար ու հնար չունեմ։ Որոնում եմ հանգիստ, չեմ գտնում. ծարաւի եմ ազնիւ աշխատանքի, խանգարւում եմ, փափագում եմ հեռու մնալ, խցել ականջ-

ներս՝ չլսելու համար, գոցել աչքերս՝ չտեսնելու համար, կապել ոտքերս՝ չգայթակղուելու համար, սանձել զգացումներս՝ չվրդովուելու համար, բայց զի՞ մարդ եմ, չեմ կարողանում: Խիղճս մեռնում է, եռանդս պաղում է, կեանքս մաշլում է, եւ միայն վարանանքն է բուն դնում հոգուս ու սրտիս խորքում:

Եթէ հաճոյ է Վեհիդ ինձ չկորցնել, այլ գտնել, արտասուելով աղերսում եմ՝ արձակեցէք ինձ Ա. Էջմիածնայ Միաբանութեան Ուխտից¹ եւ նշանակեցէք Սեւանայ Մենաստանի մենակեաց: Քսան տարին կորցրի, գոնէ մնացած տարիներս շահեցնեմ եւ անդորրութեամբ զրի առնեմ ուսումնասիրութիւններիս պտուղները՝ իբր առաւել կարեւոր ծառայութիւն հայ տառապեալ սուրբ եկեղեցւոյ եւ գիտութեան:

Վեհափառութեանդ ծառայ եւ որդի՝

Կոմիտաս Վարդապետ
միաբան Ա. Էջմիածնի

4 1909, 11 դեկտեմբեր, Ա. Էջմիածին

Նորին Վեհափառութեան

S. S. Մատթէոսի Բ-ի Սրբազնագոյն

Հայրապետի Ամենայն Հայոց

Զերդ Վեհափառութեան բարձր հրամանով Հայրապետական դիւանն ուղարկել էր ինձ «Երգեցողութիւնք Ա. Պատարագի, դիւրին մշակմամբ դպրոցական եւ ժողովրդական եկեղեցական քառաձայն խմբերի համար» տետրերն ի քննութիւն (1909, նոյեմբ. 27, համար 515)¹:

Դաշնաւորողը նպատակ է դրել՝

ա. կազմել մի այնպիսի քառաձայն երգեցողութիւն Ս. Պատարագի, որ մատչելի լինի «դպրոցական եւ ժողովրդական քառաձայն խմբերի համար»:

բ. Որքան կարելի է երգեցմունքի տեւողութիւնը կարճէ:

Այս նպատակներն աչքի առաջ ունենալով՝ շոշափել ենք միայն հիմնական հարցեր՝ եղանակ, տաղաչափութիւն եւ դաշնաւորումն:

Ա. Եղանակ: Դպրոցական եւ ժողովրդական խմբերի գործը դիւրացնելու համար.

ա. Եղանակների վեհութուրակները դարձել են չոր ու ցամաք, մերկ ու լերկ:

բ. Մի շարք եղանակներ նորալուր եղանակներ են մուտք գործել, որոնք ո՛չ միայն աղգային-եկեղեցական հիմք չունեն, այլեւ պարզապէս տիրացուների յեղյեղուկ եւ քմահաճոյ երգեցողութեան արդիւնք են:

Ամբողջ Ս. Պատարագի երգեցողութիւնը պէտք է ներկայացնէ մի շարայօդուած միութիւն եւ մի ոճ, ոչ թէ ամենատեսակ եղանակաւորումների ժողովածու:

Բ. Տաղաչափութիւն: Այնպիսի սղումներ են կատարւած, որոնք հայ տաղաչափութեան անդորր ու վեհ շարժուները ճեղքելով՝ ընդհատում են իրանց թեթեւ եւ լպրծիւն ընթացքով:

Վանկերի սղումն կատարւում է հայ եկեղեցական երգեցողութեան մէջ միայն որոշ տեղերում եւ այն՝ նախադասութեան սկզբներին. բառերի կէսին՝ եւ ո՛չ մի ժամանակ: Իսկ վանկաչափութեան օրէնքները միանգամայն խանդարուած են:

Գ. Դաշնաւորումն: Դաշնաւորել է Մակար Եկմալեանի աղգեցութեան տակ եւ այն խիստ անշնորհք կերպով:

Դաշնաւորութեան զանցառութիւնները եւ ո՛չ մի կերպ չեն արդարանում ո՛չ արեւմտեան եւ ո՛չ իսկ արեւելեան երաժշտութեան օրէնքներով, մանաւանդ հոգեւոր երաժշտութեան համար:

Համանուն կիսոլորտների ընթացն օտարոտի է մեր երաժշտութեան համար, դաշնաւորման շարայարութիւններն՝ անյարիր:

Դաշնակների ընտրութիւնն արուած է անխնամ կերպով. ներկայացնում են ո՛չ թէ մտացի շաղկապ, այլ դաշնակների արուեստական կցումն:

Որ արեւելեան է, դեռ չէ նշանակում, իբր թէ կանոնից ու օրէնքից գուրկ բան, եւ կամ թէ իբր զանցառութիւնն արեւելեան եղանակներին է յատուկ. դեռ չյիշենք եւ այս, որ մեր եղանակները ո՛չ արեւելեան եւ ո՛չ արեւմտեան են բացառապէս: Ո՛չ. հէնց շատ կանոնաւոր են որպէս արեւելեան, նոյնպէս եւ մեր եղանակները: Պէտք է որոնել եւ գտնել նորան յատուկ օրէնքները եւ ո՛չ թէ մուրացածոյ օրէնքներով չափել-ձեւել: Մեր կտորին կարմիր կարկատան չեն ձգի, որքան էլ վերջինն արժէքաւոր լինի:

Առհասարակ չպէտք է արտօնել մի գրուածք, ով ուզում է դաշնաւորած լինի, առանց նախապէս ենթարկելու մի մասնագէտ ժողովի մանրազնին քննութեան. թէ չէ, մենք կունենանք եկեղեցական եղանակների մի այն-պիսի խառնաշփորտութիւն (առանց այն էլ տակն ու վրայ է պիսի խառնաշփորտութիւն (առանց այն էլ տակն ու վրայ է պիսի խառնաշփորտութիւն), որի առաջն առնելն անհնարին կլինի:

Բոլոր գրուածքները պէտք է պատմական ազգային քննադատութեան բովիցն անցած լինեն եւ ոչ անհատական, եթէ, իհարկէ, մեր նպատակն է անաղարտ պահել մեկան, եթէ, իհարկէ, մեր նպատակն է անաղարտ պահել մերը: Մեր նախնի շարականագէտները, երաժիշտները, ա-

ռանց բացառութեան, մշակել են մի ինքնուրոյն, ազգային եկեղեցական երաժշտութեան ոճ, որին անխափան հետեւել, զարգացրել են եւ տուել մեզ՝ յետնորդներիս, մի կուռ ամբողջութիւն, որ մերն է. պէտք է հետեւենք եւ մենք նոցա օրինակին:

Իւրաքանչիւր ազգի երաժշտութիւնը բղխում է իր մայրենի լեզուի չորս անբաժան յատկութիւններից՝ ամանակ, ելեւէջ, հնչիւն եւ ոգի. սոքա են պատկերացնում մտքի եւ զգացմունքի աշխարհները: Մինչեւ որ չուսումնասիրենք վեցյիշած չորս հիմնական յատկութիւնները մանրակրկիտ կերպով, մինչեւ որ նոցա օրէնքները չպարզենք ու մարզենք, չենք կարող կատարեալ դաշնաւորումն անել որ եւ է մի հոգեւոր կամ աշխարհիկ երգի:

Այս բոլորը մատուցանելով Զերդ Վեհափառութեան՝ մատչեմ ի համբոյր

Հայրապետական Աջոյ, իւ<ոնարհ> δ<առայ> եւ որդի:

Կոմիտաս Վարդապետ

5

1910, 12 յունուար, Ա. Էջմիածին

Զերդ Վեհափառութեան բանաւոր բարձր հրամանի համաձայն ներկայացնում եմ հետեւեալներն ի բարեհայեցողութեան.

Ա. Վերջին 20-30 տարիները պատկերացնում են մեր հոգեւոր երաժշտութեան աստիճանական անկումը՝ ընդհանուր հայ եկեղեցիներում: Ընկնում են եւ անյայտանում իսկական հայ հոգեւոր երաժշտութեան ստեղծագործութիւնները՝ շարականները, եւ տեղի տալիս պատարագի երգեցողութեանց:

Պատարագի երգերն գրեթէ անխտիր օտարամուտ եւ

անճաշակ եղանակներ են. Տաճկաստանում՝ տաճիկ-արաբ-յոյն, Պարսկաստանում՝ պարսիկ-արաբ, Ռուսաստանում՝ եւրոպական, մասնաւորապէս՝ ռուսական, մայր երկրում՝ այս բոլորի գումարը, իսկ գաղթավայրերում, բացի Հին ջուղայէն, աներեւակայելի այյանդակութիւն, այսինքն ամեն տեսակ անշնորհք երաժշտութիւն եւ ոչ մի ընդհանուր աղբիւր կամ ոճ երգերու:

Ազգային ճաշակն օտարացած եւ խորթացած, աւելին կասենք, ծաղրի առարկայ դարձած՝ յանձին տգէտ եւ անձնապաստան դպրապետների, որոնք չգիտեն իրանցը, չեն էլ ուզում որոնել, սովորել եւ արհամարհելով ամեն ինչ՝ բերում են իբր գեղեցիկ, ընտիր, բայց իրօք կործանարար երաժշտութիւն։ Ուստի եւ զարմանալի չէ այն ամայութիւնը, որ տիրում է հոգեւոր երաժշտութեան մէջ։

Եթէ դիտենք մեր պատարագի երգեցողութիւնն ուշի ուշով, իսկոյն կնկատենք, որ չկայ մի ընդհանուր՝ մայրենի լեզուի, սրտի, ոգուն համապատասխան ոճ, այլ կոյտ անճաշակ, այլանդակ, անշնորհք, ոչ մի հոգեւոր զգացում բովանդակող, անհատական՝ համայնքի հոգին բացակայող, տգէտ, մոխրացած եղանակների մի բիրտ շղթայ, ուր բացակայում է ամէն առողջ բան, «Տէր ողորմեա»ներ, «Ամէն եւ ընդ հոգւոյդ քում»ներ, «Սուրբսուրբ»եր, մեղեդիներ, սրբասացութիւններ, մի խօսքով, ամեն ինչ այնքան տեսակ սրբասացութիւններ, մտքայացնում, որքան որ երգիչ ու դպրապետ ենք է ներկայացնում, որքան որ երգիչ ու դպրապետ ենք ունեցել. բացակայում է միանգամայն առողջ քննական պատարագի երգեցողութիւնն, որ մեր հոգուն, մեր լեպատարագի երգեցողութիւնն, որ մեր հոգուն, մեր գուշին, մեր մտքին համապատասխանէր եւ մերովի զգացուին, մեր մտքին համապատասխանէր եւ մերովի զգացումների ու մտքերի թարգման հանդիսանար։ Ամբողջ ցումների ու մտքերի թարգման հանդիսանար։ Ամբողջ պատարագի երգեցողութեան մէջ չկայ ո՛չ հայ տաղաչապատարագի երգեցողութեան մէջ չկայ ո՛չ հայ տաղաչապատարագի երգեցողութիւն, ո՛չ հայ շեշտաւորումն, որոնք երկու երափութիւն, ո՛չ հայ շեշտաւորումն,

Ժըշտական-ազգային կենսական գարկերակներ են եւ որոնք կարող են միայն ազգային սիրտը սրբագործել։ Այստեղ լրենք։

Բուն ազգային եղանակները՝ հոգեշունչ, պարզ ու վսեմ շարականի երաժշտութիւնը, որ մեր նախնեաց նախանձելի հոգու պատկերներն ու հայելիներն են, որոնք մշտամրունջ էին, այժմ դատապարտուել են արհամարհանքի, կորստի եւ նախատինքի, աւելին կասեմ՝ տանում են մեր սիրտն ու հոգին դէպի խեղգող, օտարական ճանապարհները։ Եթէ վերջին նշոյլն էլ, որ մնացել է, մենք փչենք ու հանգնենք, այն ժամանակ մեր աչքով կտեսնենք մեր սրտի թաղումը, ապա ուրեմն եւ մեր կեանքի գոյութեան վառարանի հանգչելը։

Շարականի երգեցողութեան անկման շատ նպաստել են երկար ու ձիգ, անմիտ ձգձգումները (անյարիր նախատօնակները, հանգստեան շարը, քաղուածոյ շարը; անտեղի ճոխացումները), որոնք փոխանակ ոգեւորութիւն առաջ բերելու, խեղգել են մաքուրն ու պարզը... հասարակութիւնն այլեւս ձանձրացել է երկարաբանութիւններից, որոնք միայն եւ միայն վերջին տարիների անճաշակ նորամուծութիւններն են։

Մեղը քաղցր բան է, բայց շատ ուտել չէ կարելի։ Իւրաքանչիւր մարդ, որքան էլ ջերմեռանդ, որքան էլ բարի քրիստոնեայ լինի, չէ կարող մարսել միանգամից այդքան խառնաշփոթ կերակուր։ Եթէ երաժշտութիւնը, որի դերն է կրթել եւ ազնուացնել հոգեւոր երաժշտական զգացմունք՝ փչելով հաւատացեալի հոգու եւ սրտի վերայ, աննպատակայարմար մատակարարութեամբ բաշխուի, անշուշտ անգամ եւ կպատրաստէ եւ կխորտակէ սրտի քնքոյց լարերը եւ ապա կկտրէ, կանջատէ սիրտն ու հո-

գին, որոնք անբաժան գործօն եղայրներ են երաժշտութեան միջոցով մեր կեանքի մէջ:

Քանի ուշ չէ, պէտք է ձեռք զարնել վէրքը բուժելու, ինչքան էլ որ թանկ նստէ մեր վերայ, թէ չէ վերջնական կորուստն աներկեայ է:

Ա. Միջոցներ որոնել եղածն ու մնացածը գրի առնելու՝ իբր նիւթ ուսումնասիրութեան եւ գովք հոգեւոր երաժտութեան վերանորոգութեան:

Բ. Գումարել անմիջապէս հին եղանակներ իմացող անհատների եւ ստուգել արդի գրութիւնը՝ արտասանութեան, շեշտադրութեան, տաղաչափութեան, եղանակաւորութեան, ոճի եւ այլի վիճակը:

Գ. Քննել առ տեղեան կենտրոնական եւ մի քանի խուզ վայրերի երաժտական հոգեւոր աստիճանը:

Դ. Զթոյլատրել կամայականութիւններ, չթողնել, որ դպրապետներն ու երգչապետներն այնպէս տնօրինեն, որպէս նոցա քմահաճոյ է:

Ե. Հսկել անխափան հոգեւոր եղանակների հարազատութեան վերայ:

Զ. Կանոնաւորել եւ բարուոքել դպրաց դասը:

Ա. Պատրաստուած եւ յղկուած, ներհուն, երգածն ըմբռնող անձանց թոյլ տալ դպրութեան մերձենալու:

Բ. Որքան կարելի է կարճել եղանակների երգեցողութեան մասնակցելը՝ մանաւանդ նոցա համար անմարս եւ ձայներին վնասակար երգերի ժամանակ:

Գ. Բարձրացնել դպրաց դասի վարկը հասարակութեան աչքում թէ՛ նիւթապէս, թէ՛ բարոյապէս:

Է. Ակսել այս բոլորը նախ եւ առաջ եւ հիմնաւորապէս Մայր Աթոռի, Մայր Տաճարի, Մայր դպրաց դասից:

Ը. Մայր Աթոռում պատրաստել դպրոցներ եւ մատա-

կարարել եղանակներ տարբեր եկեղեցիների համար՝ ըստ հմտութեան եւ արժանի տեղեր բաշխելով:

Թ. Այս բոլորը կարելի է շատ հեշտութեամբ գլուխ բերել՝ չխնայելով ոչ մի միջոց:

Ժ. Ես անմիջապէս պատրաստ եմ իմովսանն ջան գործել եւ մարտին հասցնել, եթէ ինձ յարմարութիւններ տրուէին:

Այս բոլորից յետոյ համարձակութիւն եւ վստահութիւն եմ ստանում յայտնելու, որ արդէն 11-րդ տարին է, ինչ ես ուսումս կատարելագործել ու ստացել եմ Մայր Աթոռի երաժշտութեան պայծառութեան համար ծառայել, բայց իբր մի անպէտք կոճղ ընկած մնացել եմ այստեղ եւ բախտի հովերին յանձնուած, եւ. քանի ոսկի ժամանակն անցնում է, մարում է արդէն բոցը, հոգուս եռանդը, եւ մերձ է յուսահատութիւնն ու յուսախաբութիւնն, որ իբր մի երկգլխանի ճիւաղ ինձ պաշարել է, որից յետոյ մնում է ինձ միայն մի ելք, որոնել այլ տեղ, այլ հանգամանքներ, որպէսզի անպէտք ընկած չմնամ այստեղ:

Պահանջելն ամենախսկական խթանն է գործունէութեան, բայց փետրահան հաւի պէս նստեցնելն էլ նման է մարդու համար կարուած մի զգեստի, որ միայն պատից կախ մնում է, եւ մարդն էլ, որի համար է կարուած այդ զգեստը, կարօտ է հագուստի եւ մերկ է:

Այս բոլորը յայտնելով Զերդ Վեհափառութեան՝ աղերսում եմ եռանդուն միջոցներով հոգեւոր զօրաւոր երաժշտութեան հեղինակութիւնն ու դաստիարակութիւնը բարձրացնելու:

Զերդ Վեհափառութիւնը կարող է ամէն միջոց գտնել այս հիմնական ցաւը բուժելու:

Ակնածութեամբ մատուցանելով այս երկտող հիմնա-

կան դիտողութիւններս՝ ի համբոյր մերձենամ Զերդ Վե-
հավառութեան օծեալ Աջոյ [...] խ<ոնարհ> ծ <առայ>

Կոմիտաս

6 1910, 10 մայիս, Ս. Էջմիածին

Նորին Վեհավառութեան

Սրբազնագոյն Հայրապետի Ամենայն

Հայոց Տ. Տ. Մատթէոսի Բ.

Վեհավա՛ռ Տէր,

Հայ եկեղեցական երաժշտութիւնն անցեալ ժմ եւ
մանաւանդ ի դարում դէպի անկումն է դիմում: Ի միջի այլ
հզօր պատճառների, դէպի անկումն է դիմում, զի եկեղե-
ցիներում առաւելապէս ուշք են դարձնում լոկ Ս. Պատա-
րագի եւ այն աղաւաղուած երգեցողութեան, որ Հիմն ի
վեր կորցրել է իր պարզ ու փսեմ, անպաճոյն ու մանկական
միամտութեամբ համեմուած, անմեղ ու հաւատով ներկու-
ած եղանակները եւ տեղի տուել խառնաշփոթ, անյարիր,
անպատշաճ, մուրացածոյ եւ մեղկիչ երգեցողութեան: Մեր
նախնեաց արեւի պէս ջերմ, ողի պէս ջինջ ու ջրի պէս
կայտառ շարականները բոլորովին երկրորդական, նոյնիսկ
յետին տեղն են անցել, մուրացութեան մատնուել, որով մեր
հոգեւոր երաժշտութեան զարկերակն է կտրուել: Աղդ,
շարականագէտներն օր աւուր նուազում են, շարական-
ներն անարգութեամբ նսեմանում են, փոխարէն աճում են
թերուս ու տգէտ, անփորձ ու անշնորհք դպիրներ ու
դպրապետներ, որոնք նախ քան չտեսութիւնն երաժիշտք
են եւ որոնց անսանձ ու շահատակ կամայականութեանն է
յանձնուած հայ ժողովրդի հոգեւոր եւ պատասխանատու
դաստիարակութեան գեղարուեստականը: Զեմ խօսում

Հոգեւոր երաժշտութեան վեհ ու կրթիչ դերի մասին, այլ
ամենաէական ուրուագծերով ստորեւ շեշտում եմ, թէ
ինչպէս կարելի է վառել, ազգային հոգեւոր երաժշտու-
թեան վերակենդանութեան միջոցաւ, հայ-քրիստոնէի
սառած սիրտը եւ վերստին բորբոքել ջերմեռանդութեան
թագնուած հուրը:

Ա. Բանալ հայ հոգեւոր երաժշտարան, վարժապետ, եր-
դիչ, դպիր, դպրապետ, երաժիշտ ու առհասարակ հոգեւոր
պաշտօնէութիւն զինել, կորստից փրկել մեր նախնի
երաժշտութեան բեկորները, զարգացնել ազգային զե-
ղարուեստ եւ մեր երաժշտական ճոխ գրականութիւնը
ծանօթացնել օտարներին՝ ուսումնասիրութիւններ անելով
եւ համերգներ տալով:

Բ. Հաստատել Մայր Աթոռի տպարանում երաժշտա-
կան տպագրական բաժանմունք եւ հրատարակել, մի
ձեռնհաս քննիչ մարմնի հսկողութեամբ, հոգեւոր երգեցո-
ղութեան ամենատեսակ գրքեր ու տետրեր:

Գ. Ընդհանուր հայ եկեղեցիներում պարտադիր անել
միօրինակ հոգեւոր երգեցողութիւն:

Դ. Հայ եկեղեցիներում հանապազօրեայ դպրաց դաս
սահմանել:

Ե. Դպիրներին ընդունել խիստ ընտրութեամբ, իսկ
դպրապետներից պահանջել անժերի պատրաստութիւն
եկեղեցական գիտելիքների, երաժշտութեան եւ հաստատել
պաշտօնի մէջ մերձաւոր հոգեւոր բարձր իշխանութեան
միջոցաւ եւ յանձնել նորա յատուկ հսկողութեանն ու
խնամքին:

Զ. Հայ դպրոցներում հաստատել կանոնաւոր եւ ծրա-
գրուած երգեցողութիւն եւ տարրական երաժշտութիւն՝
վկայուած ուսուցիչների ձեռքով:

Անդրանիկ օրինակ տուող պիտի հանդիսանայ Մայր

Աթոռուր, որ պարտաւոր է, այժմէն իսկ, մշտական եւ օրինակելի դպրաց դասի հիմը դնելու այսպէս.

ա. Բազմաձայն երգեցողութեան համար Մայր Աթոռի անուան ու դիրքին վայել դպրաց դասն ունենալու է առնուազն քառասուն ընտիր երգիչ:

բ. Միաձայն երգեցողութեան համար՝ քսան եւ չորս:
գ. Խումբը պէտք է անկախ լինի ճեմարանի աշակերտութիւնից, որի ձայնեղ սաներից կարելի է օգտուել տօներին՝ երգեցողութեան հանդիսաւորութիւն տալու նպատակաւ:

Ես պատրաստ եմ, որպէս ցայսօր, իմ բոլոր ջանքերս ու ճիգս նուիրել մի այսպիսի սուրբ գործին. սուրբ գործին, որ ինձ ոգեւորել է դեռ տղայ տիզոց. սուրբ գործին, որ ինձ քաշել ու կապել է Մայր Աթոռին. սուրբ գործին, որ ինձ ուղիղ 20 տարի յոյս է ներշնչել եւ սակայն՝ սուրբ գործին, որ ինձ արծաթ յուսով օրորել, տոգորել ու մեծցրել է՝ առանց իրականանալու: Եւ արդ, ինձ մնացել է նոյն յուսով՝ այրուել, ծերանալ ու հեռանալ անցաւոր կեանքից, որպէս մի ազազուն հասկ, որ հողմահար ու ծարաւ կորանում ու չորանում է:

Վեհափա՛ռ Տէր,

Ուս դրել եմ կեանքիս երկրորդ շեմքին, բայց դարձեալ նոյն աննկուն յուսով: Թէպէտ պատանի աշխոյժս լրջացաւ, երիտասարդ թափս նրբացաւ, սակայն եւ այնպէս, այրական եռանդս մշտաշող յուսով դեռ նոր է եփ ու եռ գալիս:

Երկտողս մատուցանելով Վեհափառութեանդ՝ անսպառ յուսով մնամ

Զերդ Ս. Օծութեան իւ<ոնարհ> δ<առայ> եւ միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝

Կոմիտաս Վարդապետ

ԼԱԼՈՒԱՆԵՐԻՆ

Սիրելի բարեկամնե՞րս,
Շնորհաւորում ենք Նիկոլէտտի ծնունդը, իբր պայծառ
աստղիկ թող բըլերլա Ձեր տան վերեւ։ Շատ բարեւներս։

Կոմիտաս

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻՆ

1

Մեծարդոյ եւ սիրելի՝ Գարեգին,
Նամակը ստացայ. անմիջապէս պատասխանել չկարո-
ղացայ, զի սաստիկ զբաղուած էի։
Գեղարուեստական հանդէսի մասին արդէն խօսել էի
Ձեզ, երբ Տփխիս էի։ Բոլոր ցանկութեանս հակառակ,
ուղղակի անհնար է ինձ համար. պարապմունքներս արդէն
եւրոպացւոց եմ ծախել, ուրեմն եւ՝ ժամանակս։ Միւս
կողմից, Դուք գիտէք, որ այժմ առանց փողի ոչինչ անել
չէ կաելի, իսկ բաժանորդների վերայ վստահել չէ կարելի,
զի մենք գիտենք մեր բաժանորդներին ու նոցա գրան-
ները։

Այսպիսի մի մեծ գործ չպէտք է սկսել առանց կան-
խօրէն նախապատրաստութեան՝ դրամական ուժի. իսկ
սկսել ու յուսալ, որ առաջին պրակի հրատարակարու-
թեան ծախսը հանէ միւս եւ յաջորդ համարներէն, այդ ան-
հնարին է մեր երկրի գեղարուեստի մէջ տգէտ ժողովրդի
համար։ Եթէ Դուք կամենում էք անպատճառ հրա-
տարակել, ես արգելք չունեմ, նոյնիսկ, երբեմն, երա-
ժշտական նիւթ կտամ ուրախութեամբ, բայց առանց պա-

տասխանատու խմբագրութեան: Բայց խորհուրդ եմ տալիս խիստ զգոյշ լինել այսպիսի բարեկրթիչ ու պատասխանատու գործի գլուխն անցնելիս, գործի, որ բոլորովին նոր է իւր տեսակի մէջ մեր երկրում:

Գիտեմ, որ Զեզ պիտի հետաքրքրէ, թէ ինչ եմ անում:

Պատրաստում եմ իմ աշխատութիւններս ժամանակին Եւրոպա ուղարկելու ի տպագրութիւն:

Ճեմարանում յանձն առայ միայն խմբերգութեան դասեր եւ Ալսարանում ընդհանուր երաժշտութեան պատմութիւն. ուրիշ ոչինչ. շունչ քաշելու ժամանակ չունեմ:

Իսկ միջոցներս ուղղակի անտանելի են, մի կոպէկ չունեմ: Այսօր լսեցի, որ Մեսրոպը գալիս է տեղդ գործով, ուզում էի Զեզ նամակ գրել ու խնդրել, որ Զեր 140 մարկ պարտքը իբր փրկիչ ուղարկէիք այս նեղ օրերին: Բայց լսեցի նորանից, որ նա Զեր հաշուին Զեր ամսականներից փող է տանում. Զեր ընկերութեան վերայ վստահանալով՝ առայ նորանից 65 ըուբլի, որով պէտքերս հոգալ սկսեցի: Յուսով եմ, որ ներողամիտ կլինէք մի այսպիսի վստահ քայլ անելուս:

Խնդրեմ յատկապէս բարեւներ մայրիկին, Հայրիկին, Զեր քրոջ ու եղբօր: Մի պուճուր էլ Զեզ փայ հանեցէք:

Զեր անձնուէր Կոմիտաս

2

Սիրելի՝ Գարեգին,

Ուղարկում եմ խոստացած: Բառերը Դուք աւելի լաւ կիմանաք, զի Զեր կողմի երգն է¹:

Գործերս այնպէս են կուտակուել իրար վերայ, որ աչք բանալու ժամանակ չունեմ:

Ցանկանում եմ Զեզ կատարեալ յաջողութիւն:

Ողջոյն հայրիկիդ, եւ մայրիկիդ, քոյրերիդ: եւ եղբայրներիդ եւ հարցանողներին:

Զեր Կոմիտաս

1908, 3 մայիս 1908, 24 մայիս, Ա. Էջմիածին

Սիրելի՝ Գարեգին, Առաք. ու ուժութեան առաջարկութեան համար:

Անցեալ երեկոն Յովշաննէս Յովհաննիսեանի մօտն էի գնացել, տեսայ սեղանի վերայ դրուած քո Հրատարակած «Գեղարուեստ»ի Ա պրակը: Եթէ հնար է, մի օրինակ ուղարկիր ինձ վերադիր վճարով:

Արդեօք իմ երգիցն ունե՞ս առանձին թղթերի տպած: Եթէ այո՛, խնդրեմ նորանից էլ ուղարկիր մի քանի օրինակ՝ ծանօթ երաժիշտ եւրոպացիներին ուղարկելու համար, նոյնպէս վերադիր վճարով:

Ցանկանում եմ կատարեալ յաջողութիւն այս դժուար գործին եւ ձեռնարկութեանդ:

Բարեւէ՛ր, խնդրեմ, մայրիկիդ, հայրիկիդ, քոյրերիդ եւ եղբայրներիդ:

Յարգանքներով՝ Կոմիտաս Վարդապետ

1908, 8 յունիս, Ա. Էջմիածին

Սիրելի՝ Գարեգին Լեւոնեան,

Ստացայ «Գեղարուեստն» ու երգերը Լեւոնի ձեռքով. չնորհակալ եմ յատկապէս:

Պատրաստել եմ եւ այսօր-վաղը կարտագը եմ «Հօյ նազան իմ»³ արական եռաձայն խմբի համար, կուղարկեմ: Եթէ ուշանայ, զետեղիր երրորդ պրակիդ մէջ:

Սաստիկ զբաղուած եմ. առ այժմ յօդուած գրել չեմ կարող, մանաւանդ խազերի մասին, քանի դեռ ուսում-

նասիրութիւնս չէ վերջացել:

Սիրալիր բարեւներով՝

Կոմիտաս

5 <1908, դեկտեմբեր 22-25 Ա. Էջմիածին>

Հայի՛ ճուտ,

Զուռնաչի Լեւոն,

Անշնո՞րհք, 16 օրինակ «Գեղարուեստը»¹ շակեցի
բերի, բացի, տեսայ, որ իմ փայը չկայ, մի լաւ ծիծաղեցի:
Ծտի թեւով հասցո՞ւր, թէ չէ՛ ծեծ կայ, ծե՞ծ:
Յանձնեցի բոլորն էլ Քոչար բիծային, որ բաժանէ
տէրերին:

Շատ բարեւ բոլորին:

Քո Կոմիտաս

ԳԱՐԵԳԻՆ ԽԱՉԱՏՐԵԱՆԻՆ

1910, 15 մարտ, Ա. Էջմիածին

Պատուական Խմբագրապե՛տ,

Բարի եղէք եւ երկտողիս մի անկիւն շնորհէք «Տաճար»
կիսամսեայ հանդիսում:

Անցեալ ԺԹ դարու երկրորդ կէսին, մասնաւորապէս
կ. Պոլսոյ հայ մամուլը հրատարակում էր հայ եկեղեցական
երաժշտութեան մասին մի շարք ուսումնասիր-
րական, քննադատական եւ մանաւանդ վիճաբանական
յօդուածներ: Ներկայ 1910, 31 յունուար, թիւ 6 «Տաճարի»
միջոցաւ բարեկրօն Տ. Աբրահամ քահանայ էպէեան
առաջարկում է, որ ես հրապարակ հանեմ իմ տեսութիւն-

ները՝ շարականի խազերի մասին:

Իրաւ է, ես գտել եմ հայ խազերի բանալին եւ նոյնիսկ կարդում եմ պարզ գրուածքները, բայց դեռ վերջակէտին չեմ հասել. զի իւրաքանչիւր խազի խորհրդաւոր իմաստին թափանցելու համար, նոյնիսկ՝ տասնեակ ձեռագիրներ պրայտելով, երբեմն ամիսներ են սահում, իսկ ձեռքիս տակն եղած խազերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առ այժմ, մի կողմ թողնենք դեռ անանուն խազերը, որոնք իսիստ շատ են:

Այսպիսի զուտ մասնագիտական խնդիրների մասին անհնարին է գրել մեր պարբերական մամուլի էջերում այս պատճառներով. նախ որ պարբերական մամուլի էջերը շատ սուղ են, երկրորդ՝ զուտ գիտական, տարիներ շարունակուող ուսումնասիրութիւններով հասարակութիւնն զբաղեցնելն աննպատակ է, երրորդ՝ խոշոր ու մեծաքանակ ծախս է պահանջում եւ չորրորդ՝ ուսումնասերութեանս վերջակէտ չեմ դրել:

Առ այժմ երկու խօսքով ամփոփեմ, թէ ինչ տարրեր ունի հայ խազաբանութիւնը.

Ա. Զայնաստիճանի խազեր.

Բ. Զայներանգի խազեր.

Գ. Զարդախազեր.

Դ. Զայնումի խազեր.

Ե. Ամանակի խազեր.

Զ. Բանալի խազեր.

Է. Առոգանութեան խազեր.

Ը. Կետադրութեան խազեր.

Թ. Ոճական խազեր.

Ժ. Կապող եւ զատող խազեր.

ԺԱ. Կիսանիշ խազեր եւ այլն:

Մի այսպիսի ուսումնասիրութիւն կատարելութեան

Հասցնելու համար պէտք է ներհուն լինել տիրապէս սա հիմնական ուսմունքներին ու գիտութիւններին.— տառաշափութեան, վանկաչափութեան, բառաչափութեան, տողաչափութեան, առողանութեան, շեշտադրութեան, կէտադրութեան, խազաչափութեան, խազագիտութեան, լեզուին (բառերի իսկական եւ հին առման), իմաստասիրութեան (երկրաչափութեան, թուարանութեան, աստղաբաշխութեան եւ երաժշտութեան՝ հին առմամբ), խազերի ծագման, զարգացման, անկման եւ արդի պատմութեան, համեմատական խազաբանութեան եւ այլն, եւ ապա կարելի է գաղտնին երեւան հանել: Թող հայ հասարակութիւնը ներող, մանաւանդ համբերող լինի, մինչեւ, որ հնարաւոր չափով, կատարելապէս վերջացնեմ իմ տասն եւ վեց ամեակից աւելի տեւող տաժանադին ուսումնասիրութիւններս: Ձոյս ունեմ, թէ մօտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակութեան սեփականութիւն պիտի դառնայ:

Աղօթակից Կոմիտաս Վարդապետ

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆԻՆ

1

1895, 25 յուլիս, Ա. Էջմիածին

Վեհափառ Հօրն

Տ. Տ. Մկրտչի Ա. Սրբազնագոյն կաթուղիկոսին

Ամենայն Հայոց.

Քահանայապետ սուրբ,

Եօթն ամս անցուցեալ է իմ ի վերայ, յորմէ հետէ ժողովիմ զՀայոց ժողովրդական երգս եւ զպարերգս, զորոց տակաւին կարի սակաւ ինչ է յայտ զեղանակացն, զկազմութեանցն եւ զկնի:

Ժողովրդական եղանակքն Հայոց ի պարզութիւն եւ ի վեհութիւն իւրեանց զնմանութիւն բերեն զնուագաց շարականաց նախնեաց մերոց սրբոց, յորս արտայայտին կեանք եւ միտք Հայկեան սեռիս, եւ սոքա ցարդ կան թաղկեալ ի թագստի եւ ի կողմն յուշից եւ յուրուշից յիմաստնոց ի փիլիսոփայից. եւ արդ եւէթ պահեալ կան ի գեղջկական հանճարի նախնեաց թարմ եւ անխառն զգացմանց երաժտութիւն, որ եւ խուն առ խուն ի կորուստ դիմեալ յառաջէ յերեւումն օտար եղանակաց: Եթէ ո՛չ տարածեսցէ զձեռսն, ի բարձր բազուկ, յօճուն լինիլ, Հօտապետդ քարշել, հանել ի կորստենէն ի սպառսպուռ յանյայտութիւն եւ ի մոռացօնս դատապարտեսցին:

Բաց յայգմանէ, ի ժողովրդական եղանակսն Հայոց իբրեւ զծիր իմն կարմիր նկատեն առընչութիւնք սոցա եղանակաց շարականաց: Ի մէն միում յերգսն գեղջկայինսն որպէս զշող ցոլայ բնատուր հանճար Հայաստան ազին. որ եւ կարօտի բազմապիսի ուսումնասիրութեանց:

Ուստի համարձակիմ խնդրել, ի համբոյր Ա. Աջոյդ Հայրապետիդ, թոյլատրել, ի բան բարձր հրամանի Ձերոյ, ի տպագրել զանգին գանձսն, զորս աւանդեալ է մեզ բազմահարուստ հանճարոյ նախնեաց մերոց սրբացելոց:

Քահանայապետիդ ամենախոնարհ ծառայ եւ որդի՝

Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեան

2

1898, 19 նոյեմբեր, Բերլին

Տեառն, Տեառն Վեհափառ,

Սրբազնագոյն Հովուապետիդ եւ կաթողիկոսին

Ամենայն Հայոց

Հնկալեալ զսրբազնասուրբ հրաման, փութամ զերկուց հայ մանկտեաց, որոց խնդրասուրբ եղեալ՝ ի Հայոց Հայ-

րապետէդ զառ ի պասքումն ծարաւեաց ուսմանցն, ելս
ակնկալին եւ զորպիսին խնդիր Սրբազնագոյն մակագրու-
թեամբ՝ ընդ համարաւ 1189, ի 17 հոկտեմբեր ամսոյ այսր
1898 ամի տալ ելեալ հաճեալ էր Վեհափառութեանդ,
Խոնարհաբար յայտարարել.

Ի սոցանէ մինն Կիլիկեցի, միւսն Բիւզանդացի՝ է. եր-
կոքեան իսկ ութուտասան հասակի ամաց, չունին ծնողք.
մինն Ատոմ յորջորջի, միւսն՝ Միքայէլ Երէցեան. ուսեալ են
ի Բիւզանդիա՝ ի Սայր եւ ի Խասգեղջ վարժարանս եւ շրջա-
նաւարտ եղեալ. երկոքեան եւս զաւակք են հարազատք՝
Հայաստանեայցս Առաքելական Սուրբ եկեղեցւոյ. ի ձեռն
Գերման-Հայկական ընկերութեան (ո՛չ տօքթոր Լեպսիու-
սի ի Բերլին) փոխադրեալ են այսր՝ ի Գերմանիա զկնի կո-
տորածին, որ ի Բիւզանդիա՝ ի 1896 ամի: Արդ երկոքեան
եւս գտանին ի Գերման ինստիտուտի՝ ի Վեհալմսդօրֆ
գեղջ՝ ի Վիւրթմենբերգ՝ ի Գերմանիա:

Ամենախոնարհաբար մատուցանելով զյայտարար
գիրս Տեառնդ իմոյ՝ խորին ակնածութեամբ ի համբոյր
Սրբազնասուրբ Աջոյդ մերձենայ որդի եւ ծառայ Հայոց
Սրբազնագոյն Հայրիկիդ եւ Մօրն լուսոյ՝ Սրբոյ Էջմիածնի՝

Կոմիտաս Վարդապետ

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆԻՆ

1

1895, 28 օգոստոս, Ա. Էջմիածնին

Մեծապատիւ պ. Տեսուչ Գ<էորդեան>

Հոգեւոր ճեմարանի

Կարապետ Կոստանեանց,

Բաւական երկար համբերեցի. այսուհետեւ, եթէ ես էլ

չխօսեմ, քարերը կաղաղակեն։ Բա՛ւ է այս տանջանքը, կարծես բոլորն էլ երդուել են միջնադարեան ինքվիզիցիայի դատաստանը վերականգնել՝ դատել մարդու չարած յանցանքը. սպանելուց յետոյ՝ արդարացնել՝ մարդուն մեռցնելուց յետոյ։

Ցաւում եմ, ցաւում, որ այդքան մարդիկ լսել էք այն զրպարտութիւնը¹, այն չարած յանցանքս, որը մինչեւ այժմ թագուն էր ինձանից, արդ յայտնուեցաւ բարդուած մեղքը. եւ մի անգամ գոնէ մտքերովդ չէ՛ք անցկացրել քննել, որովհետեւ բոլորդ էլ հաւատալու ախորժակ էք ունեցել։ Քննութիւն խօսքը մեզ համար գոյութիւն չունի. բաւական է լսել մի մարդու մասին քսու զրպարտութիւն, արդէն անպատճառ հետեւում է հաւատալ, որ իրաւ այդ կատարուել է... Վերջապէս ես այնքան զայրացած եմ, այնքան սրտնեղած, որ ոչ մի խօսք չեմ գտնում զայրոյթս, զարմանքս, չարած յանցանքս, արդար, անբիծ, անարատ լինելս արտայայտելու։

Մի՞թէ իմ ընկերներս Բրուտոսի զարմանքը պէտք է գործ դնէին իմ նկատմամբ, մի՞թէ չէին ճանաչում ինձ. Եթէ վատ էի կամ եմ, ինչո՞ւ ընկերութիւն են անում. Եւ. Եթէ չէին ճանաչում, ինչո՞ւ չէին փորձում, քննում եւ ապա հաւատ ընծայում ընկերին. ազնիւ մարդը նա է, որ մարդուս յանցանքը ճշտելով՝ երեսին կլսփէ եւ ոչ թագուն պահէ։

Վա՛յ ինձ, ափսո՞ս իմ երիտասարդ հասակիս, մե՛ղք իմ ծաղիկ եռանդիս. ես արդէն խելագարւում եմ, ես գժւում եմ, բայց անօգո՞ւտ, ո՛վ է ինձ օգնողը, ամենքը երես են շուռ տուել. ամենքը խոժոռ հայեացք են ձգում, ամենքը կարծում են կամ հաւատացած են, որ ես լիըը եմ, անամօթ եմ կամ կարող եմ լինել։ Ամենքն այստեղ-այնտեղ տարածում են չարած լրբութիւն, չկատարուած լրբութիւն,

չգործուած գործողութիւն. եւ հաւատում են. ովքե՛ր. իմ վարժապետներս, իմ դաստիարակներս, ինձ սնուցողները, որոնք ձիգ տարիների ընթացքում դեռ չէին ճանաչել իմ լիրը լինելս, այժմ մի լուր, մի ստահիւս զրպարտութիւն, արդէն ամեն ինչ իբրեւ, ճշմարտութիւն հալուած է նոցա ականջի մէջ. եթէ ես ե՛ս եմ, ապա այդ ո՞վ է, որի լրբութիւնն ինձ են վերագրում... կարծես Կոմիտաս Վարդապետը մի փալաս է եղել, որին արորելը, ոտքի տակ տալն ամենքը սեպուհ պարտք են համարում: Ա՞յս էր իմ աշխատութեանս պարգեւը, ա՞յս էր իմ ջանքերիս վարձատրութիւնը... շնորհակալ եմ: Եթէ դուք բոլորդ էլ ուղիղ մարդիկ էիք, ինչո՞ւ չէիք թքում իմ երեսին իմ չարած յանցանքիս համար. ափսո՞ս, որ մեծ մարդ չե՛մ եղել, ափսո՞ս, որ բարձրագոչ չե՛մ եղել, ապա թէ ոչ՝ իսկոյն դատ կլինէր:

Բոլորի ջանքերն այն է, որ իրանք հաւատալուց յետոյ կամենում են եւ ինձ հաւատացնել չարածս, իմ վերայ հաստատել. մի՞թէ չեն մտածում, որ դատաստան կայ, պետական օրէնք կայ, որտեղ գործն երեւան կելնէ. եւ սրտով ցանկանում եմ, որ նոքա, որոնք հաւատացնել են կամ ուղում են հաւատալ ամօթապարտ չմնային, խղճի խայլոց չստանային:

Աստուած թող նոցա խղճի վերայ չծանրացնէ այդ ան-լուր լրբութիւնը. ես անուն չե՛մ գտնում այդ լուր սար-քողին վայել. աւելի լաւ կարող են որոշել նոքա, որոնք հաւատացնել են իսկոյն եւեթ:

Դեռ ես կարծում էի, թէ բարեկամ ունեմ, որոնք նախ գործը կքննեն, ապա երես կդարձնեն մարդուց, բայց ընդ-հակառակն է եղել:

Պ. Կոստանեան, իմ առաջին դատաւորը դո՞ւք եք. ես խոնարհաբար խնդրում եմ, քննեցէ՛ք այդ գործը, եթէ ես

մեղք ունեմ, զի բան անօրէնութեան եղին ի վերայ իմ, ես ինքս կհեռանամ այս սուրբ կոչումից իբրեւ անարժան անձն, եթէ արդար եմ, թո՛ղ բացուի մի աշակերտի եւ մի ծառայի ձեռքով սարքուած լիրք զրպարտութիւնը, որոնց ոչ միայն հաւատացել են, այլեւ հաւատացնելու կեղտոտ պաշտօնն են յանձն առած:

Եթէ Դուք բաւականութիւն չտաք, ես կդիմեմ Նորին Վեհափառութեան դատաստանին, որտեղից յոյս ունեմ պատասխան ստանալու:

Եթէ այստեղ էլ դատ չլինի, կդիմեմ մարմնական դատաստանին եւ բժշկով քննել տալուց յետոյ պատժել կտամ նո՛յն քրէական յանցանքին լիազօր պատժով, որին ինձ են կամենում ենթարկել ամօ՛թ ու նախատինք հաւատացողներին:

Այսքանը բաւական է:

Ձեզ համար միշտ աղօթարար՝ խ<ոնարհ> ծ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

2 1895, 28 օգոստոս, Ս. Էջմիածին

Մեծապատիւ պ. Տեսչի Գ<էորգեան>

Հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյ

Ս. Էջմիածնի Կարապետի Կուտանեանի.

Հրաժարման գիր

Խնդրեմ ի խոնարհ ի Զէնջ հեռացուցանել յոր եւ է գործոց ճեմարանականաց ընդ յոր ոյր վասն առաքեմ առ Մեծապատիւ Տեսուչդ Գ<էորգեան> Հ<ոգեւոր> ճեմարանի զայս գիր հրաժարման, ընկալարուք զդա:

Կոմիտաս Վարդապետ

Մեծապատիւ պլ. Կարապետ Կոստանեան,

Յարգոյ Տէր,

Ողջ հասանք Տփխիս. Ձեր տուած նամակը յանձնեցի պլ. բժիշկ Բաբայեանցին¹ եւ յիշեցրի բժշկի մասին. ասաց, որ նամակ է գրել եւ կգրէ մի երկրորդն եւս: Շնորհակալ եմ, աջակցութիւն խոստացաւ իմ գործիս համար, որի մանրամասնութիւնը գրել եմ Հ. Յուսիկին², երեւի կպատմէ, իսկ վերջնականը կգրեմ Ձեզ:

Խնդրեմ, եթէ կարելի է, հրամայեցէք, որ Գ<էորգեան> ճեմարանի մատենադարանից ուղարկեն ինձ ի գործադրութիւն, մի առ ժամանակ, *Fetis*-ի երաժշտութեան պատմութիւնը՝ հինգ հատոր:

Histoire générale de la musique, ts. 1,2,3,4 et 5, որին մեծ կարիք ունեմ:

Շուտ ուղարկուելը ցանկալի է:

Գերապատիւ բարձր սրբազն Գէորգ արքեպիսկոպոսը³ հրամայեց, որ ինձ համար սենեակ պատրաստեն Առաջնորդարանի տակ:

Պ. Մակար Եկմալեանցը⁴ բոլորովին խորհուրդ չէ տալիս կոնսերվատորիա մտնելու համար, իսկ այստեղի երաժշտական դպրոց մտնելը միանգամայն ի զուր է համարում ինձ համար եւ ապարդիւն. ինքը հաճութիւն յայտնեց երաժշտական տեսութիւնը մանրակրկիտ կերպով անցնելու ինձ հետ. առհասարակ խորհուրդ են տալիս տեսութիւնն աւարտել Եկմալեանցի մօտ:

Առ այժմ աւելի բան չունեմ գրելու. երբ վերջնական լուծումն ստանայ, այն ժամանակ կգրեմ մանրամասնորէն:

Իմ կողմից ողջունեցէք տիկնող եւ օրիորդին. մի՛ մոռա-

նաք նոյնպէս յիշել եւ զ Պետրոսն, որին տեսնել չկարողացայ գալուս ժամանակ:

Խնդրեմ գրքերը շուտով ուղարկեցէք:

Մնամ Զեզ յարգող՝ աղօթարար

Կոմիտաս Վարդապետ

4 1895, 30 հոկտեմբեր, Տփխիս

Մեծապատիւ պ. Կարապետ Կոստանեան,

Յարգոյ Տէ՛ր,

Զեր Հոկտեմբեր 23 թուակիր նամակն ստացայ: Ես արդէն սկսել եմ կանոնաւոր պարապմունք: Բնակւում եմ Ս. Սարգսում՝ Հ. Համազասպի մօտ. ապրուստս շատ լաւ է: Ամբողջ օրը տանն եմ լինում եւ քաղաք իջնում եմ միայն դասեր առնելու համար: Առ այժմ սովորում եմ պ. Մակար Եկմալեանի մօտ, ձրիաբար, երաժտութեան ներդաշնակութեան տեսութիւնը եւ գործադրութիւնը, որն եւ լրապէս կամբողջացնեմ մինչեւ մայիս ամսի վերջը: Մինչեւ յունուար զբաղմունքս կլինի բացառապէս ներդաշնակութեան գործնական եւ տեսական մասը, իսկ յետոյ նուագածութիւնից այնքան, որքան անհրաժեշտ կլինի ներդաշնակութեան եւ երգեցողութեան համար եւ երգեցողութիւն, որն այնքան ժամանակ չպէտք է խլէ ինձանից. ըստ որում, ինձ պէտք է եւեթ գործնականը. եւ որպէսզի նախապատրաստուեմ, յաճախում եմ ներսէսեան դպրանոցի խմբական երգեցողութեան ժամերին, որ ամեն օր կայ, հմտանում զեկավարութեան ձեւին, ձայն կրթելու եւ ամրացնելու, խմբերի բաժանելու եղանակին. խումբը դպրոցում ղեկավարում է ինքը՝

Եկմալեանցը: Առհասարակ թէ՛ նուազածութեան եւ թէ՛ երգեցողութեան համար դասագին պահանջում են Յ-ական մանէթ. եթէ իւրաքանչիւրից շաբաթական 2 դաս առնեմ, ամսական բաւական փող է նստում, բացի *riano-*ի ամսավճարը՝ 8 մանէթ. չեմ իմանում փողի կողմից ի՞նչ պէտք է կարգադրուի ինձ համար: Իմ ամսական ոռօնիկն հազիւ բաւական է կառքի, գրքի եւ թղթի վճարին: Նոյն-պէս դեռ ձմեռուայ շորեր չունեմ, փող էլ չունեմ: Հայրիկին¹ գրել եմ: Խնդրեմ, Դուք եւս Ձեր կողմից հասկացրէ՛ք, որ ուսման ծախսի վճարը դիւրանայ, ստանալու տեղը, ժամանակը որոշ լինի, որ ես կարող լինեմ եւեթուշքս ուղղել ուսման վերայ:

Խնդրեմ, գրքերը՝ *Histoire générale de la musique-F-ի, 1, 2, 3, 4 եւ 5 հատորներն եւս ուղարկելու կարգադրէք*, շատ պէտք ունեմ:

Ողջոյն տիկնոջ, օրիորդին եւ ուսուցչաց,
Զեզ յարգող՝ աղօթարար

Կոմիտաս Վարդապետ

5

1896, 2 յուլիս, Բերլին

Մեծապատիւ պլ. Կ. Կոստանեանց,

Kochstr. 73

Pension Frau Ziehe

Յարգոյ Տէ՛ր,

Այսքան ժամանակ Զեզ նամակ չկարողացայ գրել,
որովհետեւ վիճակս անորոշ էր: Հ. Կարապետի¹ խորհրդով
պէտք է Դրեզդէն գնայի, այդ չյաջողեցաւ:

Այստեղ ներկայացայ երաժշտանոցի տեսչին՝ Joachim-ին², սիրով յանձն առաւ առանց արգելքի ինձ ընդունել իբրեւ իսկական ուսանող: Այստեղ մնալս մի այլ օգուտ եւս ունի, երաժշտանոցին կից կայ եւ մի այլ հիմնարկութիւն՝ ճեմարան եկեղեցական երաժշտութեան, որ ուրիշ տեղ չկայ: Ներկայացայ նոյնպէս այս դպրոցի տեսչին՝ Radecke-ին. խոստացաւ ինձ ընդունել այստեղ, բայց իբրեւ ազատ ունկնդիր, որովհետեւ ընդունւում են եւեթ գերմանացիք եւ այլ 25 հոգի միայն. ինձ համար բացառութիւն անել խոստացաւ:

Ուրեմն իսկական ուսանող պէտք է լինեմ երաժշտանոցի եւ եկեղեցական երաժշտութեան ճեմարանի՝ հոկտեմբերից սկսած. այժմ պատրաստում եմ թերութիւններս լրացնելու, որքան կարելի առաջ ընթանալու: Այստեղ մի յարմարութիւն եւս կայ. աշակերտին յառաջ են տանում ո՛չ նորա տարեկան դասարանական փոփոխութիւններով, այլ ընդունակութեամբ, ցո՞յց տուր ընդունակութիւն, քեզ առաջ կքաշեն:

Ողջունելով մեծապատիւ տ. Տիրուհոյն եւ Զեղ՝ մնամ միշտ աղօթարար եւ յարգող՝

Կոմիտաս Վարդապետ

Յ.Գ. Հ. Յուսիկն էլ մօտիկ գիւղերից մէկում մի փասթուի տանն է ապրում եւ պատրաստում հոկտեմբերին Halle տեղափոխուելու: Նորա հասցէն՝

Archimandrit Hussik Sohrabian

Clatzow bei/Treptow an Tolense Pfarrhaus

Նոյն

1896, 4 դեկտեմբեր (22 նոյեմբեր),
Բերլին Kochstr. 73 IV I. Hof.

Մեծապատիւ. պ. Կարապետ Կոստանեանց,

Արգոյ Տէ՛ր,

Իմ պարապմանց մասին Զեզ տեղեկութիւն տալը մի-
անգամայն իմ պարտքն եմ համարում. Դուք պատրաս-
տեցիք, բարեկամաբար, իմ ճանապարհը գէպի ուսմանց
ցանկալի վայրը դիմելու, եւ արդի վարիչ էք հիմնարկու-
թեանդ, որին ընդ յար ծառայելու համար եմ թերիս
լրացնում:

Ամառնային արձակուրդից օգուտ քաղելով, մի կողմից
գերմաներէնի մէջ վարժուեցայ, միւս կողմից մասնաւոր
դասեր առայ ուսուցչապետ Richard Schmidt-ից եւ ամրող
Harmonielehre դասընթացն անցայ կատարելապէս, իսկ
ձմեռնային վեցամսեակի սկզբին ուսանող գրուեցայ տե-
ղական համալսարանում երաժշտական պատմական
առարկաները լսելու համար:

Երաժշտանոց չմտայ:

Ուսուցչապետս, որ երաժշտանոցի տեսուչն է, ինձ
քննելուց յետոյ բոլորովին խորհուրդ չտուեց մտնելու-
այդտեղի քայլերն ինձ համար յամրընթաց համարելով՝
մասնաւոր դասեր առնելու խորհուրդը տուեց եւ ինքը
յանձնառու եղավ պարապելու. մասնաւոր դասերի օգու-
տը՝ շատ, ընթացքն արագ է, որպէս եւ իմ ժամանակը՝
կարճ. ինչո՞ւ ես 6 տարի առաջ այստեղ չեղայ:

Շաբաթական երկու անգամ, փոխէփոխ, իմ ուսուցչա-
պետներիս մօտն եմ ճաշում. նոցա ընտանիքի մէջ ազատ
մուտք ունեմ: Opernhaus, Philharmonie, Symphonie եւ Concert
յաճախելու համար յաճախակի ձրի տոմս են ուղարկում

ուսուցչապետներս: Շնորհիւ ուսուցչապետիս՝ երաժիշտ գեղարուեստագէտների մի ընդարձակ շրջան ունեմ, որպէս եւ բաւական բարձր ու պատուաւոր. այս է, որ ինձ առաւել խրախոյս է ներշնչում. զանազան երաժշտական աշխատութիւններ ենք գրում եւ երեկոյթ կազմում մասնաւոր տներում, նուագում, քննում ենք գրուածքը եւ վիճաբանում. իմ գրած երաժշտական բեկորները ուսուցչապետս յանձնառու եղաւ տպել տալու իւր ծախքով՝ առանց մի խօսք ասելու կամ առաջարկելու, բայց ես չեմ շտապում. մինչեւ ամեն գաղտնիքի խորը չժափանցեմ, չեմ տպել տալու: Եթէ մի բան կայ ինձ դժուարութիւն յառաջացնող, դա եւեթ նուագածութիւնն է. առանց առաջնորդի սովորելով՝ մատներիս թիւր շարժումը շատ կամաց է ուղղւում, նամանաւանդ ուշ սկսելուս պատճառով:

«Սիրոյ քո հուրը» նամակիս հետ ուղարկեցի Զեզ: Եղանակը մեր եկեղեցական նուագներից է առնուած, բայց երաժշտական օրէնքի վերածած է: Գրել եմ քառածայն եւ երկծայն: Տպագրել չտա՞ք, որովհետեւ գիտեմ, սխալ պէտք է տպուի, իսկ սխալ տպուելով՝ ներդաշնակութեանց հիմքը բոլորովին կքանդուի, թող արտագրեն գրածիցս, եւ պահել տուէք իսկականը, որովհետեւ իմ մօտինը միայն սեւագրութիւնն է, որ եւ կարող է կորչել, իսկ ես ժամանակ չունեմ նորից արտագրել տալու: Ուղարկում եմ եւ մի խրամ, սովորեցնելու համար, որ չդժուարանան:

Հարգանաց ողջոյնս մատուցէք տիկին Տիրուհոյն: Բոլոր ուսուցչաց եւ ընտանեաց բարեւ եւ յաջողութիւն, որպէս եւ սրբոց վարդապետացն մերոց: Ամէն:

Զեզ համար աղօթարար՝

Կոմիտաս Վարդապետ

1897, 27/15 յունուար, Բերլին
Kochstr. 73 IV

Մեծապատիւ պլ. Կ. Կոստանեան,
Յարդոյ Տէր,

Վաղուց էի ստացել Ձեր նամակը, բայց հիւանդութեանս պատճառով (երկու շաբաթ սաստիկ ջերմով բռնուեցայ) եւ ստիպողական պարապմունքներիցս մի փոքր ժամանակ իսկ կորզել չկարողացայ՝ պատասխանն անմիջապէս գոելու համար. անկողնից նոր էի ոտքի ելել, երբ ստացայ Ձեր Նոր տարիս շնորհաւորող տոմսը: Յիշաւի, Նոր տարի է ինձ ուսման վայրում գտնուելը. իմ տօներն եւս լայնածաւալ երաժշտական աշխարհի բազմազան երկրի մէջն են տօնւում. իւրաքանչիւր ժամն ու ըոպէն աչքիս առաջ պարզում են մի ապագայ տեսարան՝ լիուլի անսպառ գործունէութեան հոգածութեամբ:

Ձեր խրախուսական նամակը, որպիսիներին միշտ կարուտ եմ պանդխոտութեանս օրերում, քաջալերեց եւ ուժ տուեց ինձ. գոնէ կայ մէկը, որը կարող է դիտելու եւ գնահատելու: Քանի խորունկն եմ մտնում երաժշտական ծիծաղածին ծովի մէջ, նոյնքան պնդում է համոզմունքս, թէ մեր ե՛ւ ժողովրդական, ե՛ւ եկեղեցական աննման ու վէհ եղանակները, որոնք քոյր եւ եղբայր են շա՞տ վաղուց, ապագայում նոյնպէս օտարների համար ուսումնասիրութեան աղբիւր պէտք է դառնայ. որովհետեւ, արմատը շատ խորն հնութեան է տանում, հասցնում, մինչեւ հայի ծագումը, այնտեղ, նորանից անբաժան, ծլում եւ նորա հետ է մեզ հասնում:

Ուսուցչապետս միշտ կրկնում է. Դուք ստեղծել էք երաժշտական ազնիւ եւ ինքնուրոյն ոճ, որ կարմիր գծի

պէս ձեր ամբողջ գրուածքների եւ շարադրութեանց մէջ պայծառ անց է կենում. այդ ոճը ես անուանում եմ հայկական ոճ, ասում է, որովհետեւ, մեր երաժշտական ծանօթ աշխարհի համար նորութիւն է:

Մեր ազգային հին երգերին ազգային եղանակ յարմարեցնելու միտքն իմ մէջ եւս ծագել էր, եւ արդ, զլուխ կարող է գալ, բայց՝ շարականի եղանակների եւ բանաստեղծութեան տաղաչափական եւ շեշտական կանոնները պարզուելուց յետոյ, որովհետեւ եղանակների շեշտադրութիւնը գրեթէ չեն համաձայնում լեզուի արդի շեշտադրութեան կանոններին եւ գործածութեան. ինձ թւում է, թէ նախնիք այլ կերպ են շեշտադրութիւն ունեցել: Հնագոյն եւ հեղինակներն անյայտ շարականների տաղաչափութիւնը շատ հետաքրքրական է, որ բաւական պարզուեցաւ ինձ համար, որովհետեւ երաժշտական շեշտադրութիւնը պահուած է երեւում, որին կից է եւ լեզուինը:

«Սիրոյ քո հուրը» յաջողեցա՞ւ երգելու, թէ՞ դժուարացան. շատ կցանկայի այս անգամ շարականից մի նմոյշ ուղարկել քառաձայնած, տեսնելու, թէ ինչպիսի՝ զգացմունքներ արտազեղել կարող են մեր երկնանուագ շարականների մեղեդիքը, բայց այս դէպքում զդուշութիւնն աւելի լաւ համարելով՝ չուղարկեցի. վախեցայ՝ մի գուցէ լավ չերգեն եւ բանը խանգարեն դորանով, ուստի լաւ համարեցի այսքանը գրել, որ ինչքան կարելի է, մեղմաձայն երգեցողութեան ընտելացնեն աշակերտներին. միշտ միջակ ձայնով երգելու սովորութիւն ունեն:

Այդ բոլորը շա՛տ լաւ, բայց ես չափազանց նեղլում եմ ապրուստի կողմից, յաճախ տկարանում եմ. սնունդս ոչինչ է. զբաղմունքներս՝ շատ. մաշուել ու կմախք եմ դարձել, կարծեմ վերջս այդպիսով կորուստ կլինի: Շնորհակալ եմ, անցեալ անգամուայ ստացած 100 մանէթը

պարտքերիս մեծամասնութիւնը ջնջեց. այս անպիտան առարկան էլ չափազանց շատ է գնահատւում, որպէս եւ միւս գեղարուեստական ճիւղերը, չատ անգամ սնունդս եմ կտրում, որ ուսմանս փող հասցնեմ, բայց... Կարապետ Հայր սուրբն էլ անցեալները գրել էր տղայոց, թէ Կոմիտասն էլ այնտեղից է հարայ տալիս, ի զո՞ւր չէ դիմում Սանթաշեանցին եւ այլն: Մի՞թէ չէ՛ իմանում, որ սկզբում դեռ 400 մանէթ էր ուզում միայն տալ, միայն աներեսութեամբ կարողացայ 600-ի վճիռն ստանալ: Է՛, երանի անցած ժամանակներին, գոնէ մարդիկ կարողանում էին խաղաղասիրտ ուսումով զբաղուել... լա՛ւ է լոելը:

Մի փոքրիկ յօդուած եմ ուզարկում «Արարատ»-ի¹ համար, եթէ արժանի դատուի, թո՛ղ տպեն:

Վաղուց խնդրել եմ Կարապետ վարդապետից, որ աշակերտներից մէկին, զգուշութեամբ, Սամուէլ Անեցուց արտագրել տայ Նոտրադիր գիտելիքներ ձայների եւ երգերի մասին Ս. Էջմիածնի ձեռագրերի մատենադարանից. Համար 1700, բայց ցարդ չեմ ստացել, խնդրեմ, յիշեցրէք:

Տպարանում կամ Վեհարանում կարծեմ ստանում են «Արեւելք»² լրագիրը. շատ պարտաւորեցրած կլինէիք, եթէ 1896 թուի 5600 համարը մի կերպ ինձ ուզարկել տայիք, շատ անհրաժեշտ է: Այսքան:

Բոլոր ուսուցիչներին եւ Ս. Հարց ողջունեցէք իմ կողմից:

Առանձնակի Կ. տիկին Տիրուհուն յարգանացս հաւաստիքը յայտնեցէք, սրտով ուրախ եմ, որ ինձ չէ՛ք մոռանում: Զեզ եւս ծանր օրերում, ծանր գործերի մէջ քաջող ջութիւն եւ յաջողութիւն մաղթելով՝ մնամ միշտ աղօթարար իւ<ոնարհ> ծ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

8 1897, 26/14 մայիս, Բերլին
Kochstr. 73 IV

Մեծապատիւ պլ. Կ. Կոստանեան,
Արգովյան Տէր,
Այս ամառնային վեցամսեկին լսում եմ Համալսարանում.

1. Geschichte der Musik im Mittelalter vom Beginn des Christenthums

2. Musikgeschichte Frankreichs und der Niderlande

3. Einführung in die Geschichte der Kirchenmusik

4. Musikwissenschaftliche Uebungen in der Königl. Musikinstrumenten-Sammlung

Իսկ մասնաւոր դաս եմ առնում ուսուցապետ Richard Schmidt-ից.

1. Formenlehre

2. Klavier (Uebungen)

3. Moderner Tonsatz

Ցաղորդ վեցամսեկին գուցէ կարողանամ սկսել Instrumentation, Orchestermusik. Արդէն Streichquartett-ի համար կարողանում եմ ազատորէն երաժշտական երկեր յօրինել: Եկեղեցական երաժշտութեան տեսականն ամրողապէս վերջացրել եմ, պարապում եմ միայն գործնականով: Այս անտէր դաշնակահարութիւնն ինձ տանջում ու մաշում է, շատ ծանր է առաջ գնում: Մատներս այնպէս են ամրացել ու պնդել յօդերը եւ այն սխալ ուղղութեամբ, որ ուղիղ, անսայթաք եւ պատշաճաւոր դասաւորութիւն դեռ չեմ կարողանում անել, շատ անգամ էլ յուսահատում եմ, բայց եւ այնպէս, պէտք է ձեռք բերեմ եւ այդ ճիւղը, որ անհրաժեշտ է: Առողջութիւնս էլ կաղէկաղ է: Մեր հոգեւոր

Երգերից մի քանի կտոր պատրաստել եմ քառաձան, վեցձայն եւ ութն ձայն: Ուսուցչապետս առաջարկեց երգել տալ. պատրաստում եմ մի քանիսն էլ, ապա երգել պէտք է տայ ինքը՝ ուսուցչապետս, մի որեւէ եկեղեցում կամ Singakademie-ում, իբրև հոգեւոր համերգ: Մանրամասնութիւնն ապա կդրեմ, երբ յաջողութեամբ գործի անցնենք:

Բոլոր հարցանողներին ողջոյն: Յատկապէս մեծապատիւ տիկին Տիրուհի Կոստանեանցին ողջունեցէք իմ կողմից. ամենեւին չեմ մոռանում այն երեկոյեան ժամերը, որ անց էինք կացնում Ձեր տանը, եւ Տիկինը միշտ կրկնում էր եւ պնդում, որ յաջողեցնէիք իմ արտասահման գալը: Չափազանց եւ սրտանց երախտապարտ եմ Ձեզ այս մեծ եւ անփոխարինելի բարիքի համար, որ ինձ արիք կրկին նպատակով եկեղեցական երգեցողութեանը պատշաճաւոր դիրք տալու եւ ինձ իմ սիրած առարկայի մէջ յառաջ մղելու համար:

Ուրիշ գրելիք չունեմ:

Յանկանում եմ ե՛ւ Ձեզ յաջողութիւն Ձեր գործերի մէջ ե՛ւ քաջողջութիւն:

Ձեր աղօթարար իւ<ոնարհ> δ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

9 1897, 10 նոյեմբեր (29 հոկտեմբեր), Բերլին

Յարգելի՛ պ. Կ. Կոստանեանց,

Այս ձմեռնային վեցամսեկին լսում եմ Համալսարանում.

1. Aesthetik der Tonkunst. Prof. O. Fleischer
2. Die Musik der alten Griechen. Prof. Bellermann
3. Allgemeine Geschichte der Musik. Friedländer

4. Musikinstrumentenkunde. Prof. O. Fleischer.

5. Musikwissenschaftliche Uebungen. Prof. O. Fleischer.

Իսկ *Prof. Richard Schmidt*-ից մասնաւոր դաս եմ առնում
հետեւեալներից՝

1. Formenlehre

2. Compositionslehre

3. Klavier

4. Stimmenbildung.

Չափազանց գոհ եմ ես իմ ուսուցչապետիցմ, որ այս մի տարուան ընթացքում ինձ այնքան յառաջ տարաւ երաժշտութեան մէջ առհասարակ, որքան 6 տարում չեն անցնում այստեղի պետական երաժշտանոցումն անգամ: Ինձ համար եթէ մի դժուար բան կայ, դա դաշնամուր նուագելն է, որն եւ շատ դանդաղ է առաջ գնում, մատներս կոպտացել են, ուկորներս պնդացել: Քիչ-շատ նուագում եմ, բայց իմ ուզած աստիճանին դեռ չեմ հասել: Ուսուցչապետս՝ *Richard Schmidt*-ը, իւր երաժշտանոցում, պատրաստական դասարաններում դասեր է նշանակել, իւր հսկողութեան տակ երգեցողութեան դասեր եմ տալիս եւ խումբ կազմելու, պատրաստելու, կառավարելու վարժում, որ չափազանց շահաւետ արդիւնքների է հասցնում իմ փորձառութեանս:

Յարգելի պ. Կոստանեանց, մի խնդիրք ունեմ, եթէ հնարաւոր է, առաջին 3 ամսի նպաստադրամս էլ ուղարկել տայիք, որ չեմ ստացել, գոնէ կարող կլինէի երաժշտական անհրաժեշտ գրքերից գնել, որոնք անհրաժեշտ են ինձ համար եւ մնացած կին պարտքս էլ կվճարէի վերջնականապէս. իհարկէ, եթէ կարելի է միայն:

Իմ կողմից տիկին Տիրուհուն եւ բոլոր ուսուցչաց, որպէս եւ ծանօթ հոգեւոր Հարց, ողջունեցէք, խնդրեմ, եթէ տեսնէք:

Ձեզ եւս ողջունելով՝ մնամ միշտ երախտապարտ Ձեր
իւնարհ՝ ծառայ՝

Կոմիտաս Վարդապետ

10 1898, 5 մայիս, Բելլին
Kochstr. 73 IV

Հարգելի՛ պ. Կ. Կոստանեան,

Այս ամառնային վեցամսեկին Համալսարանում լսում
եմ.

Prof. Bellerman:

1. Geschichte der Musik des Mittelalters seit dem Anfang des Christenthums bis Franco von Cöln im 13. Jahrhundert.

Prof. Fleischer

2. Deutsche Musikgeschichte (dritter Theil) von Handel und Bach an

3. Geschichte der Notenschrift

4. Musikwissenschaftliche Uebungen im Instrumentenmuseum.

Prof. Friedlander:

5. Allgemeine Geschichte der Musik vom Beginn des 17. Jahrhunderts ab

6. Musikwissenschaftliche Uebungen (Erklärung ausgewählter musikalischer Kunstwerke).

Մասնաւոր դաս եմ առնում Prof. Rishard Schmidt-ի մօտ.

7. Instrumentation und Orchestersatz mit Vocal-, Chor- und Solo-Satz

A. Instrumentation:

a. Instrumentation für gewöhnliches Orchester

b. Instrumentation für das grosse symphonische Orchester

c. Das gewöhnliche Orchester in Verbindung mit Gesang in den niederen dramatischen Formen des Vaudeville

d. Verbindunge des symphonischen Orchesters mit der Vocalmusik in Oper und Oratorium.

B. Orchestersatz:

a. Das Orchester und seine Behandlung

b. Der Sologesang

c. Verbundener Instrumental-und Vocal-Satz.

Վերջին 7-րդը 2½ վեցամսեկի դասընթաց է. նոյնպէս շաբաթական մի-մի դաս տալիս եմ ուսուցչապետիս երաժշտանոցում խմբական կազմակերպութիւն արական բարձր ձայների համար եւ ներդաշնակութիւնն ազատ գեղարուեստի մէջ բարձր դասարաններում:

Զեզ յարգող խ<ոնարհ> δ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

11 1898, 11 հոկտեմբեր (29 սեպտեմբեր), Բերլին
Kochstr. 73

Մեծապատիւ պլ. Կ. Կոստանեան,

Այս ձմեռուան վեցամսեկին լսելու եմ Համալսարանում.

1. Musikgeschichte des Mittelalters. Prof. Fleischer
2. Mozart Leben und Werke. Dr. Friedländer
3. Musikgeschichte des 19. Jahrhunderts. Pr. Fleischer
4. Das deutsche Lied. Dr. Friedländer
5. Musikwissenschaftliche Uebungen. Dr. Friedl.
6. Musikwissenschaftliche Uebungen. Pr. Fleischer

7. *Uebungen im Contrapunkt. Prof. Bellermann.*

8. *Ueber die Musik der alten Griechen. Pr. Bellermann.*

Իսկ մասնաւոր դասընթացքը *Instrumentationslehre und Orchestersatz* շարունակելու եմ Prof. Richard Schmidt-ի մօտ, նոյնպէս շաբաթական 1 ժամ փորձնական դաս նորա երաժշտանոցում:

Որովհետեւ եկող տարի վերադառնալու եմ արդէն, ուստի վաղօրօք մի քանի առաջարկութիւններ ունեմ անելիք:

Նախ իմ վերադառնալուց յետոյ անհրաժեշտ է, որ ճեմարանը ունենայ մի հատ ընտիր *Harmonium*, անհրաժեշտ է, որովհետեւ ես մտադիր եմ շաբաթական մի անգամ ճեմարանում եկեղեցական երաժշտական հանդէս կամ ժողովրդական երաժշտական նուագահանդէս եւ երգահանդէս տալու, հէնց այս պատճառով, միակ նուագարանը, որ մեր եղանակների ոգուն է համապատասխանում եւ յարմարում, *Harmonium*-ն է դա, որն եւ միշտ գործածելու եմ ես մեր եկեղեցական երաժշտութիւնը կարգի բերելու համար եւ դորա համար իսկ սկսեցի նոյնպէս *Harmonium* նուագել սովորել, որն եւ մինչեւ յունիս կաւարտեմ, այնքան դժուարութիւն չունի ինձ համար, որպէս *Piano*-ն է պատճառում: Մի խօսքով *Harmonium*-ն աւելի նպատակայարմար եմ գտնում ես ինձ համար, քան *Piano*-ն:

Երկրորդ՝ եկող տարի ճեմարանի 25 ամեակն է¹. Հարկաւոր է մի քանի բան պատրաստի ունենալ. ես այսպէս մտածեցի: Խնդրեցէք իմ կողմից պ. Յ. Յովհաննիսեանից, որ մի բան գրէ այդ առթիւ եւ որքան կարելի է շուտով, որ արդէն պատրաստած բերեմ, այլեւս ժամանակ չեմ ունենայ այդտեղ այդպիսի բաներով զբաղուելու եւ գլխաւոր ոյժ

գործ կղնեմ մի խումբ կազմելու համար։ Առհասարակ ձայնեղ աշակերտներից մեծն ու պատիկը պահեցէք կամ արձակուրդ տուէք մինչեւ, օգոստոսի 1-ը. մի քիչ յետոյ էլ ես կդառնամ այստեղից Ս. Էջմիածին։ Եւ եթէ կարելի է, տեղեկացէք մի կերպ՝ Երեւանի զինուորական նուագախմբի մէջ ինչպիսի՞ գործիքներ են գործածում, որ ես էլ ըստ այնմ նուագարանները յարդարեմ երգը յօրինելիս։ Այսպիսով կարելի կլինի մի փառաւոր հանդէս տօնել։

Ես արդէն պատրաստի ունեմ «Տէր Կեցո»-ն եւ «Հայրիկ, Հայրիկ, քո Հայրենիք»-ը թէ՛ խմբի եւ թէ՛ նուագի համար եւ կպատրաստեմ ժողովրդականներից էլ ընտիրները։

Շատ կցանկայի մի քանի առարկայ էլ Աստուածաբանութիւնից լսել, բայց ժամանակս սուղ է, ուստի չեմ կարողանալու։

Եթէ այլ պատուէրներ ունէք, գրեցէք ինձ, խնդրեմ։
Harmonium-ի կարեւորութիւնը բացատրելուց յետոյ մնում է գնելու, եւ գնի, ծախսի մասին նեղութեան յանձնառու լինէք եւ այն Դուք, ուրիշ մարդու բան չէ դա, չեն էլ կարող անել միւսները։ Ես իմ յոյսս միանգամայն վստահաբար Զեր վերայ եմ դրել. Հարկաւոր է 1500 մանէթ դրամ՝ մի ընտիր Harmonium-ի համար, որն եւ բաւական է, ճանապարհածախսը եւ մաքսը արդէն այս 1500 ըուբլու մէջն է հաշուած։

Սպասում եմ Զեր նամակին։

Խնդրեմ, ողջունէք իմ կողմից յարդանքով Զեր տիկնո՞ց՝ տիկին Տիրուհուն եւ Հարցանողաց։ Զեր աղօթարար՝

Կոմիտաս Վարդապետ

Յ.Գ. Խնդրեմ, մի օրինակ յոբելեանի ծրագրից ուղարկեցէք։

Խնդրեմ, թոշակներս ժամանակին ուղարկելու կարգադրութիւն անէք:

Նոյն

12

1898, 7 դեկտեմբեր, Բերլին

Kochstr. 73 IV b. Strauß

Մեծապատի՛ւ պլ, Կ. Կոստանեանց,

Ձեր գրութեան համաձայն շտապում եմ պատասխանելու:

ա. Դրամի մասին գրածս սխալ է. ո՛չ Յ, այլ մի՛ յունիս ամսինը չե՛մ ստացել, որովհետեւ ես այստեղ եմ ո՛չ թէ յուլիս, այլ յունիս ամսիցն սկսած, որ կանէ մինչեւ, մարտ ամիսը 21 ամիս:

բ. Ես էլ եմ վերադառնալուն շտապում, բայց՝ ո՛չ թերի:

Դեռ 1898-ի սեպտեմբեր ամսին 21/4 տարի կլինի գալս, այն ինչ պլ. Մանթաշեանցը խոստացել է Յ տարի պահել, եթէ կարիք լինի, չորրորդն էլ խոստացել է, բայց 4-րդին կարիք չունեմ, իսկ Յ-րդը լրացնելու մե՛ծ պահանջ կայ:

Բարձրագոյն երաժշտութիւնը կամ գեղարուեստական երաժշտութիւնը սկսելու եմ դեռ Յ-րդից, առանց որոյ եկեղեցական եղանակները կարդի բերելն ու բարեկարգելը գրեթէ անհնար է. դեռ այս ամսի վերջին կամ թէ միւսի սկզբին եմ ազատուելու չոր ու ցամաք կանոնների ճանկից եւ ապա ազատ երաժշտութիւն սկսելու: Սա արդէն պատմութիւն չէ, որ գրքից սովորէ մարդ, այլ գործնական վարժութեամբ առանց սորա, ես, իբրեւ, երաժիշտ, միանգամայն անպէտք կլինեմ:

Շատ ողջոյններ տիկնոջ եւ ուսուցչական խմբին: Զեր
խ<ոնարհ> δ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

Յ.Գ. Այն, ինչ որ ես այս կարճ ժամանակում կատարեցի, սորա 1/10-ը չէր կատարել 5 տարուան ընթացքում իմ նախնին:

Նոյն

13

1899, 31/19 մարտ, Բերլին

Kochstr.73

Մեծապատի՛ւ պ. Կ. Կոստանեան,

Պարտք եմ համարում յայտնելու, որ Compositionlehre-ն ամբողջովին կաւարտեմ եկող ամսի վերջերին, ժամանակից օգուտ քաղելով՝ կամեցայ եւ մի այլ թերի կողմս լրացնել՝ երկու շաբթուց ի վեր առնում եմ երգեցողութեան եւ ձայնակրթութեան դասեր, որ անպայման անհրաժեշտ է խմբական երգեցողութեան եւ առհասարակ ճեմարանական խմբի ձայները կրթելու եւ կոկելու համար. ուսուցչապետս փորձեց ձայնս եւ որոշեց, որ ես բարիտոն եմ, որ ամբողջովին ամփոփում է բարձր թէնորի եւ ստորին բարիտոնի ամբողջ տարածութիւնը $2\frac{1}{4}$ ութիւնակ՝ 20 աստիճան, ձայնիս մէջը ձուլուած է համանգամայն թէ՛ թէնորի ճկունութիւնը եւ թէ՛ բարիտոնի փափկութիւնը: Որովհետեւ ինձ համար դժուարութիւն չէ պատճառում մի անծանօթ կտոր անմիջապէս, առանց ուսանելու երգելը, ուստի արագաբար առաջ եմ գնում. ձայնս անհամեմատ ուժեղացել է: Այս վեցամսեակին միայն երկու առարկայ եմ լսելու համալսարանում, ժամանակին կգրեմ այդ մասին: Hartmünium նուագելն էլ գրեթէ աւարտելու վերայ եմ:

Անցեալներս Բերլինում հիմնուեցաւ «Միջազգային երաժշտական ընկերութեան» Բերլինի ճիւղը, որին անդամակցելու հրաւիրուած էի եւ ես: Գործի գլուխն է անցել համալսարանի պրօֆ. Oskar Fleischer, որի աշակերտներից միայն ես էի հրաւիրուած անդամակցելու:

Ես պարտաւորուած եմ շարունակ թղթակցելու եւ առհասարակ արեւելեան երաժշտութեան մասին ուսումնասիրութիւններ տալու. իմ ապագայի համար անպայման արդիւնաւէտ ոյժ է սա: Ուղարկում եմ կանոնաթերթերից մի-մի օրինակ, մանրամասնութիւնն այստեղ կկարդաք:

Կրկին անգամ եմ խնդրում, եթէ հնարաւոր է իմ թոշակներս միշտ ամսագլխին ուղարկել, կարգադրէք. սաստիկ նեղւում եմ. խոշոր ծախքեր ունեմ այժմ:

Ճեմարանի տօնի համար Ձեր գրած կարգադրութիւններից ոչ մէկը չեմ ստացել դեռ:

Խնդրեմ, ողջունեցէք իմ կողմից ճեմարանական խմբին:

Առանձնակի բարեւելով տիկին Տիրուհուն եւ Ձեզ՝ մնամ

Ձեր անձնուէր՝

Կոմիտաս Վարդապետ

14 1899, 29/17 յունիս, Բերլին
Kochstr. 73

Մեծապատիւ պլ. Կ. Կոստանեան,

Թէեւ անցեալ նամակովս Ձեզ յայտնել էի, որ օգոստոսին Ս. Էջմիածին կվերադառնամ, բայց վերադարձս ուշանալու է մինչեւ սեպտեմբերի կէսերը, որովհետեւ մի անհրաժեշտ գործ ունեմ, որ անպայման այստեղ եղած

ժամանակ կատարելու ստիպուած եմ: Անցեալները մեծ
 յաջողութեամբ երկու դասախօսութիւն կարդացի Բերլինի
 երաժշտանոցում: Հայոց երաժշտութեան մասին՝ առհա-
 սարակ եւ արեւելեանի մասին՝ մասնաւոր տեղեկութիւն
 միայն. այս կրկին դասախօսութիւնս¹ մեծ զարկ տուաւ
 երաժշտական շրջանում յայտնի լինելուս, նամանաւանդ,
 երբ անդամ ընտրուեցայ Միջագգային երաժշտական
 ընկերութեան, ուր միայն յայտնի երաժիշտներն են
 անդամակցում: Դասախօսութիւնս տպել տալու ստիպե-
 ցին համալսարանի ուսուցչապետներս, եւ Ընկերութեան
 գիտական ժողովածուի հրատարակութեան առաջին
 համարում, որ լոյս կտեսնէ օգոստոսի մէջ, հիւրընկա-
 լուեցաւ իմ յօդուածս էլ, այնպէս որ այժմ ստիպուած եմ
 տպագրութեան համար պատրաստել եւ հասցնել: Երկ-
 րորդ՝ գեռ ուսմանս մէջ սահմանեալ ծրագիրը վերջացնել
 կարող եմ մօտաւորապէս օգոստոսի 20-ին: Որովհետեւ
 դեռ այսքան անհրաժեշտ անելիքներ ունեմ, ուստի, խնդ-
 րեմ, ինձ սեպտեմբերից առաջ մի՛ սպասէք ճեմարանում:
 Խնդրեմ յատկապէս ջերմագին ողջունեցէք Զեր
 տիկնո՞ց:

Հարցանողաց բարեւ. Զեր երախտապարտ՝

Կոմիտաս Վարդապետ

15

<1906-ի նոյեմբերի վերջ, Փարիզ>

Մեծարդո՛յ պլ. Կ. Կոստանեան,

Պարտք եմ համարում Ձեզ տեղեկացնելու, որ արդէն
 Փարիզի համերգն¹ էլ պատրաստ է. երգելու են տեղական
 յայտնի երգիչներից 30 հոգի եւ հայերէն: Դեկտեմբեր 6-ին

էլ դասախոսութեան հրաւէր ստացայ տեղական երաժշտագէտների միութեան նախագահից: Մեծ ցանկութիւն կայ կրկնել տալու համերգը, որովհետեւ տոմսերը ծախուել են, իսկ պահանջ շատ կայ:

Սաստիկ տիսրեցի նահապետ սրբազնի² մահուան լուրը կարդալով: Եթէ աշխարհում մի մարդ կար, որ անքաղդ էր, նա էր կարծէք անյաջողութիւնը նորա համար ստեղծուած լինէր:

Աստուած Ձեզ երկար օրեր տայ եւ տիկնոջ առողջութիւն. լսեցի, որ մի քիչ տկարացել է:

Լուրեր են տարածել, իբր թէ ես թողել կամ թողնելու եմ վարդապետութիւնը զգուելի բամբասանք է միանգամայն:

Զեր Կոմիտաս

16.

<1907, 17 օգոստոս, Լօգան>

Սիրելի՝ պ. Կոստանեան,

Իտալիայից վերադարձայ¹ եւ Ձեր գրած տոմսերն ստացայ: Լօգան այնպէս պատահեցաւ, որ Քաջբերունին² նշանակած ժամին իմ հիւրանոցում չգտնուեցաւ, որոնեցի նորան, չգտայ, երեւի յետոյ էլ նա է ինձ որոնել. մի խօսքով, իրար չպատահեցանք. իսկ Ձեր հասցէն ինձ չէր ասել, ստիպուած, ցաւելով, առանց տեսնելու մեկնեցայ: Իտալիան շատ գեղեցիկ է, բայց մեր դժբաղդ հայրենիքն աւելի գեղեցիկ է: Վենետիկի վանքում Յ շաբաթ աշխատեցայ, բայց վանքում չէի հիւրասիրուած, ապրում էի քաղաքում, Ս. Մարկոսի հրապարակի հիւրանոցներից մէկում՝ պ.

Զօպանեանի հետ մէկ տեղ: Գրադարանից բաւական օգտուեցայ: Այս քանի օրն արդէն պատրաստւում եմ ես էլ կամաց-կամաց, որ մի ամսից երթամ Կովկաս:

Շատ ուրախացայ, որ տիկնոջ հիւանդութիւնը մասսամբ թեթեւացել է. ցանկանում եմ կատարեալ առողջութիւն. շարունակ յիշում եմ միասին անցուցած բարեկամական գեղեցիկ օրերը:

Աստուած քաջողջութիւն պարգեւէ երկուքիդ էլ, որ կրկին խնդանք ու զուարճանանք:

Կարօտալի եւ սիրալիր բարեւներ տիկնոջ եւ Ձեզ՝
Ձեր միշտ անձնուէր՝

Կոմիտաս Վարդապետ

ԲԱՐՍԵՂ ԿՈՐԳԱՆԵԱՆԻՆ

1904, 22 յուլիս, Ա. Էջմիածին

Արգոյ պ. Կորդանեան,

Յաւում եմ, որ մինչեւ սեպտեմբերի 1 այստեղ չեմ կարող լինել, գնում եմ հէնց այսօր գիւղերը ճանապարհորդու եւ ժողովրդական ու եկեղեցական հին եղանակներ ժողովելու:

Ուրախութեամբ սպասում եմ Ձեզ սեպտեմբերին:

Յարգանքներով միշտ պատրաստ Ձեզ ծառայելու՝

Ձեր անձնուէր խ<ոնարհ> ծ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

ԿՈՐԻՒՆԻՒՆ

<1899> 31/19 մայիս, Kochstr. 73

Սիրելի եղբայր, Հայր Կորիւն,

Արդէն մօտենում է վերադարձիս ժամանակը, շուտով
իրար տեսութեան արժանի կլինենք յուսով: Այս նամա-
կովս դիմում եմ քեզ եւ խնդրում հետեւալ խնդիրքս
կատարելու ջանաս:

Այս վերջին տարուան ուսումն ինձ շատ թանկ նստեց,
ուստի առօք-փառօք պարտքի մէջ թաղուեցի. աւելցուր
սորա վերայ եւ խարդախ Գրիգոր Թոքաթլեանի (սորան
Ս. Էջմիածնից ծանօթ կլինես) վարմունքը, որ աշագին
պարտք առաւ ո՛չ միայն ինձնից, այլ եւ ամբողջ ուսա-
նողութիւնից եւ նոյնիսկ օտարներից եւ մի օր յանկարծ
անյայտացաւ, փախաւ, էլ իզն ու թողը չէ' երեւում, ամ-
բողջ հայ ուսանողութեան եւ ազգի անունը վայր ձգեց:

Այժմ խնդրում եմ քեզ, համբուրի՛ր իմ կողմից Վե-
հափառ Հայրիկի Սրբազն Աջը եւ խնդրի՛ր՝ հրամայէ ինձ
200 ըուբլի ուղարկելու, որն իբր պարտք եմ ուզում, վերա-
դարձիս ոռճկիցս կամաց-կամաց կհատուցանեմ, ուր որ
հասնելու է: Այս թեթեւ խնդիրքս որ կատարես, ինձ սաս-
տիկ պարտաւորեցրած պիտի լինես: Շուտով պատաս-
խանիր:

Ողջունի՛ր յատկապէս Խորէն էֆ<էնտիեն>¹ եւ
հարցանողաց:

Մնամ քո եղբայր՝

Կոմիտաս Վարդապետ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ

1902, 14 դեկտեմբեր, Ս. Էջմիածին

Հայոց դրամատիկական ընկերութեան պատուական Վարչութեան.

Նախընթաց գրովս պատիւ էի ունեցել յայտնելու Վարչութեանդ, որ կանտատան առանց օրկեստրի չէ կարող լինել եւ որ ժամանակը շատ կարճ է գեղարուեստորէն մշակուած մի այդպիսի յօրինուած պատրաստելու համար:

Վարչութեանդ երկրորդ գրածից երեւում է, որ կանտատան երգել տալու միջոցներն էլ՝ օրկեստր եւ խումբ, պակասաւոր են. իսկ առանց գոցա յօրինուածը խիստ լզար եւ միաձեւ կլինի եւ անպատշաճ՝ մի այդպիսի հանդէսի համար:

Պատուական Վարչութեանդ ներողամտութիւնը ինդեղելով, ուղարկում եմ պ. Յ. Յովկաննիսեանի բանաստեղծութիւնը՝ յուսալով, որ Վարչութիւնդ անշուշտ կգտնէ տեղումն մի ուրիշ անձ, որ աւելի քիչ զբաղուած կլինի պաշտօնական դասերով եւ կանտանտան յօրինելու համար, տեղական պայմաններին քաջ ծանօթ լինելով, բաւական ժամանակ կգտնէ:

Յանկանալով կատարեալ յաջողութիւն պատուական Վարչութեանդ բոլոր ձեռնարկութիւններին՝ մնամ աղօթարար

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԵԱՆ

Կոմիտաս Վարդապետ

Ա'յլ աշխարհից մեր մէջ իջաւ,
Գեղեցկութեան ոգին էր նա.
Պրոմեթե'ւսն էր, երկիր իջաւ
Եւ արուեստի վառեց սուրբ ջահ:
Փա՛ռք հանճարին յաւերժական,
Ոգեւորեց անըգգային.
Մեռած սրտեր կենդանացան-
Լոյս-արեգակ էր երկնային:
Թո՛ղ դափնիներ պսակեն
Վսեմ ճակատը նորա
Եւ բիւր բերան միշտ հնչեն՝
«Մեծ հանճարին փա՛ռք անմահ»:

Յ. Յովհաննիսեանի

«ՀՈՎԻՏ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ

1912, 19 փետրուար, Կ.Պոլիս,

Կը ցաւիմ, որ սուտ լուրերու արձագանք է եղել Զեր
պատուական թերթը¹: Ամենապատիւ Տէր Տեղակալէն
խնդրել եմ՝ կարճել իմ միաբանական ոռճիկը², ուրիշ
ոչինչ, որովհետեւ Կ. Պոլիս հաստատուեցայ, ուստի միա-
բանական ոռճիկ ստանալն անիրաւի եմ դատել: Ես
հոգեւոր կոչումէս երբեք չեմ հրաժարուած եւ. հրաժարին
անգամ մտքէս չեմ անցուցած:

Մնամ միշտ Ս. եկեղեցւոյս պաշտօնեայ՝

Կոմիտաս Վարդապետ

ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶԵԱՆԻՆ

1912, 24 փետրուար, Կ. Պոլիս

Pangaltı N 83 (47)

Սիրելի՝ բարեկամ,

պ. Վահան Մալէզեան,

Հազիւ կրցայ տեղաւորիլ, թէեւ արդէն գործն սկսած
էի՝ մէկ ամիսէն ի վեր. ուստի ներող եղիր, եթէ խոստումս
քիչ մը ուշացուցի:

Կազմակերպուեցաւ Հայ երաժշտանոցի կից մասնա-
խմբիկը, որու նախագահ ընտրուեցաւ. Աստուածատուր
Հարէնց, գանձապահ Եղուարդ Գարակէօզեան եւ քար-
տուղար՝ Սիսակ Աշճեան:

Արդ, տուն-տեղ ունիմ եւ ապրուստ. կ'աշխատեմ
խմբովս, մասնաւոր դասերովս եւ ինքնուրոյն ստեղծա-
գործութիւններովս: Մինչեւ կէսօր՝ ինձ համար, կէսօրէն
ետքը՝ աշակերտներուս: Ունիմ 12 հոգիէ բաղկացած երի-
տասարդներու խումբ մը, ներդաշնակութեան եւ խմբավա-
րութեան դասերը կ'ուսանին, որ կարենան խմբեր կազմել
ու վարել, որք կ'ուսանին ձրիաբար. ունիմ խումբ մը ըն-
տիր ձայներէն բաղկացած եւ հասուն անձերէն ընտրուած՝
160 հոգի. ընտրութիւնը խիստ եւ զգուշաւոր կատարեցի,
զի խումբը մնայուն է, մշտական եւ ձրիաբար ուսանող¹.
ներփակ կ'ուղարկեմ մէկ օրինակ երգչական խմբին
անդամակցելու պայմանագրէն, որ տեղեկութիւն ունենաս:
Արդէն մարզելու վրայ եմ, եւ անդրանիկ համերգը տեղի
ախտի ունենայ նոր կիւրակէին՝ յօգուտ երաժշտանոցի եւ
երկրորդը՝ մի քանի չափաթ յետոյ՝ յօգուտ Ազգային
Հիւանդանոցին²: Ընտիր ձայներ եւ ընդունակութիւններ

երեւան եկան. օր աւուր կը հրճուիմ՝ տեսնելով մեծ յառաջադիմութիւն։ Այս անգամուան համերգները համեմուած են թէ՛ ազգային, թէ՛ գեղջուկ եւ թէ՛ օտար կտորներով, որպէսզի մենք մերինը ծանօթացնենք եւ օտարներու երաժտութեան ծանօթանանք։ Երեկ այցելութեան եկաւ Սուլթանի արարողապետ հսմայիլ ճէնանի պէյը, որ շատ լաւ ճաշակ եւ նուրբ ըմբռնողութիւն ունի թէ՛ եւրոպական եւ թէ՛ օտար-արեւելեան երաժտութեան մասին, շատ գոհ մնաց։ Երգի մի երկու բան³։

Այժմ եգիպտահայերու պատուական հիւրն է ընտիր երգիչ Շահմուրադեանը, որու ունեցած աննախընթաց յաջողութիւններն ինձ անչափ ուրախացուցին, եւ կը պարծիմ իրաւամբ, երբ օտարները մեր մասին գիտութեան եւ գեղարուեստի միջոցաւ է, որ լաւ գաղափար կը կազմեն, եւ այսպիսի գործնէութիւնն անջինջ ու քաղաքակրթիչ դեր ունի։ Շահ-Մուրադը, որ հայ հողին սերմն է, հայ ջրովը սնուած եւ հայ արեւով կիզուած, ունի ընտիր, պայծառ ու եռանդուն ձայն։ Հայերու համար ողքա՛ն պարծենալիքներ պիտի առթէ տակաւին նա, որ իր գործունէութեան գարնան շեմքին վերայ է կայնած։ օտարները նախանձեցան եւ դաւեցին, բայց մենք պարտ ենք փայփայել եւ ջամբել։

Ես խոստացած էի Միացեալին համար երգ յօրինել⁴, եւ դուն խոստացար քանի մը երգ՝ զանազան մարդոց ձեռամբ գրուած, յղել. այժմ հասցէս գիտես, ես ալ յարմարութիւններ ունիմ աշխատելու, ուստի կ'աղաչեմ, ուղարկէ քանի մը յարմարաւոր բաներ, որ ընտրութիւն անեմ։ Բայց լաւ կը լինէր, որ կարճ, կտրուկ, ժողովրդական դիւրամատչելի լեզու եւ ոճ ունենային, որ ընդհանրանար դպրոցներու մէջ, եւ միտք ունիմ երկու, երեք, չորս եւ այլն

ձայներով կազմել, որ ըստ տեղին եւ պահանջին ալ ուզած ձեւովը երգել կարելի լինի: Լաւ է, որ երկու կամ երեք տուն լինի: Եթէ տուներու մէջ կրկնուին համաձեւ մտքեր, կրնայ միայն մէկ տունին եղանակ դրուել, եւ այդու կը չափուին միւսները. Իսկ եթէ տուներուն մէջ տարրեր մտքեր շօշափուին կամ նոյն միտքը հետզհետէ սաստկանայ, այն ժամանակ եղանակն ալ, ըստ այնմ միաձոյլ ձեւ կ'առնէ: Մէկ խօսքով, որքան պարզ, այնքան վեհ կը լինի եւ ընդարձակութիւն ու ժողովրդականութիւն կ'ունենայ: Բայց կ'աղաչեմ, մաղթանքի ձեւ չունենայ:

Շատ կարօտալի բարեւներս բոլոր բարեկամներուս, որոնց մէկիկ-մէկիկ նամակ գրելու հնարաւորութիւն չունիմ:

Մնամ միշտ անձնուէր՝ Ան անձնուէր՝ կոմիտաս Վարդապետ

ԱՆՏՕՆ ՄԱՅԼԵԱՆԻՆ

1 դիմ յան 1909, 3 դեկտեմբեր, Ս. Էջմիածին

Սիրելի՝ բարեկամ,

Ձեր բաց գիրն ստացայ ամսիս Յին, այսօր (այստեղ գիւղ է, ամենօրեայ թղթատար չունենք): Յօդուած հասցնելն անհնարին էր, որովհետեւ, այսօր մեկնում է փոստը, իսկ միւսը՝ ուղիղ 5-ին, ուրեմն Դուք ստանալու էք 9-ին, որովհետեւ այստեղից գնացած նամակները մէկ օր էլ պառկում են երեւանում: Անմիջապէս գրեցի երկտողն, որ Զեզ միամտացնեմ, չսպասէք¹: Միւս համարի ժամանակը բարի եղէք հաղորդելու, եւ ես կամաց-կամաց կհասցնեմ:

Կատարեալ յաջողութիւն, Զեր դժուարին գործին եւ
ձեռնարկութեան:

Սիրալիր ողջոյններով՝

Կոմիտաս

1910, 22 մարտ, Ա. Էջմիածին

Արքոյ պատօն Մայիլեան,

Ուղարկում եմ «Հայ գեղջուկ պարը» փոքրիկ ուսում-նասիրութիւնս, որ արդէն գերմաներէն տպուել է (Zeitschrift für Armenische Philologie, 1901, I, B.H.) ամսագրում, բայց ցարդ հայերէնը հրատարակուած չէր: Միւս կէսն էլ կուղարկեմ շուտով: Ոչ մի պայման չեմ առաջարկում Զեզ իմ ուսումնասիրութեանս համար միայն խնդրում եմ, եթէ Զեզ համար նեղութիւն չէ, յանձն առէք, քանի օրինակ որ կարող էք, արտատպութեան տալ, ո՞չ թէ ծախելու, այլ այստեղ-այնտեղ՝ իմ բարեկամներին նուէր ուղարկելու համար:

Ենորհակալութեամբ ստացայ Զեր «Թատրոն եւ երաժշտութիւն» ամսագրի առաջին համարը եւ յաւելուածները:

Շատ ուրախալի է Աղամեան քոյլերի¹ երեւան գալը, արդէն ես լուրջ հետեւում էի նոցա համերգների ընթացքին եւ հիանում՝ կարդալով նոցա փառաւոր յաղթանակը:

Ո՞վ է այդ Գ. Վերդեանը², որ այդպէս անխիղճ կերպով յօշոտում է հայ գեղջուկի վշտահար սրտի մեղմածոր քնարը. զարմանում եմ միանգամայն մեր հասարակութեան վերայ, որ այդպիսիների միջոցաւ բուն գեղարուեստն է դուրս վանում իր սրտից:

Յաջողութիւն եւ քաջողջութիւն Զեր գործին եւ Զեզ:

Բարեւներով՝

Կոմիտաս Վարդապետ

Արգույ պ. Անտօն Մայիլեան, ներողութիւնը մէջ է դրել իմ առաջարկը¹: Ես չէի ցանկանայ, որ Դուք իմ պատճառով նորանոր պարտքերի տակ մտնէիք: Ուստի խնդրում եմ, եթէ չէք շարել տուել արտատպելու համար, նեղութիւն մի՛ քաշէք. իսկ եթէ շարել էք տուել, վարուեցէք այնպէս, որպէս Զեզ յարմար է. քանի օրինակ ուզում էք տպէք, որքան ուզում էք՝ ինձ ուղարկէք: Ես շատ լաւ եմ զգում գործի ծանրութիւնը եւ ցանկանում եմ ամեն կերպ Զեզ աջակից եղած լինեմ Զերսկսած շատ համակրելի նպատակն առաջ մղելու համար:

Իզուր անհանգիստ մի՛ լինէք իմ պատճառով: Քաջողջութիւն եւ յաջողութիւն մաղթելով՝ ողջունում եմ Զեզ:

Կոմիտաս Վարդապետ

ՎԱՀՐԱՄ ՄԱՆԿՈՒՆՈՒՆ

1

1902, 14 մարտ, Ա. էջմիածին

Գերապատի՛ւ Սրբազն Հայր.

Տ. Վահրամ եպիսկոպոս Մանկունի,

Փութամ սիրով պատասխանել Զերդ Գերապատութեան Հայրական գրութեան, որից երեւում է, նպատակ ունէք՝

ա. Հայկական ձայնագրութիւնը ծաղկեցնել եւ ընդհանրացնել ջանալ մեր դպրոցներում եւ, ուստի պէտք կայ՝

բ. թէ՛ դասատուաց եւ թէ՛ դասագրոց պակասութիւնը դարմանելու:

Դպրոցական շրջանում տարրական երաժշտութեան տեսական եւ գործնական սահմանից չպէտք է շեղուել. որովհետեւ՝ ա'յլ է երաժշտութիւն աւանդելը՝ իբր դաստի- արակչական ամենազօրեղ գործօն դպրոցական կեանքի մէջ եւ ա'յլ իբր մասնագէտ երաժիշտներ պատրաստելը:

Դպրոցական շրջանին համապատասխանողը, որն եւ Եւրոպիոյ բոլոր դպրոցների մէջ ընդունուածն է, է՛ առաջինը, որից յետոյ, աշակերտն այնքա՞ն տեսական եւ գործնական տարրական պաշար է ձեռք բերած լինում, որ, եթէ աւելի առաջ գնալու ձիրք եւ ունակութիւն եւս ունի, կարող է անսայթաք կերպով բարճրագոյն եւ աւելի բարձր գեղարուեստական երաժշտութեան շեմքը կոխել եւ իր ծարաւը լիապէս յագեցնել:

Զերդ գերապատւութեան սահմանած նպատակն իրա- գործելու համար, ըստ իս, պէտք է դասագրքերն ու կանո- նագրքերը այսպէս կազմել:

Ա. Կանոնագիրք (տեսական մասն երաժշտութեան)

ա. Տարրական երաժշտութիւն

բ. Եկեղեցական երաժշտութիւն Հայոց

Բ. Դասագիրք (գործնական մասն երաժշտութեան)

ա. Տարրական երգեցողութիւն

բ. Եկեղեցական երգեցողութիւն Հայոց

Եթէ կարեւոր դասուի՝

Գ. Կանոնագիրք (տեսութիւն տարրական բազմաձայն երաժշտութեան)

ա. Տարրական ուսմունք դաշնակների

բ. Դաշնակութիւն (բազմաձայն գրութեան օրէնքները)

Դ. Դասագիրք (գործնական մասն տարրական բազմա- ձայն երաժշտութեան)

ա. Խնդրագիրք տարրական դաշնակների

բ. Խնդրագիրք տարրական բազմաձայն գրութեան

գ. Հոգեւոր եւ աշխարհիկ բազմաձայն երգերի ժողովածութեանը՝ Դ եւ Դ բաժինները միայն բարձր դպրոցի մեծ եւ ընդունակ աշակերտների համար է սահմանուած եւ մատչելի:

Այս այսպէս: «Դառնանք Մեծապատիւ պ. Արամ Բժշկեանի «Դասագիրք Հայ եկեղեցական ձայնագրութեան» անուն տետրակի քննութեան:

Այս տետրակը կարող է համարուել շատ-շատ՝ կանոնագիրք տարրական երաժշտութեան Հայոց, բայց ո՛չ դասագիրք. զի դասագրքի ո՛չ մի յարմարութիւն չունի. եթէ իբր դասագիրք քննենք, մեր պատասխանը միանգամայն բացասական է. իբր կանոնագիրք քննելն աւելի նպաստաւոր կլինի:

Բերենք բովանդակութիւնը՝

1. Նախագիտելիք (էջ 1-2) երաժշտութեան, երաժշտական ձայնի, մեղեղիի ներդաշնակութեան, ձայնական եւ գործնական երաժշտութեան սահմանումները:

Սոցանից եւ ո՛չ մէկը տեղ չունի տարրական երաժշտութեան ուսման մէջ եւ միանգամայն անմարս հոգեկան սնունդ՝ ուսանողի համար. զի այս բոլորն էլ երաժշտութեան զանազան ճիւղերին են պատկանում. այս բացատրութիւնները եւ սոցա նմանները մթնացնում են եւ խանգարում տարրական երաժշտութեան պարզութիւնը ճիշտ այնպէս, որպէս; եթէ մէկը քերական կազմէր եւ նախագիտելիք զնէր՝ Քերականութեան, Հնչիւնաբանութեան, Նախաղասութեան տեսակների, Համաձայնութեան, Ճարտասանութեան եւ այլն սահմանումները, որոնք առանձին-առանձին ուսմունքներ են, դեռ Քերականից շատ ու շատ յետոյ սովորելու համար, ուստի եւ միայն տեղ են բռնում, առանց գործնական նպատակի ծառայելու:

Բառերի բացատրութիւններն էլ միակողմանի են, եւ խառն են նպատակն ու բովանդակութիւնը: Մէկ տեղ բացատրում է առարկայի նպատակը եւ շատ թերի (երաժշտութիւն), միւս տեղ՝ սահմանը եւ անորոշ (մեղեղի, ներդաշնակութիւն) եւ այլն:

2. Զայնանիշ եւ անունները, (էջ 2-3):

3. Զայնանիշերու ձեւը (էջ 3-5): Այս խորագրի տակ պարունակում են՝ ձայնանիշերի ձեւերը (ոչ թէ ձայնանիշերի մասին միայն, այլեւ՝ ութնեակի գաղափարը, ստորանիշ, բարձրանիշ, ստորին, միջին, սուր ձայների շարքն ու ձեւը):

4. Անջրպետ (էջ 5-7): Զայնամիջոց բառն աւելի յարմար է եւ իմաստն արտայայտող, քան անջրպետ բառը: Այս գլուխը շատ թերի է. ձայնամիջոցների տեսակները միանգամայն զանց են առնուել, որք շատ կարեւոր են ձայների փոխադարձ յարաբերութեան աստիճանները ճիշտ ըմբռնելու համար:

5. Զայներու բաժանումը (էջ 7-8): Հայ եկեղեցական ձայնաշարքի բովանդակութիւնը համեմատել է արեւմտեան Solmisation-ի հետ, որ միանգամայն աւելորդ է: Միացեալ եւ բաժանեալ քառաղիներ միայն հայկական բնական եօթնեակի եւ ութնեակի մէջ:

6. Երաժշտական ձայներուն տեւողութիւնը (էջ 8-10): 11 տեւողական նշանների ցանկը, անունը եւ արժէքը սուլղի արժէքով չափած:

7. Զափ (էջ 10-11): Զափի (բաղխո՞ւմ) սահմանը. միջակ չափաւոր եւ ծանր չափի: Կէտը համեմատած՝ „„„ G եւ G G -ի հետ:

8. Կատարեալ ժամանակ (էջ 12-14)՝ սոցա արժէքը:

9. Հրահանգներ (4, 3, 2 եւ 1 ժամանակի):

10 Անկատար ժամանակ (էջ 14-15)՝ սոցա արժէքը:

11. Լռութիւն եւ նշանակք (Էջ 16): Զայնահատ:
- 12-19. Երաժշտական տեւողական զանազան նշանների արժեքն է բացատրում (Էջ 17-25):
20. Երաժշտական նշաններ՝ միայն 2 հատ. վերադարձ. 3 տեսակ՝ անցանչան, երկարում, դադարման կէտ: Այս մասը միանգամայն աղքատ եւ անորոշ է:
21. Երաժշտական արտայայտիչ նշաններ (Էջ 26-27)՝ յենանիշ, կրկնակ յենանիշ, ձայնխաղ: Այս գլուխն էլ շատ պակասաւոր է եւ պարզ չէ:
22. Զափերու բաղդատութիւն (Էջ 28-30)՝ տեւողական նշանների զանազան չափերի վերածման ցանկը: (Այս պէտք է 7 համարում գրած լինէր):
23. Կիսաճայնք (Էջ 30-33)՝ կիսվեր եւ կիսվար, քառաղիի 3 տեսակ փոփոխութիւնը. միացեալ եւ բաժանեալ քառաղիների մի շարք: Շատ անկանոն, առանց պարզելու եւ բացատրելու, թէ ի՞նչ է ուզում ասել՝ այդ բոլորը կազմելով:
24. Ութ ձայն եղանակաց կազմութիւնը (Էջ 34-38)՝ սխալ պատմական տեղեկութիւններ քառաղիի ծագման մասին, բուն ձայների եւ կողմերի մասին, որոնք ստուգուած չեն դեռ երաժշտութեան պատմութեան մէջ իսկ. իսկ այն տեղեկութիւնները, ինչ որ նա հազորդում է, երեւի որեւէ մէկի կարծիքն է կարդացել մի տեղ եւ իբր ստուգութիւն ընդունել ու դասագրքի մէջ մտցրել. միանգամայն աւելորդ բերն: Հայոց Ութն ձայն եղանակներից եւ ո՛չ մէկը ութնեակների կազմութեան վերայ կարելի է հիմնել, նոքա այլ աղբիւր եւ այլ կազմութիւն ունեն:
25. Նախադասութիւն (Էջ 38-39):
26. Աջ. Առաջին ձայն եղանակ (Էջ 30-40): Սորահամառօտ կազմութիւնը:

27. Դարձուածքներու ութնեակները (էջ 40): Ա.Զ.
ԱԿ. Բ.Զ. Գ.Զ. Գ.Կ. Դ.Կ:

Տետրակի կազմութեան մէջ ո՞չ մի կանոնաւոր հետեւողական գարգացման դասաւորութիւն չկայ: Ամեն տեսակ ծանօթութիւն տեղ է բռնել: Նիւթը ցան ու ցրիւ է, անկապ կերպով դասաւորած. բացատրութիւնները՝ շատ անդամ մութ. նոր-նոր բառեր է կազմել եւ այնպիսի բառեր, որոնք երաժտական իմաստ չունեն. օր. անջրակետ, յենանիշ եւ այլն:

Ինչպէս երեւում է, տետրակը կազմելու ժամանակ աչքի առաջ է ունեցել ն. Թաշճեանի¹ կազմած դասագիրքը, որովհետեւ թէ՛ դասաւորութիւնը եւ թէ՛ բացատրութիւնները (տեղափոխութեամբ, ամփոփելով, բառափոխութեամբ) նման են. շատ տեղ էլ գրեթէ նոյնն է: Բերենք երկուսի գլխակարգութիւնները:

Թաշճեան

1-2

Երաժշտութիւն. ձայն.

Երաժշտական ձայն.

մեղեղի. ներդաշնակութիւն.

ձայնական. գործիական:

2-4

4-13

15-17

14-15

46-51

10 եւ այլն:

Բժշկեան

1-2

Երաժշտութիւն. երաժշտական

ձայն. մեղեղի. ներդաշնակու-

թիւն. ձայնական, գործի-

ական:

2-3

8-23

3-5

5-7

24-27

28-30 եւ այլն:

Գերապատիւ Սրբազան Հայր, իսկապէս չարժեր մի այսպիսի գործի երկար ու ձիգ քննութիւնը ներկայացնել

Զերդ Սրբազնութեան, սակայն առանց ծածկելու եւ անաչառ քննելու պարտաւորուած էի ի կող <մանէ> Զերդ Գերապատութեան, սրտի սիրալիր յօժարութեամբ <կատարել> վրաս դրած պարտքս՝ մանրամասն պատկեր տալով նորա կազմութեան <մասին>:

Հայցելով Զերդ Գերապատութեան Հայրական օրհնութիւնը խոնարհաբար մերձենամ ի համբոյր Աջոյն՝

Կոմիտաս Վարդապետ

2

1907, 23/10 սեպտեմբեր, Բերլին

Գերապատի՛ւ Սրբազն Հայր, Տ. Վահրամ եպիսկոպոս Մանկունի, Նախագահ երաժշտական Քննիչ մանաժողովին ի Կ. Պոլիս.

Զերդ Սրբազնութեան դրկած տետրակն ու նամակը ստացայ այստեղ՝ Բերլինում: Առաջադրում էք «Ա. Պատարագի երգեցողութիւններէն մի քանի կարեւոր երգեր՝ եռաձայնի վերածուած, ըստ պահանջման երաժշտական-բազմաձայնական արուեստի, ուղղել, եթէ ուղղութեան կարօտ են, առանց երբեք փոխելոյ միաձայնի իսկական եղանակը»:

Հանգստի ժամանակն էր. տետրակը թերթեցի, նկատեցի՝

ա. Եղանակները պարզելու մասնաւոր ջանք:

բ. Ընտրած երգերի եղանակները եւ Տաճկաստանի հայոց եւ Ռուսաստանի հայոց (ըստ Մ. Եկմալեանի) են վերաբերում:

գ. Երաժշտական հատուածները կամ տաղաչափական

ոտքերը զատուած են կամայական կերպով:

դ. Եռաձայնի վերածողն առաջը դրած է Մ. Եկմալեանի եռաձայն պատարագը եւ պահած է անփոփոխ, որչափ եղանակները նոյն կամ նմանօրինակ են եղած Քննիչ մասնաժողովի ընտրածների հետ, իսկ զանազան ժամանակն էլ (բազմաձայնութեան մասին առանց իսկ ամենափոքր հասկացողութիւն ունենալու) ինքը կազմած է կամ յարմարցուցած առաջադրած եղանակին: Ուստի եւ զարհուրելի սխալներ են առաջ եկած:

Գերապատի՛ւ Արբազան Հայր, պէտք է ցաւօք շեշտեմ, որ այդ եւ առհասարակ Ս.Պատարագի եղանակներից եւ ո՛չ մէկն է հարազատ հայ եկեղեցական:

1. Փառք քեզ - եւրոպականացած (աւելի իտալական ճաշակով) տաճիկ Աճէմ-Աշրան է:

2. Յարմին Տէրունական, Քրիստոս ի մէջ - զուտ յոյն եկեղեցական եղանակներ են արար եւ տաճիկ երաժշտութեան Հիւզզամ եղանակի բովիցն անցած:

4. Սուլրբ-սուլրն իւր սարքով - տաճիկ էկեահի եւ վերջերս, ըստ Մ. Եկմալեանի, եւրոպական Մայեր էջելի վերայ սրբագրած խառնուրդ է:

5. Հայր մեր - տաճիկ Սիկեահ եւ Արաք եղանակների ոգով է կազմուած:

Այս բոլորի մէջ, եթէ կայ, հայկական տարրն այնքան չնչին է, որ, առանց ցաւելու, կարելի է մի կողմ դնել, եւ ոչինչ կորցրած չենք լինի:

Թէ ինչպէս տեղի են տուել հայ եղանակները՝ ապագայ երաժշտական քննադատական պատմութիւնը կապացուցանէ:

Եթէ մենք պարծենալիք ունենք մեր եղանակներով, ունենք միայն շարականի հին, պարզ, հասարակ (ո՛չ տօնա-

կան, որ խիստ աղաւաղուած է) երգերով։ Սոցա մէջ յստակ, միամիտ, ջերմեռանդ, հաւատացեալ ոգի կայ. ոգի, որի մէջ պայծառ փայլում է մեր նախնեաց աննման, զգայուն, կենդանի եւ վեհ, սիրտը, որ ջինջ է առաւօտեան օգի պէս։

Մեր երաժշտութեան երկրորդ, բայց հիմնական ու մշտաբուղիս աղբիւրն է հայ շինականի խորունկ, անպաճոյն ու վսեմ, խնդացող եւ լացող երաժշտութիւնը, որի մէջ պայծառանում է հայ անմեղուկ գեղջուկն իր ամբողջ ներքին եւ արտաքին կեանքի բոլոր երեւոյթներով։

Դառնանք տետրակի սրբագրութեան. «Միաձայն եղանակը - իսկական եղանակը անփոփոխ եւ անձեռնմխելի պահել եւ միայն կանոնավորել բազմաձայնի վերաբերեալը, ոստ պահանջման արուեստին»։

Ըստ պահանջման արուեստին առաջադրում էք սրբագրել կամ կանոնաւորել։ Վերն ասածներից երեւեցաւ, որ այդ եղանակները օտար են. իւրաքանչիւրն ունի իր յատուկ ոճն ու գոյնը. դաշնակելու եւ բազմաձայնի վերածելու է ուրեմն այդ օտար երաժշտական ոլորմունքներին յարմարուելով, այսինքն՝ համապատասխան ոգին պահելով (որպէսզի եղանակի եւ բազմաձայնի մէջ մի միութիւն եւ ամբողջութիւն գոյանայ, ինչպէս պահանջում են բազմաձայնութեան օրէնքները)։

Տետրակի մէջ պարունակուած բոլոր երգերն էլ (մասսամբ բացառութիւն է Հայր մերը, որ խառն ոճ ունի) դաշնակուած են եւրոպական, մասնաւորապէս, աւելի ոռւս ոճով (ըստ Մ. Եկմալիանի)։

Զերդ Գերապատութեան հաճութեան համաձայն՝ առանց եղանակին ձեռք տալու, միայն երաժշտական ուղղագրական տարրական սխալները սրբագրեցի նոյնիսկ

տետրակի մէջ: Իսկ մնացած երգական, գեղարուեստական եւ ոճի սրբագրութիւնը, որպէս եւ անհարթութիւններն ու անյարիր հնչիւնները, թողի անձեռնմխելի, որովհետեւ, եթէ այդ եւս սրբագրելու լինէի, ստիպուած նորը կազմելու էի, որ ամիսների, նոյնիսկ տարիների գործ ու աշխատանք է պահանջում: Օտար եղանակների համար չարժեր ուսկի ժամանակ շռայլելը. թող օտարները հոգան իրանց, մենք՝ մեր երաժշտութեան մասին:

Զեր հաճութիւնն էր «ուղղել, եթէ ուղղութեան կարօտ են». յօժարութեամբ կատարեցի՝ ինչ որ կարելի էր:

Երկու խօսք եւս:

Առաւել դիւրին է քառաձայն պատարագ վարելը, քան եռաձայն:

Վերջինս մի շարք դժուարութիւնների հետ է կապուած՝ խումբ պատրաստելու, կազմելու եւ վարելու համար:

Քառաձայնը դիւրին է, որովհետեւ աւելի նպատակայարմար է մարդկային արական եւ իգական, համապատասխան բարձր ու ցած բնական բաժանումներին: Եռաձայնը պահանջում է, նայելով գրուածքի ոճին, երգի կազմութեան եւ այլն, կա'մ միասեռ, այսինքն՝ զուտ արական կամ զուտ իգական խումբ ունենալ եւ կա'մ այլասեռ՝ խառն խումբ՝ ըստ երաժշտական եւ տեղական պայմանների պահանջման: Երկու դէպքումն էլ դժուար է նոյնիսկ փորձառու երաժտի համար:

Եթէ անհրաժեշտ պահանջ է բազմաձայն պատարագի երգեցողութիւնը, նոյնքան անհրաժեշտ է նպատակայար-մար ձեւով վարած բազմաձայն երգեցողութիւնը: Ուստի, ես անձնապէս, կառաջարկէի գործ ածել Մ. եկմալեանի քառաձայն պատարագը, առանց որեւէ փոփոխութիւն անելու գրուածքի մէջ, քանի որ, ես առ այժմ մեր երա-

ժըշտական հրապարակի վերայ մի ուրիշ, աւելի արժանի գրուածք չեմ ճանաչում: Այս իր բոլոր պակասութիւններով հանդերձ, գոնէ մի որոշ ոճ ունի՝ իբր ամբողջութիւն: Իսկ նորա գրուածքները տգիտօրէն սրբագրելը, առնուազն անհամեստութիւն է. բազմաձայն երաժշտութիւնը ո՛չ թէ զանազան ձայների ծեփի է, այլ ստեղծագործութեան եւ այն մտացի նախապատրաստուած ստեղծագործութեան արդիւնք է միայն:

Այնքան էլ դիւրին չէ մեր եկեղեցական երգեցողութեան բազմաձայնութեան խնդիրը, որպէս կարծում են նորասեր տիրացուներն ու դպիրները. որովհետեւ նախ պէտք է ստեղծել բազմաձայնութեան՝ հային յատուկ ոճ ու ոգի, ապա թէ ընդհանրացնելու մասին մտածել: Որովհետեւ երաժշտութիւնն էլ, լեզուի պէս, ունի իր յատուկ քերականական օրէնքներն ու ոլորմանց տարբեր ոճերը, որոնք միշտ զանազան են զանազան ազգերի համար:

Խնդիրն այնքան խորունկ եւ զգայուն է, որ նամակներով լուծելն անհնար է. լուծումը ապագան կտայ եւ ժամանակի ընթացքում, կամաց-կամաց, իրական ճանապարհով ու մեծ ջանքերով եւ այն՝ տասնեակ ու հզօր պատրաստուած երաժշտագէտների անընդհատ աշխատանքներով:

Յուսամ, թէ գոհ պկտի մնաք այս երկտողովս:
Գերապատի՛ւ Սրբազան Հայր.

Քանի օրից կանցնեմ Ս. Էջմիածին:

Զեր Հայրական օրհնութեան կարօտներով մատչեմ ի համբոյր Սրբազան Աջոյ Զերումդ Գերապատութեան
Ամենախոնարհ ծառայ եւ որդի՝

Կոմիտաս Վարդապետ

ԱՐՄԻՆԻ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ

<1913>

Ահա հրաման մեծ եւ ահարկու Սիրելեաց մերոց
յԱրքայեանս, առաքելով առաքեմ առ ձեզ ի ձեռն Ղազարու՝
յարուցելոյ անդէն յամի եւ ի կենդանութեան Տեառն Փրկչին
Մերոյ՝ ՅՅ-ըդի, որոյ Հրաման սաստիկ սպառնալեաց առեալ
Ղազարուն վերասացելոյս եկեսցէ առ տունն Արքայեանց եւ
տացէ մատուցմամբ վերարկուիս փշրտչոցն ի ձեռն տեառն
իւրոյ եւ ներքնազերծ ու դանակաքերծ արարեալն զայս
վերարկուն մեր ի Հնոց յիշատակաւ մնացելոյ յէջմիածնէն
Արբոյ, որոյ եւ յոր պէտո ունիմք արդիս, արդ կրկին եւ
մեծադղորդ Հրամանաւ ի մեծ խնդրեմք, զի վերածել
ջանասցի ի տանն Արքայեան՝ ի ձեւ եւ ի կերպարան տարա-
գոյն՝ որ ի միջի եւ սակս-սակս նորակերտ իմն փոփոխելոյն
Հրամանաւ խնդրի յօրիորդէն Արքայեանց Ազնուագունէն եւ
փոքու՝ այցելութեամբ այց ելանել առ մեզ ի զերկեան
աւուրս, զի գիտասցէ ի մէնջ եւ յինէն, զորոյ եւ զորպէսն եւ
զնորոյ ձեւոյ, որ կրելոցն է... ի ձէնջ յասեղն բազմասրածայր՝
գիտասցէ, զի մի՛ սխալմամբ կար ու ձեւ արարեալ խափա-
նեսցէ զպահանջեալ ձեւն եւ ստիպմամբ ստիպեսցէ զիս
մտանել անդրէն յերկորդ քառասունք յանմիջական ժամա-
նակաւ զկնի առաջնոյ, որ տեւելոց է դեռ եւս ց 7-ն դեկտեմ-
բերի այսր ամի: Նեղութիւն նեղութեանց իցէ, սակայն եւ
Հրաման հզօրագոյն խառնախնդիր է ի մէնջ, որոյ յոչ ան-
սալն՝ զունկն կալեալ եւ մերոյս Փիշոյին սակս հատեալ
տամբ ի կերակուր:

Բազմասցի ոզջոյն սիրոյ եւ հրամանաց եւ խնդրանաց
առ ամեն արարածոց տանն Արքայեանց:

Կոմիտաս Վարդապետ

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ

1

1907, 2 յունիս, Ժընեվ

Ստեփան ջան,

Ժընեվի համերգն էլ շատ լաւ անցաւ¹: Խումբն ամբողջապէս հայեր էին, 57 հոգի: Վաղը գնում եմ Լօզան² եւ Բերլ՝ դասախոսութիւններ անելու³. յետոյ Ժընեվ կդառնամ, էլի դասախոսելու եւ ապա Փարիզ ու այնտեղից էլ իտալիա:

Համերգին մասնակցեցան՝ Փարիզից Զօպանեանը եւ ՇաՀ-Մուրադեանը: Վերջինս Փարիզի երաժշտանոցի ծաղիկն է դարձել:

Քեզ էլ յաջողողութիւն եւ ոյժ ապագան մերն է, զինուիր, Ստեփան ջան:

Համբոյրներով՝

քո Կոմիտաս

2

<1907, յուլիս, Փարիզ>

Ստեփան ջան,

Հիանալի ճայներ կան խմբի մէջ. շատ լաւ է առաջ գնում: Արդէն եկեղեցում սենեակս պատրաստեցին, այսօր կամ վաղը կփոխեմ բնակարանս: Աքանչելի կերակուրներ կան: Մանթաշեանին երեք անգամ գնացի, բայց լիքը մարդիկ կան մօտը. Հնար չի լինում, մի առանձին գտնել չեմ կարողանում: Հասցէս այս է. Paris, Rue Jeane Goujon-15, Komitas Vardapet.

Սիրալիր Համբոյրներով՝ քո Կոմիտաս

Սիրելի՝ Սպիրիդոն ջան,

Այս շաբաթ օր ճանապարհ եմ ելնելու դէպի Կովկաս եւ Թիֆլիզ¹: Բաթումին կղրեմ կամ կհեռագրեմ քեզ գալու օրս, ու մի լաւ կուշտ ու կուռ կիսունք իրար հետ:

Շատ ուրախ եմ, որ վերջապէս ամուսնացել ես եւ մինչեւ իսկ ժառանգդդ պատրաստել արքայական գահիդ համար, ես էլ ասում եմ, թէ էս ի՞նչ Soprano է, որ լսում եմ հեռաւոր ամպերի մէջէն եւ Թիֆլիզի հորիզոնին, դու մի ասա մեր թստերանն է եղել՝ հափշո՛ւն (?) է եղել: Մի գամ, տես քեզ որքա՛ն եմ ծեծելու՝ խորտուխաշիլ եմ անելու, որ մէկ էլ չհիւանդանաս. ժամանակ ես գտել, հը²: Լրագրերի մէջ կարդացել էի հիմնած երաժշտական միութեանդ² մասին եւ իսկոյն գուշակեցի, որ դուն ես շարժել քաղաքիդ երաժշտական ճահիճները, եւ աւելի ուրախացայ, որ ապագան ապահովելու համար հրաժարուել ես նախագահութենէն, զի գորտերը պիտի գրգռէին քու դէմ, ապրիս, պաշիկս, թստերան ջան:

Բանիւ բերանոյ կիսունք իրար հետ, սպասում եմ նախարարի թոյլտութեան Պետերբուրգէն, առանց որի կարող չեն հոգեւորականները կովկաս անցնել, արգելք չեն յարուցանի, զի գեսպանի հետ աղբէր ենք եղել:

Շատ ու չատ բարեւներս եւ օրհնութիւններս Սաթիկիդ (ո՛չ Արագեանի), որ քեզ համար լաւ ու անձնուէր ընկեր է հանդիսացել, եւ քեզ ու պղտիկիդ՝ ջերմ համբոյրներով. գալու եմ եւ նոր պսակելու եմ, էն թաւուր չէ, չե՛մ ընդունում:

Քոյդ Կոմիտաս

Յ. Գ. Երգարաններն ուղարկեցի այսօր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻԱՍՆԻԿԵԱՆԻՆ

1909, 5 նոյեմբեր, Ա. Էջմիածին

Արգոյ պ. Աղեքսանդր Միասնիկեան,
Զեր նամակն ստացայ երեկ բացակայ էի. գնացել էի
Տիմիս՝ տիկին Մանթաշեանի թաղման:

Ուսանողական Միութեանդ յղացած միտքն իսկ եւ իսկ
նպատակներիս է ընդառաջ գալի. մեծ սիրով կուզէի մի
այսպիսի կարեւոր գործ ուսանողութեանդ միջոցաւ եւ
յօգուտ նորա կատարել, բայց, գոնէ այս տարի, յանձն
առնել չեմ կարող, զի ԳՀՈՐԳԵԱՆ> ճեմարանում դասե-
րով կապուած եմ եւ Մայր Տաճարի մէջն էլ խմբապե-
տութեան պաշտօնով. ո՛չ մի օգնական չունեմ, ուստի,
ցաւելով եւ ստիպուած, մերժելու եմ: Զեր ուզած եւ իմ
ցանկացած համերգը պատուաւոր գլուխ բերելու համար
անհրաժեշտ է առնուազն մէկ եւ կէս ամիս՝ գալու, գնալու
եւ պատրաստելու համար, իսկ այդքան երկար ժամանակ
ինձ դժուար թէ թողնեն բացակայեմ: Բայց եւ այնպէս,
փորձեցէք՝ զիմեցէք պաշտօնապէս ՎԵՀԱՓՈԽԻՆ, գուցէ
թոյլատրում է, այն ժամանակ կգամ. ես պատրաստ եմ
ծառայելու:

Եթէ այդ չի յաջողուի, կթողնենք եկող տարուան, երբ
ես այլեւ ուսուցչութիւնը թողնելու եմ, ազատ եմ եւ
կարող եմ:
Թարգանքներով՝

Կոմիտաս Վարդապետ

ՅՈՎՀԱՆՆԻՍ ՄՈՒԹԱՖԵԱՆՑԻՆ

1911, 29 յունուար, Զմիւռնիա

Մեծապատի՛ւ պ. Մութաֆեանց,

Ուրախութեամբ յանձն կ'առնեմ գալ Աղեքսանդրիա
եւ համերգ տալ հայ եկեղեցական եւ գեղջուկ երաժշտու-
թենէ եւ երկու դասախոսութիւն անել՝ ա. հայ գեղջուկ եւ
բ. հայ եկեղեցական երաժշտութեան ծագման, զարգացման
եւ արդի վիճակի մասին: Իսկ ինչ կը վերաբերի եկեղե-
ցական խումբ՝ պատրաստելու եւ հոգեւոր երգեցողու-
թիւնը կանոնաւորելու մասին, դժբաղդաբար անհնարին է.
նախ՝ մէկ եւ կէս ամիս կամ առ առաւելն երկու ամիս
միայն ազատ տրամադրելի ժամանակ ունիմ Աղեք-
սանդրիոյ համար, զի երոպա պիտի անցնիմ անձնական
կարեւոր գործերով. երկրորդ՝ եկեղեցական մնայուն խումբ
պատրաստելին աւելի կարեւոր է խմբավար հասցնելը.
այնպիսի խմբավար, որ քաջ հմուտ լինի, գոնէ, հայ
երաժշտութեան ոգուն, ոճին եւ մանաւանդ արտասա-
նութեան եւ երրորդ՝ կարճ ժամանակի մէջ չէ կարելի ե՛ւ
խումբ, ե՛ւ վարիչ պատրաստել, նաեւ միտք չունի ժամեր
զոհել՝ մէկ վարիչ պատրաստելու համար, զի վարիչը, գրե-
թէ, երաժիշտ լինելու է, որ նախ ըմբռնէ ուսուցանելիքը,
ապա ուսուցանէ:

Պայմաններու մասին էիք հարցուցած՝

ա. խումբ կազմելու համար տրամադրելի ընել 60-80
երկսեռ անձեր՝ մեծ ու պղտիկ, այս թուէն որքան աւելի
լինեն մասնակցողները, այնքան գոհ կը մնամ: Ուրեմն
առնուազն պէտք են 40-50 աղջիկներու կամ պղտիկ
մանչերու ձայներ՝ ի հարկին եւ 20-30 մեծերու: Արդեօք

որչափ *Tenor* եւ *Bass* կամ *Baryton* կրնաք գտնել, գրեցէք:

բ. Համերգէն գոյացած արդիւնքին 2/3-ը՝ ի նպաստ իմ երկասիրութեանց տպագրութեան կ'առնիմ: Եթէ ի վիճակի լինէի, կէս առ կէս կ'ընէինք:

գ. Դասախոսութեանցս ամբողջ արդիւնքն իմն է:

Եթէ որեւէ առաջարկ Զեր կողմանէ՝ ի հաշիւ համաձայնութեան, չունիք, այն ժամանակ համերգը կը հասցնեմ մայիս 1-ի կիւրակէի համար եւ ճանապարհ կ'ընկնեմ կ. Պոլսի Ազգային Հիւանդանոցին ի նպաստ սարքելիք համերգէն յետոյ, մարտ 6 կամ 13-էն ետքը, անմիջապէս, եւ տեղդ հասնելուս պէս պատրաստութեան կ'սկսիմ: Զմիւռնեան համերգը ամսիս 30-ին է¹, ես կը մեկնիմ դէպի կ. Պոլիս փետրուար 2-ին: Եթէ նամակ գրելու լինիք, հաճեցէք, ուղղակի կ. Պոլիս, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, եւ ես կստանամ:

Զերմ շնորհակալութիւններս յայտնելով հայ գեղարուեստի նախանձախնդիր գաղութիդ՝ մնամ Զեզ ողջունելով յարգանօք՝

Կոմիտաս Վարդապետ

ՅԱԿՈԲԻՆ

Յակոբ ջան,

Շատ ցաւում եմ, որ այս իրիկուն Մարթէն Յակոբեանին¹ ենք հրաւիրուած: Այ, անշնորհք, քէրթէնքէլէ: ինչո՞ւ անցեալ օրը բան չասացիր, որ տունը լինէի:

Ողջունիւ բոլորին>:

Կոմիտաս Վարդապետ

ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

1

1914, 26/13 Հոկտեմբեր, Կ.Պոլիս

Pangaltı N 83 (47)

Սիրելի բարեկամս, պ. Երուանդ Յակոբեան,

Երեւի կ'ասէք գնաց՝ մոռցաւ: Իրօք՝ բարեկամներուս շարքին մէջ նոր բարեկամներս եւս ընդարձակուեցան. ոչ ոքի մոռցած եմ. սակայն, ո'չ այնքան պարագաները, որքան զբաղումներս կը ծուլացնեն գրիչս առնելու եւ նամակներ գրելու ազնիւ բարեկամներուս: Շատ անգամ նամակ գրելու կը նստիմ եւ իւրաքանչիւր անգամին ի՞նչ գրեմ՝ կը հարցնեմ ինքս ինձ եւ կը ծուլանամ՝ օգուտ քաղելով նամակագրութեան ժամերէն, զորս կը յատկացնեմ աշխատութիւններուս:

Ժամանակիս վայրագութիւններէն ըստ կարելոյն հեռու պահելով՝ միտքս ու զգացումներս՝ անդադար կ'աշխատիմ կարեւոր ուսումնասիրութիւններով:

Խմբիս ու համերգներու չը կրցայ տակաւին սկսել՝ աշակերտներուս զինուորագրութեան պատճառաւ, սակայն եւ այնպէս շաբթուս նոր խումբ կազմակերպելու նախապատրաստութեան սկսայ: Յոյս ունիմ Զատկական տօներին հասցնել մեր հնագոյն եղանակներով ներշնչուած Սուրբ Պատարագի Արարողութիւնները, զորս պիտի ուսուցանեմ նոր խմբիս:

Քաղաքապետութիւնը հիմը դնելու վերայ է երաժշտարանի մը, որի պաշտօնեաներէն մէկն այլ զիս կարգեցին. չը մերժեցի, բայց միայն ներդաշնակութեան դասերն ստանձնեցի, որ ձայնս խնայեմ ու խնամեմ:

Կ'ուղարկեմ լուսանկարներէս երկու օրինակ, մէկը քե-

զի եւ միւսը՝ Տէր Վաղինակին համար: Ուշացաւ, զի Եգիպտոս պատուիրեցի:

Բոլոր Փիլիպպեցւոց յարգալիր ողջոյններս:

Ողջունելով սիրալիր Զեզ եւ շնորհալի տիկնոջդ՝ մնամ աղօթարար

Կոմիտաս Վարդապետ

2 1914, Կ.Պղիս

Սիրելի՝ բարեկամս, պ. Երուանդ Յակոբեան,
Զատկական զբաղումներս արգելեցին անմիջապէս
պատասխանելու Զեր գրութեան: Շատ ուրախացայ, որ գեղարուեստական հաւաքոյթներ էք սարքել եւ համերգներ
կազմակերպել:

Որոշել էք լուսանկարս բազմապատկել եւ ծախել յօդուտ բարեգործական նպատակների, եւ հակառակ չեմ.
Եթէ կը կարծէք, թէ արդիւնք կուտայ, ըրէ՞ք:

Ողջոյն բոլոր բարեկամներու, Տէր Հօր Վաղինակին, որ
խոսի ծուխն ուրացել եւ հոգին կը խնկարկէ արտիս, եւ
անոր ընտանեացը:

Ողջոյն ազնիւ տիկնոջդ եւ Զեզ՝

Քոյդ Կոմիտաս Վարդապետ

ԱՐԾԱԿ 20ՊԱՆԵԱՆԻՆ

1

<1901, 29 դեկտեմբեր>

Սիրելի՝ բարեկամ,

Շնորհակալութեամբ ստացած եմ Զեր գիրը, որպէս եւ
«Անահիտ»ը, ուրախ եմ, որ ինձ քաջալերած էք, բայց

վախնամ, սխալուած լինիք: Ստացայ նոյնպէս Զեր Նարեկացու մասին արած ուսումնասիրութիւնը¹. քանի մի մանր նկատողութիւն պէտք է անեմ ձեզ մի այլ անգամ նամակաւս, երբ Զեզ դրկեմ իմ ժողովրդական երգերէն, որ տակաւին կ'ուսումնասիրեմ մեծ զգուշութեամբ պ. Մանուկ Աբեղեանին հետ միատեղ²: Զեզ միշտ յարգող

Կոմիտաս Վարդապետ

Յ. Գ. Շնորհաւոր նոր տարի եւ բարի կաղանդ:

2

1902, 21 նոյեմբեր, Ա. էջմիածին

Սիրելի՝ բարեկամ,

Անշուշտ պէտք է մտածէիք, թէ ես որքան անքաղաքավար գտնուեցայ Զեր նամակի պատասխանն ուշացնելով. բայց պէտք է ասեմ, որ ցայսօր չկարողացայ գիր գրել, որովհետեւ կուզէի երգերն էլ միատեղ ուղարկել, բայց տեսայ, որ դեռ կարող է ուշանալ, ուստի խնդրելով ներողութիւն կյայտնեմ, որ ուրախ եմ մի այդպիսի կարեւոր երեկոյթին մասնակցելուս համար: Շուտով կուղարկեմ Զեզ ժողովրդական երգեր, թէ՝ խմբի, թէ՝ մեներգի համար, խնդրելով, որ Դուք հսկէիք, որ բանագողեր չենէին, որովհետեւ պատրաստում եմ տպագրութեան համար: Իսկ Շնորհալու երգը ուղարկել չեմ կարող, գոնէ այս անգամուան երեկոյթի համար, որովհետեւ խիստ զբաղուած եմ. ձեռքիս երկու կարեւոր բան կայ, որ տպագրութեան եմ պատրաստում:

Ողջունելով Զեզ՝ սրտանց մնամ՝

Զեր Կ. Վ.

3 1903, 23/10 յունուար, Ա. էջմիածին

Սիրելի՝ բարեկամ, Աստուածածին Տիգրան Տիգրանի

Զեր գիրն ստացայ եւ դեռ չէի ուղարկել երգերը, ուստի Զեր գրածին համաձայն մնաց ձմեռուան երեկոյթի: Ներեցէ՞ք, եթէ հասցնել չկարողացայ յունուար ամսուան տեղի ունենալիք երաժշտական երեկոյթին, որովհետեւ ես մենակ եմ. այստեղ էլ, Աստուած տուել է, գործեր շա՛տ, հնարաւոր չեղաւ Զեր բարի ցանկութիւնն իրագործելը, բայց հոգ չէ՛... երկրորդի համար կպատրաստուեմ: Որպէսզի ամեն բան ժամանակին հասնի, խնդրեմ, անմիջապէս յայտնել հաճիք՝ մօտաւորապէս ո՞ր ամսուան մէջ պէտք է տրուի երեկոյթը, որ ես էլ միւս գործերս այնպէս դասաւորեմ, որ հասցնել կարողանամ:

Զեր գրած պապա Համբարձումն¹ անշուշտ Արմաշու Համբարձումն է. եթէ այդ է, միանգամայն չվստահէք նորա դպրոցին, որովհետեւ տաճիկ եղանակներու վերայ է ձեւել նա մեր շարականները :

Իսէ՛ր Աստուածոյ, մինչեւ լուրջ գիտական քննութեան չենթարկէք, մի՛ վստահէք նոցա վերայ. մանաւանդ թէ այժմ մի շարք նորելուկներ, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ մեր երաժշտութեան անդաստանը մշակներ չունի, սորանորա անունով հրապարակ են ելնում, եւ դեռ գործը ծաղիկ հասակի մէջ կամ նոյնիսկ չբացուած, կոկոն ծաղիկը թառամեցնում միանգամայն: Ճշմարիտն ասեմ, ես կասկածում եմ. աւելի շատ տաճիկ եղանակներ եւ այն էլ տաճիկ ոճով պէտք է լաէք, քան ազգային, ուստի, խնդրեմ, զգո՛յշ եղէք ընտրութեան մէջ, մանաւանդ ծանր եղանակների նկատմամբ, որքան կարելի է, խիստ եղէք. ամենից շատ ծանր ոճն է խանգարուել:

Գալով պ. Պոյաճեանի² հաւաքած ժողովրդական երգերին, եթէ նոքա հաւաքուած են Հայոց գիւղերում եւ հէնց գեղջուկի անարատ բերանից, հաւանօրէն ուղիղ կլինեն, թէեւ երգի արտասանութեանը կասկածում եմ, իսկ եթէ թիֆլիզում կամ մի այլ քաղաքումն է հաւաքել դոքա, առանց կասկածի կասեմ, Կարա-Մուլրզայի³ այլանդակած ժողովրդական երգեր անունը կրող բաներ են, որի գլխին այնքան են տուել, որ խեղճ երգերն արդէն իրանց գոյնն էլ, ազգային նշոյլն էլ թոցըել են եւ ձեւով աւելի շուտ մալառուս ցեղի երգեր են դարձել, ճիշտ նոյն ձեւով էլ երգերու պատճառաւ, քան ազգային:

Այսքան երկար ու բարակ գրելուս պատճառն էլ այն է, որ մեր թէ՛ եկեղեցական եւ <թէ՛> ժողովրդական երգերը դեռ նոր են եկնում ելրոպական բեմերի վերայ, եւ դեռ նոր ենք ծանօթացնում նոցա մեր զգացմունքի, վարքի, բարքի ճշգրիտ պատկեր տուող ազգային երգերին, ուստի շատ զգոյշ պէտք է լինել մի այսպիսի փափուկ խնդիր շօշափելուց:

Այս ամառն արդէն մի քանի ժողովրդական երգեր պէտք է հրատարակեմ, ձեզի էլ կուղարկեմ:

Զեր սկսած գործին կատարեալ յաջողութիւն մաղթելով եւ ողջունելով բարեկամներին՝

մնամ Զեր միշտ անձնուէր՝

Կոմիտաս Վարդապետ

<1903>, 23/10 յուլիս, Ս. Էջմիածին

4

Սիրելի՝ բարեկամ,

Երկար նամակ կդրեմ Ձեզ սեպտեմբերի սկիզբները. այժմ ուղեւորութիւն եմ անում զանազան գիւղեր եւ ժո-

զովրդական երգեր հաւաքում: Արդէն ժողովրդական երգերի առաջին յիսնեակը¹ պատրաստ է եւ մամուլի տակից, մի կամ երկու շաբաթից, կելնէ. անշուշտ կստանաք մի օրինակ ինձանից:

Որպէս եկեղեցու հանդէսին, նոյնպէս եւ տալիք երաժշտական երեկոյթին ամենայն ուրախութեամբ պիտի մասնակցեմ, բայց առանց ըրաւէրի չեմ կարող գալ: Նպատակս երկարօրէն կրացատրեմ նամակաւս: Այս ըռպէիս կերթամ Մասեաց լեռներին հիւր, քրդական եղանակներ հաւաքելու²:

Մնամ այժմ Զեղ միշտ յարգող՝

Կոմիտաս Վարդապետ

1904, 20 յունուար, Ս. Էջմիածին

Սիրելի՛ բարեկամ, պ. Արշակ Զօպանեան,
Ներփակ նամակը նեղութիւն կրէք եւ յանձնեցէք Տ. Վուամշապուհին¹, նախ եւ առաջ կարդացէք եւ ապա տուէք. Զեղ եւս նոյնը պէտք է գրէի, ուստի չեմ կամենում երկարել խնդիրքս. ի սէր մեր եկեղեցու եւ հայ գեղջուկ երաժշտութեան պայծառութեան ոչ մի ջանք մի՛ խնայէք, Զեր ձեռքէն եկածն արէք. դուք արդէն քաջ գիտէք, թէ ինչպիսի մեծ փրկութիւն է կախուած մեր եղանակներն անաղարտ պահելուց եւ ժողովրդի ու իր եկեղեցու ազնիւ ու մաքուր սիրտը ճանաչելուց:

Դուք, իմ Փարիզ եղածս ժամանակ, ամենից շատ էիք ոգեւորուած այդ գործի յաջողութիւնը փափագելով ի սրտէ: Եթէ կամենաք, Դուք կարող էք մեծ ծառայութիւն մատուցանել ոչ թէ ինձ, Զեր անձնուէր բարեկամին, այլ

մեր ժողովրդին եւ մեր ազգային, նուիրական եկեղեցուն:
Երկարելն աւելորդ է:

Յուստով եմ, ստացած կլինէք ժողովրդական երգարանի
Ա. յիսնեակը. արդէն երկրորդն էլ պատրաստ է, չուտով
կուղարկենք գրաքննիչին եւ տպել կտանք². պատրաստում
ենք գիտական ժողովածուն հրատարակելու:

Ի միջի այլոց ասեմ, որ Զեզ երգարանից առաջ ուղար-
կել էի երկու օրինակ, Զեզ եւ յարգելի բարեկամ Օքրիի
համար. երեւցաւ, որ չէք ստացել. խնդրեմ, անմիջապէս
յալտնեցէք՝ այս երկրորդն ստացել էք, թէ ոչ. յուսամ,
ստացած կլինէք, որովհետեւ այս անդամին ապահովեալ
ուղարկեցի, որ անկորուստ Զեր ձեռքն անցնի:

Խնդրեմ ողջունեցէք յատկապէս պ. Օքրիին եւ այլ
հարցանողաց:

Զեր անձնուէր բարեկամ՝

Կոմիտաս Վարդապետ

6

1904, 30 դեկտեմբեր, Ա. Էջմիածին

Սիրելի՝ բարեկամ,

Ժամանակին ստացած էի Զեր պատասխան գիրը եւ
ներփակը, որպէս եւ այսօր երկրորդ ներփակը. առաջինն
անձամբ յանձնեցի Վեհին, իսկ երկրորդը ապահովագիր
առաքեցի Տփխիս. Վեհն այժմ այնտեղ է, եւ արդէն հասած
է ձեռքը: Որքա՞ն ցաւեցայ, երբ լսեցի, որ անշուք կերպով
եղաւ Փարիզի հայ գաղութի եկեղեցւոյ բացումը¹. մի
այնպիսի յարմար առիթ փախուցինք, որ շատ քիչ անդամ
կպատահի. մի՞թէ այնքան կորել էր նախանձախնդրու-
թիւնը դէպի մի բազմաչարչար եկեղեցի, դէպի մի նա-

Հատակ եկեղեցի մեր սէրն ու կապը, որ նկատուեցաւ, իբր թէ մի նոր բնակարան են փոխում մարդիկ... Լա՛ւ, լռէ՛նք:
Խնդրում եմ, Արմենակիս (Շահմուրադ) լաւ խնամէք.
Նորա աչքն այստեղ էր, բայց իր վարժապետն ի՞նչ յարդ
ունեցաւ, որ աշակերտի աղերսը լսուէր...

Այս մեծ պասին, երեւի լսած կլինէք, մտադիր եմ Թիֆ-
լիս գնալու եւ երկու մեծ համանուագերգ տալու զուտ հայ
հոգեւոր եւ աշխարհիկ երաժշտութեան, եթէ չխափանուի.
մարդոց վստահելը շատ դժուար է:

Գործերս յաջող են, այժմ կզբաղուիմ հայ հին խա-
զերու ուսումնասիրութեամբ եւ, յուսով եմ, չուտով կա-
րող պիտի լինեմ գաղտնիքը բանալ եւ գէթ ցժգ դար
եղանակներն ստուգել: Հրատարակելու կպատրաստեմ ժո-
ղովրդական եղանակները դաշնակի, խմբի եւ այլն համար:

Պ. Մագսուտեանին² յատկապէս հիացմունքս եւ սրտիս
անկեղծ ուրախութիւնը յայտնեցէք:

Ողջունեցէք Արմենակին եւ հարցանողաց՝ Զեր միշտ՝

Կոմիտաս Վարդապետ

7

<1905, 4 նոյեմբեր, Թիֆլիս>

Սիրելի՝ բարեկամ,

Պիտի զարմանաք, որ Տփխիսումն եմ. նեարդային հի-
ւանդութիւն ստացայ, եկել եմ բուժուելու: Փառք Աստուծոյ,
առ այժմ լաւ եմ, յուսով եմ մէկ ամսից բոլորովին կլաւանամ:
Խնդրեմ, թարգմանեցէք «Հազար ու մի խաղ»ի Այիս-
նեակն ամբողջ, չուտով կուղարկեմ եւ երկրորդը, որ լոյս է
տեսել:

Լաւ կլինէր՝ թարգմանէիք ոչ թէ երգի յարմարեցնելով,
տաղաչափութեամբ, այլ միայն արձակ բովանդակութիւնը
միայն տալով. որովհետեւ կրկնակներն ու շատ կրծատ
մտքեր արտայայտեն անհնար է ոեւէ օտար լեզուով եւ նոյ-
նիսկ աննպատակ, քանի գիտական նշանակութիւն միայն
ունեն:

Զեզ անհասկան<ալ>ի բառերն ու մտքերը, խնդրեմ,
նշանակէք եւ ուղարկէք, անմիջապէս կստանաք բացա-
տրութիւնը: Ես թէեւ հիւանդ, բայց եւ այնպէս պատրաս-
տում եմ մեր ժողովրդական եղանակների կազմութեան
ուսումնասիրութիւնը, ժամանակին կհասցնեմ, անհոգ
եղէք: Եթէ կուզէք Զեր թարգմանութիւնը երգերու
յարմարցնել, այն ժամանակ առաջնորդուելու է երգերի
վանկերի չափը, թիւը, շեշտը, մանաւանդ կրկնակների
իմաստը ճիշտ հայերէնի պէս լինեն, որովհետեւ այդ շատ
դժուար է, ուստի ես եւ մի քանի տող վերն ասացի, որ
աւելի լաւ կլինէր, եթէ թարգմանուէր բոլորովին արձակ՝
տալով միայն ճիշտ իմաստը: Այս մասին եթէ ունեք
որեւ<է> բան առարկելու, խնդրեմ, անմիջապէս գրեցէք:

Յառաջաբանը կլինի շատ ընդարձակ՝ մանրակրկիտ
բացատրութիւններով եւ փորագրութիւններով, որպէսզի
պարզ լինի մեր ժողովրդական երգերի ստեղծագործու-
թեան եղանակը եւ հանգամանքը:

Յուսուվ եմ, պարզեցնես կելնեմ:

Առ այժմ այսքան:

Սիրալիր ողջոյններով՝

Զեր բարեկամ Կոմիտաս Վարդապետ

Յ. Գ. Խնդրեմ օր. Մ. Բաբաեանին յայտնէք, որ ուզածը
կուղարկեմ, երբ Ա. Էջմիածին դառնամ. մօտս չկայ:

Նոյն

8 1906, 12 յունուար, Ա. Էջմիածին

Սիրելի՝ բարեկամ,

Այսօր ստացայ Ձեր նամակը եւ անմիջապէս կպատասխանեմ. յոյս ունեմ, որ անվտանգ Ձեր ձեռքն անցնէ, ասում են, որ ճանապարհները բացուած է: Այստեղ ամենայն ինչ անորոշ է եւ խիստ նեղ, թէ՛ նիստ ու կացը, թէ՛ կեանքը եւ թէ՛ կայքը. նշաններ են երեւում լաւանալու: Ուղարկում եմ «Հազար ու մի խաղ»ի Բ յիսնեակը՝ մէկը Ձեզի, մէկը պ. Օքրիին՝ այցետոմսով: Գրում էք, որ առաջին յիսնեակի մէջ կան նոյնիսկ ապուշ երգեր. կարծեմ, թէ բուն իմաստը լաւ ըմբռնած չէք, բայց եւ շատ կիսնդրեմ, ուղարկէք անմիջապէս ցանկը այն երգերի, որոնց տեղ կկամենայիք Ակնայ, Վանայ կամ Մշոյ երգեր զետեղել. Եթէ, իրօք անմիտ են եւ եղանակներն էլ՝ ոչ կարեւոր, դոցա փոխարէն ուրիշները կդնենք. անմիջապէս զրկեցէք, որպէսզի երգերի դասաւորութեան ցանկը կազմելու եմ եւ ուղարկելու: Եղանակները կարտագրեմ, վերջացնելուս պէս կուղարկեմ ուսումնասիրութիւնն¹ էլ հետը: Ակնայ ո՞ր երգերը հաւնեցաք, գրեցէք: Իրօք, մեր երգարանին մէջ չէ նշանակուած երգերի տեղերը, որովհետեւ ժողովրական երգարան է, ոչ թէ գիտական, որ կպատրաստուի:

Ուսումնասիրութեանս մէջ մանրամասնաբար պէտք է գրեմ այդ մասին: Կիսնդրեմ, եթէ երկրորդ յիսնեակին մէջ էլ Ձեզ համար մութ բաներ կան, միասին նկատեցէք Ձեր

նամակի մէջ, որ աչքի առաջ ունենամ եւ Զեզի համար
պարզեմ:

Այնպիսի լուրջ հետեւանքներ ստացայ ուսումնասիր-
բութեանս միջոցին, որ միանդամայն պիտի զարմանաք,
երբ կարդաք:

Երգերը այսպիսի կարգերի եմ բաժնել՝

ա. Շինական (մշակութեան, գործի եւ այլն)

բ. Ծիսական

գ. Վէպ (Դաւիթ, Մհեր եւ այլն)

դ. Անտունի (պանդխտի, դարիբի)

ե. Վիպական-քնարական

գ. Խաղ (Երգեր, պարերգեր եւ այլն)

Եթէ աւելի յարմար դասաւորութիւն կամ բաժանում
կարող էք, գրեցէ՞ք, ըստ այնմ էլ վարուեմ:

Շատ ողջոյն Շահմուրադեանին. ըսէք, որ պատարագի
արարողութեան ղրկումը կուշանայ, որովհետեւ մանր
փոշտերը կանոնաւոր չեն բաներ:

Զեր միշտ բարեկամ'

Կոմիտաս

9

<1906, 17 ապրիլ, Բերլին>

Սիրելի՝ բարեկամ,
Երեւի պիտի զարմանաք, երբ լսէք, թէ ես այժմ Բերլի-
նումն եմ եւ արդէն երկրորդ օրն է. նոյնպէս պիտի
ուրախանանք իրար վերստին տեսնելու համար: Էս զատ-
կից 10 օր առաջ ելայ եւ եկայ Բերլին՝ իմ աշխատութիւն-
ներս տպել տալու. արդէն Փարիզ ղրկելիք աշխատու-
թիւնս էլ հետև էր, մաքուր արտադրած. բայց ի մեծ ցաւ
պէտք է ասեմ, որ ճանապարհին փոքր պայուսակս գողցան

Որոստովի մէջ. որովհետեւ ճանապարհները վտանգաւոր են, դրեթէ ի մահ, աչքիս լոյս աշխատութիւններս դրել էի փոքր պայուսակին մէջ, իսկ սեւագրութիւնները բագած էի տուել, մտածելով, որ եթէ բագաժն կորչէ, մաքուրը կփրկեմ, ես բագաժից էի յոյս կտրել, որ կկորչէ, քանի որ երկաթուղինները շարունակ կկորցնեն թէ՛ դրամ, թէ՛ ապրանք. բայց իմ բաղդէս, բագաժն ազատուեցաւ, իսկ փոքր պայուսակս, որի մէջն էի դրել ձեզի դրկելիք աշխատութիւնս, երգերը եւ այստեղ տպագրուելիք երկերս, բոլորն էլ, բոլորն էլ գողացան. անմիջապէս յայտնեցի վարչութեան, տեսնենք, կգտնե՞ն: Բայց ես յոյս չունեմ եւ սկսեցի նորից աշխատել այստեղ, լաւ, որ զգալով, թէ մի բան կարող է պատահել, աշխատութիւններիս սեւագիրն էլ բագաժի էի տուել, գոնէ նոքա փրկուեցան: 150 ըուբլի էլ թղթագրամ կորցրի: Դուք ողջ լինեք:

Զեր Կոմիտաս Վարդապետ

10

1906, 26 ապրիլ, Բերլին

Berlin-Charlottenburg, Kantstr. 116 I. l.

bei Hannemann

Սիրելի՝ բարեկամ,

Գրում էք, որ գարնան վերջին որոշած ցերեկոյթը մնայ աշնան. շատ էլ լաւ է եղել, որովհետեւ ես էլ կուզեմ մասնակցել. մի փառաւոր բան անենք: Ես դեռ աշնանն էլ այստեղ կլինեմ, իրաւունքս տասն ամսով է:

Իմ գալուս ժամանակը դէպի Փարիզ չեմ կարող ճիշտ սահմանել, որովհետեւ ձեռքիս ունեցած գործերս մինչեւ չվերջացնեմ, չեմ կարող դուրս ելնել. սիւթերն այստեղ են,

պարապելու էլ յարմար է այստեղ: Աշնան ցերեկոյթի համար Դուք էլ մտածեցէք, ես էլ կմտածեմ, եւ մի գողտրիկ բան անենք, որ բանի նմանի:

Աշխատութեանս արտագրութիւնը սպանում է ժամերս, մանաւանդ ձայնագծերի արտագրութիւնը, որ շատ ծանր է առաջ գնում⁴. ի՞նչ արած, ընկել ենք, պիտի քաշենք:

Մանթաշեան Փարի՞զ է:

Խնդրեմ ողջունեցէք Տ. Վոամշապուհին, Շահմուրադեանին եւ Հարցանողաց: Ձեր միշտ անձնուէր՝

Կոմիտաս Վարդապետ

11

1906, 27 մայիս, Բերլին

Սիրելի՝ բարեկամ,

Երեկոյթի¹ վեհ գաղափարն ինձ այնպէս է ոգեւորել, որ գրչովս արտայայտել չեմ կարող. մի բազմակողմանի բան անենք, ուր երեւայ Հայի մտածող եւ զգացող ոգին: Ես այսպէս եմ մտածել: Որպէսզի Հայ երաժշտութիւնը լաւ ըմբռնեն, նախքան երեկոյթը կազմելը մի դասախոսութիւն անել² Հայ ժողովրդական երաժշտութեան մասին ընդհանրապէս եւ մասնաւորապէս էլ՝ եղանակների կազմութեան մասին, ապա նոյնը՝ ժողովրդական երաժշտութիւնը ցոյց տալ արդի գեղարուեստական միջոցներով բազմաձայնի վերածած: Ակզենական դասախոսութեան միտքն այն է, որ նախապատրաստած լինեն եղանակներն աւելի ճիշտ եւ հեշտ ըմբռնելու համար:

Մեծ յոյս ունեմ մեր բարեկամ, սիրելի Օբրիի վերայ, որ մեզ կաջակցէ երեկոյթը լրիւ անելու համար:

Ես ուզում եմ այժմէն իսկ կամաց-կամաց նախապատրաստել զանազան տեսակի երգեր, զանազան տեսակի

ոճով, բայց նախ պէտք է մօտաւորապէս իմանամ՝ ինչպի-
սի՞ խումբ ենք ունենալու, քանի՞ հոգուց բաղկացած, ի՞նչ
պատրաստութեան տէր են եւ այլն, որ ըստ այնմ էլ աշ-
խատեմ երգերը բազմաձայնելիս եւ մանաւանդ ընտրելիս։
Արդէն շատ բան պատրաստի ունեմ, գուցէ եւ դոքա յար-
մարուեն, բայց նախ խմբի մասին մի որոշ գաղափար
պէտք է ունենամ։ Ախ, ի՞նչ լաւ կլինէր, եթէ մի ֆրան-
սական կիրթ խումբ ունենայինք ձեռքի տակ, որպէսզի
հեշտ եւ փառաւոր ներկայացնէինք մեր ժողովրդի սքան-
չելի երաժշտութիւնը։

Սիրելի՛ բարեկամ, կինդրէի Զեր ցանկացած երգերի
ցանկն ստանալ, որո՞նք կուզէք, որ հրապարակութեան մէջ
մտնեն Ակնայ երգերից, որովհետեւ այն ժամանակ ուսում-
նասիրութեան մէջ կարիք կլինի եւ նոցա մասին խօսելու,
ուստի, քանի դեռ չեմ վերջացրել, ուղարկեցէք անուանական
ցանկը երգերի կամ նոցա համարները ըստ «Շար»ի³։

Երգերի արտագրելը հոգիս հանեց. առանց արտագրե-
լու էլ ուսումնասիրութեանը չեմ կարող ձեռք զարնել,
մինչեւ որ ձեռքիս տակ մաքուր եւ դասակարգած օրինակ-
ները չունենամ։

Սիրալիր բարեւելով Զեզ՝ մնամ

Զեր բարեկամ

Կոմիտաս

12

17 օգոստոս, Բերլին

Սիրելի՛ բարեկամ,

Ուղարկում եմ այսօր նամակիս հետ միաժամանակ
«Հայ գեղջուկ երաժշտութեան» ուսումնասիրութեան
առաջին տետրը¹. սկսեցէք կամաց-կամաց թարգմանել, ես

ԷԼ ԿՀԱՍՑՆԵմ միւսները, տետրակ-տետրակ²: Ուղարկեցէք
 թարգմանած ժողովրդական երգերից հետեւեալների
 ֆրանսերէնը, որ տպել պէտք է տամ բազմաձայն եւ միա-
 ձայն՝ գաշնակի նուագով, այստեղ. գերմաներէն էլ թարգ-
 մանել տուրի մի հմուտ բանաստեղծի. ուսուցչապետս խոր-
 հուրդ է տալիս հայերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն
 լեզուներով տպել տալ, որ օտարներին մեր եղանակները շուտ
 ըմբռնել տալու գործը դիւրացրած լինենք: 1. Հարրան. 2.
 Գարուն ա, ձիւն ա արել. 3. Զինար ես, կեռանալ մի. 4.
 Անձրեւն եկաւ. 5. Սարերի վրով գնաց եւ 6. Էս գիշեր
 լուսը տեսայ: Մի քանի երաժշտական բառերի նշանա-
 կութիւնն էլ կցում եմ նամակիս, որ ձեր գործը հեշտացնէ,
 բայց ցաւօք պէտք է ասեմ, որ համապատասխան ֆրան-
 սերէն երաժշտական բառերը չգիտենալով՝ գերմաներէնը
 գրեցի. յուսով եմ, դուք կարող էք ըմբռնել կամ պ. Օբրիին
 հարցնել: Մի բան էլ. շատ բառեր ինքս եմ յօրինած,
 որովհետեւ երաժշտական լեզուն մեր մէջ դեռ նոր պէտք է
 զարգանայ. կարծեմ յաջող կհամարէք:

Բառի մօտի թիւը տետրակի երես է նշանակում:

1. Երգական – *Vocal*: 3. Խաղ – ժողովուրդն իր յօրինած
 երգերին այս անունն է տալի, իսկ գրական երգերին ասում
 է տաղ: 7. Նուագական – *Instrumental* (նուագարանների
 անունը պահել եւ գրել ֆրանսերէն տառադարձութեամբ,
 որովհետեւ եւրոպական չեն): 8. Զայնոց – նուագարանի բե-
 րանի այն մասը, որ առանձին կտոր է, եւ ձայնը դորանով են
 հանում, որ լինում է եղեգնից կամ ոսկեպղինձից: 9. Փակոյթ
 (փական, փակոց) – *Klappe*: 11. Լարուածք – *Stimmung*: 11.
 Զայնաշար – *Skala* սանդուխ: 11.Կիսական – *Chromatisch*: 11.
 Ամբողջական – *Diatonisch*: 14. Ութեակ – *Octave*: 15. Հնդեակ
 – *Quinte* 15. Բնափող – *Naturhorn*: 16. Եռեակ – *Terz*: 19.

Դողդող – *Tremolo*: 21. Նուագ – նուագարանների եղանակը, իսկ երգ՝ միայն մարդկային ձայնի եւ լեզուի եղանակը: 23. Նուագուրդ – *Orchester* 25: Մենանուագ – *Solospiel* 27: Նուագերգական – *Instrumentalvokal*: 27. Միակ – *Unisono* կամ *Prime*: 28. Զայնառութիւն – *Orgelpunkt*: 30. Մեներգ – *Sologesang* 35. Տառախաղութիւն. – օրինակ, պէտք է ասէք քահանային, – ասում է քահաւանային. կամ տայ, ասում է տա – ւայ եւ այլն: 38. Կապել – հիւսել: 43. Թէլլօ – անուն է:

Աշխատութեան վերնագիրը դիտմամբ «Հայ գեղջուկ երաժշտութիւն» դրի, որովհետեւ քաղաքացիք ոչ մի ժողովրդական երգ չեն ստեղծել, իսկ ժողովրդական բառը շատ ընդհանուր է եւ ընդգրկում է բոլորին, այնինչ այս երգերը յատկապէս գեղջուկի ստեղծագործութիւններն են, իսկ աշխատութեան մէջ ժողովրդական բառը գործածել եմ, որովհետեւ գրագէտներն ու կրթուած դասակարգը սովորել է այդ անունը տալ, մանաւանդ, երբ երգի հետն միացած գիւղական ժողովուրդին: Աշխատութիւնս էլ նուիրեցի պ. Ա. Մանթաշեանին, որովհետեւ նորան եմ պարտական արդի ուսման պաշարով՝ եւրոպական մտքով:

Բովանդակութեան ցանկը կուղարկեմ վերջին տետրակի հետ, որի համար տեղ եմ թողել սկզբին:

Այստեղ բնութիւնն անձրեւային է եւ իսկստ անառողջ:

Համերգի եւ դասախոսութեան մասին մանրամասն կխորհրդակցենք սեպտեմբերին: Ես արդէն այնպէս եմ դասաւորել իմ աշխատանքներս, որ սեպտեմբերի սկզբներին կարող կլինեմ Զեզ վերստին տեսնելով՝ ուրախանալ:

Մաղթելով Զեզ քաջողջութիւն, մնամ Զեզ շատ սիրամբ բարեւելով՝

Կոմիտաս Վարդապետ

<1906, 20 Հոկտեմբեր

Սիրելի՝ Զուռնաչի,

Ահա ծրագիրը.

1. **Սիփանայ քաջեր**

2. **Հով արէք**

3. **ա. Ալագեազ**

բ. Խնկի ծառ

գ. Անձրեւն եկաւ

4. **Զինար ես**

5. **ա. Ոտիդ արա**

բ. Հող արա

գ. Թող արա

6. **Օրօր**

7. **Ծիրանի ծառ**

8. **ա. Լուսնակն անուշ**

բ. Ամպել ա, ձիւն չի գալի

9. **Հաբրբան**

10. **Նուագ**

11. **ա. Քելէր, ցօլէր**

բ. Սարերի վրով

գ. Էս գիշեր

12. **Գարուն ա**

13. **ա. Հօ: Օրհնեալ է Աստուած**

բ. Զիգ տոռ, քաշի

14. **Հայր մեր**

15. **Տիրամայրն**

16. **Յիշեսցուք**

17. **Տէր ողորմեա**

18. **Խորհուրդ խորին**

19. **Հաւիկ մի պայծառ**

20. ա. Ով զարմանալի

բ. Այսօր ձայնն

Զմոռանաս յայտնելու, որ համերգի երեկոյին պէտք է
Harmonium ամերիկական՝ մեղմ եւ փափուկ ձայնով:

Գիշեր բարի:

քռ <Կոմիտաս>

14

<1906, 26 Հոկտեմբեր>

Սիրելի՝ Արշակ,

Շատ մտածեցի եւ տեսայ, որ օտարներին trio սովորեցնելը խիստ դժուար պէտք է լինի, որովհետեւ բառերի արտասանութիւնը խիստ դժուար է. ուստի թողի այդ միտքը եւ խմբին երգել պիտի տամ: Բայց մի Bass պէտք է արական trio-ների համար, եւ ուրիշ ոչինչ:

Այնպէս որ երգողներն են.

1. օր. Մարգարիտ Բաբայեան

2. օր. Շուշիկ Բաբայեան

3. Շահմուրադեան

4. Մուղունեան¹

5. Bass – Թրայտ²

6. Եւ ես

Շատ բարեւ քեզ:

Յ.Գ. երեկ չկարողացայ ուղարկել այս, որովհետեւ Մանթաշեանն էր կանչել:

Օտարներին շատ տեղ չեմ ուզում տալ, որովհետեւ զուտ հայկական ուժեր երեւան, օրիորդ Բաբայեանին էլ չասացի:

1. Սիփանայ քաջեր («Սէգ Սիփանայ սարի վերան կտրիճներ շտապով գալիս»)

2. Հով արէք, սարեր ջան
 3. ա. Ալագեազ սարն ամպել ա
բ. Մեր դռանը խնկի ծառ
 - գ. Անձրեւն եկաւ շաղալէն
 4. Զինար ես, կեռանալ մի'
 5. ա. Արի', արի', քե մատաղ, հօ, եզօ ջան
 - բ. Հով արա, եզօ ջան, աղբէր ջան
 - գ. Թով արա, եզօ ջան
 6. Դասախոսութիւն
 7. Հայր մեր
 8. Տիրամայրն հանդէպ որդւոյն ի խաչին
 9. Տէր ողորմեա
 10. Յիշեսցուք ի գիշերի զանուն քո
 11. ա. Մշոյ շորոր
- (նուագ)
- բ. Հայ պարեր
 12. Ծիրանի ծառ, բար մի' տայ
 13. Իմ չինարի եարը: Արեւ թռվոռվ ելաւ
 14. Գարուն ա, ձիւն ա արել
 15. ա. Լուսնակն անուշ
բ. Ամպել ա, ձիւն չի գալի
 16. Հաբրբան: Սիրել եմ սերն երեսին
 17. ա. Քելէր, ցոլէր
բ. Սարերի վրով գնաց
գ. Էս գիշեր լուսը տեսայ
 18. Ակնայ օրօր
 19. ա. Հօ: Օրհնեալ է Աստուած
բ. Ձիգ տու, քաշի
 20. Խորհուրդ խորին
 21. Հաւիկ մի պայծառ տեսի աննման

22. ա. Ով զարմանալի հայության առաջակա նույն է
բ. Այսօր ձայնն հայրական յերկնից իջեալ

15

<1906, 22 դեկտեմբեր, Փարիզ>

Զօպան բիծա,

Վաղն առաւօտ տետրակները հետդ բե՛ր եկեղեցին, որ «Mercure Musical»ի¹ յօդուածն արտագրեմ: Եթէ չես կարող գալ, ժամ նշանակէ, կիրակի ես քեզի հանդիպեմ, ուր կամենաս:

Քո <Կոմիտաս>

16

<1907, 10 յունուար, Փարիզ>

Սիրելի՝ Արշակ,

Հասցէների համար ասացի Տէր Հօրը, ասաց, որ տետրը գտնւում է քարտուղարի մօտ, որ ծննդեան տօների համար ծանուցագրեր է գրում, բայց խոստացաւ շաբաթ օրուան համար, ոչ թէ ուրբաթ, իսկ եթէ քեզի համար շատ կարեւոր է, արի՛ եւ իրանից հարցուր, բոլոր հասցէներն էլ անգիր գիտէ:

Շատ բարեւ՝

Քո Կոմիտաս

17

<1907, սկիզբ, Փարիզ>

Սիրելի՝ բարեկամս,

Ես եւս յանկարծակիի եկայ, այնպէս որ քեզ գրելու ժամանակ չունեցայ. վերջինը հայ գեղջուկ երաժշտութեան մասին խօսելու եւ կարդալու եմ վաղն առաւօտեան՝ ուր-

բաթ ժամը 11-ի մօտերը, rue Blanche 19:

Առաջինը շատ մեծ ընդունելութիւն գտաւ¹:

Սիրալիր ողջունիւ՝

Կոմիտաս

Յ.Գ. Խնդրում եմ, որ անմիջապէս Շահ-Մուրադին
pneumatique² գրես, որ վաղը՝ կէսօրէն յետոյ ժամը 3-ին եկե-
ղեցին գալ հաճէ փորձին:

Հասցէն կորցրել եմ:

18

<1907, 8 մարտ, Փարիզ>

Սիրելի՝ Արշակ,

Այսօր ճաշի ուշացայ, Staal-ը եկել էր կարեւոր հարցեր
տալու (մի քան են հրատարակելու), նորա գնալուն պէս
շտապեցի ճաշարան, հարցրի, ասացին, որ եկել, գնացել
ես. յուսալով, որ Demets-ի¹ մօտ կինես, գնացի, թղթերը
շալակած, ցոյց տուի, ուրախացաւ, մի քանի նշան մոռա-
ցել էի. ինքն էլ շտապում էր. ժամադիր եղանք, որ երկու-
շաբթի առաւտուան 10–10½ հանդիպենք: Եթէ կարող ես
այդ ժամին գալ, ե՞կ ուղղակի այնտեղ, թէ չէ՛, ես կերթամ,
մի կերպ հաշիւ կանենք: Շատ բարեւներով, քեզ սիրող

Կոմիտաս

19

<1907, 7 մայիս, Ցիւրիխ>

Շատ բարեւ զուռնաչի, նաղարաչի եւ զմայլելի Ար-
շակին:

Համբոյր՝

քո Կոմիտաս

<1907, 22 մայիս, Ժընեվ>

Սիրելի՛ Արշակ,

Երկու օր է, բաց նամակ եմ գրել Շահմուրադին եւ յանձնարարել, որ քեզ ասէր, ուղարկէիր երգերի բառերը, որ շուտով տպել տալու են: Յետոյ իրան էլ ընկերութեան կողմից (ուսանողական) խնդրել էի, որ մասնակցէր համերգին¹: Երգելու է «Ֆիշերմեան» (Fischarmonium-ով), «Խորհուրդ խորին»՝ եկեղեցականներից եւ «Հաբըրբան»՝ ու «Սիրտս նման է»՝ ժողովրդականներից: Համերգը լինելու է յունիսի 1-ին 8½ ժ. երեկոյեան. եթէ կարող է գալ, շատ ուրախ կլինեմ: Ճանապարհածախսը հոգում են, նոյնպէս եւ ապրուստը, կարող է գնալ-գալով առնել, որ էժան նստէ: Խնդրում եմ շուտով պատասխանիր այս հասցէով՝ Geneve, Karapetian. Roseraie 68: Դուն էլ բառերն ուղարկիր եւ՝ անմիջապէս: Շատ բարեւ քեզ: Խումբը շատ լաւ է, շատ պիտի ուրախանաս:

Համբոյրիւ՝ քո կոմիտաս

<1907, 12 յուլիս, Փարիզ>

Սիրելի՛ Արշակ,

Ժընեւ մէկ օր մնացի. ճաշեցի Մելիք-Հայկազեանների¹ մօտ, շատ բարեւ արին քեզ: Քեզ յայտնի խումբը չարախոսել է տիկին Մելիք-Հայկազեանի մօտ. սաստիկ վրդովուել էին, եւ մայրիկը մի լաւ լուացել է բոլորին, սկսած Մալումեանից², որոնք նախանձելով քո արդիւնաւէտ եւ տոկուն գործնէութեան, ինքեանք չեն կարողանում ուրիշ կերպ անել, բայց եթէ բամբասել այստեղ-այնտեղ: Տիկինը

պատմեց, որ շատ նեղն է դրել նոցա եւ ինչպէս ինքն ասաց. «Միայն նախանձից շարժուած են անում եւ իրանց դիմակը բաց անում», եւ որպէս ասացին, Մալումեանին դուր չէ եկել, որ մայրիկն ու աղջիկները շատ են ոգեւորուել քեզանով, ուստի երկար ժամանակեայ բարեկամութիւնն անդամ խզել են մայրիկի հետ: Իսկ այդ աննման կինն էլ ասում էր, որ այս առիթ է եղել նոցա ներքին թունաւոր եւ նախանձով լի սրտերը քննելու եւ ճանաչելու: «Ինչ էլ ասեն,— ասում էր մայրիկը, — չեն կարող այն ուղիղ համոզումը, որ ունեմ պ. Արշակ Զօպանեանի մասին, ինձնից խլել, լաւ եղաւ, որ իրանց էլ ճանաչեցի»: Ասում էր, որ քո գրուածքներն ու քո մասին գրուածները մի քանի անգամ կարդացել է եւ հիացել: Այս այսպէս: Ժընեւում ուսանողներից ոչ ոք չկայ, գնացել են ամառանոց. նոյնպէս Լօգանում ոչ ոքի չգտայ. պ. Կոստանեանին էլ չգտայ, որովհետեւ հասցէն իմացող Քաջբերունի ուսանողը գնացել էր: Մի գիշեր մնացի Լօգանում՝ Նալբանդեանների³ տանը, լաւ հիւրասիրեցին, նուագեցինք, երգեցինք, այսօր երկրորդ օրն է Փարիզումն եմ: Հա, Ժընեւում Շերիճեանին տեսայ. ճաշի պահեցին, շատ ուրախացան եւ քեզ բարեւում են. նոքա էլ ամառանոց գնացին արդէն: Կարող ես երեւակայել, որ Շերիճեանների թութակը «իմ չինարի եարն» է շուացնում. զարմացած մնացի. անմեղ բնական երգն ըմբռնում են նոյնիսկ թռչունները: Ֆաւրը⁴ գնացել է ամառանոց: Երգարաններն ուղարկել է Demets` Վենետիկ. բաց արա եւ մի օրինակ վանքի մատենադարանին եւ մի օրինակ դպրոցի մատենադարանին նուէր գրէ իմ կողմից, իսկ մնացածներից տասն օրինակ իշխանին ուղարկել տուր, եթէ քեզ նեղութիւն չէ, բոլորն էլ միջակ թղթի վերայ տպածներիցը լինեն, լաւ թղթի (ճափոնական

թղթի) վերայ տպածից, որ տասն օրինակ է, մէկը հշխանին առանձնապէս նուիրէ իմ կողմից, այնպէս, որ հշխանին ուղարկելիքը 11 օրինակ կլինի. գրէ, որ վճարքը չուղարկէ, ես նորան առանձին կգրեմ, երբ եւ ուր ուղարկելիքը:

Մնացած օրինակները յե՛տ ուղարկէ շուտով, որովհետեւ այստեղ կազմած եւ պատրաստ ուրիշ օրինակ չկայ, դեռ բոլորն ստացուած չէ: Ասել չուզեր, որ եթէ քեզ հարկաւոր է, քանի օրինակ կուզես, ո՞ր տեսակէն կուզես, լաւ կամ միջակ թղթի վերայ տպած, կարող ես առնել: Խընդրում եմ մնացածն ուղարկիր, որ կարեւոր տեղեր ուղարկեմ անմիջապէս: Յովակիմեանները շատ բարեւում են քեզ. Արմենակին տեսայ, շատ բարեւ է անում, իսկ իփեկեանին⁵ դեռ չեմ հանդիպել: Խեղճ Մուղունեանը, քեզ երկար արեւ, վախճանուել եւ թաղուել է մէկ շաբաթ առաջ. սաստիկ ցաւ պատճառեց. մի քանի գեղարուեստագէտ ունենք, նոքա էլ վաղաժամ թառամում են եւ հրաշարակը պարապ թողնում: Թէ՛ վանքի եւ թէ՛ դպրոցի միաբան եղբայրներին յատկապէս բարեւներս յիշէ. շուտով նոցա էլ կգրեմ: Մելիքեանը Բագու է գնացել, որովհետեւ հեռագիր է ստացել, թէ եղբոր դէմ հրազէն են պարպել եւ սպանել փորձել իր գործարանի ծառայողները. այնպէս որ մինչեւ նա չգայ, ես նորան այցելութեան չեմ կարող գնալ: Շատ բարեւ նոյնպէս պ. նորայրին: Կարօտով եւ սիրով քեզ համբոյրներ՝

քո Կոմիտաս

22

<1907, 9 սեպտեմբեր>

Սիրելի՝ Արշակ բիծա,
Ամեն իրիկուն Opera եմ գնում. Վագների երկերի շարն

Են տալիս այս եւ եկող շաբաթ. շատ ուրախ եմ, որ սկզբից
հասայ: Թէեւ զբաղմունք շատ ունես, բայց եւ զուռնա-
չիութիւնդ մի՛ մոռնար, յանկարծ կդամ եւ հոգիդ կառնեմ
համա՛... Իշխանից նամակ եւ դրամ ստացայ, որոշել է
տասն օրինակը Մուրագ-Ռափայէլեան վարժարանի երգիչ
կամ նուագող սաներին բաժանել: Մէկ օրինակ էլ իր
համար է ուզել, յարկաւ՝ նուէր կուղարկեմ:

Քեզ էլ գրած է:

Փոյտ Կոմիտաս

23

1908, Տիկիս

Սիրելի՝ բարեկամ,

Նամակդ ստացած օրը՝ Տիկիս եկայ երգերիս
տպացրութեան գործի համար, երեւի սախառւածակիտի> լինեմ Մոսկվայի եւ Պետերբուրգի ճամբաններու:

Շահմուրագից նամակ առայ, ուրախութիւնիցս լացի,
որ յաջողութիւն է ունեցել: Ցաւում եմ, որ Մուղունեան
կենդանի չէ, թէ չէ, իմ մարգարէութիւնը պիտի կատա-
րեալ լինէր այդ երկուսի մասին:

<Մուղուն> եան, հակառակ իր <ձայնական կամ
բնական> բոլոր շանսերին, <թէեւ 2-ն էլ ըստ> իս միայն
երի <տասսարդներ> էին, <նա> չի պիտի <ունենար>
Շահմուրագի <յաջողութիւնը>: Եթէ մէկը սալոնի <մէջ
յաջողութեան ձիրք <ունէր, ապա նա> չպէտք է շանար
<բեմով, եւ որ> սալոնից բեմ <շատ խոշ> որ վիճ կայ, որը
իմ կարծիքով Մուղունեան չպիտի կարողանար անցնել:
Բաւական չէ գեղցիկ, ճկուն, զգայուն եւ սրտաբուղխ
ձայն ունենալը, այդ բոլորի հետ մէկտեղ պէտք է, որ նա
բեմական ձայն ունենար յաջողութիւն> ունենալու

համար, որը նրան > պակասում էր: <Շահմու> բագեանք,
շատերի կարծիքով կամ ասելով > թէ' անբեմական <է եւ
թէ' նոյն> իսկ վատ ձայն է, <բայց վատահ կամ յուսով> եմ
եւ չեմ <կասկածել>, որ նա կարճ ժամ <մանակում> մեծ
յաջողու <թիւն ունե> ցաւ, ապագա <ն նրա շատ> մեծ է,
որովհետեւ <նա խիստ կամ շատ> ջանասէր է, համբերող
եւ ոգեւորուած:

Քո չգալուդ յանցանքը քաւել չես կարող, ձեռքս
ընկնելուդ պէս, մեծ կտորն ականջդ եմ թողնելու:

Մեր երկիրն էլ ազատուեցաւ, բայց ապագան <տխուր
կամ մուայլ եւ> խիստ անորոշ <է, մենք> այլեւս ինքնու-
րոյն <կուլտուրա կամ քաղաքակ> ան կեանքի վրայ <խաչ
պիտի> քաշենք, թէեւ <մտաւոր կամ օրէնքով> ազատ
զարգաց <ման ճա> նապարհը բաց <ուեցաւ>, բաց <էլ
կ> մնայ, <եթէ այ> ժմէն ձեռք <չզարնենք> անմիջապէս
<ազատ կամ նոր> ուղղութեան նուիրուելու, թէ չէ այդ էլ
կկորցնենք ժամանակի ընթացքում սահմանադրութեան
ամրանալովը: <Որովհետեւ կամ վասնզի> վաղ թէ ուշ իս-
լամական միութիւնը պի <տի շարու> նակէ եւ պէտք է
<զարկ տայ> իր կրթութեան <վրայ՝ վրէժ> առնելու բոլոր
<հպատակ> ներէն, ուրեմն <ապագայում կամ հետագայում>
որպէսզի կա <ըողանանք>. մեր ուսումնա <ըանների>
դեկը մեր ձեռ <քում պահել>, պէտք է այժմէն <իսկ
սկսենք կամ կազմակերպենք> շուտափոյթ ջանքերով
դէպի ուսում, որ ճնշման դէմ դնել կարողանանք, եթէ
զէնքին ապաւինենք, զէնքը աւելի ուժեղ է, մեզ կճնշէ իր
ուժովը: Գոնէ ես այսպէս եմ կարծում: Ի՞նչ ես մտադիր
անելու, պիտի դառնա՞ս. եթէ այս', ես էլ կգամ, եւ
միասին միանանք կ. Պոլիս եւ մի ուժեղ հոսանք առաջ
բերենք: Եթէ չմտածենք այս մասին, այն ժամանակ դեռ
նոր մտնող հակագգային հոսանքը բռնութիւնից

անմիջապէս յետոյ մեզ <կճնշի>, <ժո>ղովուրդն էլ...
Սիրալիր բարեւներ... եւ քեզ՝

Կոմիտաս

24 <1908, 2-5 յուլիս, Ա. Էջմիածին>

Սիրելի՝ Արշակ,

Վաղուց է քեզ նամակ չեմ գրել: Այս տարին վերջացաւ: Ես գոհ եմ ինձանից. այս տարի տուել եմ հինգ համերգ եւ դասախոսել եմ վեց անգամ: Պատրաստել եմ եւ սկսել «Հայ գեղջուկ քնար»ի միաձայն հրատարակութեան, տասնեակներով՝ դպրոցների եւ առօրեայ գործածութեան համար: Պատրաստել եմ դաշնակի համար բաւական երգ: Խազերի ուսումնասիրութիւնն առաջ տարել եւ աշակերտներիս պատրաստել: Անդրանիկ աշակերտս՝ Ստեփան սարկաւագն, արդին աւարտեց Բերլինում եւ օգոստոսին կդայ Ա. Էջմիածին:

Այս տարի ամառանոց գնալ չեմ կարող. արտագրելու բաներ շատ ունեմ: Բայց պէտք է ասեմ, որ եղանակները զով են այստեղ էլ:

Քո չգալու մեզ շատ տխրեցրեց. ես եւ ընկերներս անհամբեր սպասում էինք գալուդ, դու անշնորհք ես, ուզենայիր, կարող էիր գալ. այնպէս ես սովորել Փարիզին, որ չես կարողանում բաժանուել: Գիտես, թէ քեզ համար որքան արդիւնաւէտ կարող էր լինել գալդ. իզուր չեկար: Ինչեւիցէ, ինչպէս տեսնում եմ, ես աւելի շուտով Փարիզ կգամ, քան դու այստեղ, եւ քեզ քաշ տալով կբերենք այստեղ, որ բուն ժողովրդին իր բնիկ երկրում ճանաչես:

Այժմ հանգամանքները լաւանում են, ժողովուրդը սթափուել է եւ լուրջ կերպով ուսման հետեւիցն է գնում, որ միակ փրկութիւնն է մեր եւ ապագայ կեանքի պատուան-

դանը...

Երեւի ամառանոց գնացած լիինես, մեր բարեկամներին, Գեւոյին եւ միւսներին անշուշտ կտեսնես եւ շատ կբարեւես:

Նոյնպէս սիրալիր բարեւներս յղէ, երբ տեսնես մեր Շահմուրադին, Կէվլէքներին եւ մանաւանդ Յովակիմեաններին եւ մեր սեղանակիցներին, առանձնապէս Երուանդ Մանուելեանին¹ եւ քեզ:

Այսօր Մելիքեանին էլ մի նամակ գրեցի:

Շատ սիրալիր բարեւներս: Համբոյրի՝

քոյդ Կոմիտաս

25

1908, 23 դեկտեմբեր, Ա. Էջմիածին

Սիրելի՝ Զօպանս,

Ինչպէս երեւում է՝ տաք տեղ ես գտել. հը՛, գործերն ու քոյրերն ի՞նչ են անում, դու ինքդ զինքդ ինքեանց զինքեանց հանդիսացուցի՞ր:

Դ՛, լսի՛ր, լաւ լսիր:

Լուսանկարչին կանչեցի, եւ այս շատ նպաստաւոր պայմանն առաջարկեցի ի պատիւ քո անձնուրաց հայրենի ստեղծագործութեանց ծառայելուդ համար:

Պատկերներն անելու է 13x18 մեծութեամբ:

Բոլոր նշանակածդ պատկերներից մի-մի օրինակն արժէ ի միասին 26 լուրջի, բոլոր միւս ծախսերն ու նեղութիւններն իր վերան է առնում. սպասում եմ քո վերջնական պատասխանին. գիրս ստանալուդ պէս գրիր պատասխանը. համաձա՞յն ես, թէ չէ:

Իսկ ճեմարանի աշակերտի նկարածները տեսայ եւ ամենեւին չհաւանեցի, խեղճը լուսանկար<իչ> չէ եւ չէ հասկանում գործը:

Ուրեմն գրիր շուտով:

Մենք բոլորս էլ լաւ ենք եւ քեզ սիրալիր բարեւներ ենք
ուղարկում առաջիկայ տօների եւ նոր տարուան առթիւ:

ԱՇ թէ այնպէս անէիր, որ մնայիր մինչեւ Զատիկ, ու
գայի քեզ մի պինդ պսակէի...

Մինաս Բերբերեանն ասում էր, որ քո խաթեր համար
չորս անգամ, հակառակ ուսուցիչների տրտունջներին,
քննել են Կարախանեան Հայր Ներսէս Վարդապետի
ազգականին եւ չորս անգամն էլ գտել են անպատրաստ մի
քանի առարկաներից, այնպէս որ այդ յառաջադիմու-
թեամբ անհնարին է ներկայ տարին ընդունելը:

Ուղտն¹ եկաւ ունքերը փրստած այսպէս՝



Շատ բարեւ հարցանողներին եւ քեզ էլ մի ջերմ պագ
ինքը զինքից:

Քոյդ Կոմիտաս

Յ. Գ. Յարգելի Կարագեաններին յարգանաց հաւաս-
տիքը:

Սիրելի՝ Արշակ,

Նամակներդ ստացել եմ, որ աւուր սպասում եմ, որ
եղանակները բացուեն, անձրեւներ են շարունակ, որպէսզի
մնացած երկու նկարն եւս առնել տամ Գայեանէի վան-
քում, ապա քեզ ուղարկեմ 80 նկար. յուսով եմ, գոհ պիտի
լինես: Ինչ կվերաբերի Հ. Գարեգնի¹ լուսանկարելիքներին,
շատ կամայական խոչնդոտների հետ են կապուած, զի
Ուղարք մի շարք պատրուակներ է առաջ բերում: Ես խոր-
հուրդ եմ տալիս՝ առ այժմ այդ մասը թող մնայ ցգալուստ
Վեհափառի, եւ ամեն բան կարդ ու կանոնով առաջ կեր-
թայ:

Անցեալ շաբաթ ստացայ Կ. Պոլսէն քո անունով մի
դրամաբեր գիր, Վահագն ստորագրութեամբ, 30 ըուբլի
թղթադրամ ներփակ դրած. «Սիրելի պ. Արշակ Զօապա-
նեան, հակառակ մի չորս անգամ վնտրելուս, չկրցայ Ձեզ
գտնել, վճարելու համար այն չորս գաղ. ոսկին, զոր մեր
ընկերները ստացեր էին Ձեզմէ: Այժմ ներփակ կդտնէք ի
փոխարէն չորս (4) նաբոլէօնի՝ երեսուն ըուբլի (30): Ստա-
նալդ իմացուր... Վահագն»:

Այս 30 ըուբլի դրամը պահեցի մօտս, որ մնացած
ծախսերդ հոգամ լուսանկարների համար: Այժմ գանք այն
բանին, թէ ինչեր են կատարում այստեղ Տեղապահն² ու
Ուղարք եւ իր գող արբանեակ Յուսիկ արքեպիսկոպոս³ ու
իր ընկերները: Ինչ որ լրագրերի մէջ կարդացել ես, բոլորն
էլ ճիշտ են մեր նկատմամբ: Սուրէնեանն ու իր ընկերու-
թիւնը որոշել են, ինչ էլ որ լինի, մինչեւ Վեհափառի գալուստը
ամեն բան տակն ու վրայ անել, Բերբերեան⁴, Հ. Գարեգին,
Երուանդ⁵, Յուսիկ⁶ եւ Կոմիտաս վարդապետներին վար-

կաբեկել զգուելի ստախօսութիւններով, աշակերտներին յուղելով, անլսելի զրպարտութիւններ բարդելով. գիտեն, որ գուցէ իրանց օրը մտել է, կեղտերը մէկ-մէկ երեւան են ելնում, ուստի եւ վրէժ են առնել ուզում: իրաւ է, ես հրաժարեցայ ուզիդ մէկ ամիս. յետոյ Տեղապահն իր խօսքն ու գիրը յետ առաւ, եւ ես խաղաղութիւնը պահպանելու համար յանձն առայ նորից ընդունելու ընդհատուած պաշտօնս, բայց այժմ էլ աշակերտների միջից որսացել են մի խումբ կամակատարներ եւ գաղտնի վրդովում են ճեմարանի կեանքը: Ափսո՞ս, շուտ գնացիր. ես կուգէի, յատկապէս այս երեւոյթներին դու ինքդ ականատես լինէիր եւ ըմբռնել կարողանայիր, թէ ինչու էինք մենք ցանկանում, որ իզմիրլեան՝ կ. Պոլիս, իսկ Օրմանեան էջմիածին լինէր: Մենք այժմ աւելի ենք համոզուել եւ մաքուր ենք մեր խղճի առաջ, որ բոլոր խօսքերը զրպարտութիւններ են Օրմանեանի դէմ, եթէ չէ, ինչո՞ւ չէ քննում Ազգային ժողովը նորա հաշիւները. չէ որ այդ քննութիւնը իրանց վարմունքը կա'մ պէտք է արդարացնէ, կա'մ պէտք է դատապարտէ: Կարծեմ վերջինն է ճիշտը, որ խոյս են տալիս ամեն կերպ օրինաւորութիւնից, ուրիշ ո՛չ մի հակառակ բացատրութիւն չենք կարողանում գտնել: Մենք այժմ պարզ տեսնում ենք, որ Պատրիարքարանն ապակար մարդոց ձեռքն է ընկնելու իզմիրլեանի հեռանալով, իսկ Օրմանեանին վարկաբեկեցին ի տարապարտուց, նա այժմ իմ աչքում իսկ որ արդարութեան քաւութեան նոխազ եղաւ:

Հաւ կարդա' այժմ այն, ինչ քեզ պիտի գրեմ, մէկ օր քեզ պիտի յիշեցնեմ այս խօսքերս: Այստեղ իզմիրլեանին պիտի վարկաբեկեն հէնց այն անձինք, որոնք երեսանց, իբր թէ, նորան ջերմ պաշտպաններն էին: Այս լա՛ւ յիշիր:

Մէկ էլ իմացիր, որ անասելի դժուարութեանց պիտի հանդիպէ կառավարութեան կողմից. նորից զարթնելու են դպրոցական եւ կալուածական խնդիրները եւ այս անգամ՝ ընդ միշտ քնելու պայմանով։ Տէրութիւնը վճռել է, ինչ էլ որ լինի, ջնջել դաշնակցութիւն կոչուած հաստատութիւնը, եւ տասնեակներով բռնում են արդէն ամեն գիւղում. այժմ այստեղ են, մի քանիսին տարել են բերդ, դեռ մի 60-70 հոգու բռնելու են, այսպէս եւ միւս գիւղերումն են վարում։ Ժողովուրդը կարծես ուրախ է, որ մի անկոչ հարկահանի ձեռքիցն ու կամայականութիւններիցն ազատում է. ոչ մի ցաւ, ոչ մի վիշտ չէ արտայայտում այս առթիւ։

Համերգս ջուրն ընկաւ⁷, զի ճեմարանում խառնաշփոթութիւն ստեղծեցին, որպէս վերը նկարագրեցի։ Հոգեւոր համերգի մէջ բոլորին գերազանցեցինք հայերս, թէեւ ինձ սաստիկ թուլացրին երկար ու ձիգ [...] պարապմունքները։ Կարո՞ղ ես երեւակայել, որ մեր հայ բաժինը պատրաստեցի մէկ օրուան մէջ՝ 14 ժամ զբաղուելով ներսիսեան դպրոցի խմբի հետ, որոնք բերան բանալ անգամ չգիտէին։ Վերջին բոլէին հեռագրով կանչեցին, իբր թէ խումբը պատրաստ է, եւ ես միայն կառավարելու եմ, զի վարժապետը հիւանդացել է։ Գնացի, տեսայ, որ ոչինչ չեն արել, հոգիս բերանս հասաւ պատրաստելու համար։ Նեարդերս խիստ լարուել են, աշխատանքներս մասամբ ընդհատել եմ, դեռ ցարդ հիւանդի պէս եմ, սպասում եմ վեհի գալստեան, որ հայրենիքս գնամ, մի քանի ամիս ջերմուկներում հանգստանամ։

Պէտք է ասեմ, որ այստեղ կատարեալ յուսահատութիւն է տիրում վանքում՝ մեր շրջանի մէջ։ Հաստատութեան հեռագրական լուրն ստացանք, բայց տակաւին

պաշտօնական հրովարտակը չէ եկել, երբ ստանանք, այն ժամանակ կերթան պատուիրակները կ. Պոլիս: Եթէ ինձ եւս վիճակուի գնալը, որ դեռ չեմ հաւատում, իզմիր-լեանին առանձին խոստովանութիւն եւ մի շարք կարեւոր մերկացումներ եմ անելու, որ նա իր անելիքն իմանայ այս-տեղ, ցաւում եմ, որ այս մեծ եւ կարեւոր հաստատութիւնն անարգանքի առարկայ է դարձել հասարակութեան հա-մար:

Շատ կարող է պատահել նոյնիսկ, որ մի խումբ եւ այն՝ ստուար եւ կարող միաբաններ, չդիմանալով հալածանք-ների՝ հեռանան վանքից: Եթէ իզմիրեանը գալուն պէս մանրամասն հաշուետութեան չենթարկէ ազգային, եկեղեցական եւ՝ հայրապետական իրաւունքները ոտքի տակ տուող Սուրէնեանին, այն ժամանակ նա աւելի եւս անզգամ պիտի լինի, եւ ստեղծուի Վեհի եւ նորա մէջ մի սաստիկ կոիւ: Վեհը եկեղեցու եւ ազգի շահերը պաշտ-պանելու համար պիտի մատնուի նորա ձեռքով՝ իբր կա-ռավարութեան շահերը պաշտպանող, եւ կարող ես գու-շակել, թէ ինչեր կարող են առաջ գալ. առնուազն՝ իշխա-նութեան եւ Վեհի յարաբերութեանց խզումն, որ համազօր է Մայր Աթոռի վերջնական կամ վերջներութիւնից կործանման: Աստուած տայ, որ ես սխա'լ լինեմ, ամեն բան թող ի բարին փոխուի:

Այժմ ամեն մի, նոյնիսկ յիմար մարդ կարող է տեսնել, որ արդար ճանապարհով չէ կարողանում վնասել մեզ Տեղապահը, ուստի աշխատում է, որ մեզ համբերութիւնից հանէ կամ ուրիշ կողմնակի միջոցներով մեզ հալածէ:

Այս ձմեռուան աշխատանքներս խիստ արդիւնաւէտ եղան. գտայ հայոց հին խազերի բանալին եւ սկսայ կար-դալ պարզ եղանակները: Այս ամառն ուզում եմ մի քանի

շաբաթով նախքան հայրենիք գնալս անցնել երուսաղէմ, մի քանի կարեւոր ձեռագիր եւս ուսումնասիրեմ, որ գործն շտապով առաջ տանեմ: Յետոյ մանրամասնաբար քեզ կհաղորդեմ:

Լաւ է այսքանով գոցեմ գիրս, սիրտս լցած է, եթէ չամաչեմ՝ լաց լինելու, ցաւերս շատացել են: Տես աչքովդ, թէ ինչպէս մարդիկ աւերում, կործանում են պատիւ, անուն, եկեղեցի, սրբութիւն, ազգայնութիւն եւ ինչպէս գործիք են դառնում չարի ձեռին, եւ ապա մի՛ լցուիր, մի՛ լար, մի՛ ողբա Խորենացու պէս, իր իսկ ողբով. այժմ նոյն պատկերն է մեր շուրջը, եւ նորա ուրուականն է ողբում մեր անբուժելի ցաւերը:

Խնդրեմ, ներփակ երգը Շահմուրագին յանձնէ. ասա, որ թող չնեղանայ, որ չեմ կարողանում իր ուզածները հասցնել. անհրաժեշտ եւ անյետաճգելի գործերը եւ ապա այս գժոխային մեքենայութիւնները սիրտս ու միտքս հանգիստ չեն թողնում, որ կարողանամ ստեղծել:

Նորա յառաջադիմութիւնն ինձ անչափ մխիթարում է, ամեն մի լուր կարդալիս սաստիկ յուզւում եւ լալիս եմ, նեարդերս հանգիստ չեն, առհասարակ գրութիւններս ընդհատել եմ բժշկի խորհրդով: Շատ սիրով եւ կարօտով բարեւէ իրան եւ յանձնիր այս երգը: Ուրիշին չտայ արտագրելու, բացի Բաբայեաններից, եթէ ուզեն: Սիրալիր բարեւներս հաղորդէ մեր բարեկամներին, մանաւանդ իմ սիրելի Յովակիմեան ընտանիքին: Մանուչեան երուանդին, Շահինին⁸, Փոլարին, Գեւոյին, Գարիբին⁹ եւ ընկերութեան ջերմ բարեւներս:

Անհոգ եղիր, պատկերները շուտով կուղարկեմ: Սիրալիր համբոյրներով՝

Սիրելի՝ Արշակ,

Հակառակ իմ շտապելուն լուսանկարների առաքումն ուշացաւ. պատճառները գրել էի անցեալ նամակովս: Այս թղթատարով ուղարկում եմ ինձի յանձնուած բաժինը. Հայր Գարեգինն էլ շուտով ուղարկելու է. նորա բանն էլ այժմ դիւրացաւ. անցեալ օրը Վեհը կանչեց Ուղտին եւ հրամայեց ամեն դիւրութիւն տալ. խոնարհեցաւ եւ «շատ բարի» ասաց, թէեւ արդէն դժգոհ էր. երեւի մտածում էր, որ ամեն բան ինքն անէ, աչքի երեւայ...

Վեհափառը շատ նպաստաւոր տպաւորութիւն թողեց բոլորիս վերայ, բայց մեր Ուղտն էլ առաջուան պէս գլուխ չէ կոտրում, երեւի նորա համար, որ Վեհը Սուրէնեանի պէս իր խօսքով նստող-ելնող չըուրս եկաւ, արդէն խուլ բամբասանք է սկսել: Վեհը գալուն պէս գործի գլուխն անցաւ, բայց դեռ ո՛չ ի պաշտօնէ, զի օծումն ընդունելուց յետոյ է շարժելու իր գաւազանը, որ նոյնպէս ուրախալի երեւոյթ է: Մկրտչի պէս դեռ չօծուած՝ Հայրապետական ոչ մի հրաման չէ արձակում, առայժմ նախապատրաստում է: Անցեալները կանչեց ինձ, եւ երկար խոսեցինք. կանչեց նոյնպէս երուանդին ու Յուսիկին, որոնց վերայ նոյնպէս լաւ տպաւորութիւն է թողել եւ, որ գլխալորն է, Վեհը, գրեթէ, ըստ ամենայնի մեզ համախորհուրդ է իր ծրագիրներով՝ առանց չափազանցութեանց մէջ ընկնելու, որ եւ կարեւորն է: Օծումը նշանակուած է օդոստոսի 23-ին՝ իր աքսորանքի գնալու օրը¹: Ամսիս 11-ին տարանք Բիւրականի ամառանոցը: Այստեղ անտանելի տօթեր են: Ամսիս 10-ին Վեհին այց եկաւ երեւանի նահանգապետը՝ նախապէս հեռագրով ունկնդրութեան ժամ խնդրելով:

Պէտք է ասել, որ Հայրապետական փառքն սկսել է աճել թէ՛ յաչս ժողովրդեան, թէ՛ յաչս կառավարութեան, որ զգալի կերպով սկսել է նախկին մեծարանքները տալը. մեծարանքներ, որոնք 17 տարի է, որ ապակար Խրիմեանի ձեռքով արհամարհանքի եւ ծաղրի էին փոխուել, այս առթիւ ամենքն էլ գոհ են: Երեւի քաղաքականութիւնն էլ կփոխուի. արդէն նշանները կան. սկսեցին բանտարկեալներին արձակել եւ այլեւս չկալանաւորել, բացի յայտնի յանցագործները:

Դաշնակցական խմբակը, որ ատամները թափած է, խիստ դժգոհ է Վեհից, բայց չեն համարձակւում հրապարակ ելնելու: Էլ բաւ է, որքան քանդեցին մեր ներքին եւ արտաքին կեանքը՝ անմիտ հպարտութեամբ եւ փուչ ուժով: Մի բան մեզ խիստ ուրախացնում է, որ մեր հայերը Տաճկաստանում արդէն լաւ եւ շուտ ըմբռնեցին այդ կուսակցութիւնների կործանիչ եւ աւերիչ ուղղութիւնները եւ թօթափեցին կամ թօթափելու ջանքեր են անում, որ մի ապիկար խնամակալութիւն չաւելանայ:

Երեւի օծումից յետոյ կերթամ Պոլիս եւ հայրենիք, Վեհին խնդրեցի, եւ հածեցաւ կամք տալու, եթէ յարմար լինի, մի քանի օրով կանցնեմ ձեր կողմերը եւ ապա Բերլինի վերայով կդառնամ Ս. Էջմիածին:

Հարցանողաց բարեւներս: Սիրալիր համբոյրներով՝

քոյդ Կոմիտաս

28

1909, 30 Հոկտեմբեր, Ս. Էջմիածին

Սիրելի՛ Արշակ,

Նամակներդ ստացել եմ. շատ ուրախ եմ, որ, գոնէ երկար տանջուելուց յետոյ, քեզ առողջ ես զգում, զգոյշ

եղիր, սիրելիս, էլ մի՛ հիւանդանար: Պատկերներն արդէն ստացած կլինես, անցեալներն ուղարկել տուի Հայր Գարեգնի պատրաստել տուածներն էլ: Ինչ վերաբերում է Ղազարու Յարութեան եւ միւս նկարներին, ցաւելով եմ արձանագրում, որ անյայտացել են, մէջտեղը չեն երեւում, ասում են, որ հանգուցեալ Հայրապետը բաժանել է գիւղական եկեղեցիներին, բայց ո՞ր եկեղեցիներին՝ չենք իմանում. եթէ գտնեմ, անմիջապէս բերել կտամ այստեղ, անհոգ եղիր:

Երեկ վերադարձայ Տփխիսից, գնացել էի տիկին Մանթաշեանի թաղման¹: Սիրելի բարեկամս, այժմ արդէն պարզ է որոշ չափով, որ մեր նոր Վեհը ընկած է դաշնակցութեան ձեռքը: Սիրական Տիգրանեանը², որ «Հորիզոն» թերթի խմբագիրն էր, բերել տուին Ս. Էջմիածին եւ տեղաւորեցին ճեմարանի եւ առհասարակ բոլոր ազգային գոյն ունեցող ժողովների մէջ՝ իբրև գործող անդամ, մանաւանդ ուսումնարանական յանձնաժողովի մէջ: Եւ ա'յն նպատակով, որ ճեմարանի եւ ուսուցչութեան միջոցաւ նոր սերունդ պատրաստէ՝ հակաեկեղեցական ոգով տոգորուած, ուսումնարանական յանձնաժողովի միջոցաւ դպրոցներն իւր ձեռքն առնէ, տեղաւորէ ուսուցիչներ, որոնք իրանց կուսակցութեան են պատկանում: Մի խօսքով՝ լիակատար տիրում են Վեհին: Գոնէ այժմ: Ուղտը Վեհի կամքն իր բռան մէջն է առել, ինչ կամենում է՝ անել է տալիս, զոռով եպան մէջն է առել, ինչ կամենում է՝ անել է տալիս, զոռով եպիսկոպոս եղաւ: Բայց ինչո՞ւ համար՝ չենք հասկանում. եպիսկոպոս եղաւ: Բայց ինչո՞ւ համար՝ չենք հասկանում. ո՞չ միաբանութիւնն է ընտրել, ո՞չ էլ ժողովրդից թուղթ ո՞չ միաբանութիւնն է ընտրել, իր կեանքումը գեռ մի ուղիղ պատարագ չէ արել, իր ունի: Իր կեանքումը գեռ մի ուղիղ պատարագ չէ արել, իր կեանքումը առանց խայտառակուելու մի քարոզ չէ խօսեցել. եկեղեցական արարողութիւնից միանդամայն բուստեցել. եկեղեցական արարողութիւնից միանդամայն բուստեցել, հարիւրը յարիւր է գրում, ապակար է թէ՛ իբրեւ բիկ, հարիւրը յարիւր է գրում, ապակար է թէ՛ իբրեւ

ուսուցիչ, թէ՛ իբրեւ, տեսուչ, նախանձով լցուած, շողոքորթող, խաբեբայ, ստախօս, կեղծաւոր, գող, փողամէր, փառամէր...

Ահա այն արժանաւորութիւնները, որոնց համար ձեռնադրեց նորան Վեհը:

Վեհի վերջին ուշագրաւ եւ ապօրինի գործերն են՝

1) Գաղտնի կերպով (*Մեսրոպի, Սիրական Տիգրանեանի եւ Բարդէնի ձեռքով*) հայրապետական իրաւունքները պաշտպանող եւ եկեղեցու շահը որոնող հին ուսուցչական խումբը արձակեց եւ տեղը լցրեց չաւարտած ուսանողուսուցիչներով, որովհետեւ սոքա մէկ-մէկ տարի եւս ունէին. ուսումն աւարտելու, պակասում էր դրամ, ուստի եւ լիուլի ոռճիկներ կապեցին ճեմարանում, նոյնիսկ անցած առարկաները նորից պահանջեցին սովորել որպէսզի իրանց կուսակից երկու ուսուցիչներին եւս տեղ լինի, աշակերտները բողոքեցին, բայց անհետեւանք մնաց, զի կուսակցութեան ուժով լոեցրին նոցա:

2) Երուանդ վարդապետին անգործ նստեցրել են վանքում՝ դաշնակցական աշակերտների խօսքին մտիկ անելով, որոնք եկել եւ բողոքել էին Վեհին, թէ նորան ուսուցիչ չենք ուզում, որովհետեւ խիստ է եւ այլն:

3) Յովհաննիսեան բանաստեղծ եւ ուրիշները դուրս մնացին:

4) Բենիկ վարդապետին³ կանչել եւ հրամայել էր, որ պատրաստուի երեւանի փոխանորդ գնալու այս լսելով *Մեսրոպ վարդապետ* Ուղտը նոյն օրը գնացել էր երեւան եւ մի քանի, 2 հոգի էր կարծեմ, դաշնակցական էր բերել եւ բողոքել տուել եւ խանգարել:

5) Երեւանի փոխանորդ առաջարկել էր տուել *Մուշդբեգեան վարդապետին*⁴, որը դաշնակցական է եւ մի

անգամ մերժուած է փոխարքայի կողմից՝ իբրեւ անբարեյոյս անձն, նորից առաջարկել տուաւ թենիկի փոխարէն, եւ Վեհն այս եւս կատարեց՝ քանդելով նախկին վճիռը, որպէս անում է մինչեւ այժմ:

6) Յուսիկ արքեպիսկոպոսի գողութիւնն արդարացրեց ինքը. երբ ես այս ամառն իր մօտ էի Բիւրականում, Վեհը կրկնում էր շարունակ, որ եթէ նոյնիսկ թուսիկ եպիսկոպոսն արդարանայ դատարանի առաջ՝ իբրեւ ժամանակն անցած դատ, ինքն իբրեւ եկեղեցու գլուխ՝ պատմելու է այդպիսի զարարար եւ գող եպիսկոպոսին... Բայց արդարացրեց, առանց նոյնիսկ նկատողութիւն անելու:

7) Դպրոցների եւ եկեղեցու կառավարութիւնն առհասարակ յանձնել է մարդկանց, որոնք պետութեան կողմից նկատուած են իբրեւ յեղափոխականներ:

8) Սուրէնեան տեղապահի բոլոր ապօրինութիւնները ոչ միայն սրբագործեց, այլեւ նորան առաջ քաշեց՝ կարծես վախենում էր պատասխանատութեան եւ հաշուի ենթարկելը՝ մի բան, որ նոյնիսկ Խրիմեան Հայրիկն անվախ արաւ՝ Երեմիա եպիսկոպոսից⁵ գոնէ հաշիւներ պահանջելով:

9) Անցեալ օրը միաբանական ժողով գումարուեցաւ, որպէսզի զանազան վանական եւ եկեղեցական խնդիրների համար պաշտօնեաներ ընտրուեն: Հայր Կարապետն առաջարկեց, որ ներքին անհաշտութեան վերջ դնենք նախապէս, որ կարողանանք խղճի մտօք ընտրութիւն անել՝ արժանաւորագոյնների կենտրոնանալով: Տեղապահ Սուրէնեանը արգելեց խօսելու այդ մասին, եւ անմիջապէս անցան ընտրութիւնների, եւ բանից գուրս ելաւ, որ նախ թղթիկների վերայ գրած ունէին տեղական կուսակցութեան մարդոց անունները, եւ ընտրութիւններ կատարեցին եկեղեցու եւ

վանականութեան կանոններ մշակելու մարդիկ, որոնք եկեղեցու պատմութիւնն չիմանալուց յետոյ եկեղեցին կործանելու համար են մտել վանք: Այս ընտրութիւններից եւ ոչ մէկի համար իմ ընկերներից եւ ոչ մէկը չընտրուեցաւ, եւ այս տեսնելով հանդերձ՝ Վեհը այս միակողմանի եւ կործանարար ընտրությունները հաստատեց, միայն մէկն ասեմ. Յուսիկ արքեպիսկոպոսին «Արարատ»ի խմբագիր ընտրեցին... ո՛վ կուրութիւն...»

10) Բառի բուն նշանակութեամբ մեզ հալածում են. այդ տեսնում է Վեհը եւ համակերպում է նոցա եւ ընդառաջ է գնում նոցա ցանկութեան:

11) Ամեն բան կառավարում է կուսակցութիւնը՝ յանձին Ուղութիւն եւ նորա արքանեակների: Ամեն բանի համար Վեհը խորհրդակցում է նախ Մեսրոպի եւ Սիրական Տիգրանեանի հետ, որ կուսակցութեան կողմից նշանակուած է վանքի եւ Վեհի վերայ իշխելու: Նորից կազմակերպել են սկսում դաշնակցական հին միջոցներով եւ ոչնչի չեն խնայում:

12) Օժման հեռագիրը կայսեր երեւի կարդացած կլինես թերթերում: Կայսրն այնպիսի անպատիւ հեռագիր էր խփել, որ բոլորին էլ խոցեց. Վեհին ո՛չ թէ նորին Սրբութիւն, այլ Սրբազնութիւն էր տիտղոսել՝ իջեցնելով եպիսկոպոսի պատուին...

Մեր գլխին գալիք կայ...
Կատարեալ հիասթափութիւն...
Շահմուրադը կպատմէ մանրամասնաբար քեզ իր տպաւորութիւնները:
Վեհին բան մի՛ գրիր, զի բոլորն ասում է Մեսրոպին...
Սիրալիր բարեւներ քեզ եւ հարցանողաց:

Համբոյը Կ. Վ.

Սիրելի՝ Արշակ,

Ստացայ նամակներդ, այսօր միայն հնարաւոր եղաւ քեզ գրական բան գրելու, լուսանկարիչն ինքն այստեղ չէր, երեխան հիւանդացել էր, եւ տարել Տիֆիս բժշկելու, այսօր կգայ, վաղը կգայ, վերջապէս երեկ եկաւ, բայց մեծ ապակիներ չունէր, անմիջապէս պատուիրել տուի իմ ներկայութեան, ու այս քանի օրս կստանանք, եւ քո ուզածներն ամենը կուղարկենք. Հանգիստ եղիր, սիրելիս: Վեհին էլ գրիր, կանչեց ինձ, պատուիրեց, որ շտապեցնեմ, ես էլ պատմեցի խնդիրը: Շատ եւ շատ սիրտս նեղանում է, երբ լսում եմ, որ դեռ առողջութիւնդ չես գտել. ես պարզն ասեմ, միայն ամուսնութիւնը կարող է քեզ բուժել: Ցուսով եմ այս տարի կտեսնեմ քեզ Փարիզում. գալու եմ մի ամսով գերապատիւ վայրերը:

Մեր թէ՛ ներքին, թէ՛ արտաքին կեանքն ամենեւին նոր նշան չէ ցոյց տալիս. կարծես խնդիրները բարդում են, շատ վտանգաւոր ըոպէներ ենք ապրում, սիրելիս:

Ցանկանում եմ սրտանց առողջութիւն քեզ եւ յաջողութիւն գործերիդ: Մեր վարդապետները բոլորն էլ կարուտով բարեւում են քեզ:

Սիրալիր համբոյլներ քեզ՝

քոյդ Կոմիտաս

Սիրելի՝ Արշակ,

Շատ ուրախացայ, որ քեզ բոլորովին առողջ կզգաս: Քո յոքելեանը պէտք է անշուշտ յետաձգել, զի հրապա-

ըակը շատ նեղ է, վիճակն անորոշ եւ յոքելեաններու սեպոնն է, ուստի պէտք է սպասենք մի առժամանակ, մինչեւ հանդամանքները փոխուեն, որպէսզի փառաւոր բան սարքենք եւ իսկական գրական գործիչն ու գործը ի վեր հանենք, այս է իմ փափագս:

Գալով իմ աշխատութեանցս տպագրութեան՝ ստիպուեցայ յետաձգել, մինչեւ որ նորանոր գիւտերս կարդի բերեմ, որոնք մեծ արժէք ունեն. ուստի չեմ շտապելու: Արդ շատ զբաղուած եմ. աշխատանքներս կանոնաւոր եմ բաշխած, այնպէս որ չեմ զրկեր ինքզինքս:

Ձերմագին համբոյրիւ՝ քոյդ անձնուէր՝

Կոմիտաս Վարդապետ

31

1912, 25 դեկտեմբեր, Կ. Պոլիս,

Pangaltı N 83 (47)

Սիրելի՛ Արշակ,

Երկար ժամանակ է, ուզում եմ քեզ նամակ գրել, բայց այսօր-վաղն ասելով՝ ցարդ ուշացաւ:

Արդէն մասնակի տեղեկանում եմ եւ գիտեմ, թէ այժմ ո՞րքան սուրբ ու ազնիւ, քո սիրած ու պաշտած, կշուած ու մարսած գործն ես մշակում՝ հայուն ապագան է արդ քու հոգածութեանդ առարկան, ուստի բոլոր ուժեւ իրաւամբ դէպի գերագոյն նպատակն ես ուղղած: Արդէն հայ ազգը քեզ շա՛տ բան է պարտական. դո՛ւն էիր առաջինը, որ լաւ ըմբռնեցիր, թէ մեր ապագան հարթելու համար պէտք էր նախ մեզ օտարներին ծանօթացնել, ցոյց տալ, որ մենք կենսունակ ենք, լուսոյ որդեգիր ու կարապետ ենք խաւար վայրերում, շինարար ենք... ելթէ մեր մէջ տեւականութիւնն

ու միութիւնը պակաս է եղած, պատճառն այն է, որ ազատ շունչ չենք քաշել, նոյնիսկ մեր իբր-անկախութեան օրերումն իսկ հալածուելով տգիտութենէն ու խաւարէն, աւերակէն ու աւարէն, սրէն ու հրէն... Բայց աննկուն բան ունենք մեր մէջ, մի անմար յոյս, դէպի ապագայ լուսոյ կանթեղը յառած են մեր հայեացքները, դէպի այն կանթեղը, որ հայ ժողովուրդը, իր թագաւորութիւնն ու իշխանութիւնը կորցնելէն յետոյ, տարել ու կախել է բազմաբեղուն ու երկնաւէտ Արագածի գագաթը՝ երկնքի անտես առաստաղէն, անթել կապով, որ մարդիկ՝ խաւար ու աւարառու, ձեռք տալ չկարողանան, եւ գոնէ նորա լուսոյ նշոյլը ցայտէ մեր վերայ, եւ մեր ապագա կեանքը երազենք։ Դուն էիր առաջինը, որ մեր նախնեաց ստեղծագործ հոգին թղթերով ու գրքերով նկարեցիր ու ցուցադրեցիր օտար աշխարհի մէջ քաղաքակրթութեան հարազատ զաւակներին, որ մենք եւս իրենց շատիղն ենք բռնել, մենք եւս իրենց ճամբան ենք քայլել, մենք եւս մեր ձեռքին լոյս բռնել, եւ, թէպէտ ջանացել են գեւեղը փշել ու մարել մեր կեանքը, բայց փչողներն են խորտակուել, եւ մենք դեռ մոխիրների տակ առկայծել ենք՝ ապաւինելով գիտութեան ու կրթութեան, որ թէեւ մերն է եղել իբր Արեւելքի զաւակներ, բայց մեր ձեռքէն դուրս է ելել ու Եւրոպան լուսաւորել. արդ, քանի որ մեզ համար անծանօթ չէ մեր մտքի նախատիպը եւ կարողութիւր, որ այժմ Եւրոպայէն է, որ մեզ լուսաւորում է, ինչո՞ւ չունենանք մեր իսկ լուսոյ ջահը՝ մեր ձեռքին։ Դուն էիր առաջինը, որ հրաւիրեց հայի գեղարուեստական ստեղծագործութեանց ծանօթացնելու քաղաքակիրթ աշխարհին... Արդ, հանգիստ վայելի՛ր եւ ուրախացի՛ր, ո՛ւժ առ եւ ո՛ւժ տուր, պի՛նդ կեցիր, որ բարձրացած դարաւոր ազատութեան ձգտող կոհակներն

ու ալիքները չզարնուեն ժայռին ու այս անգամ ալ փշրուեն, որի վերջը թերեւս կորստաբեր լինի մեզ համար:

Ծալենք այժմ զգացումներն ու դատենք իրողութիւնը: Ինձ այնպէս է թւում, թէ մենք մինչեւ նուազագոյնով առաջին ու դրական քայլը չանենք, երբեք չենք կարող երկրորդի մասին մտածել կամ մեծամեծս ձգտել:

Արդ, մեր երկիրն սկզբէն եղել է կռուախնձոր արշաւող եւ շրջակայ հզօր պետութեանց աշխարհակալութեան ճանապարհի վերայ եւ պահել է ցարդ նոյն վիճակը:

Մենք այժմ իրապէս Ռուսաց շահի առարկան ենք. մեր երկիրն արդէն որոշուած է այսօր կամ վաղը ոռւս պետութեան բաժին դառնալու: Ուրեմն պիտի ձգտենք մեզ ազատագրել երկու կերպ, թէպէտ եւ երկուքի վերջակէտն էլ նոյնն է, տարբեր ուղիով միայն:

Առաջինն է՝ առաւելագոյնը՝ ինքնուրոյն ու անկախ լինելով՝ իր պատուար ցցուել ոռւս դիւանագիտութեան առջեւ եւ երկրորդը՝ նուազագոյնը՝ ապաւինել Քեռի-Ռուսին եւ միաձոյլ հայութիւն սահմանել: Երկուքն էլ նոյն է, բայց երկրորդն իրագործելի՝ շահերի նոյնութեան վերայ յենուելով, իսկ առաջինը՝ անիրագործելի: Ռուս կառավարութիւնը Ծայրագոյն արեւելքէն տուժեց¹. ուրեմն ընդարձակման ճանապարհը այս կողմը մնաց. արդէն Պարսկաստանը բաժնուած է իրապէս Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ. այսպէս հայերը պարսկական լծէն պիտի ազատեն եւ միանան ոռւսահայոց եւ փոխադարձաբար ուժովնան. արդ հերթն եկել է մեզ՝ տաճկահայերիս: Ես չեմ կարող մտքէս անցնել, որ Ռուս կառավարութիւնը իր շահերը զոհէ մեզ. զի նա չէ՝ կարող թոյլ տալ, որ այս բաժինն աւելի լաւ վիճակ ունենայ, քան իր երկրի հայերը. ուրեմն միշտ ձգտելու է պահել մեզ (եթէ իրան չմիանանք) իրեն կարօտ

վիճակի մէջ, որպէսզի ապագայ գրաւման ձեռնտու տարր հանդիսանանք. արդէն մեր մեծ ջարդերն ապացոյց են ասածներիս: Իուս թերթերն էլ ճիշտ այս կէտն է, որ շարունակ շեշտում են, թէ մեր փրկութիւնը կուլու եւ կոփելու ենք Փերպուրկի² պարիսպներու դռներուն առջեւ. այս էր պնդել ժամանակին Լոռիս Մելիքով՝ Գէորգ Դ կաթողիկոսին զգուշացնելով (Երբ սա ուուս-տաճկական պատերազմի ժամանակ, փրկութիւնը տեսնելով ու յուսալով տաճիկներէն, գրեթէ բացարձակապէս սպասելիս է եղել տաճիկներին էջմիածնի մէջ): Արդէն քաջ գիտես, որ Անգլիոյ, Ֆրանսիոյ եւ Ռուսիոյ միութեան գլխաւոր նպատակն էլ այս էր: Ուրեմն չի՞ք փրկութիւն արտաքոյ Ռուսիոյ:

Պէտք է նախ բոլոր հայերը խմբուեն մէկ տէրութեան, մէկ օրէնքի տակ, աճեն ու զարգանան բարոյապէս եւ նիւթապէս, եւ ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերէ մեզ մեր ազատութիւնը. շտապելով՝ առաջինը չառած, երկրորդ քայլի դիմելով՝ բոլորովին պիտի կորչենք. տաճիկէն ո՛չ մի յոյս մի՛ ունենաք, մի՛ սպասէք. նորա ուղեղը քարէ ժայռից են, զարգացման անընդունակ, լոկ փշրուելու համար պիտանի եւ ոտքի տակը սալայատակելուն յարմար:

Զպէտք է բաժնուենք, չպէտք է խաբուենք եւրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներէն. միանալու ենք եւ գործնական ճամբան բռնելու, ըստ իս առաջին քայլն է՝ բոլոր հայութիւնն ամփոփել Ռուսի իշխանութեան տակ, երկրորդ քայլն է՝ տնտեսապէս ու բարոյապէս, զուտ ազգային, առանց օտարին ու մեզ անմարս գաղափարներով՝ առաջնորդելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդէն ինքը՝ ուուս յեղափոխութիւնն է, որ պիտի անէ, ո՛չ թէ մենք. իսկ մենք օգտուելու ենք այդ քայլէն, սակայն պատրաստուելով, լեհերու պէս զուտ ազգային շաւիղը բռնելով.

եւրոպական մարդկային գաղափարները որքան որ ընտիր են ու փափագելի, բայց մեզ անպէտք են. պաղ երկրի բոյսերը մեր ջերմ արեւին տակ կկիզուեն:

Ես վախ չունեմ, թէ ոռուս կառավարութեան մէջ կհալենք, որքան ալ որ հալենք, այնուամենայնիւ մեր ինքնագիտակցութիւնը զարժնած է, եւ եթէ խելօք շարժուենք՝ կվաստկենք: Ես այս կարծիքն ունեմ:

Յանկալով քեզ սրտագինս եռանդ, ոյժ ու քաջութիւն՝ մաղթեմ, որ մեզի նոր տարուան բերելիք նուէրդ լինի համեստ ու համեղ բան:

Համբոյրիւ եւ կարօտով՝

Քրյդ Կոմիտաս Վարդապետ

32 1913, 7 օգոստոս, Ա. Էջմիածին

Սիրելի՝ Արշակ,

Գուշակածիդ պէս՝ նամակդ ստացայ այստեղ: Զե՞մ եկել մնալու, այլ միայն մատենադարանում աշխատելու եւ գեղջուկ երգեր հաւաքելու: Առաջին գործս երեկ վերջացրի, երկրորդն եմ սկսելու վաղը: Մինչեւ սեպտեմբերի կէսերը կ. Պոլիս կլինեմ: Վաղը կերթամ գիւղեր: Բաւական նոր բաներ են դուրս եկել:

Շատ լաւ ես արել, որ ծովի լոգանքներ ես առնում. քեզ շատ լաւ ազգեցութիւն կթողնեն եւ կառողջանաս. ըստ կարելոյն երկար մնայիր տեղումդ:

Ուրախութեամբ եւ հպարտութեամբ եմ հետեւում գործնէութեանդ, մանաւանդ այսպիսի հանգամանքներում, երբ աւելի զօրեղ զէնք չունենք, քան մեր հին ու նոր եկեղեցուն ու աշխարհիկ եւ գիտական ու գեղարուես-

տական կարողութիւնները ցուցադրել, որ տեսնեն, թէ իբր ողորմութիւն չէ՝, որ խնդրում ենք, այլ իբր մարդկային զարգացման զօրավիճն ազդ ենք հրապարակ ելնում. երանի՝ թէ սկզբէն այս գէնքն առնէինք, առանք մի գէնք, որ աւելի զօրեղները փշրեցին, բայց մեր ունեցածը անընկճելի եւ անխորտակելի է՝ հայու սիրտն ու հոգին է իբր գէնք շաչում։ Լաւ է ուշ, քան երբեք։ Մանաւանդ, երբ հրապարակ է ելնում հայ հանճարը՝ հայ' անձերի, կազմակերպողների, երգողների, նուագողների եւ խօսողների ձեռքով, արդէն զինաթափ են լինում ամեն նախապաշարումներ միանգամայն։

Գալով այստեղի գործերին՝ ո՛չ մի միսիթարական բան չկայ։ Գիտես, որ մարդ է, որ գործէ զերկիր. իսկ Վեհին² դու ճանաչում ես անձամբ. փառասէր, փողասէր, ժլատ, ապակար, թոյլ, շողոքորթութիւն սիրող, խաբուող, գործից բան չհասկացող. ինչ ասում են կատարում է։ Շատ անմիսիթարական է. խաղալիք՝ մի խումբ մարդոց ձեռքին, որոնք 1-7 պաշտօնի գլուխն են անցել, իսկ իմ ընկերներս անպաշտօն են թէ՝ վանքում, թէ՝ դուրս, մէկը վարժապետ է ուսւաց գիմնազիօնում, միւսը՝ քաշուած. Կարապետ սրբազնը նոյնիսկ սենեակ չունի վանքում, այլ խցկուել է Յուսիկ վարդապետի սենեակում ու պարապում է մատենադարանում Գարեգին վարդապետի հետ միասին...

Եէնքեր՝ նորանոր, այստեղ-այստեղ ցրուած՝ քարակոփ, բայց ներքին շէնքերը՝ վանքի գործերը աւերակ են։

Ես էլ հազիւ եմ ելել այս ճահճից. ո՞ւր եմ գալու։ Նոյնիսկ մէկ բերան չասացին, թէ ինչո՞ւ չես գալիս, ինչո՞ւ չես մնում. վանքի երգեցողութիւնը գիւղականէն վատ է։ Իմ գործերս կ. Պոլսում շատ լաւ են. աշակերտներ եմ պատրաստում, որ բեռս թեթեւացնեմ։

Բոլոր ընկերներս քեզ բարեւում են:
Ցանկամ քեզ կատարեալ քաջողութիւն եւ սկսած
գործերիդ յաջողութիւն:
Համբոյրիւ՝

Քոյդ Կոմիտաս Վարդապետ

33 1914, 22 յուլիս, Կ. Պոլիս, Pangaltı N 83 (47)

Սիրելի՝ բարեկամս,
Վերջապէս հասայ Կ. Պոլիս:
Վիեննա եւ Ֆիլիպէ բաւական գործ կատարեցի. խօսեցի, երգեցի եւ դպրոցի կրթութեան ոյժ տուի: Այժմ մի երկու շաբաթ հանգիստ եմ անելու. միտքս յոգնած է:
Դժբախտաբար Եղիչէ եպիսկոպոս Դուրեանն² էլ վատ դեր է խաղացել կրօնական ժողովներից մէկում իմ խնդրի շուրջ. ուրեմն նախանձն ընդհանուր է, նոյնիսկ հին սերնդի առաջաւորներն են ուղեցոյց:

Կարեւորն այն է, որ տաճիկ երաժշտարանը բացուելու է, եւ կայ նոյնպէս երաժշտական բաժին: Ճէմէլ փաշան է հարցրել ինձ բացակայութեանս եւ խնդրել է գալս իրեն յայտնեն. Թուի, թէ ինձ եւս պաշտօն են առաջարկելու թէ ինչ, չեմ իմանում. մի բան լինելուն պէս կդրեմ քեզ:

Կառավարութիւնը միշտ պոչ է խաղացնում եւ նորէն անբարեհան է դէպի մեզ՝ հայերիս:

Թէ՛ Վիեննա եւ թէ՛ մանաւանդ Ֆիլիպպէ փառաւոր ընդունելութիւն գտայ՝ ամբողջ քաղաքը անխտիր ոտքի վերայ էր՝ ինձ պատուելու համար:

Շատ բարեւ «չեմ-չեմ»-ին եւ մեր սիրելի ընկերներին:
Համբոյրիւ՝ եմ

Կոմիտաս

34

Մեծապատիւ պ. Զօպանեան,

Եթէ Զեր ժամանակը կներէ, ուրբաթ՝ վաղն երեկոյեան
5-ին, Զեզի պէտք է այցելեմ:

Ողջունելով մնամ՝

Կոմիտաս Վարդապետ

35

Սիրոելի՛ Արշակ,

Երրորդ հեռագիրն առայ, կանչում են. այս քանի օրս
կելնեմ:

Պոլսի երաժշտական Քննիչ յանձնաժողովին ինչ որ
պէտք էր, գրեցի եւ տետրակն էլ դարձուցի իրանց: Ինչ
կվերաբերի իմ կազմած պատարագի արարողութեան,
ուղղակի անհնար է այնտեղի եկեղեցիներում գործածելու
համար, որովհետեւ խիստ բարդ է ըստ պահանջման
եղանակների խորհրդաւորութեան. ո՛չ մէկը կառավարել
կարող է իմ պատարագը, եթէ նոյնիսկ յարմար երգե-
ցողներ իսկ գտնելու լինեն: Կ. Պոլիսը եւ առհասարակ
Ասիան չէ տալիս թաւ եւ բամբ ճայներ, որոնք մեծ դեր են
խաղում բազմաձայնութեան մէջ. միւս կողմից իմ
պատարագը գրուած է 1-9 ճայնով, այնպէս որ այդքան
նուրբ դասակարգութիւն ճայների նոքա ըմբռնել, գտնել
ու գործադրել անկարող են. իսկ նոյնը, ես՝ ինքս, եռա-
ճայնի վերածելն անմտութիւն եմ համարում, որովհետեւ
խորհրդաւորութիւնը կվերանայ եւ տեղը կանցնէ միայն եւ
միայն ցամաք ու մերկ արուեստ, որ ո՛չ մի ժամանակ չեմ
ցանկանայ կատարել ու լսել: Այս է պատճառը, որ չեմ
առաջարկել իմ պատարագը, որ դեռ նոյնիսկ շատ լուրջ ու

մանրակրկիտ ուսումնասիրութեան է կարօտ, վերլուծութեան է կարօտ. ես չեմ շտապում: Միւս կողմից, ի՞նչ կասեն, երբ ես խայտառակեմ նոցա գրուածքը եւ տեղն իմն առաջարկեմ. չէ՞ որ կասեն դիտմամբ է ցեխը կոխել մերը, որպէսզի իր գրածին ընթացք տայ: Աստուած չանէ, այդ անողը չեմ: Նոցա համար նոյն արժէքն ունի թէ՛ իմ եւ թէ՛ մի տիրացուի կազմածը (վերջինս գուցէ աւելի արժէքաւոր լինի), որովհետեւ ո՛չ նորա պակասութեան եւ ո՛չ իմի առաւելութեան հասկացողութիւն ունեն:

Շատ սիրալիր բարեւներս Գեւոյին, Մանուէլեանին, Էդգարին եւ այլ հարցանողաց, եթէ տեսնես: Քոյդ անձ նուէր եւ սիրող՝

Կոմիտաս

36

Սիրելի՛ Արշակ բիծա,
Իրիկուն կուգամ ժամը 7-ին քեզի:
Այսօր Շահի լաճի կնունքն է, կարծեմ դուն եւս պիտի
ներկայ լինես եւ օղնես, որ գոնէ հօր պէս չլինի...
Ես, որպէս ըսի, չեմ լինելու եւ ուրախ եմ, որ բացա-
կայ եմ՝ իբր թէ:

Սիրով՝

Քոյդ Կոմիտաս

ՊԵՏՐՈՍԻՆ.

1904, 12 սեպտեմբեր, Սուրբ Էջմիածին

Մեծապատի՛ւ պլ. Պետրոս, Արդոյ բարեկամ,

Առաջիկայ շաբաթ օր, ամսիս 25 եւ 26 կիւրակէին, Գէորգեան ճեմարանի¹ եւ Վեհափառ Հայրապետի² տարեդարձն է. գուցէ Զեզ Հետաքրքրութիւն պատճառէ Մայր Աթոռի տօնական օրերը, ուստի յայտնում եմ Զեզ, որ ճեմարանի խումբն էլ կերգէ պատարագ (իմ գրածը) եւ երգեր: Եթէ յարմար կդատէք, ես այդ ժամանակ աւելի ազատ եմ, եկէ՛ք: Իսկ եթէ այդ օրերին չէք կարող գալ, այն ժամանակ այնպէս արէք, որ հինգաբթի, ուրբաթ, շաբաթ կամ կիւրակէ լինէք այստեղ, իհարկէ, եթէ գալու էք. այդ օրերին ես ազատ եմ եւ ճեմարանում պարապմունք չունեմ:

Յարգանացս ողջոյնները Զեզ: Զեր խոնարհ ծառայ՝

Կոմիտաս Վարդապետ

ՍԻՐԱՆՈՅՇԻՆ

1909, 1 փետրուար, Առւրբ Էջմիածին

Ազնի՛ւ բարեկամուհի,

Տիկին Սիրանուշ,

Բագուի տօնակատար Հանդիսարանն իր վարագոյրը փակեց¹: Ներեցէ՛ք, որ ես դուրսն սպասեցի եւ ներս չմտայ իմ բարեկամական զգացմունքներն արտայայտելու Զեզ Զեր տօնախմբութեան օրն իսկ: Ես չէի ցանկանում, որ այդ օրուան մի խմբուած, բազմալեզու հասարակութեան թալախուն ու զեղուն զգացումների բուռն ծովի մէջ կորչէր, անցնէր անհետ եւ իմ սրտիս խորքից ժայթքող եւ գրչիս միջոցաւ Զեզ հասնող հնչիւն արձագանքների վճիռ ալեակները:

Ինչպէ՞ս արտայայտեմ սրտիս անզուսապ խնդակցութիւնը Զեզ, որ արիաբար անցաք Հայ բեմի խաւարչտին ասպարէզով եւ 35 երկար ու ձիգ տարի շիտակ ճանապարհ յորդեցիք: Դուք 35 տարի անդադար գեղարուեստի մուրճը ձեռին, անվեհեր կուեցիք, կոփեցիք, ամեն խոչ եւ խութ ոչնչացրիք, Զեր տոկուն կամքի թափով արծուի պէս սլացաք հասարակութեան հորիզոնից վեր, շատ վեր, թագաւորեցիք սրտերի եւ մտքերի վերայ. ապա հզօրեղապէս ձգեցիք, տարաք եւ Զեզ հետ, բարձր, հանեցիք դէպի ազնիւ գեղարուեստի կանաչազգեստ ու կենսունակ ըլուրն ի վեր հասարակութեանն էլ: Այստեղ ցոյց տուիք նորան Զեր ստեղծած հրաշալիքները՝ կեանքի մի շարք, պայծառ ու խաւար, ազնիւ ու կոպիտ... կենդանի տիպեր, արձանագրեցիք նորա սրտի ու հոգու խորունկ աշխարհներում. պատկերներ ու նկարներ արձանացուցիք, որոնք չեն թոշնում բնութեան ո՛չ մի արհաւիրքից, որոնք շեշտակի թափանցում են՝ մէկ սրտից միւսն օղակելով, մէկ հոգուց միւսը շղթայելով:

Ի՞նչ աւելի դժուար բան կայ, քան սրտեր ու հոգիներ տաշելը եւ այն՝ այնպիսի միջավայրում, ուր գեղարուեստը դեռ հաւասար է ժամանցի: Բայց Դուք ժրաշան մեղուի պէս 35 տարի շարունակ թռաք մէկ բեմից միւսը եւ գեղարուեստի մարգերից, բազմապիսի ծաղիկներից հաւաքեցիք առատ հիւթ, որպէսզի հայ բեմի փեթակը լցնելու օժանդակէք:

Զեզ հետ եւ առաջ ճանապարհ ընկան շատելը, բայց ոմանք հողմավար եղան, ոմանք չնչասպառ, ոմանք յետ դարձան, ոմանց յուսաբեկ արին, ոմանց անդործութեան մատնեցին, ոմանց դէմ դաւեր լարեցին...

Դուք կարողացաք ճեղքել ամեն արգելք եւ առաջ ար-

շաւել, արշաւեցիք 35 տարի. է՛լ առաջ, մի՛շտ առաջ՝ անվհատ ու հաստատուն ուղիով, որ բացիք:

Այժմ որքա՞ն յստակ ու հանգիստ է Զեր սիրտը, Զեր հոգին, որ 35 տարի երկար աշխատելուց յետոյ հանդչում է մարդկանց սրտերի ու հոգիների վերայ Զեր իսկ կառուցած գեղարուեստի անսասան ու մշտակենդան ապարանքների մէջ:

Սրտանց շնորհաւորում եմ Զեր փառքը եւ ցանկանում եմ է՛լ աւելի փառաւորութիւն ու կանաչ, պայծառ արեւ:

Յարգանացս ողջոյնները Զեր շնորհասուն դստեր Աստղեկին²:

Զեր միշտ անձնուէր բարեկամ՝

Կոմիտաս Վարդապետ

ՄԵՍՐՈՊ ՍՄԲԱՏԵԱՆԻՆ

1 1894, 6 փետրուար, Ա. Էֆմիածին

Արժանապատիւ Արհիապատիւ Սրբազան

Հօրն Մեսրոպայ Արքեպիսկոպոսի Հոգեւոր

ծնողին իմոյ ի Քրիստոս

Որդիական խոնարհութիւն

Զհրաման պատուիրանի, ընդ ձեռն Արժանապատիւ

Ղեւոնդ վարդապետի եւ ի բան բերանոյն, ընկալայ

զ Զերոյն Բարձու Սրբազնութեան, յուրախութիւն եւ ի

խինդ. արդ ի յօժար կամս ի կատար ածի գերկեան աւուրս՝

յառաւօտու, քննեալ զտիրացուն եւ տեսեալ զթերու-

թիւնսն, որ յարուեստի երաժշտութեան՝ յեկեղեցական

Զայնագրութեան Հայոցս, գամ յայտ առնել ի լուր Զերդ

Բարձր Սրբազնութեան, եթէ՝ գիտութիւնն յարուեստիդ

եւեթ զիսառնաշփոթութեան բերէ զնմանութիւն, զորս
յուղութիւն ածելոյ նախ, յառնուազն ժամանակ սահմա-
նեալ, պէտք են, թերեւս, ընթացք յամ մի, զի կարող իցէն
յանսայթաք եւ յանշեղ գիտութիւն երգել եւ ի ձայն առ-
նել, առհասարակ, զյամբայի գիտութիւնն զգեղարու-
եստիդ ի կիր արկանել, յեկեղեցական եղանակս վարժելոյ
եւեթ յաղագս: Իսկ յընթացս երկուց ամսոց զբաւիմ
ընաւիմք գուցէ եւ զթերիսն յուղութիւն ածեալ, ուր թէ
զնել եւ զհիմն ի նորոյ եւ ի կարճ ժամանակի ի դերեւ,
ելանին յանօգուտս ե՛ւ ջանք, ե՛ւ վաստակք, ե՛ւ ժամա-
նակն օճան գոլոյս եւ ուսանելոյն, որ վասն զի վեր ասա-
ցելովքս, զորոց զայս:

Ամենախոնարհ ծառայ եւ որդի Հոգեւոր Հօրդ ի Քրիս-
տոս

Կոմիտաս Վարդապետ

2

1895, 6 յունիս, Ս. Էջմիածին

Ամենապատիւ Սրբազն Հայր,

Գերապատիւ Տէր,

Եթէ կարելի է, խոնարհաբար խնդրում եմ, թոյլա-
տրեցէ՞ք ինձ ճեմարանի աշակերտների հետ գնալ Անին
տեսնել, որն եւ միեւնոյն ժամանակ ինձ համար կլինի ամառ-
նային օդափոխութեան միջոց. ճեմարանի վարչութիւնը
ամառն այստեղ մնացող աշակերտաց երկու խմբի բաժանեց,
որոնցից մէկի առաջնորդողը ես պէտք է լինեմ: Ուստի
խնդրեմ Ձեր Բարձր Սրբազնութեան տնօրէնութիւնը:

Զերդ Ամենապատութեան

Ամենախոնարհ որդի եւ ծառայ՝

Կոմիտաս Վարդապետ

ՄԱՐԻՆԱ. ՍՏԱՄՊՈԼՅԵԱՆԻՆ

1912, 28/15 Հոկտեմբեր, Կ. Պոլիս

Շնորհալի աշակերտուհի Մարինա Ստամպոլյեանին.

Ողջո՞յն Ձեր նոր կեանքին:

Անվեհեր յառաջ համեստօրէն՝ իբր շուշան հովտաց,

Ազնւօրէն՝ իբր վարդ բուրաստաններու

եւ փայլակն՝ իբր զըտուած ոսկի:

Ողջո՞յն Ձեր նոր կեանքին:

Ձեր յոյսերը բեղուն՝ որպէս գարուն,

Ձեր ջանքերը վառ՝ որպէս ամառ,

Ձեր գործերը զեղուն՝ որպէս աշուն,

Ապա հանգիստ լեր՝ որպէս ձմեռ,

Որ նոր գարնան դուռ կըբանայ:

Ողջո՞յն Ձեր նոր կեանքին:

Կոմիտաս

ԿԻՒՐԵՂ ՄՐԱՊԵԱՆԻՆ

1894, 5 յուլիս, Ա. Էջմիածին

Բարձրապատիւ Հօրն Կիւրոի,

Փոխթեմակալին Երեւանայ.

Եթէ հնար ինչ իցէ խնդրի, զ կարապետն Տէր Աստուածատրեան Ասկարեանց ի Վաղարշապատ գեղջէ, նշանակել ի հրաման Ձերդ Բարձրապատութեան ի միում դպրոցաց Հայոց ծխականաց թեմիդ՝ տալով զուսուցչութիւն երգեցութեան Հայոց զպաշտօն նմա. զի նա՝ կարապետն,

ուսեալ է յինչն 1/2 լիր զբովանդակն գեղարուեստիւ զվերոյիշելոյս անթերի, եւ իմ տուեալ է արդէն զվկայականն, որ վասն ուսեալ գոլոյն յինչն:

Ի նոյն իսկ ի վկայական կարէք ճանաչիլ զյառաջադիմութեան նորա զչափ:

Մնամ խ<ոնարհ>ծ<առայ> եւ որդի բարձրապատութեանդ՝

Սողոմոն

ՎԱՐԻԿՕ ՎՐԱՑԵԱՆԻՆ

1

1910, 18 օգոստոս

Արգոյ օրիորդ Վառիկօ,

Հեռուից նկարել տուի Լեւոն Երամեանին¹ Ձեր պատկերը տեսէք, հաւանո՞ւմ էք, արդեօք նմա՞ն էք այս պատկերին: Ամսիս 20-ին հայրենիքիցս ելնում եմ²:

Շատ բարեւ բոլորին՝

Կոմիտաս

2

1911, 3 օգոստոս, Shanklin

Արգոյ օրիորդ Վառիկօ Վրացեան,

Շատ բարեւներս Ձեզ, տիկնոջ, նիկոլին եւ Անահտիկին (քիժս եմ ուզում) եւ մեր խմբի բոլոր անդամներին՝ Անդրայի Ուայտ¹ կղզուց՝ Շխնքլին քաղաքից: Շուտով կանցնեմ Փարիզ, Բերլին, Վիեննա եւ Կ.Պոլիս:

Յարգանօք՝

Կոմիտաս

ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆԻՆ

1 1909,12 փետրուար (30 յունուար) U. Էջմիածին

ԳԵՐԱՉՆՈՌԻ Հ. ՂԵԼՈՆԴ ՏԱՅԵԱՆԻՆ,

ԶԵՐ ՀԵՄԱՔՐՔՐՈՒԹԵԱՄԲ ՊԵՂՈՒՆ ՆԱՄԱԿԻՆ պատասխանում եմ անմիջապէս:

Յիրաւի գարնան վերջին մեկնելու եմ Կ. Պոլիս եւ ապա Երուսաղէմ ու Եգիպտոս՝ երաժշտական ուսումնասիրութիւններ անելու նպատակով։ Շատ ցաւում եմ, որ ԶԵՐ սիրած գեղարուեստից ուսումնատենչութեանն անձամբ գոհացում տալու պատիւը չպիտի կարողանամ ունենալ այս անգամին։

Յուսամ, թէ ուրիշ անգամ նորից այցելել պիտի կարողանամ ԶԵՐ Պատուական Միաբանութեան, որ մի շարք շատ մտերիմ տպաւորութիւններ է թողել վերաս եւ անջնջ դրոշ մել սրտիս մէջ¹. եւ այն ժամանակ ԶԵՐ Հետ կիսուենք ԶԵՐ ցանկացած բոլոր հարցերի մասին մանրամասնօրէն։

Իմ ուսումնասիրութիւններից լոյս են տեսել դեռ միայն Հատուածներ եւ են՝

ա. Շար Ակնայ հայ ժողովրդական եղգերի (25 երգ,

1895. U. Էջմիածին, հայ ճայնանիշներով):

բ. Հազար ու մի խաղ, Ա յիսնեակ. 1904. U. Էջմիածին։

գ. Հազար ու մի խաղ, Բ յիսնեակ. 1905. U. Էջմիածին։ (Այս եւ նախընթացը պատրաստել ենք պ. Մանուկ Աբեղեանի Հետ)։

դ. Melodies Kurdes 13 երգ. Moscow. Imp. Ect. Jerrgenson.

ե. La lyre arménienne. Recueil des chansons rustiques, Paris, Roder («Հայ քնար» Հաւաքածու գեղջուկ եղգերի. Փարիզ)։

զ. Das Interpunctionssystem der Armenier. Sammelbände der

է. Armeniens volkstümliche Reigentänze (Zeitschrift für Armenische Philologie 1901, I., B. H.).

լ. La Musique rustique arménienne. Mercure musical et bulletin français. p. 472-490:

թ. Զանագան յօդուածներ 1904 եւ 1907 թուերի «Արարատ»ների մէջ:

Ժ. Զանագան հատ-հատ երգեր այս ու այն թերթերի կամ ժողովածուների մէջ:

Հայկական պատարագն ունեմ 7 տեսակ՝ բազմաձայն դաշնակած, բայց չէ տպուած:

Ի մօտոյ տպուելու է ժողովրդական երգերի ժողովածուների շարը, որ անշուշտ կուղարկեմ Զեղ լոյս տեսնելուն պէս:

Անչափ շնորհակալ լինելով Զեր քաջալերիչ եւ սրտաբուղիս խօսքերի համար եւ մաղթելով կատարեալ յաջողութիւն Զեր սիրած ուսումնասիրութիւններին՝ խնդրում եմ, բարի եղէք Զեր սրբակրօն Միաբանութեան Հայրերին իմ սրտագին ողջոյնս հաղորդելու:

Միշտ յարգանօք եւ պատրաստ իւ <ոնարհ> ծ<առայ>

Կոմիտաս Վարդապետ Միաբան Վանուցն Ս. Էջմիածնի

2 1909, 12 յունիս, Ս. Էջմիածնին

Գերաշնո՞րհ Տէր Ղեւոնդ Վարդապետ Տայեան,
Սրտի անհուն բերկրութեամբ կարդացի Զեր հոգեցեղուն նամակը: Զկարողացայ անմիջապէս պատասխանել. նախ՝ բացակայ էի Ս. Էջմիածնից՝ կանչել էին Տփխիս՝

Հայկական համերգները վարելու. մէկն՝ ի ներկայութեան Փոխարքայի¹, որ յատկապէս եկած էր իմ եւ խմբի հայ ժողովադական երգերը լսելու, իր ամբողջ շքախմբով, յօգուտ հայոց Կովկասի Բարեգործական Ընկերութեան եւ երկրորդը՝ Արքունի թատրոնում² միջազգային եկեղեցական երաժշտութեան համերգի հայ բաժինը ղեկավարելու, յօգուտ ոռուս վերջին պատերազմների ժամանակ ընկած զինուորների չքաւոր ընտանեաց. Երկումն էլ յաջող եւ գովական անցան, մանաւանդ երկրորդի մէջ՝ մրցման հանդէսից նախապատիւ եղաւ հայ խումբը՝ բաղկացած ներսիսեան հոգեւոր Դպրանոցի սաներից՝ թուով մօտ 80 հոգի: Փոխարքան ինձ իր առանձին ուշադրութեան արժանացուց. կանչեց իր մօտ, ծանօթացուց իր Կոմսուհու հետ, եւ խօսակցեցանք. 20 ըովէ հայ երաժշտութեան եւ իմ կենսագրականի մասին հարց ու փորձ արաւ: Երբ վերադարձայ Ա. Էջմիածին, սեղանիս վրայ գտայ Ձեր պատուական նամակը: Երկրորդ՝ Ձեր խնդիրները թերի թողած ըլինելու համար, լուսանկարս պատուիրեցի՝ ի Բագու, այն էլ ուշացաւ. վերջապէս երեկի թղթաբերով ստացայ եւ շտապում եմ պատասխանն ու Ձեր ուզածները ղրկելու անթերի³:

Սրտագին շնորհակալութիւնս, եղբա՛յր պատուական, Ձեր անկեղծ եւ սիրալիր զգացմանց համար. Ձեր խրախոյսներն ինձ եռանդ են ներշնչում եւ ոգեւորութիւն առթում. մի բան, որ այնքան քիչ են հասկանում եւ գնահատում մեզանում: Անհատը որքան էլ ջանասէր լինի, այնուամենայնիւ, խրախոյսը մի հզօր խթան է, որ կարող է շրջել սարեր հիմն ի վեր:

Նորից ներողութիւն խնդրելով նամակիս ուշանալուն համար եւ շնորհակալութիւններս յայտնելով կրկնապէս՝

ցանկանում եմ Զեզ քաջողջութիւն եւ յաջողութիւն Զեր
սուրբ պարտականութիւնների համար:

Յարդանացս ողջոյնները վանական Եղբայրութեանդ
եւ Զեզ:

Յարդանքներով՝ խ<ոնարհ> ծ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆԻՆ

<1906>, 18 յուլիս, Բերլին

Սիրելի՛ Հ. Մեսրոպ,

Այսօր ստացայ պաշտօնական գիրդ, անմիջապէս պատասխանում եմ:

Ես արդէն դեռ անցեալ տարուան վերջում հրաժարուեցայ ճեմարանի ուսուցչութիւնից, որովհետեւ նեարդային սաստիկ տկարութիւն ստացայ, որով ցայսօր էլ տառապում եմ: Եթէ երգերիս եւ երկերիս տպագրութիւնը եւ իմ նիւթական ապրուստի հոգսը չլինէր, արդէն քաշուած կլինէի իմ խցիկի մէջ եւ, եթէ թողնէին հանգիստ, ինձ համար կաշխատէի, գիտեցածներս լոյս կհանէի:

Այսպէս որ ինձ, այլեւս, իբր ուսուցիչ ճեմարանի, չսպասեն, եւ ո՛չ մի անգամ, որ բացի տկարութիւնից, ուրիշ շահ չբերաւ ինձ համար:

Զարմանում եմ քեզ վրայ, թէ ինչպէ՞ս ես յանձն առել տեսչութիւն այս խառնակ օրերում:

Մնամ կարօտալի ողջունիւ՝

քո Կոմիտաս

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆԻՆ

22 յունուար, Ա. Էջմիածին

Սիրելի՝ Նիկողայոս Տիգրանեան,

Սիրականը¹ Թիֆլիզից դառնալուն պէս յիշեցրեց խոստումս, որ իմ աշխատութիւնները քեզ ուղարկեմ: Զկարծես, թէ ես մոռացել էի, այլ սպասում էի արտատպութեան, ուստի այսքան ուշացաւ. անցեալ օրը մէկն ստացայ, միւսը ո՛չ. այլեւս չհամբերելով, հէնց ժողովածուի միջից պոկեցի եւ ուղարկում եմ քեզ այս երկուսը՝ ա) Interpunctionssystem der Armenier եւ բ) Armeniens volkstümliche Reigentänze. Երկրորդը մի փոքրիկ քաղուածք է այն մեծ աշխատութեանս, որ եկող տարի լոյս կտեսնէ. իմ ուղածի պէս չեղաւ տպուածը, ուստի մի քանի մանրմունք սխալներ են սպրդել որ ինքդ էլ կարող ես նկատել, վերջապէս աւելին չէի կարող սպասել մի գերմանացուց, որ հայոց լեզուն չի՝ իմանում եւ մեր պարերի մասին հասկացողութիւն անգամ չունի: Ես պատկերներ էլ տպել էի տուել, որպէսզի վերջը գետեղած երգերի օրինակներն աւելի եւս դիւրըմբոնելի լինեն օտարների համար. ինչ որ է, այդպէս է եղել: Իմ նպատակն էր միայն մի թեթեւ ակնարկ ձգել տալ օտարներին մեր եղանակների նկատմամբ, որոնց երաժշտական կազմութիւնն ու տաղաչափութիւնը դեռ շատ բան կարող է ուսուցանել նոցա: Իմ ընտրած օրինակները մասսամբ զուտ ժողովրդական, մասամբ էլ աշուղական ձեւով կազմած եւ ապա ժողովականացած են. ինչ երկարաբանեմ, դու ինքդ էլ ես շատ լաւ իմանում այդ:

Միւս աշխատութիւններս դեռ չեն լոյս տեսել, նոքա էլ

կստանաս ժամանակին: Այժմ պատրաստ է տպագրութեան եւ կտպուի Փարիզում «Հայոց եկեղեցական ութն ձայն եղանակները, նոցա դարձուածքները եւ ստեղիները»: Իսկ մեր երաժշտական ընկերութեան ժողովածուների մէջ լոյս պէտք է տեսնեն (քեզ արդէն պատմել եմ) հայոց ժողովրդական երգեցողութիւնը, արտասանութիւնը (երգեցողութեան Intonation), տաղաչափութիւնը եւ ժողովրդական եղանակների հիմքը որտեղիցն է: Նոր մշակում եմ հայոց ժողովրդական հին եւ արդի դիւցազներգութիւնը եւ եկեղեցական խազերի պատմութիւնը (այսինքն Neumengeschichte, die Bedeutung):

Ճեմարանի դասերը շատ են խանգարում պարապմունքներս: Այս ամառ մտադիր եմ շրջել՝ գիւղերում եւ ստուգել վերջին անգամ ժողովրդական երգերի եղանակները եւ տպագրել տալ մաս-մաս:

Դու ի՞նչ ես անում, պարսկերէն նոր եղանակներ գրե՞լ ես, նոր բան հրատարակե՞լ ես. անշուշտ շատ բան պատրաստում ես. ես, որ քեզ եմ ճանաչում, դադար մնացող չես: Ծանօթներիս եւ հարցանողաց ողջունիր իմ կողմից: Քեզ քաջողջութիւն եւ եռանդիդ անպակասութիւն է մաղթում

ՔՊ Կոմիտաս Վարդապետ

ՍԻՐԱԿԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻՆ

25 (6) նոյեմբեր (դեկտեմբեր), Բերլին

Յարգելի՝ պ. Սիրական Տիգրանեանց,

Այսօր ուրախութեամբ ստացայ Զեր ուղարկած Զեր եղբօր երաժշտական աշխատութիւններից մի քանիսը: Զեր

ցանկութեան համաձայն, մի-մի օրինակն ինձ վերապահելով՝ մնացեալները մատուցի ծանօթ ուսուցչապետներին, որոնց կողմից շնորհակալութիւն եւ գոհունակութիւն յայտնելու պարտաւորուած եմ:

Հայկական երաժշտական հորիզոնն այնքան նեղ ու սահմանափակ է, որ մեծ հետաքրքրութեամբ եւ ուրախութեամբ եմ տեսնում եւրոպական ձայնանիշներով տպուած հայկական եղանակները, նա՛մանաւանդ մեր ժողովրդի սրտի արտադրած բազմապիսի զգացմունքները, որոնք շատ աւելի են յափշտակում իմ ուշքն ու միտքը՝ պարզ, բնական, անպաճոյն ոճով եւ երաժշտական խորն բովանդակութեամբ, որն եւ մեր ազգի աննախանձելի դրութեան բացատրութիւնն է:

Սրտանց յառաջադիմութիւն եմ ցանկանում Ձեր եղբօր բոնած՝ դիրքին՝ ժողովրդական անգին եղանակների գանձարանը օտարների ուշադրութեան յանձնելով։ Ողջունեցէք իմ կողմից, եթէ նամակ գրելու լինէք։

Պ. Եւանգուեանցին¹ շատ բարեւ ինձնից եւ տիկին եւ օրիորդ Strauss-ներին՝ տանտիկնոջս կողմից։

Զեղ սրտանց ողջունող՝

Կոմիտաս Վարդապետ

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

1

1911, 21 օգոստոս

St. Malo, Villa Franc-Val

Զմբկ Թորոս ըիծա,

Շատ ես իք եղել հա. Փարիզից գնացել, ընկել ես Քիշնեւի¹ շնատների մէջ. օխհա՛յ, շատ լաւ է եղել. կե-

բա՞ր... ես, ինչպէս տեսնում ես, Համբարձումի մօտ եմ՝ հիւր, վաղը կերթամ Փարիզ, Բերլին, Վիեննա եւ ապա Կ. Պոլիս:

Նատ բարեւներ քեզ՝ քաջալութեանդ:

Քոյդ Կոմիտաս

2 1912, 22 մարտ, Կ. Պոլիս Pangaltı, N 83 (47)

Սիրելի՛ Տիրայր,

Պրուսային եկել էր Տէր Մատթէոս քահանայ Հեքիմեանը՝ մեր ճեմարանական պէլէճիկցի ընկերը (անշուշտ յիշում ես) եւ թախանձանքով խնդրում էր, որ եթէ Բեսարաբիոյ թեմի մէջ քահանայի բաց տեղ կայ, իրան հովւութեան պաշտօնով տեղափոխենք. տեղական քահանաները նախանձու են եւ հանգիստ չեն տալիս իրան. ինքն էլ Յ հոգինոց ընտանիք է կազմել, ինքը, տիրուհին եւ որդին՝ Ստեփանը, որ պետական դպրոցում ուսանում է. արդէն 19 տարեկան է եւ շատ լաւ տղայ է, ընդունակ եւ չնորհքով։ Արդ, ես էլ ասացի, որ դժուար թէ յաջողուի, զի ուսահպատակութեան խնդիր կայ. այնուամենայնիւ նորան միամտացնելու համար քեզ գըռում եմ. եթէ հնար է եւ տեղ ունէք, կանչեցէք, շատ լաւ քահանայ է եւ շատ օգտակար կարող է լինել ժողովրդին, այստեղ եկամուտներն այնքան ոչինչ են, որ մարդիկ հազիւ հացի փող են ճարում։ Խնդրեմ, անմիջապէս մի կերպով իմաց արա ինձ, որ միամտացնեմ խեղճին։

Սրբազանի Ա. Աջը կհամբուրեմ եւ քու, պաշիկներ՝

Քոյդ Կոմիտաս

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ
ՓՈԽԱՆՈՐԴԱՐԱՆԻՆ

1913, 27 նոյեմբեր, Կ. Պոլիս

Փոխանորդարան Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլիս.

Պատուական փոխանորդարանիդ՝ համար 1512 գրութեան ունեմ «անմիջապէս» «պատասխանագրել»:

Եթէ պաշտօնական ինչ հանգամանք ունենայի՝ պէտք էր՝ Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Պատկառելի ժողովին յայտնի լինէր:

Կոմիտաս Վարդապետ

ՍԱՐԳԻՍ ՔԱՄԱԼԵԱՆԻՆ

1 <1901>, 10 յուլիս

Սիրելի՝ Քամալ բիծա,

Այսօր մեկնում եմ Ախեն, իսկ վաղը՝ Փարիզ։ Լայպցիգի ուսանողներն ինձ շատ լաւ ընդունեցին եւ երգով ճանապարհ դրին. յուսով եմ նոր «կլթական ժողովը»¹ գործում է արդէն։

Շատ ողջոյն բոլորին։



Կոմիտաս Վարդապետ

Քամալ բիծա՛ եւ Ներսէս սարկաւա՛գ,

Այսօր երեկոյեան կամ վաղն առաւօտեան մեկնելու եմ
Փարիզ: Այստեղից էլ կդրեմ: Շատ բարեւ մօտս նստած
սիրունիկ օրիորդից, թող ինքը վկայէ:

<Կոմիտաս>

Յանձնաւ մասնաւուն աշխատավոր աշխատավոր աշխատավոր
<1901>, 14 յուլիս, Փարիզ

Սիրելի՛ Սարգիս,

Վերջապէս Փարիզ էլ հասայ, վաղն այցելելու եմ երաժիշտներին¹ Մեծ հանդէս կայ այսօր երեկոյեան այստեղ, Փրանսացոց ազգային տօնն է, քէֆ եմ անելու եւ քո, որպէս եւ այլոց, կենաց կոնծելու:

Ողջոյն բոլորին՝

Կ. Վ.

4 <1901>, 17 յուլիս, Փարիզ

Սիրելի՛ Սարգիս,

Արդէն ծանօթներիս տեսայ. այս կիւրակէ օրը եկեղեցում պէտք է երգեմ: Այստեղի կեանքը բոլորովին տալբեր է Բերլինի կեանքից:

Ողջունի՛ր բոլոր ուսանող եւ ուսանողուհի ընկերներին:

Ք. Վ. Կ. Վ.

5

<1901, 23 յուլիս>

Սիրելի՝ Սարգիս Քամալեան,

Կիւրակէ Ս. պատարագին երգեցի, այս կիւրակէ էլ պատարագելու եմ եւ քարոզելու. յուսով եմ, առողջ էք դու եւ մեր սարկաւագ Ներսէսը. ողջոյն հարցանողաց:

Շատ լաւ ընդունեցին ինձ տեղական երաժիշտները:

Ամեն օր մէկի մօտն եմ հրաւէր ստանում եւ քէֆ անում, ո՞ղջ լէր:

Հասցէս՝ Paris, Boulevard st. Michel, 31

Կոմիտաս Վարդապետ

6

<1902>, 1 յունիս

Սիրելի՝ Քաչալ,

Պատասխանդ ուշացաւ, բայց իմ համբերութիւնն էլ հատաւ. առ այժմ որոշեցի գոնէ մի երկուող գրեմ, որ բաներ չմտածես:

Վեհը կծիկն առել ու պոկ է եկել Ս. էջմիածնից եւ ճանապարհորդում է շրջակայ վանքերը. ուշացաւ, հնց որ գայ, կիսուեմ քո մասին եւ քեզ կդրեմ արդիւնքը:

Որքան ինձ յայտնի է եւ ուրիշց էլ տեղեկացայ՝ Բագուից եկեղեցիների փող չկայ ուսանողի համար: Մնացած դրամներն էլ կտակներ են միայն հոգեւորական կոչումն ունեցողի եւ Աստուածաբանութիւն սովորողի համար: Մեր տղաներից ո՞չ մէկն էլ խոյս չէ տուել մանկա վարժական գիտութիւններից եւ Աստուածաբանականին դիմել իրենց կամքով, այլ, որ կտակների տրամադրութիւնն է մղել նոցա. ոչ մի կտակ չկայ, որ կրօնական բո-

վանդակութիւն չունենայ, միայն մէկը կայ, որ չէ որոշել, թէ կուսակրօն միաբանը՝ սան ճեմարանի, ի՞նչ է ուսանելու, իսկ տեղն էլ որոշել է անպայման Ռուսաստանը: Կտակների վերայ այնքան յոյս չեմ կարող ունենալ յիշած պատճառների հիման վրայ, բայց գուցէ Վեհը համաձայնէ հրամայել, որ յայտնեն կամ գրեն Տիկին անպէտք բարերարութուղ, որ փողերն ուղարկէ. թէ չէ՛, չէնց որ փողի անուն ես տալի՝ չլսելու է տալիս:

Եղբօրդ մասին հոգ մի՛ անիր, դու գիտես, որ եթէ մի շատ անկարգ բան արած լինէր, ես աւելի մօտ եմ եւ աւելի շուտ ականջը կոլորեմ:

Քեզ գրած կլինի արգէն, որ դասարանը փոխեց:

Ես էլ բոլորովին դալկացել եմ. պէտք է հանգստութիւն, բայց գործերս ժամ չեն տալիս, որ պարապ մնամ:

Նորից քեզ միամտացնեմ, որ մինչեւ Վեհը տեղս չգայ, բան անել չէ՛ կարելի. Խորէն էֆենդին էլ ցետն է գնացել, թէ չէ՛ նորան մօտ եմ, գոնէ նորա ձեռքով Վեհին կյայտնէի դրութիւնդ. յոյս կայ, այս օրերս այստեղ երեւայ: Բայց լաւ կլինէր, որ դուն էլ մի փափուկ նամակ գրէիր, դրութիւնդ յայտնէիր, որովհետեւ ազդում է այդ Վեհի զգացման:

Եզնիկը Աւատրիա գնաց. Յուսիկը գնում է Հայրենիք, իսկ ես մի ամիս յետոյ ժողովրդական երգեր հաւաքելու հայ գիւղերը եւ ուխտերը կերթամ: Եկող տարի դուրս կգայ իմ ժողովրդական առաջին երգարանը¹:

Մի պարկ համբոյր եւ երկու բեռ ողջոյն քեզ, ծանօթիդ եւ անծանոթիդ:

Քո Կոմիտաս Վարդապետ

ՄԱՂԱՔԻԱ. ՕՐՄԱՆԵԱՆԻՆ

1 1902, 10 յունուար, Ս. Էջմիածին

Ամենապատի՛ւ Տէր, Բարձր Սրբազն Հայր,

Որդիական ակնածութեամբ խնդրում եմ Ձերդ Ամենապատութիւնից, որ հաճիք հրամայել ներփակեալ նամակը եւ քսան եւ հինգ ըռւբլի (25) դրամը (պետական դրամի վերածելով) Կուտինա՝ իմ հօրաքրոջ՝ Կիւլինէին առաքել տալ, որով ինձ մտատանջութիւնից ազատած կլինէք. Երկիցս առաքեցի փոստայով, սակայն տեղ չհասաւ. ուստի այս անգամ եւս վստահանալով՝ համարձակեցայ Ձերդ Ամենապատութեանը անհանգիստ անելու, վասնզի այլ ելք չգտայ:

Հայցելով Ձեր Հայրական օրհնութիւնը՝ ամենախոնարհաբար մերձենամ ի համբոյր Ս. Աջոյ Ձերդ Ամենապատութեան իւ<ոնարհ> ծ<առայ>

Կոմիտաս Վարդապետ

2 1902, 22 նոյեմբեր, Ս. Էջմիածին

Ամենապատի՛ւ Բարձր Սրբազն Հայր,
Խոնարհաբար խնդրում եմ հրամայէք ներփակեալ յիսուն (50) ըռւբլի թղթադրամն օսմանեան ոսկու վերածելով՝ առաքեն իմ աշազուրկ հօրաքրոյր Կիւլինէին կամ նորա որդի Գրիգորիկ Հաճի Յակոբեանին, որով մնամ միշտ երախտապարտ Ձերդ Բարձր Սրբազնութեան:
Ձերումդ Ամենապատութեան խոնարհ ծառայ եւ
որդի՝

Կոմիտաս Վարդապետ

Ամենապատիւ Սրբազն Հօր
Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոսի.
Բարձր Սրբազն Հայր,

Որդիական ակնածութեամբ խնդրում եմ ներփակ յիսուն ըուբլին հրամայէք ուղարկեն (պետական գրամի փոխելով) Կուտինա՝ իմ աչազուրկ Հօրաքրոջ՝ Կիւլինէ Սողոմոնեանին կամ նորա որդի Գրիգորիկ Հաճի Յակոբեանին:

Մերձենալով ի համբոյր Աջոյ Բարձր Սրբազնութեանդ՝ մնամ ամենախոնարհ եւ երախտապարտ որդի՝

Կոմիտաս Վարդապետ

Ամենապատիւ Բարձր Սրբազն Հայր,
Խոնարհաբար խնդրում եմ, եթէ հնար է, հրամայել հաճիք, ներփակ եօթանասուն ըուբլի թղթադրամը փոխանակեն պետականով եւ առաքելու նեղութիւնը յանձն առնեն Կուտինա՝ իմ աչազուրկ Հօրաքրոյր Կիւլինէին կամ նորա որդի Գրիգորիկ Հաճի Յակոբեան-Քարաօղանեանին:
Զերումդ Ամենապատիւ Բարձր Սրբազնութեան ամենախոնարհ ծառայ եւ որդի, միշտ երախտապարտ՝

Կոմիտաս Վարդապետ

1905, 18 նոյեմբեր, Ա. Էջմիածին

Ամենապատի՛ւ Բարձր Սրբազն Պատրիարք Հայր,
Խնդրեմ խոնարհաբար, հրամայել հաճիք ներփակ
հարիւր ըռւբլին (100 ր.) պետական դրամի վերածեն եւ
ուղարկեն Կուտինա, իմ կոյր հօրաքրոջ՝ Կիւլինէին կամ
նորա որդի Գրիգորիկ Քարաօղլանեան-Հաճի թակո-
բեանին:

Զերդ Ամենապատւութեան միշտ երախտապարտ որդի
եւ խոնարհ ծառայ՝

Կոմիտաս Վարդապետ

<1908, 26 յունուար, Ա. Էջմիածին>

Ամենապատի՛ւ Բարձր Սրբազն Հայր,
Ուղարկում եմ 60 մանէթ Ձեր անուան: Որդիական
խոնարութեամբ խնդրում եմ հրամայէք հասցնեն իմ կոյր
հօրաքրոջ՝ Կիւլինէին կամ իր որդի Գրիգորիկ Հաճի թակո-
բեան-Քարաօղլանեանին:

Մատչելով ի համբոյր Ձեր Ա. Աջին՝ մնամ իւ<անարհ>
ծ<առայ> եւ որդի՝

Կոմիտաս Վարդապետ

ԾԱՍՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթագրություններում օգտագործված են

Հետևյալ համառոտագրությունները.

Աջմ - Արշակ Չոպանյանի Փոնդ

ԲՀՄ - «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, թիվ 2

ԳԱԹ - Գրականության և արվեստի թանգարան

Գ. - Գործ

ԳԼԹ - Գարեգին Լևոնյանի Փոնդ

ԳԿԹ - Գևորգ Կարպիսյանի Փոնդ

ԹՂԹ. - Թղթապանակ

ԺԿՄ - «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960

ԽՍ - Խ. Սամվելյան, Կոմիտասի կյանքի և գործունեության

Համառոտ տարեգրությունը, «Սովետական արվեստ»

ԿԿԹ - Կարապետ Կոստանյանի Փոնդ

ԿԹ - Կոմիտասի Փոնդ

ՀՇԹ - Հովհաննես Թումանյանի Փոնդ

ՀՄԹ - Հովհաննես Մալխասյանի Փոնդ

ՄԱԹ - Մառի Աթմաճյանի Փոնդ

ՄԲԹ - Մինաս Բերբերյանի Փոնդ

ՄԹԹ - Մարիամ Թումանյանի Փոնդ

ՆՏԹ - Նիկողայոս Տիգրանյանի Փոնդ

ՊԲՀ - «Պատմաբանասիրական հանդես», 1958, թիվ 1

ՊՊԿԱ - Պատմության պետական կենտրոնական արխիվ

ՌԹԹ. - Ռուբեն Թերլեմեղյանի Փոնդ

ՍՄԹ - Սպիրիդոն Մելիքյանի Փոնդ

ՍՔԹ - Սարգիս Քամալյանի Փոնդ

ՍԹ - Սիրանույշի Փոնդ

Վալ. - Վավերագիր

ՎՄԹ - Վահան Մալեզյանի Փոնդ

ՎՄԹ - Վարդան Սարգսյանի Փոնդ

ց. - ցուցակ

Փ. - Փոնդ

ՍՏԵՓԱՆ ԱԿԱՅԵԱՆԻՆ (Էջ 16)

Տպագրվում է Թորոս Ազատյանի «Կոմիտաս Վարդապետ. իր կեանքն ու գործունէութիւնը» գրքից (1931թ., Կ. Պոլիս, էջ 114-115: Տես նաև ԽՍ, 1971, թիվ 9, էջ 53):

Ստեփան Ակայյան (1870-1937) – մանրանկարիչ, ճարտարապետ:

1. 1910 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կոմիտասն իր շուրջը համախմբելով պղոսահայ մտավորականության որոշ ներկայացուցիչների, նախագծել է ստեղծել երաժշտական միություն՝ մի «ուրույն կազմակերպություն» կամ հատուկ հանձնաժողով, որի նպատակն էր կազմակերպել մի շարք միջոցառումներ: Պետք է ստեղծվեր երաժշտանոց, կազմակերպվեին համերգներ՝ դասախոսությունների և հրատարակչական միջոցների շնորհիվ: Պետք է հիմնվեր երաժշտարան՝ երգի նվադի և թատերական ներկայացումների համար: Պետք է ստեղծվեին տպարան ու գրատուն՝ գրքերի ու նոտաների հրատարակության ու վաճառքի համար: Վերջապես, պետք է կազմվեին մեկ մշտական երգչախումբ և երկու նվադախումբ: Հանձնաժողովի կազմի մեջ է եղել նաև Ստեփան Ակայյանը (տես ԽՍ, 1971, թիվ 9, էջ 52):

2. ՔԵՐԹԷՆՔԵԼԻ – մողես. Կոմիտասի սիրած բառը, որով կոչել է իր մտերիմներին:

3. Պղոսահայ հասարակական գործիչներ, Կոմիտասի երկրպագուներ և աջակիցներ Աստվածատուր Հարենցը և Սիսակ Աշճյանը ևս ընդգրկված են եղել Կոմիտասի նախաձեռնած միության մեջ:

4. Կոմիտասը Ավետարանի «Որ համբերեսցէ իսպառ՝ նա կեցցէ» արտահայտությունը (Մատթ., Ժ, 22) կատակով ըըլասել: Տես՝ նաև Մ. Բաբայանին ուղղված 6-րդ նամակը:

ԱՇԱԿԵՐԾՆԵՐԻՆ (Էջ 16)

Տպագրվում են ըստ բնագրերի լուսապատճենների (ՎՍՖ, անմշակ): Գրված են խառը՝ արևմտահայերեն և արևելահայերեն:

1913թ. աշնանը վերադառնալով Կ.Պոլիս, Կոմիտասը մասնավոր երաժշտական դասեր է տվել բազմաթիվ սաների: Նրանցից հատկապես վեցը՝ Վարդան Սարգսյանը, Բարսեղ Կանաչյանը, Վաղարշակ Սրբանձտյանը, Հայկ Սեմերճյանը, Միհրան Թումաճանը և Արտաշես Ապաճյանը արժանացել են մեծ ուսուցչապետի ուշադրությանն ու գուրգուրանքին: Նշվածներին էլ հենց առաքված են սույն նամակները: Սակայն առաջին աշխարհամարտի և Մեծ եղեռնի պատճառով Կոմիտասի աշակերտները չեն կարողացել կատարելագործվելու համար Փարիզ մեկնել: Այդ հնարավորությունը նրանցից ոմանք ունեցել են 1919-1920թթ.:

1. 1914թ. հունիսի 1-ին Փարիզում բացվել է երաժշտական միջազգային ընկերության համաժողովը, որի ընթացքում Կոմիտասը դասախոսություններով և համերգով հանդես է եկել: Ինչպես Հիշել է Փ. Թերլեմեզյանը. «Երաժշտության այդտեղ հավաքված համաշխարհային կորիֆեյները հոտնկայս օվացիա էին սարքել Կոմիտասին և պահանջել, որ Կոմիտասի բոլոր գործերը հրատարակվեն» (ԺԿՄ, էջ 195):

2. Մասնավոր երաժշտական դպրոց Փարիզում, որի վարիչն է եղել երաժշտագետ Վենսան դ'Էնտին (մահ. 1931): Այդ դպրոցում է սովորել նաև Ա. Շահմուրադյանը:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԾԱՌՈՒՆՈՒԽԻՆ (էջ 18)

Տպագրվում է ըստ սևագիր բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1: Տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 60):

Հովհաննես Արշարունի (Խսթանպուլցի) – եկեղեցական գործիչ, Կ.Պոլսո Հայոց պատրիարքական տեղապահ, ապա պատրիարք (1912-1913):

Առաջ 1. 1908թ. դեկտեմբերին Կոմիտասը Կ.Պոլսի պատրիարք Մատթեոս արք. Իզմիրլյանից ստացել է Ազգային կենտրոնական վարչության կրոնական ժողովի հանձնարարգիրը: որով ինդըրել են նրան իր սրբագրած Պատարագի երգեցողությունից մեկ օրինակ շտապ ուղարկել Կ.Պոլսի, պատրիարքի ազգեցության տակ եղած վայրերում կատարելու համար (տես ԿՅ, 8: ԽՍ, 1970, թիվ 6, էջ 57): Այս կապակցությամբ տես նաև

աստ, Մ. Իզմիրլյանին գրած թիվ 1 նամակը:

2. Հայտնի է, որ խազերը վերծանելու գործում Կոմիտասի՝ 1894-ից սկսած աշխատանքները հաջողությամբ են պահպել: Յավոք, նրա ուսումնասիրությունները, որոնք, իր իսկ վկայությամբ, մի քանի հատոր են կազմել, մեզ չեն հասել:

3. Կեսարիոյ առաջնորդ Տրդատ եպ. Պալյանը (1850-1923) իր վիճակի Մ. Դանիել վանքի գրադարանում գտել է մի երաժշտական ձեռագիր դասագիրք, որի նկարագրությունը տպագրել է «Հանդես ամսօրեայի» 1895 թ. մարտի և ապրիլի համար-ներում (տես նաև «Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին», նկարագրեց Տրդատ եպ. Պալեան, կազմեց՝ Գէորգ Տէր-Վարդաննեան, Երևան, 2002, էջ 43-48): Կոմիտասը բազմիցս դիմել է Տրդատ Պալյանին՝ ձեռագիրը կամ ընդօրինակությունը ուղարկել իրեն՝ օգտագործելու իր խազարանական ուսումնասիրության համար: Սակայն այդ ձեռագիրը նրան չի ուղարկվել: Ապարդյուն են անցել նաև այդ կապակցությամբ նրա 14 տարիների ընթացքում կատարած դիմումները մի շարք հոգեսոր հայրերի (տես աստ Բարեկեն վարդապետին և Մատթեոս Իզմիրլյանին ուղարկած նամակները):

ԱՆԴՐՈՒԻԾ ԲԱԲԱՄՄԵԱՆԻՆ (էջ 20)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 2: Տես ԽՍ, 1971, թիվ 2, էջ 53): Նամակը գրված է Կոմիտային բացիկի վրա:

Անդրուշ Բաբամյան – Կոմիտասի Վաղարշապատի բարեկամներից:

ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԵԱՆԻՆ

1 (էջ 20)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1339): Այս և հայորդ նամակների մեծ մասը հատվածաբար հրապարակվել է Մարգարիտ Բաբայանի «Կոմիտաս վարդապետ իր նամակների միջով» հոդվածում («Մշակոյթ», Փարիզ, 1935, թիվ 3-4, էջ 153-165: Տես նաև ԺԿՄ, էջ 114-129: ԽՍ, 1970, թիվ 1, էջ 62):

Մարգարիտ Բաբայան (1874-1968) – երգչուհի, մանկավարժ, համերգային լայն գործունեություն է ծավալել ելլուսա-

յում՝ հնչեցնելով և պրոպագանդելով հայ երաժշտությունը։ Փարիզում հիմնադրել է վոկալի դպրոց։ Ֆրանսիական մամուլում հրատարակած երաժշտական հոդվածներով մեծապես նպաստել է հայ երաժշտության համաշխարհային ճանաչմանը։ Եղել է Կոմիտասի մերձավորագորույն բարեկամներից, նրան քաջալերող և անաչառ խորհրդատուն ու քննադատը։ Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի եռանդուն դեկավարներից և կազմակերպիչներից։ Կորստից փրկել և Հայաստան է ուղարկել Կոմիտասի մի շարք ձեռագրեր, հրատարակել նրա որոշ գործեր։

1. Պիեռ Օբրի (1874-1910) – ֆրանսիացի երաժշտագետ, Միջազգային երաժշտական ընկերության անդամ։ Եղել է Այսրկովկասում և երկար ժամանակ ապրել Էջմիածնում։ Զբաղվել է հայ միջնադարյան երաժշտության ոսումնասիրմամբ։ Կոմիտասին առաջարկել է կազմել հայ ժողովրդական երգերի ժողովածու՝ բաղկացած 100 երգից։ Կոմիտասը հաճույքով հանձն է առել, սակայն այս նախաձեռնությունը հետագայում խափանվել է։ Կոմիտասի՝ Օբրիի առաջարկած պայմաններին չհամաձայնելու հետևանքով։ Օբրիի խոսքը Կոմիտասի մասին տես Խ. Սաֆարյան, Կոմիտաս սքանչելագործ, Եր., 1999, էջ 339։

2. Ալեքսանդր Մանթաշյան (1849-1911) – նաև վթարդյունաբերող, մեծահարուստ, բարերար։ Ստանձնել է Կոմիտասի Բեռլինում ուսանելու ծախսերը։ 1907թ. Կոմիտասին նվիրել է ույալ։

3. Մ. Բաբայանի հայրը՝ Ավետիք Բաբայան (1844-1913)-ը ժիշկ, հոգեբան, հասարակական գործիչ։ Մայրը՝ Սոֆյա Բաբայան (1855-1940)-ը լրթական գործիչ (մանրամասն տես աստ, նրան ուղղված Կոմիտասի նամակի ծան.)։ Քույրերը. Արմենուհի (Արմինա) Բաբայան (Քարբոնել. 1876-1971)-ն կարչուհի։ Շուշիկ Բաբայան (1879-1952)-դաշնակահարուհի, հանդես է եկել հատկապես հայկական դաշնամուրային երկերի և Կոմիտասի ստեղծագործությունների կատարումներով։

2 (էջ 21)

Տպագրվում է ըստ Մ. Բաբայանի «Կոմիտաս վարդապետ

իր նամակների միջով» գրության («Մշակոյթ», Փարիզ, 1935, տես նաև ԺԿՄ, էջ 116-117):

1. 1906 թ. մարտի 21-25-ին Կոմիտասն իր աշխատությունները տպագրելու համար մեկնել է Բեռլին տաս ամիս ժամկետով («Արարատ», 1907, թիվ 10, էջ 905):

3 (էջ 22)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կֆ, 1341):

1. 1906 թ. սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին Կոմիտասը ժամանել է Փարիզ (տես աստ, Նովյա Բաբայանին գրած նամակը):

2. Քարտիպ – լիտոգրաֆ տպագրություն: Կոմիտասը պատրաստվել է 1906թ. դեկտեմբերի 1-ին կայանալիք համերգին (տես աստ, Կ. Կոստանյանին գրած 15-րդ նամակի 1-ին ծան.):

3. Լուի Լալուա (1874-1944) – ֆրանսիացի երաժշտագետ, քննադատ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր: Շուշիկ Բաբայանի ամուսինը:

4. Նկատի ունի Մ. Բաբայանի հորը՝ Ավետիք Բաբայանին:

4 (էջ 23)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կֆ, 1342: Տես ԺԿՄ, էջ 118-120: ԽՍ, 1970, թիվ 2, էջ 64):

1. Այս նախաղասությունը և 6-րդ նամակն ամբողջությամբ Կոմիտասը շարադրել է մանկական թոթովախոսությամբ, ըստ երևույթին հումորով ու բարեկամաբար նմանակելով Մ. Բաբայանին:

5 (էջ 26)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կֆ, 1361: Տես ԽՍ, 1970, թիվ 3, էջ 50):

1. Կոմիտասը երկու շարական է ուղարկել Մ. Բաբայանին, որպեսզի վերջինս կատարի դրանք Շուշիկի և Լուի Լալուայի հարսանյաց հանդեսին: Պատկանական տեղի է ունեցել 1906 թ. դեկտեմբերի 22-ին, Փարիզում, Փրանսիական և հայկական եկեղեցիներում (վերջինում նրանց պսակադրել է Կոմիտասը): Այս մասին մանրամասն տես Ավետիք Բաբայանի Կոմիտասը): Այս մասին մանրամասն տես Ավետիք Բաբայանի

1906 թ. գեկտեմբերի 30-ին Փարիզից քըռջը և քեռայրին՝ Տիրուհի և Կարապետ Կոստանյաններին գրած նամակում (ԳԱԹ, ԿԿ, 691/177), ինչպես նաև Շուշիկ Բաբայանի դստեր և թոռնուլչու՝ Նիկոլետ Լալուա Շյուի և Քլեր Շյու Ակկոմանդոյի «Հարսի հայրը» անգլերեն գրվածքում:

2. Շուշիկի և Լալուայի պսակադրությունը տեղի է ունեցել Ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցում, որը կառուցվել է 1902 թ., Փարիզի ժան Գուտոն փողոցում (թիվ 15), Ալ. Մանթաշյանի ծախսերով։ Կոմիտասը իջևանել էր այդ Եկեղեցում (տես աստ, Սոֆյա Բաբայանի գրած նամակը):

3. Ինչպես վկայել է Ավետիք Բաբայանը 1-ին ծանոթագրության մեջ նշված նամակում. «Առաջի օրը Շուշիկս գնաց խոստովանելու Կոմիտաս հայր սուրբի մօտ։ Անիրաւը հօ՛ էնքան քեօփակութիւններ է անում։ Բայց խոստովանանքը այնպիսի լրջութեամբ է կատարել, այնպիսի բացատրութիւններով, որ Շուշոյի սիրտը փխրած, դիվ լաց է եղած լինում։ Մի առանձին երկնային լուսով լցուած տուն եկաւ» (ԳԱԹ, ԿԿ, 691/177)։ Ավետիք Բաբայանի գործածած «քյովակություն» բառն այստեղ պետք է հասկանալ չարաճճիություն իմաստով։ Արդարեւ, Կոմիտասը կյանքում եղել է շատ կենսուրախ, կատակասեր անձնավորություն. ըստ այնպիսին, ինչպիսին դրոշմվել է սերունդների մտապատկերում՝ տառապյալ և նահատակ։ Պատահական չէ, որ Մարգարիտ Բաբայանն իր սիրելի ուսուցչին և բարեկամին հղած նամակներում նրան դիմել է ոչ այլ կերպ, քան «Հայր սուրբիկ», «սիրելի հայր սուրբչիկ-մայմունչիկ» ածականներով։

6 (էջ 26)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1345: Տես ԺԿՄ, էջ 120-121: ԽՍ, 1970, թիվ 3, էջ 52):

1. «Պելեաս և Մելիզանդ» – Կլոդ Դեբյուսիի օպերան։
2. Մելիքեսան Համբարձում – Կոմիտասի բարեկամներից։
3. Սաշա Դավիդով (Արսեն Կարապետյան, 1850-1911) – հայ-

ազգի ոռւսական երգիչ (տեսող): Կոմիտասը փետրվարի 8-ին ներկա է գտնվել նրա անհատական համերգին:

7 (Էջ 28)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՄԱՖ, անմշակ):

8 (Էջ 29)

Տպագրվում է ըստ մեքենագիր օրինակի (ԳԱԹ, ԿՖ, 1507), որ Թանգարանին է տրամադրել Ռ. Աթայանը, 1964 թ.: Տես ԽՍ, 1970, թիվ 5, էջ 54:

1. Կոմիտասն ընդունելով Շվեյցարիայի հայ ուսանողական միության հրավերը՝ Ա. Թոպանյանի հետ կատարում է համերգային շրջադայություն: Վերջինս հանդես է եկել բանախոսությամբ՝ նվիրված հայ բանաստեղծության և երաժշտության ազգային ինքնատիպության հարցերին և Կոմիտասի կատարած գործի նշանակությանը: Ժնակի կոնսերվատորիայի մեծ սրահում հունիսի 1-ին Վանա սովորական օգտին Կոմիտասը տվել է մեծ երգահանդես, Բեռնում կարդացել է դասախոսություն հայ ժողովրդական երաժշտության վերաբերյալ, Լոզանում գրական-երաժշտական երեկույթում կատարել է «12 կտոր ժողովրդական և եկեղեցական երգեր» (տես «Բազմավիճ», 1907, թիվ 7-8, էջ 376-378): «Անահիտ», 1907, թիվ 6-7, էջ 160, «Արարատ», 1907, թիվ 10, էջ 909):

2. Խոսքը Արշակ Չոպանյանի մասին է:

3. «Լոյսին», այսինքն՝ Լուի (Louis) Լալուային, «կրակին», այսինքն՝ Շուշիկին, «ոսկուն», այսինքն՝ Արմենուհուն, «մարդարտին», այսինքն՝ Մարգարիտին:

9 (Էջ 30)

Տպագրվում է ըստ Մ. Բարայանի «Կոմիտաս վարդապետ իր նամակների միջով» գրության («Մշակոյթ», Փարիզ, 1935, տես նաև ԺԿՄ, էջ 121-122):

1. Այս շրջանում է Կոմիտասը Փարիզում տպագրել «Հայքնար» գեղջուկ երգերի հավաքածուն: Նույն՝ 1907 թ. «Անահիտում» նա տպագրել է «Հայ գեղջուկ երաժշտութիւն».

ժողովրդական երգերի ծաւալումը եւ ազդեցութիւնը» ուսումնասիրությունը:

10 (էջ 30)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1346: Տես ԺԿՄ, էջ 122-123: ԽՍ, 1970, թիվ 5, էջ 55):

1. Խոսքը դաշնամուրի համար գրված վեց պարերի մասին է (Երևանյան «Երանգի», Շուշվա «Ունարի» ու «Մարալի», Վաղարշապատի «Շուշիկի», Էրզրումի «Ետ ու առաջ» և «Շորոր»), որոնք տպագրվել են Փարիզում (1925, 1951) և Երևանում (1939, 1946): Այդ պարերը Կոմիտասը գրել է 1906 թ. և առաջին անգամ ինքն է կատարել:

2. Նկատի ունի Լուի Լալուային:

3. Խոսքը «Հայ քնար»ում տպագրված երգերի մասին է, որոնք վերահրատարակվել են 1938 թ. Փարիզում, Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի կողմից:

4. Նկատի ունի բժիշկ Շառլ Քարբոնելին (1874-1971), Արմենուհի Բաբայանի ամուսնուն:

11 (էջ 32)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1349: Տես ԺԿՄ, էջ 124-126): Մ. Բաբայանը թյուրիմացաբար նամակի գրության թվականը համարել է 1909: Մինչդեռ, դատելով բովանդակությունից, նամակը գրված է 1907-ի նոյեմբերին՝ Խրիմյան Հայրիկի հուղարկավորումից առնվազն երեք շաբաթ հետո:

1. Նկատի ունի Ա. Մանթաշյանի նվիրած ոռյալը, որը պահպանվում է ԳԱԹ-ում:

2. Նկատի ունի Հովհաննես Հովհաննիսյանին, որը այդ ժամանակ դասավանդում էր Գևորգյան ճեմարանում:

3. Նկատի ունի Շառլ և Արմենուհի Քարբոնելների առաջնեկին՝ էդուարդ Քարբոնելին (1905-1982):

12 (էջ 35)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1347: Տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 54):

1. Համերգ-դասախոսություններով Կոմիտասը հանդես է եկել իգդիրում, Երևանում, Բաքվում, Վաղարշապատում:

2. 1907թ. Փարիզում լույս տեսած «Հայ քնարի» միաձայն հրատարակությունը դպրոցների և առձեռն գործածության համար ըստ Երևույթին չի իրագործվել:

3. Ստեփան սարկաւագ - խոսքը Սպիրիդոն Մելիքյանի մասին է:

4. Տես նախորդի Յ-րդ ծան.:

5. 1908թ. Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրվել Մատթեոս Իզմիրլյանը:

13 (Էջ 37)

Տպագրվում է ըստ Մ. Բաբայանի «Կոմիտաս վարդապետի նամակների միջով» գրության («Մշակոյթ», Փարիզ, 1935, տես նաև ԺԿՄ, էջ 123-124):

14 (Էջ 38)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՖ, 1350: տես ԺԿՄ, էջ 126: ԽՍ, 1971, թիվ 9, էջ 53):

1. Նկատի ունի իր ծննդավայր Քյոթահյան, որտեղ ժամանել է 1910 թ. հունիսին և համերգներ ավել հաջորդ ամսին: Այնուհետև համերգներով հանդես է եկել Էսկիշեհիրում, Բրուսայում, Կ.Պոլսում, որտեղ կարդացել է նաև մի շաբթ դասախոսություններ:

2. Զյուռնիայում Կոմիտասի ղեկավարած երգչախմբի համերգը տեղի է ունեցել 1911 թ. հունվարի 30-ին:

3. Կ.Պոլսում 1911 թ. փետրվարի 20-ին տեղի է ունեցել Կոմիտասի ղեկավարած 200 հոգուց բաղկացած երկսեռ երգչախմբի համերգը («Բիւզանդիոն», 1911, թիվ 4366, էջ 3, թիվ 4371, էջ 3):

4. Հայ եկեղեցական եղաժշտության նմուշները ժողովրդականի հետ միասին համերգների ծրագրերի մեջ մտցնելը կղեկանի համերգների մասն է առաջացրել: 1910 թ. ըական որոշ շրջաններում դժգոհություն է առաջացրել: Եր համերգներից մեկը սկսելուց առաջ Կոմիտասը պատրիարքի իր համերգներից մեկը սկսելուց առաջ Կոմիտասը պատրիարքի

տեղապահ Ղեոնդ Դուրյանից ստացել է պաշտոնական նամակ, որն արգելել է համերգային բեմահարթակից հայ հոգևոր երաժշտություն կատարել: Սակայն հայտնի է, որ այդ համերգը կայացել է Կոմիտասի նախատեսած ծրագրով, ինչը մեծ աղմուկի առիթ է հանդիսացել:

15 (էջ 39)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կֆ, 1351: Տես ԽՍ, 1972, թիվ 6, էջ 49):

1. 1911 թ. ապրիլի 7-8-ին Կոմիտասը համերգներ տալու համար Պոլսից մեկնել է Եգիպտոս և ժամանելով Ալեքսանդրիա՝ իշխանել է Հայոց առաջնորդարանում («Բիւզանդիոն», 1911թ., թիվ 4413, էջ 2):

16 (էջ 40)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կֆ, 1352: Տես ԽՍ, 1972, թիվ 6, էջ 55):

1. Ալեքսանդրիայի Ալհամբրա թատրոնում 1911 թ. մայիսի 23-ին 190 հոգանոց երգչախմբով Կոմիտասը համերգ է տվել (7 հոգեոր երգ և 15 գեղջուկ խմբերգ):

2. 1911 թ. հունիսի 12-ին Կահիրեկի Ապալան թատրոնում 1300 ունկնդիրների ներկայությամբ տեղի է ունեցել Կոմիտասի Ալեքսանդրիայից ժամանած երգչախմբի համերգը («Բիւզանդիոն», 1911, թիվ 4477):

3. Կ.Պոլսում երաժշտանոցի հիմնումը Կոմիտասի ամենանվիրական իղձերից մեկն է Եղել: Այդ մտահղացումը խանդավառել է նաև մի շարք պոլսահայ մտավորականների, որոնք հասկանում էին հայ երաժշտանոցի կարևոր նշանակությունը: 1910 թ. ստեղծվել է հանձնաժողով, որի նպատակն էր դրամական միջոցներ հավաքել: Կոմիտասն էլ ջանք չի խնայել և իր տված համերգներից գոյացած գումարները հատկացրել է այդ ֆոնդին: Սակայն Կոմիտասի փայփայած երաժշտանոցի գաղափարն այդպես էլ մնացել է անկատար (տես նաև աստ, Ստեփան Ակայանին գրած նամակի 1-ին ծան.):

17 (էջ 41)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՄԱՅ, անմշակ: ԽՍ, 1973, թիվ 3, էջ 56): Հրապարակվել է «Գրական թերթում» (1969, թիվ 22, էջ 4):

18 (էջ 42)

Տպագրվում է ըստ Մ. Բաբայանի «Կոմիտաս վարդապետ իր նամակների միջով» գրության («Մշակոյթ», Փարիզ, 1935, տես նաև ԺԿՄ, էջ 126):

1. 1911 թ. նոյեմբերի երկրորդ կեսին Կոմիտասը եղիպտոս, Ֆրանսիա և Գերմանիա կատարած ուղևորությունից հետո վերադարձել է Կ.Պոլիս:

2. Տպարան Լայպցիգում, որտեղ 1912 թ. լույս է տեսել Կոմիտասի կազմած «Հայ գեղջուկ երգեր» ժողովածուն:

19 (էջ 42)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1355: Տես ԽՍ, 1973, թիվ 6, էջ 56: ԺԿՄ, էջ 127): Շրջերեսին՝ Փանոս Թերլեմեզյանի նամակը՝ ուղղված Մ. Բաբայանին:

1. Խոսքը «Գուսան» երգչախմբի մասին է, որ գործել է 1910-1915 թթ.:

2. Խակուճի Գաւանողեան (Ղաւանողեան, Գաւանող) – երգչուհի, երաժշտական կրթությունը ստացել է Փարիզում Մ. Բաբայանի մոտ:

20 (էջ 45)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1354: Տես ԽՍ, 1973, թիվ 9, էջ 59):

1. 1912 թ. մայիսի 13-ին Կոմիտասը Պըտի Շանի ձմեռային թատրոնում ճոխ հայտագրով տվել է իր չորրորդ և երգաշրջա-

նի վերջին համերգը («Բիւլանդիոն», 1912, թիվ 4733, էջ 3):

2. 1912 թ. հունիսի վերջին Կոմիտասը ժամանել է Լայպցիգ և մի բացիկ ուղարկել Մ. Բաբայանին՝ տեղեկացնելով իր «Հայ

գեղջուկ երգերի» տպագրության ընթացքի մասին: Մի բացիկ գեղջուկ երգերի» տպագրության ընթացքի մասին: Անգլիայից Գերմանիա էլ մինչ այդ ուղարկել էր Բաբայանին՝ Անգլիայից Գերմանիա

վերադառնալու մասին (տես ԳԱԹ, ԿՅ, 1651): Կոմիտասի գրած այդ բացիկները, ցավոք, չեն պահպանվել:

3. Նկատի ունի Շուշիկ Բաբայանին և ամուսնուն՝ Լուի Լալուային:

4. Նկատի ունի Արմենուհի Բաբայան-Քարբոնելին և ամուսնուն՝ Շառլ Քարբոնելին:

21 (էջ 47)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1360: Տես ԽՍ, 1974, թիվ 1, էջ 55-56):

1. Խոսքն, ըստ երևույթին, Փրանսահայ մշակութային գործիչ Օննիկ Գարիբյանի մասին է:

2. 1912թ. Հունիսի 11-ին Կոմիտասը մեկնել է Անգլիա:

22 (էջ 47)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1353: Տես ԽՍ, 1974, թիվ 5, էջ 53): Նամակի վերջում Փ. Թերլեմեզյանի նամակն է՝ ուղղված Մ. Բաբայանին և Կոմիտասի հետեւյալ երկտողը. «Ապրե՞ս դու; Փանոս ջա՞ն... Ոնց չէ, բա ե՞ս, ես էլ ապրեմ, չէ՞...»:

1. Խոսքը երգչուհի Մաննիկ Պերպերյանի մասին է (1883-1960), Մ. Բաբայանի աշակերտուհիներից, Ռեթեոս Պերպերյանի դուստրը:

2. Տիգրան Նալբանդեան (1878-1954) – երգիչ (տեսնոր), կրթությունը ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում՝ աշակերտելով Մ. Եկմալյանին, ապա 1898 թ. ուսումը շարունակել է Պետերբուրգի կոնսերվատորիայում:

3. Արմենակ Շահմուրադեան (1878-1939) – երգիչ (տեսնոր), Գևորգյան ճեմարանում աշակերտել է Կոմիտասին: Հետագայում Կոմիտասի հետ հանդես է եկել համերգներով:

23 (էջ 50)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1358: Տես ԽՍ, 1974, թիվ 5, էջ 55):

1. Շահ-Մուրատ – Արմենակ Շահմուրադյան:

2. Նկատի ունի նկարիչ Փանոս Թերլեմեզյանին (1865-

1941), որը Պոլսում Կոմիտասի հետ բնակվել է նույն տանը: Ի դեպ, 1914 թ. հունիսին Թերլեմեզյանը Կոմիտասից ստացել է «տասնութերեսով մի նամակ», որտեղ վերջինս նկարագրել է Փարիզում կարդացած «իր դասախոսության նյութը և թողած տպագորությունը: Ափսոս, որ այդ նամակը մնացել է Պոլիս իմ իրեղենների մեջ՝ գուցե մի օր հրապարակ գա» (ԺԿՄ, էջ 195):

24 (էջ 51)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կֆ, 1357: Տես ԽՍ, 1974, թիվ 8, էջ 54-55):

1. Խոսքը 1913 թ. մայիսի 12-ին և 24-ին կայացած համերգների մասին է:

2. 1913 թ. հունիսի 25-ին Կոմիտասը ժամանել է Թիֆլիս, որտեղից Կ.Պոլիս է վերադարձել օգոստոսի 21-22-ին:

25 (էջ 53)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կֆ, 1356: Տես ԽՍ, 1974, թիվ 11, էջ 53-54):

1. Այս առիթով Մ. Աբեղյանը գրել է. «Լսեցի, որ Կոմիտասը Պոլսից վերադարձել է Էջմիածին, ամենայն հավանականությամբ այն մտքով, որ մնա այնտեղ. բայց երբ ներկայացել էր կաթողիկոսին, վերջինս հարցրել էր նրան, թե նա երբ պիտի վերադառնա Պոլիս: Կոմիտասն այդ հարցի վրա սաստիկ զայրացել է և քիչ հետո ճանապարհ է ընկել դեպի Պոլիս»: (ԺԿՄ, 73):

26 (էջ 54)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կֆ, 1359):

1. Կոմիտասին հաջողվել է իրականացնել իր փափագը: Փարիզի երաժշտության միջազգային ընկերության համաժողովին նա եղեք դասախոսություն է կարդացել, որոնցից երկուսը՝ «Հայ խաղագիտութիւնը» և «Հայ գեղջուկ երաժտութիւնը»՝ ըստ ծրագրի, իսկ «Հայ երաժտության ամանակի, կռի, շեշտաւորութեան և տաղաչափության մասին»՝ համաժողովի անդամութեան և տաղաչափության մասին»՝ համաժողովի անդամութեան համերգ՝ հատուկ խընդրանքով, ծրագրից դուրս: Համաժողովից ների հատուկ խընդրանքով, ծրագրից դուրս: Համաժողովից հետո տրվել է համերգ՝ նամակում հիշատակված երաժիշտների մասնակցությամբ:

2. Խսկուկ – Խսկուկի Ղավանողյան:

27 (էջ 56)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կթ, 1361): Կոմիտասի Փոնդում (թիվ 1340) պահպանվում է նաև մի ծածկագիր նամակ, որն ըստ Փոնդի մշակողի, վերծանել է Մ. Բարայանը Հետեւյալ կերպ. «Սիրելի Շուշիկ, Մարգարիտ եւ Լոյս Լալուա, ցանկանում եմ բոլորիդ փայլուն համերգ, բարի գիշեր, փա՛ֆ»:

ՍՊԾԵԱ. ԲԱՐԱՅԵՆԻՆ (էջ 56)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կթ, 1344: Տես ԽՍ, 1970, թիվ 2, էջ 63: Խ. Սամվելյանը սխալմամբ նամակը վերագրել է Մ. Բարայանին): Նամակը գրված է բացիկի վրա:

Սոֆյա Բաբայան (1855-1940) – Մարգարիտ Բաբայանի մայրը, կրթական գործիչ: Բարձրագույն կրթությունը ստացել է Գերմանիայում Հետեւելով մանկավարժության: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է «Ֆրեոքելյան ընկերությունը», որը թիֆլիսում բացել է առաջին հայկական մանկապարտեզր չքավոր երեխաների համար: Եղել է Կանանց բարեգործական ընկերության նախագահ:

1. 1906 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Փարիզի «Շեմբրո և ընկերություն» հրատարակչությունը լիտոգրաֆիական եղանակով լույս է ընծայել դեկտեմբերի 1-ին Կոմիտասի ծրագրած նվագահանդեսի ընթացքում կատարվելիք խմբերգերի նոտաները լատինատառ հայերեն տեքստերը, որպեսզի Փրանսիացի երգիչները կարողանային օգտագործել (տես ԳԱԹ, Կթ, 624: ԽՍ, 1970, թիվ 2, էջ 63):

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ (էջ 57)

Տպագրվում է ըստ բնագրի (սևագիր, մատիտագիր, ԳԱԹ, Կթ, 3):

Հասցեատերը բանասեր, խմբագիր, եկեղեցական գործիչ Բաբկեն Կյուլեսերյանն է (1868-1936), որը 1901 թ. նշանակվել է Կ. Պոլսի Ազգային մատենադարանի գրադարանապետ:

1. Այս կապակցությամբ տես աստ, Հովհաննես Արշարու-

նույն գրած նամակի թ-րդ ծան.:

2. Նկատի ունի Պոլսո պատրիարք Մատթեոս հղմիրլյանին: Նույն խնդրանքով Կոմիտասը նամակ է գրել նաև վերջինին՝ 1909 թ. հունվարի 9-ին (տես աստ): Ուստի և վստահ ենք, որ Բաբկեն վարդապետին հասցեագրված նամակը ևս վերաբերում է նույն այդ ժամանակաշրջանին:

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆԻՆ (Էջ 59)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՄԲՁ, 160, III բաժին): Գրված է բացիկի վրա:

Մինաս Բերբերյան (1871-1919) – հրապարակախոս, Գևորգյան ճեմարանում եղել է պատմության և ուսուակնության ուսուցիչ, 1907-ից՝ տեսուչ: Մի քանի ամիս թիֆլիսում խմբագրել է «Նոր դար» պարբերականը:

1. Նկատի ունի Գարեգին Հռվիթյանին (1867-1952). եկեղեցական գործիչ, բանասեր, արքեստաբան, մանրանկարչության տեսաբան: Սովորել է Գևորգյան ճեմարանում, որն ավարտելուց հետո, որպես Հայոց բարեգործական միության սան, ուղարկվել է Գերմանիա՝ կրթությունը շարունակելու: Եղել է Գևորգյան ճեմարանի ուսուցիչ և տեսուչ, թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ, 1943-ից՝ Կիլիկիայի հայոց կաթողիկոս:

2. Նկատի ունի Գևորգ Զյորեքչյանին (1868-1954). եկեղեցական, կրթական գործիչ, 1945-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս: 1889-1994 թթ. ուսանել է Լայպցիգի համալսարանում և կոնսերվատորիայում:

3. Նկատի ունի Բենիկ Վարդապետ Եղիազարյանին՝ Կոմիտասի ընկերներից, որը հետագայում հրաժարվել է Հոգևոր կոչումից և հանդես եկել մի շարք հոդվածներով՝ ընդդեմ էլմիածնի միաբանության:

ԳԵՂԻՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Էջ 59)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11398): Տես Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 1, գ. 11398): Տես նաև «Տեղեկագիր», 1956, թիվ 9, էջ 110: ԽՍ, 1973, թիվ 3, էջ 58: Հասցեատերը Գևորգ Տփիսիսիցի Սուրենյանցն է (1847-

1930): 1907-1911 կաթողիկոսական տեղապահ, 1912-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս:

1. 1911թ. նոյեմբերի 25-30-ին Կոմիտաստ դիմել է Թուրքիայում ուղարկան դեսպանատանը և խնդրել Էջմիածին մեկնելու համար վավերացնել իր անցագիրը: Դեսպանատունը նրան համապատասխան արտոնագիր տալու համար դիմել է Պետերբուրգ՝ բարձրագույն իշխանությանը (ԽՍ, 1973, թիվ 3, էջ 57):

Դեռևս 1908 թ. հունիսի 31-ին տարրեր վայրեր և Թիֆլիս մեկնելու նպատակով արձակուրդ ստանալու համար Կոմիտասը դիմել է Գևորգ Արքեպիսկոպոսին՝ գրելով. «Անձնական գործով ճանապարհորդելու եմ զանազան տեղեր և գնալու եմ Տփիսիս: Խոնարհաբար խնդրում եմ միամեայ արձակուրդ» (Գր. Հարությունյան, ճեռագիր աշխատություն, ԽՍ, 1970, թիվ 6, էջ 55): Նույն թվականի սեպտեմբերի 1-ին Գևորգ Արքեպիսկոպոսը մի գրությամբ Կոմիտասին հաճնարարել է կարդալ Պարոյկի «Երգեցցողութիւն հանգստեան» գործը և հայտնել, թե որքանով է հարազատ եկեղեցական երգեցողությունը եղանակին, և կար՞ո՞շ է այն տպագրվել: Կոմիտասն իր պատասխան նամակում հայտնել է հետևյալը. «Քննեցի պ. Պարոյկի «Երգեցցողութիւն հանգստեան վասն քառաձայն խառն խմբի» գրուածքը եւ գտայշատ իսակ եւ աշակերտական: Թոյլատրել կարելի էր, եթէ որոշ երաժշտական քննադատութեան բովիցն անցած եւ ապա հայունով՝ եղանակներին հարազատ եւ ոչ օտարալուր յաջորդութեամբ գրի առնուած եւ դաշնակուած լինէին երգերը»:

Պ. Պարոյկի գրուածքը չի համապատասխանում ո՛չ մէկ եւ ո՛չ միւս պահանջին» (Նույն տեղում): Գէլորթեան ՀՈԴԵՒՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ (էջ 60)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 312, ց. 1, գ. 41):

Գերմանիա մեկնելու համար Կոմիտասին անհրաժեշտ է եղել ճեմարանի ավարտական վկայականը (մրցանակագիր), որը մինչ այդ չէր ստացել: Վկայականը ստանալու համար 1896 թ. ապրիլի 25-ին նա ճեմարանի վարչությանը ներկայացրել է

Հետեւյալ դիմումը՝ «1892/93 ուսումնական տարեշրջանում աւարտեցի Գէորգեան Հոգեւոր ճեմարանը, բայց ցարդ մրցանակագիրս չեմ ստացել, խոնարհաբար խնդրում եմ տնօրինել» («Տեղեկագիր, 1956, թիվ 9, էջ 106): Ընդպառաշելով Կոմիտասի խնդրագրին, ճեմարանի վարչությունը նրան է հանձնում ճեմարանի լսարանական բաժինն ավարտած լինելու վերաբերյալ վկայական՝ հայերեն, ուսւերեն և ֆրանսերեն (տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 56-57):

1. Կոմիտասի ուսուցիչ, Բեռլինի մասնավոր երաժշտանոցի տնօրեն Ռիխարդ Շմիդտը հետաքյայում գրել է «Կոմիտասը արդեն մեծ վարպետ է: Ես հպարտ եմ նրանով: Զգում եմ, որ ապրում եմ և ապրելու եմ Կոմիտասի մեջ» (Խ. Սաֆարյան, Կոմիտաս սքանչելագործ, Ե. 1999, էջ 332): Կոմիտասի այս ուսուցչին Խրիմյան Հայրիկը չնորհակալությամբ զիմել է հատուկ կոնդակով (տես ԺԿՄ, էջ 14):

2. Օսկար Ֆլայշեր (1856-1933) – Բեռլինի Արքայական համալսարանի երաժշտության պատմության ուսուցչապետ, միջազգային երաժշտական ընկերության նախագահ։ 1899 թ. հունիսի 16-ին Կոմիտասին գրած նրա նամակը տես ԺԿՄ, էջ 11-12։ Նրա խոսքը Կոմիտասի մասին տես Խ. Սաֆարյան, Կոմիտաս պրանչեադործ, Ե., 1999, էջ 339։

ՀՐԵՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Էջ 62)

Տպագրվում են ըստ բնագրերի (ԳԱԹ, ԿԺ, 1707, 1708):
Գրված են բացիկների վրա:

1 (E9 62)

կական, մշակութային գործիչ: Մեծապես նպաստել է հայ արվեստագետների գործունեությանը և նյութապես օժանդակել նրանց:

1. Մ. Թումանյանն է Կոմիտասին հորդորել «Անուշը» վերածելու օպերայի: 1904 թ. մայիսի 3-7-ին Կոմիտասն ու Հ. Թումանյանը հանդիպել են իրար և զրուցել «Անուշ» օպերայի մասին, որից որոշ երգեր արդեն այդ ժամանակ պատրաստ են եղել (տես «Սովետական արվեստ», 1959, թիվ 5, էջ 69): Այս կապակցությամբ տես նաև Մ. Թումանյանի նամակը Կոմիտասին (ԳԱԹ, ՄԹՁ, 455, տես նաև աստ, Հ. Թումանյանին գրած Կոմիտասի 1-ին նամակը): «Անուշ» օպերայի վրա Կոմիտասի աշխատանքն ընթացել է մինչև 1909 թ.: Լիբրետոն գրելը հանձն է առել Հ. Թումանյանը, որին եռանդուն գործակցել է Կոմիտասը: Թե հետագայում ինչ ընթացք է ունեցել աշխատանքը, մեզ անհայտ է: Խանգարել են նաև Հ. Թումանյանի ձերբակալությունները: Այս կապակցությամբ տես նաև Ռ. Աթայան, Կոմիտասի ձեռագրերը («Սովետական արվեստ», 1955, թիվ 4, Ս. Գ. Գասպարյան, Կոմիտաս. կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը, երևան, 1961, էջ 145):

2. Բեռլինում երաժշտական բարձրագույն կրթություն ստացած Կոմիտասը 1899 թ. սեպտեմբերի սկզբներին էջմիածնի Գևորգյան ճեմարանում նշանակվել է երաժտության ուսուցիչ և երգեցիկ խմբի ղեկավար («Արարատ», 1901, թիվ 4, էջ 215):

3. Կոմիտասը 1899 թվականից հոդվածներով հանդես է եկել Գերմանիայի Միջազգային երաժշտական ընկերության հանդեսում:

4. Տիգրան Նազարյանը (1858-1926) – հրապարակախոս, խմբագիր: 1881 թ. Շուշիից տեղափոխվել է Թիֆլիս, հրմնադրել «Աղբիւր» մանկապատանեկան ամսագիրը, 1890-ից՝ «Տարագ» պատկերագարդ պարբերականը: Կոմիտասը 1904 թ. «Տարագ»ում հրապարակել է մի շարք հոդվածներ («Յովսէփ Վերդի Ռիխարդ», «Ֆրանց Լիստ» և այլն): Հստ երևույթին, խոսքը Տ.

Նազարյանցի կողմից այդ հոդվածները գրելու խնդրանքի մասին է:

5. Վահրամ Մանկունի (1846-1920) – հոգևորական, մշակութային գործիչ: Դեռևս 1902 թ. Վ. Մանկունուն գրած նամակում (տես աստ) Կոմիտասը մանրամասն ներկայացրել է, թե ինչպես պետք է կազմել Հանձնարարվող երաժշտական դասագրքերն ու կանոնագրքերը: Տես նաև Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Ա, Երևան, 2005, էջ 172-230, 479:

6. Ա. Աբեղյանը (1865-1944) ուսանել է Գևորգյան ճեմարանում, որտեղ էլ ծանոթացել է Կոմիտասի հետ: Վերջինիս հետ հավաքել և համակարգել է Հայ ժողովրդական 25 000 քառյակներ, որոնց մի մասը 1903-1905թթ. լույս է տեսել «Հագար ու մի խաղ» կոչվող և Հիսունական եղդ պարունակող երկու գրքույկով:

7. Այդ երգեհոնը կամ ֆիսհարմոնը այժմ պահպանվում է ԳԱԹ-ում:

2 (էջ 64)
Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՄԹՁ, 456): Գրված է բացիկի վրա:

1. Համերգները կայացել են 1905 թ. ապրիլի 1-ին և 3-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում, Կոմիտասի ղեկավարած ճեմարանական սաների երգչախմբի մասնակցությամբ («Հոգեսոր և ժողովրդական համերգ»): 1905 թ. ապրիլի 6-ին և 7-ին Հովհանյան օրիորդաց դպրոցում և երաժշտական ուսումնարանում Կոմիտասը կարդացել է «Հայ ժողովրդական եկեղեցական երգերը» խորագրով դասախոսություն:

2. Ն. Ղամբարյանը եղել է Թիֆլիսում կայացած համերգ-ների կազմակերպիչը: Նա այդ կապակցությամբ 1905 թ. փետրվարի 25-ին հեռագրով և նամակով դիմել է Կոմիտասին (ԳԱԹ, ԿԺ, թիվ 49ա, 50):

3. Մ. Թումանյանը 1905 թ. մարտի 3-ին պատասխան նա-

մակ է գրել Կոմիտասին՝ տեղեկացնելով, որ Թիֆլիսում կայանալիք համերգի հարցերը կարգավորված են (ԳԱԹ, ՄԹՖ, թիվ 455):

3 (էջ 64)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՄԹՖ, 457): Այս և հաջորդ նամակը հրապարակվել է «Սովետական արվեստ» ամսագրում (1962, թիվ 10, էջ 55):

1. Մարիամ Թումանյանն առաջին անգամ հայ իրականության մեջ իրականացրել է մանկական պատկերազարդ գունավոր գրքույկների տպագրություն, մասնավորապես հրատարակել է Թումանյանի մանկական գործերը՝ նկարիչ Գ. Երիցյանի պատկերազարդմամբ:

4 (էջ 65)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՄԹՖ, 458): Տես նաև Մ. Թումանյան, իմ համառոտ կենսագրությունը, էջ 138-139:

1. Հովհաննես Թումանյանը բանտարկվել է 1908 թվականի դեկտեմբերին, ի թիվս այն 160 հայ մտավորականների, որոնք մեղադրվել են այսպես կոչված «դաշնակցության» գործով, իրեկ թե սպանություններ և հակակառավարական ապստամբություն կազմակերպելու մեղադրանքներով: Բանաստեղծը բանտից ազատվել է 1909-ի հունիսի 13-ին:

ՅՈՎԱՆՆԻՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

1 (էջ 66)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՀԹՖ, 754):

Հրապարակվել է «Սովետական Հայաստան» թերթում (1969, թիվ 272): Այս և հաջորդ երկու նամակները տես նաև Թումանյան, Ուսունասիրություններ և հրապարակումներ, հտ. 5, Երևան, 1988, էջ 325-327:

1. Կոմիտասը Թիֆլիսում եղել է 1908 թ. փետրվարի 8-ից մինչև 15-16-ը:

2. Տես աստ, Մ. Թումանյանին գրած 1-ին նամակի 1-ին ծան:

3. Ստեփան Լիսիցյան (1865-1947) – բանասեր: Աշխատել

է. Գևորգյան ճեմարանում 1889-ից, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1894-1915)՝ որպես պատմության ուսուցիչ:

4. Խոսքը Լևոն Շանթի մասին է, որը մասնակցում էր «Վերնատան» հավաքներին:

5. Կոմիտասի ձայնագրած «Կաքավի երգը» (Հ. Թումանյանի գրական մշակմամբ) տպագրվել է 1908 թ. Թիֆլիսում:

2 (էջ 68)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՀԹՖ, 755): Հրապարակվել է «Գրական թերթում» (1936, թիվ 13):

3 (էջ 69)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՀԹՖ, 756): Այս և հաջորդ նամակը հրապարակվել են «Սովետական արվեստ» ամսագրում (1962, թիվ 10, էջ 55-56):

4 (էջ 69)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՀԹՖ, 757):

1. Հ. Թումանյանը, որպես Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ, մտադիր է եղել 1913 թ. աշնանը Թիֆլիսում կազմակերպել գրական-երաժշտական մեծ երեկույթ, որին զեկուցումով հանդես գալու համար հրավեր էր ուղարկել նաև Կոմիտասին:

ՄԱՏԹԵՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆԻՆ

1 (էջ 70)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՖ, 8): Նամակի շարունակությունը մեզ չի հասել (տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 57): Ազգային կենտրոնական վարչության կոռուսական ժողովի հանձարագրի պատասխանն է (տես աստ, Հ. Արշարունուն գրած նամակի 1-ին ծան):

Մատթեոս Խլմիրլյան (1845-1910) – եկեղեցական գործիչ, բանասեր: Կ. Պոլսի հայոց պատրիարք (1894-1896 և 1908),

Ամենայն հայոց կաթողիկոս (1908-1910):

1. Կոմիտասի Պատարագն առաջին անգամ հրատարակվել է 1933 թ. Փարիզում, Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի

ջանքերով։ Բնագիրը սևագրից վերծանել և խմբագրել է Կոմիտասի սան, կոմպոզիտոր և խմբավար Վարդան Սարգսյանը։ Ակադեմիական հրատարակությունը պատրաստել է Ռ. Աթայանը (տես Կոմիտաս, Երկերի ժողովածու, հոդ. 7, Երևան, 1997)։

2 (էջ 72)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԳԿՁ, անմշակ)։

1. Տես նախորդ նամակը։

2. Տես աստ, Բարեկեն վարդապետին գրած նամակը։

3. Նկատի ունի Խրիմյան Հայրիկին։

3 (էջ 74)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԻԹՖ, 83)։ Հրապարակվել է Թ. Ազատյանի «Կոմիտաս վարդապետ» գրքում (էջ 98, տես նաև ԽՍ, 1970, թիվ 6, էջ 62)։

1. Կաթողիկոս Իզմիրլյանը և Միաբանական ժողովը, ինչպես Հայտնի է, չեն ընդունել այս Հրաժարարականը։ Սակայն ծայր է առել մի անսաքող հալածանք, որի հետևանքով էլ Կոմիտասը ստիպված է եղել թողնել Էջմիածինը և մեկնել Պոլիս։

4 (էջ 75)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 57, գ. 2, գ. 2281)։ Հրապարակվել է ԲՀԱ, էջ 166 (տես նաև ԽՍ, 1970, թիվ 6, էջ 64)։

1. 1909 թ. նոյեմբերի 27-ին Կոմիտասին Էջմիածնի Դիվանը, կաթողիկոսի հանձնարարությամբ, հանձնել է գրախոսելու երաժշտագետ Ռուբեն Ղորղանյանի «Երգեցզողութիւնք Ս. Պատարագի դիւրին մշակմամբ գպրոցական եւ ժողովրդական եկեղեցական քառաձայն խմբերի համար» աշխատությունը։ Ղորղանյանը աշխատությանը կից ներկայացրել էր իպոլիտովիկանովի, Գոյլիսոնի, Կրուգլիկովի դրական կարծիքները։

Կոմիտասի տված գրախոսականից հետո Դիվանը ուղարկել է գրություն, ուր ասված է, «...համաձայն երաժշտագէտ Տ. Կոմիտաս վարդապետի վկայութեան, չեն կարող երգուել Զերյանալ աշխատութիւնները եկեղեցիների մէջ»։

5 (էջ 78)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 38: Տես ԽՍ, 1971, թիվ 1, էջ 51-52):

6 (էջ 83)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2282): Հրապարակվել է ԲՀԱ, 170: Տես նաև ԽՍ, 1971, թիվ 1, էջ 53-54:

Նամակ-զեկուցագրի վրա 1910 թ. մայիսի 11-ին մակագրված է «Կարեւոր և ստիպողական, սակայն մեծ դրամագլխի կը կարօտի, զոր գտնել պէտք է»: ԳԱԹ-ում (ԿՅ, թիվ 35) պահպանվում է նամակի սեագիր օրինակը:

ԼԱԼՈՒԱՆԵՐԻՆ (էջ 86)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՄԱՖ, անմշակ): Գրված է բացիկի վրա: Ուղղված է Շուշիկ Բաբայանին և ամուսնուն՝ Լուի Լալուային՝ նրանց դստեր ծննդյան առթիվ: Նիկոլետ Լալուա Շյուն (1907-1995). Հետագայում բնակվել է ԱՄՆ-ում, զբաղվել ուսուցչությամբ: Դասավանդել է նաև Ֆրանսիայի և Եթովպիայի քաղաքներում:

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻՆ

1 (էջ 86)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԳԼՖ, 1510: ԽՍ, 1970, թիվ 5, էջ 57):

Գարեգին Լևոնյան (1872-1947) – բանասեր, արվեստաբան, աշուղ Զիվանիի որդին: Կրթությունն ստացել է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում: 1902 թ. նշանակվել է արվեստաների պատմության ուսուցիչ հշմիածնի Գևորգյան ճեմարանում:

1. Կոմիտասը և Գ. Լևոնյանը մտադրվել էին ստեղծել գրական-գեղարվեստական ամսագիր: «Անվան վրա շատ կանգ չառանք, ուղղակի «Գեղարվեստ», գրել է Գ. Լևոնյանն իր հուշեռանք, ուղղակի «Գեղարվեստ», գրել է պատրում (ԺԿՄ, էջ 152): Սակայն նահանգապետը մերժել է՝ պատրում:

ճառաբանելով, որ խմբագիրներից մեկը՝ Կոմիտասը, ոռւսահպատակ չէ և չի կարող այդ պաշտոնում հաստատվել և երկրորդ՝ կայսրության քաղաքներում է միայն թույլատրվում պարբերականների հրատարակումը, իսկ Վաղարշապատը գյուղ է: «Գեղարվեստ» ամսագիրը Գ. Լեոնյանը հրատարակել է Թիֆլիսում, 1908 թ.:

2 (էջ 87)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԳԼՖ, 1511: Տես ԽՍ, 1970, թիվ 5, էջ 59):

1. Ըստ Խ. Սամվելյանի, «Խոսքը հավանաբար վերաբերում է «Զեմ կրնա» պարերգին»: Այն լույս է տեսել «Գեղարվեստում» (1908, թիվ 1, էջ 100): Նույն պարերգն է ակնարկում նաև հաջորդ նամակում:

3 (էջ 88)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԳԼՖ, 1512: Տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 54):

4 (էջ 88)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԳԼՖ, 1513: Տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 54):

1. Կոմիտասի դաշնակած «Հոյ նազան իմ» երգը լույս է տեսել «Գեղարվեստի» 2-րդ համարում (1908 թ., էջ 147-150):

5 (էջ 89)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԳԼՖ, 1514: Տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 57):

1. Խոսքը «Գեղարվեստի» 2-րդ համարի մասին է:

ԳԱՐԵԳԻՆ ԽՍ.ԶՍ.ՏՐԵԱՆԻՆ (էջ 89)

Տպագրվում է «Տաճար» կիսամյա հանդեսից (1910, Կ. Պոլս, էջ 311):

Գարեգին Խաչատրյան (1880-1961) – բանասեր, Հոգևորական, կրթական գործիչ, Կ. Պոլսի «Տաճար» հանդեսի խմբագիր (1909-1918 թթ.):

1910 թ. հունվարի 31-ին «Տաճար» հանդեսում տպագրվել

Է Արրահամ քահ. Էպեյանի «Շարականի խազերը» հոդվածը, որտեղ մի հատված նվիրված է Կոմիտասին: Վերջինս գրել է սույն նամակ-բացատրականը՝ «Շարական խազերու նշանակութիւնը» վերնագրով և ուղարկել նույն հանդեսի խմբագրին:

1. Տես Հ. Արշարունուն գրված նամակի 2-րդ ծան.:

ՄԿՐՏԻՉ ԽՄԻՄԵԱՆԻՆ

1 (էջ 91)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 15, գ. 353): Հրապարակվել է ԲՀԱ, էջ 156: Նամակի մասին տես ԽԱ, 1969, թիվ 11, էջ 5:

Մկրտիչ Խրիմյան Վանեցի (Խրիմյան Հայրիկ. 1820-1907) – ազգային-եկեղեցական գործիչ: 1854 թ. Վանում ձեռնադրվել է վարդապետ, 1869 թ. ընտրվել է Պոլսի պատրիարք, 1892 թ. Ամենայն հայոց կաթողիկոս:

2 (էջ 92)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 17, գ. 22): Նամակի մասին տես ԲՀԱ, էջ 159:

159: ԽԱ, 1969, թիվ 11, էջ 60:

1. Բիւզանդիա ասելով՝ նկատի ունի Կ.Պոլիսը:
ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆԵԱՆԻՆ

1 (էջ 93)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿԹ, 1086): Այս, ինչպես նաև 2-րդ, 8-րդ, 9-րդ, 15-րդ և 16-րդ նամակները հրապարակվել են «Սովետական արվեստ» ամսագրում (1962, թիվ 9, էջ 50-53, թիվ 10, էջ 54: Տես նաև ԽԱ, 1969, թիվ 11, էջ 54-55):

Կարապետ Կոստանյան (1849-1920) – հայագետ, բանասեր, մանկավարժ: Երկար տարիներ եղել է Էջմիածնի Գեղորգյան ճեմարանի տեսուչ, ապա՝ թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ, և Մոսկվայի Լազարյան ճեմարանի վերատեսուչ (1912-1920), «Արարատ» ամսագրի խմբագիր:

1. Այստեղ և հաջորդ նամակներում ակնարկվում է Կոմիտասի հասցեին տարածված այն չարախոսությունը, թե իբր

նա վեներական հիվանդություն է ունեցել: Ինչպես երեսում է թիվ 3 նամակից, զազրախոսների բերանը փակելու նպատակով Կոմիտասը Թիֆլիսում Կարապետ Կոստանյանի հանձնարարականով հանդիպել է բժիշկ Ավետիք Բաբայանին (Կոստանյանի քեռայրին) և նրանից վկայական ստացել իր առողջական վիճակի մասին: Այս հանդիպումն էլ առիթ է հանդիսացել, որ Կոմիտասը ծանոթանա ու հետագայում մտերմանա Բաբայան ընտանիքի անդամների հետ: Այդ բարեկամությունը շարունակվել է Բաբայանների՝ Փարիզ տեղափոխվելուց հետո նույնպես:

2 (էջ 96)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1085: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 55): Նույն օրը Կոմիտասը Կ. Կոստանյանին գրել է նաև մի երկտող, ուր ասված է. «Ուղարկում եմ ոյեալի բանալին» (ԳԱԹ, ԿԿՁ, 1087):

3 (էջ 97)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1089: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 55):

1. Խոսքը Ավետիք Բաբայանի մասին է: Տես 1-ին նամակի 1-ին ծան.:

2. Խոսքը Հուսիկ Վարդապետ Զոհրապյանի մասին է (1871-1942). Հոգեորական, կրթական գործիչ: Սովորել է Գեորգյան ճեմարանում, համալսարանական կրթությունը ստացել է Բեռլինում: Գեորգյան ճեմարանում եղել է հայ և ընդհանուր եկեղեցու պատմության ուսուցիչ, տեսուչ, դիվանապետ:

3. Խոսքը Գևորգ Սուրենյանցի մասին է:

4. Մակար Եկմալյան (1856-1905) – երգահան: 1891 թ. նշանակվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի երաժշտության ուսուցիչ և երգչախմբի ղեկավար: Կոմիտասը իր երաժշտական կրթությունը լրացնելու նպատակով 1895 թ. ուղարկվել է Թիֆլիս՝ երաժշտական ուսումնարանում տեսության դասեր առնելու: Մակար Եկմալյանը նրան ետ է պահել իր այդ մտա-

դրությունից և առաջարկել է իր հետ անցնել թե՛ տեսական և թե՛ գործնական հարմոնիայի լրիվ դասընթացը:

4 (էջ 98)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՖ, 1088: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 56):

1. Խոսքը Մկրտիչ Խրիմյանի մասին է:

5 (էջ 99)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՖ, 1091: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 57):

1. Խոսքը հավանաբար վերաբերում է պատմաբան, բանասեր, եկեղեցական գործիչ Կարապետ Տեր-Մկրտչյանին (1866-1915): 1899 թ. նշանակվել է Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1902-1906 թթ. եղել է «Արարատ» ամսագրի խմբագիրը:

2. Խոսքը Բեռլինի բարձրագույն երաժշտական դպրոցի ռեկտոր, նշանավոր ջութակահար և կոմպոզիտոր Յոզեֆ Յովախիմի մասին է: Հանդամանորեն ծանոթանալով Կոմիտասի գիտելիքներին՝ վերջինիս խորհուրդ է տվել սովորել երաժշտագիտության մասնավոր կոնսերվատորիայում: Զուգահեռաբար Կոմիտասը Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում: Զուգահեռաբար Կոմիտասը Հետեւել է նաև Բեռլինի արքայական համալսարանի պատմության, փիլիսոփայության և գեղագիտության դասընթացներին:

6 (էջ 101)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՖ, 1090: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 58):

1. Պահպանվում՝ ԳԱԹ, ԿԿՖ, 1090 ա:

7 (էջ 103)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՖ, 1094: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 58):

1. Խոսքը թերևս «Հայ եկեղեցական երաժշտութիւնը ԺԹ դարում» հոդվածի մասին է («Արարատ», 1897, թիվ 5):

2. «Արևելք» - օրաթերթ, լույս է տեսել Պոլսում 1884-1915 թթ.:

8 (էջ 106)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1093: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 58):

9 (էջ 107)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1092: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 59):

10 (էջ 109)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 312, ց. 1, դ. 41):

11 (էջ 110)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1096: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 60):

1. Գեղրդյան ճեմարանի հիմնադրման 25-ամյակը նշվել է էջմիածնում 1899 թ. սեպտեմբերի 26-ին: Ելույթ է ունեցել Կոմիտասի ղեկավարած երգչախումբը՝ կատարելով «Տէր, կեցո» երգը քառաձայն ներդաշնակությամբ: Գերմանիայից վերադարձած Կոմիտասը երկու շաբաթվա ընթացքում էապես փոփոխել է աշակերտների երգեցողությունը («Արարատ», 1899, թիվ 9, էջ 440):

12 (էջ 113)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1095: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 60):

13 (էջ 114)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1097: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 61):

14 (էջ 115)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1098: Տես ԽՍ, 1969, թիվ 11, էջ 62):

1. Դասախոսության թեման էր «Հայոց եկեղեցական եւ աշխարհական երաժշտութիւնը»: Կոմիտասի դասախոսությունները արժանացել են երաժշտական հասարակայնության հետաքրքրությանը և մամուլում լայն արձագանք գտել:

15 (էջ 116)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1099: Տես ԽՍ, 1970, թիվ 2, էջ 64):

1. Համերգը տեղի է ունեցել գեկտեմբերի 1-ին՝ Հայկական միության և Զոպանյանի աջակցությամբ, մասնակցությամբ Բաքայան քույրերի, Ա. Շահմուլրադյանի և ուրիշների: Համերգին մասնակցել են նաև ֆրանսիական երգչախմբի անդամներ (տես «Անահիտ» 1906, թիվ 10-12, էջ 240):

2. Խոսքն ըստ երևույթին Արշակ (Նահապետյանի) Նահապետյանի (1848-1906) մասին է. բնագետ, մանկավարժ: Երկար տարիներ պաշտոնավարել է Գևորգյան ճեմարանում և Ներսիսյան դպրոցում՝ որպես տեսուչ և ուսուցիչ:

16 (էջ 117)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԿՁ, 1100: Տես ԽՍ, 1970, թիվ 5, էջ 56):

1. Կոմիտասը 1907 թ. հուլիսի 20-25-ին Արշակ Զոպանյանի հետ Փարիզից մեկնել է Իտալիա (Վենետիկ) և ապա օգոստոսի 17-ին ժամանելով Լոզան՝ գրել է սույն նամակը:

2. Խոսքը հավանաբար Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերունի. 1837-1920) մասին է. բժիշկ, հանդես է եկել մամուլում հոգվածներով, ճամփորդական նոթերով:

ԲԱՐՄԵԴ ԿՈՐԴԱՆԵԱՆԻՆ (էջ 118)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՁ, 1748):

Բարսեղ Կորդանյան (Ղորդանյան, Վասիլի Կորդանով. 1865-1934) — երաժշտագետ, քննադատ: Ծովասատանի երաժշտական ընկերության թիֆլիսի բաժանմունքի հիմնադիրը: Հայ առաջին երաժշտագետներից էր, որ ժամանակին գնահատեց Հայ առաջին երաժշտագետներից էր, որ ժամանակին գնահատեց Կոմիտասի գիտահետազոտական աշխատանքը: «Հայ եկեղեցական երաժշտութիւն» աշխատությունը գերմաներենից թարգկան երաժշտութիւն» աշխատությունը գերմաներենից թարգկան երաժշտութիւն» աշխատությունը գերմաներենից թարգկան մանել և զետեղել է «Կավказский вестник»-ի 1900 թ. 1-ին համարում:

ԿՈՐԻՒՆԻՆ (էջ 119)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, Սինոդի Փ. 56, գ. 378):

Հրապարակված է ԲՀԱ, էջ 159:

Հասցեատերը մեզ անհայտ է:

1. Նկատի ունի մշակութային գործիչ Խորեն Խըմյանին (1843-1914):

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ (Էջ 120)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՎՄՖ, 384): Նամակում
բերված է. Հովհաննիսյանի բանաստեղծությունն, ըստ երևոյ-
թին, անտիպ է. Համենայն դեպս բացակայում է բանաստեղծի
ժողովածուներից:

«ՀՈՎԻՏ» Խ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ (Էջ 121)

Տպագրվում է «Հովիտ» ամսագրից (1912, թիվ 9, էջ 142):

Տես ԽՍ, 1973, թիվ 3, էջ 54):

1. Թիֆլիսի «Հովիտ» շաբաթաթերթի «Լուրեր», բաժնում
1912 թ. փետրվարի 5-ին հրապարակվել է հաղորդագրություն,
թե իբր «Յայտնի երաժշտագէտ Կոմիտաս վարդապետը թող-
նում է հոգեւոր կոչումը, որի մասին Կ. Պոլսից խնդրամատոյց
է եղել Տ. տեղակալին»:

2. Տես աստ, Գևորգ Արքեակիսկովսին գրված նամակը:
Այս կապակցությամբ Մաղաքիա Օրմանյանը 1912 թ. մարտի
20-ին Տիրայրին ուղղած նամակում գրել է. «...Կոմիտաս վար-
դապետին համար զրպարտութիւնը հիմնովին սուտ էր, եւ կը
զարմանամ, որ «Հովիտ»ը եղաւ այդ զրպարտութեան հրապա-
րակ նետողը...» («Տեղեկագիր», 1956, թիվ 9, էջ 111):

ՎԱՀԱՆ ՄԱԼՔԶԵԱՆԻՆ (Էջ 122)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՎՄՖ, 315): Հրապա-
րակվել է «Սովետական արվեստ» ամսագրում (1962, թիվ 10, էջ
55-56): Տես նաև ԽՍ, 1973, թիվ 6, էջ 55):

Վահան Մալեզյան (1871-1966) – սփյուռքահայ գրող և
մշակութային գործիչ: Եղել է Հայկական բարեգործական ընդ-
հանուր միության քարտուղար:

1. 1912 թ. հունվարի երկրորդ կեսին Կոմիտասը Կ. Պոլսում

կատարել է նոր կազմվելիք «Գուսան» երգչախմբի ձայնաքննությունն ու ընդունելությունը:

2. 1912 թ. ապրիլի 1-ին Պրտի Շահի ձմեռային թատրոնում տեղի է ունենում երաժշտանոց հիմնելու օգտին կազմակերպված «Գուսան» երգչախմբի երգահանդեսը («Բիւզանդիոն», 1912, թիվ 4702, էջ 2): Ազգային հիվանդանոցի օգտին համերգը կայացել է նույն տեղում, ապրիլի 8-ին: Համերգն անցել է մեծ հաջողությամբ և ոչ միայն «900 հնչուն ոսկի» նպաստ է բերել հիվանդանոցին, այլև առիթ դարձել «Հայ ինքնուրոյն երաժշտութիւնը վերագնահատելու եւ անոր պատմական արժէքը վեր հանելու փորձեր ըլլալուն մամուլին մէջ» («Ազատամարտ», 1912, թիվ 866, էջ 4):

3. Կոմիտասին՝ սուլթանի արարողապետ Խսմայիլ Ճենանի պեյի այցելության մասին տես Փանոս Թերլեմեզյանի հուշերը (ԺԿՄ, էջ 190):

4. 1911 թ. Հայկական բարեգործական ընդհանուր միության հնդամյակի առթիվ Կոմիտասը Մալեզյանից առաջարկ է ստացել հորինելու միության քայլերգը: Այդ նպատակով Մալեզյանի կողմից ուղարկած ոտանավորներից ոչ մեկը չի բավարարել Կոմիտասին, և ինքն է որոշել գրել խոսքերը: 1914 թ. նա Մալեզյանին ուղարկել է «Պանծա դու, Հայ Միութիւն» քայլերգը: Բայց, ինչպես նշվում է, արդեն ուշ էր. մի քանի ամիս առաջ վարչությունը պաշտոնապես ընդունել էր Հ. Մինանյանի քայլերգը՝ Վ. Մալեզյանի խոսքերով:

ԱՆՏՕՆ ՄԱՅԻԼԵԱՆԻՆԻՆ

1 (էջ 124)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՖ, 43):
Անտոն Մայլյան (1880-1942) – երգահան. 1910 թ. Բաք Անտոն Մայլյան (1880-1942) – երգահան. 1910 թ. Բաք Վում հիմնադրել է «Թատրոն եւ երաժշտութիւն» ամսաթերթը:

1. Խոսքը Մայլյանի տպագրելիք ամսաթերթի առաջին գեղությունը գետեղելու համար Կոմիտասից ակնկալով «Հայ համարում գետեղելու համար Կոմիտասից ակնկալով» «Հայ գեղությունը պարը» ուսումնասիրության մասին է: Այն լույս է գեղությունը պարը» ուսումնասիրության մասին է:

տեսել «Թատրոն եւ երաժշտութիւն» ամսաթերթի 3-4-ըդ և 5-6-ըդ համարներում (էջ 26-27 և 51-52):

2 (էջ 125)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԹ, 32: Տես ԽՍ, 1971, թիվ 1, էջ 52):

1. Նկատի ունի դաշնակահարուհիներ Հեղինե Աղամյանին (1881-1960) եւ Եվգինե Աղամյանին (1883-1945): Մասնագիտական կրթությունը ստացել են մնակի և Բեռլինի կոնսերվատորիաներում: Աշակերտել են նշանավոր երաժիշտ Մարտին Կրառուզեին: Աղամյան քույրերի մասին ակնարկ է տպագրվել «Թատրոն եւ երաժշտութիւն» ամսաթերթի 1-2-ըդ համարում (էջ 4-5):

2. Խոսքը ամսաթերթի նույն համարում լույս տեսած «Երեկոյթ» հոդվածի (էջ 22-23) հեղինակի մասին է:

3 (էջ 126)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԹ, 33: Տես ԽՍ, 1971, թիվ 1, էջ 53):

1. Խոսքը «Հայ գեղջուկ պարը» հոդվածի առանձնատիպը կրկին շարելու և տպելու մասին է:
ՎԱՀՐԱՄ ՄԱՆԿՈՒՆՈՒՆ

1 (էջ 126)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՌԹՖ, 82): Վահրամ Մանկունի (1846-1920) - հոգևորական, մշակութային գործիչ:

1. Նիկողայոս Թաշճյան (1841-1885) - երաժշտագետ, 1874թ. հրատարակել է «Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց» ձեռնարկը և «Զայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի» ծավալուն հատորը:

2 (էջ 132)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿԹ, 1446): Հրապարակվել է «Անահիտ» հանդեսում (նոյեմբեր 1932 - ապրիլ 1933, էջ 229: Տես նաև ԽՍ, 1970, թիվ 5, էջ 56):

ԱՐՄԻՆԷ ՄԵԼԻՔԵԱՆԻՆ (Էջ 137)

Տպագրվում է ըստ «Գարուն» ամսագրի (1969, թիվ 11, էջ 19):

Նամակը հրապարակել է Խոբերտ Աթայանը, ըստ որի, «նույնիսկ լավ գրաբար իմացողը դժվարությամբ գլուխ կհանի արհեստականորեն բարդացված այս «հրամանից»: (Նկատենք, որ 24 տողն ընթանում է առանց վերջակետի, որպես մեկ բարդ նախադասություն): Նամակի բացատրությունը տես նույն տեղում:

Արմինե Մելիքյան – Կոմիտասի ընկերոջ՝ Համբարձում Մելիքյանի դուստրը:

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ

1 (էջ 138)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՄՁ, 225 ը): Գրված է բացիկի վրա (տես Ս. Մելիքյան, Հոդվածներ, հունվար, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1964, էջ 155: ԽՍ, 1970, թիվ 5, էջ 53):

Սպիրիդոն Մելիքյան (1880-1933) – երգահան, ազգագրագետ: Կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ աշակերտելով Կոմիտասին: 1902 թ. պաշտոնավարել է ճեմարանում որպես երգի ու երաժշտության ուսուցիչ, միաժամանակ եղել է Կոմիտասի օգնական խմբավարը: Ս. Մելիքյանի եկեղեցական անունը եղել է Ստեփան (Ստեփանոս), որը Կոմիտասը երբեմն կատակով գարձրել է թստերան:

1. 1907 թ. հունիսի 1-ին Կոմիտասի գլխավորած հայ և ոռոսուսանողուհիներից կազմված երգչախումբը ժնկի կոնսերվատորիայի մեծ սրահում Վանի սովորական ի նպաստ տվել է երգահանդես: Համերգին մասնակցել է նաև Ա. Շահմուլալյանը: Հայ երաժշտության և բանաստեղծության մասին բանայանը: Հայ երգահանդեսության և բանաստեղծության մասին բանայանը: Համերգից գոյացած ամբողջ հասույթը խոսել է Ա. Զոպանյանը: Համերգից գոյացած ամբողջ հասույթը ուղարկվել է Վան («Անահիտ», 1907, թիվ 6-9, էջ 160):

2. Հունիսի 3-ին Կոմիտասը և Ա. Զոպանյանը Լոգանում լուսանկարվել են Ռ. Սևակի և երկու հայ ուսանողների հետ:

3. Հունիսի 4-5-ին Կոմիտասը Բեռնում դասախոսություն է կարդացել հայ ժողովրդական երաժշտության մասին («Արարատ», 1907, թիվ 10, էջ 909):

2 (էջ 138) Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՄՖ, 225 գ): Գրված է բացիկի վրա:

3 (էջ 139) Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՄՖ, 225 ա: Տես Ա. Մելիքյան, Հոդվածներ, էջ 156: ԽՍ, 1974, թիվ 8, էջ 55):

1. 1913 թ. հունիսի 25-ին Կոմիտասը Կ. Պոլսից Էջմիածին ուղևորվելով՝ ժամանել է Թիֆլիս:

2. Ա. Մելիքյանը 1912 թ. հոկտեմբերի 30-ին բացել է Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերությունը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻԱՄՆԻԿԵԱՆԻՆ (էջ 140)

Տպագրվում է ըստ Փոտոպատճենի (ԳԱԹ, ԿՅ, 1583): Հրապարակվել է «Սովետական արվեստ» ամսագրում (1956, թիվ 2: Տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 63):

Ալեքսանդր Մյանիկյան (1886-1925) – կուսակցական, պետական գործիչ: 1909 թ. նա Սոսկվայի համալսարանի ուսանող է եղել և լավ ճանաչելով Կոմիտասին՝ Ուսանողական միության անունից դիմել է նրան՝ գալ Սոսկվա, երգչախումբ կազմակերպել ու համերգներ տալ միության օգտին:

ՅՈՎՃԱՆՆԵՍ ՄՈՒԹԱՖԵԱՆՑԻՆ (էջ 144)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1570): Հրապարակվել է «Հայրենիքի ձայն» թերթում (1968, թիվ 40: Տես նաև ԽՍ, 1971, թիվ 9, էջ 58):

Հովհաննես Մութափյան – հասարակական գործիչ, «Մանթաշով» ընկերության եգիպտոսի ճյուղի տնօրեն: Հրավիրել է Կոմիտասին համերգով և դասախոսություններով՝ հանդես դալու Ալեքսանդրիայում:

1. 1911 թ. հունվարի 30-ին Զմյուռնիայում Աբորթինկ սրահում տեղի է ունեցել Կոմիտասի ղեկավարած երգչախմբի

Համերդը («Դաշինք», 1911, թիվ 455, էջ 1):
ՅԱԿՈԲԻՆ (էջ 142)

Տպագրվում է Կ. Պոլսի «Քուլիս» հանդեսից (թիվ 302, էջ 8):

Հստ խմբագրության ծանուցման, «Ձեռագիրը մեզի տրամադրուած է լուսանկարիչ պղն. Երուանդ Ասլանեանի կողմէ»:

Հասցեատերը մեզ անհայտ է:

**1. Մարթեն Հակոբյանը Պոլսի երաժշտանոցի հաստատման
հանձնաժողովի անդամներից էր:
ԻՐՈՒՅՆԴ ԹԱԿՈԲԵԱՆԻՆ**

1 (59 143)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, կժ, 1369): Այս և հաջորդ նամակը հրապարակվել է Սոֆիայի «Ազատ խօսք» օրաթերթում (1947, 17 նոյեմբեր):

Դատելով բովանդակությունից, հասցեատերը բովզարահայ մտավորականներից է, որ գործել է Ֆիլիպե քաղաքում։ Տեղի հայ գրասիրաց Ընկերության հրավերով՝ է 1914 թ. ամռանը Կոմիտասը այցելել Ֆիլիպե և հանդես եկել դասախոսությամբ (տես նաև Ա. Զոռանաւանին գրած 33-րդ նամակի 1-ին ծան.):

2 (59 144)

Տպագրվում է ըստ Ե. Հակոբյանի՝ արտագրած օրինակ (ԳԱԹ, ԿՅ, 1370):

1 (E9 144)

Արշակ Չոպանյան (1872-1954) - բանասմէլ, գրաքանչական գործիչ, հայության առաջատար գործիչներից մեկը:

անդրանիկ հոդվածը Կոմիտասի մասին («Անահիտ», 1901, թիվ 6-7, էջ 141) :

1. Խոսքը «Մերկուր դը Ֆրանս» ամսագրի 1900 թ. նոյեմբերի համարում Ա. Զոպանյանի Գրիգոր Նարեկացուն նվիրված հոդվածի մասին է (տես «Անահիտ», 1901, թիվ 1, էջ 18, 1901, թիվ 12, էջ 291):

2 (էջ 145)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ց, 3387):

3 (էջ 146)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ց, 3388):

1. Խոսքը Արմաշի դպրեվանքի երաժշտության ուսուցիչ Համբարձում Զերչյանի մասին է, որը զբաղվել է շարականների ձայնագրությամբ:

2. Խոսքը հավանաբար Բյուզանդ Պոյաճյանի մասին է (1852–1933). խմբագիր, կրթական գործիչ:

3. Քրիստափոր Կարա-Մուրզա (1853-1902) – երգահան, խմբագար: 1885 թ. հայ իրականության մեջ տվել է առաջին քառաձայն երգի համերգը: 1893 թ. կաթողիկոսի ցանկությամբ Կոմիտասը փոխարինել է աշխատանքից ազատված Կարա-Մուրզային, որը հոգևորականության դժուհությունն էր հարուցել իր առաջադիմական գործունեության պատճառով: Հավաքել է ժողովրդական երգեր՝ իր համերգներում հետզհետե լայն տեղ տալով դրանց քառաձայն մշակումներին:

4 (էջ 147)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ց, 3389):

1. «Հազար ու մի խաղ» ժողովածուի առաջին հիմնյակը լույս է տեսել Էջմիածնում, 1903 թ. օգոստոսին:

2. Կոմիտասի ճայնագրած քրդական եղանակները լույս են տեսել 1903 թ. դեկտեմբերին Մոսկվայում:

5 (էջ 148)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ց, 3390):

1. Նկատի ունի եկեղեցական գործիչ Վռամշապուհ Քի-պարյանին (1855-1940):

2. «Հազար ու մի խաղ» ժողովածուի երկրորդ հիսնյակը լույս է տեսել Էջմիածնում, 1905 թ. օգոստոս-սեպտեմբերին:

6 (էջ 149)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՖ, 3391):

1. Նկատի ունի Փարիզի ժան Գուժոն փողոցում Ալ. Մանթաշյանի կառուցած եկեղեցու բացումը:

2. Ըստ նամակի հրապարակող Մ. Մուրադյանի, Կոմիտասն այստեղ նկատի ունի Փրանսիական բեմի հայագիր գերասան Մաքս Մաքսուդյանին (ՊԲՀ, էջ 250): Սակայն ավելի հավանական է, որ խոսքը Մեսրոպ Վարդապետ Մաքսուդյանի (1876-1918) մասին է, որը 1911 թ. Փարիզում պաշտպանել է դիսերտացիա «Ակնայ բարբառը» թեմայով:

7 (էջ 150)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՖ, 3392):

8 (էջ 152)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՖ, 3393):

1. Խոսքը «Հայ գեղջուկ երաժշտութիւն» աշխատության մասին է, որ տպագրվել է 1907 թ. «Անահիտ» հանդեսում (1907, թիվ 3-5, էջ 69, թիվ 6-9, էջ 120):

9 (էջ 153)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՖ, 3394): Գրված է բացիկի վրա:

1. 1906 թ. Բեռլին մեկնող Կոմիտասից Ռուստովում գնաց-քում գողացել են պայուսակը, որի մեջ էին Զոպանյանին ուղարկվելիք «Հայ գեղջուկ երաժշտութիւն» աշխատության և «Հայ քնար» ժողովածուի մաքրագիր ձեռագրերը:

10 (էջ 154)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՖ, 3395):

1. Խոսքը Կոմիտասի խազագիտական աշխատության մա-

սին է (տես Հ. Արշարունուն գրած նամակի 2-րդ ծան.):

11 (Էջ 155)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՁ, 3396):

1. Խոսքը 1906թ. դեկտեմբերի 1-ին Փարիզում տրվելիք նվագահանդեսի մասին է (տես աստ, Կ. Կոստանյանին գրած 15-րդ նամակի 1-ին ծան.):

2. Կ. Կոստանյանի գրած հիշյալ նամակում Կոմիտասը տեղեկացրել է, որ դեկտեմբերի 6-ի համար դասախոսության հրավեր է ստացել տեղական երաժշտագետների միության նախագահից: Մինչ այդ, դեկտեմբերի 1-ին Կոմիտասի տված երգահանդեսի առաջին բաժնից հետո Ա. Չոպանյանը հանդես է եկել Հայ երաժշտության ու բանաստեղծության մասին մի ընդարձակ բանախոսությամբ («Անահիտ», 1906, թիվ 10-12, էջ 240):

3. Նկատի ունի 1895թ. Էջմիածնում տպագրած իր «Շար Ակնայ ժողովրդական երգերի» գրքույկը:

12 (Էջ 156)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՁ, 3397: Տես ԽԱ, 1970, թիվ 2, էջ 63):

1. Կոմիտասի «Հայ գեղջուկ երաժշտութիւն» ուսումնամիրության առաջին մասը լույս

է տեսել 1907թ. «Անահիտ» հանդեսում (թիվ 3-5, էջ 70-72: Շարունակությունը՝ անդ, էջ 127-129):

2. 1907թ. մայիսին Փարիզի «E. Demets» հրատարակչությունը հայերեն և ֆրանսերեն տեքստերով լույս է ընծայել Կոմիտասի գեղջուկ երգերի ժողովածուն՝ «Հայ քնար խորագրով»: Մինչ այդ, «Le Mercur musical» հանդեսում (1907, թիվ 5, էջ 472-488) ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակվել է «Հայ գեղջուկ երաժշտութիւն» ուսումնասիրության մի գլուխը:

13 (Էջ 159)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՁ, 3398):

14 (Էջ 160)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՁ, 3399):

1. Հովակիմ Մուղունեան – երգիչ, (տե՛ս «Անահիտ», 1907, թիվ 6-9, էջ 160):

15 (էջ 162)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՁ, 3400): Գրված է բացիկի վրա:

1. «Mercure Musical»-ը երաժշտական միջազգային ընկերության Փարիզում հրատարակվող պաշտոնական ամսաթերթն էր, որտեղ 1906 թ. Զուգանյանի թարգմանությամբ տպագրվել է Կոմիտասի «Ժողովրդական եղանակների ծաւալումն ու զարգացումը, ծխական դպրոցի դերը Գէորգ Դ եւ Մակար կաթողիկոսների օրով, երգաստեղծութիւն, երգեցողութիւն» հոդվածը:

16 (էջ 162)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՁ, 3401): Գրված է բացիկի վրա:

17 (էջ 162)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՁ, 3419):

1. Խուքը 1907 թ. հունվարի 13-ին Փարիզի «Արվեստի դպրոցի» վարչության հրավերով հայ գեղուուկ երաժշտության վերաբերյալ Կոմիտասի կարդացած դասախոսության մասին է: Նույն թեմայով կարդացվելիք դասախոսության վերաբերյալ տեղեկություն չգտանք:

2. Պնևմատիկ (օդատար) փոստով նամակ:

18 (էջ 163)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՁ, 3402): Գրված է բացիկի վրա:

1. E. Demets – Փրանսիացի հրատարակիչ. 1907 թ. տպա-

գրել է Կոմիտասի «Հայ քնար» ժողովածուն:

19 (էջ 163)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՁ, 3403): Գրված է բացիկի վրա:

20 (էջ 164)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՅ, 3404): Գրված է բացիկի վրա:

1. Կոմիտասը ժնեկի հայ և ռուս ուսանողների աջակցությամբ 1907 թ. հունիսի 1-ին կազմակերպել է հայ երգի երեկո, որին մասնակցելու էր Հրավիրել Ա. Շահմուրադյանին:

21 (էջ 164)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՅ, 3405: Տես ԽՍ, 1970, թիվ 5, էջ 56):

1. Խոսքը հավանաբար իրավաբան Մելիք-Հայկազյանի լնտանիքի մասին է:

2. Խոսքը դաշնակցական գործիչ Խաչատրուր Մալումյանի (Է. Ակնունի. 1863-1915) մասին է: Ուսանել է ժնեում:

3. Նալբանդեան Մարտիրոս (1872-1916) - կրթական-մշակութային գործիչ, գիտնական: Լողանում Հիմնել է Հայկական վարժարան, հրատարակել է «Գիտութիւն» հանդեսը (1904 թ.):

4. Լեռպոլդ Ֆաւը - ժնեում Կոմիտասի համերգի կազմակերպիչն ու հովանափորը:

5. Խոսքը Գասպար Խիեքյանի (1883-1952) մասին է. թատերական գործիչ: Հետևել է Լողանի համալսարանի և Փարիզի կոնսերվատորիայի դասընթացներին: 1908 թ. եկել է Թիֆլիս և կազմել հայ թատրոնին:

22 (էջ 166)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՅ, 3406): Գրված է բացիկի վրա (Տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 55):

23 (էջ 167)

Տպագրվում է ըստ «Սովետական արվեստ» ամսագրի (1962, թիվ 10, էջ 54): Բնագիրը գտնվում է ԳԱԹ, ԱԶՅ, 3408: Հրապարակել է Գոհար Ազնավուրյանը, ըստ որի «Կոմիտասից Չոպանյանին ուղղված այս նամակը, պատռված լինելու հետևանքով, բավականաչափ տուժել է տեքստը, որի մոտավոր բովանդակությունը աշխատեցինք վերականգնել՝ դնելով համա-

պատասխան բառեր, երբեմն մեկի փոխարեն նաև երկուսը, որոնք առնված են փակագծերի մեջ: Նամակի վերջին մեկ տողը բոլորպին վնասված է և չի ընթերցվում»:

24 (էջ 169)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՅ, 3409):

1. Երվանդ Մանվելյան (1872-1948) – բժիշկ, ֆրանսագիր բանաստեղծ:

25 (էջ 170)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՅ, 3410: Տես ԽՍ, 1970, թիվ 6, էջ 57):

1. Նկատի ունի Մեսրոպ եպիսկոպոսին (Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան):

26 (էջ 172)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱԶՅ, 3411):

1. Նկատի ունի Գարեգին Հովսեփյանին:

2. Նկատի ունի կաթողիկոսի տեղապահ Գևորգ արք. Առենյանցին:

3. Նկատի ունի Բեսարաբիայի հայոց հոգևոր առաջնորդ արք. Հովսեփ Մովսիսյանին: Եկեղեցու գումարների յուրացման համար է Կոմիտասը նրան գող անվանել:

4. Նկատի ունի Մինաս Բերբերյանին (տես աստ, նրան գրված նամակի ծան):

5. Նկատի ունի Երվանդ Տեր-Մինասանին (1879-1974). Նկատի ունի Տերվանդ Տեր-Մինասանին: 1909 թ. դասավանդել է Գևորգյան բանասեր, պատմաբան: 1909 թ. դասավանդել է Կոմիտասը: Տեմարանում: Եղել է էջմիածնի տպարանի տնօրինը:

6. Նկատի ունի Հովսեփ Վարդապետ Ջոհրապյանին:

7. Նկատի ունի 1909 թ. մարտի 3-ին Թիֆլիսում բարեգործական նպատակով կազմակերպված համերգը՝ տարբեր դադործական նպատակով կազմակերպված համերգը: Կոմիտասնքի պատկանող երգչախմբերի մասնակցությամբ: Կոմիտասը համերգին վարել է Ներսիսյան դպրոցի երգչախումբը:

8. Հավանաբար նկատի ունի Փրանսահայ նկարիչ Էդգար Շահինին (1874-1947):

9. Հավանաբար խոսքը Օննիկ Գարիբյանի մասին է:

27 (Էջ 177): Տեղապահ Առաքել Մատուցան առ այս օր մասին է:

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ֆ, 3412):

1. Մատթեոս Իզմիրլյանը օսմանական արքունիքի կողմից 1896 թ. օգոստոսի 23-ին աքսորվել է Երուսաղեմ (ազատ է արձակվել 1908-ին):

28 (Էջ 178)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ֆ, 3413):

1. Կոմիտասը հոկտեմբերի 26-ին մասնակցել է Դարիա Մանթաշյանի հուղարկավորմանը: Պատարագի ընթացքում երգել է Ներսիսյան դպրոցի երգչախումբը և ինքը՝ Կոմիտասը, «որի շնորհալի երգեցողութիւնը գեղեցիկ տպաւորութիւն թողեց ամբողջ ժողովրդի վրայ» («Մշակ», 1909, թիվ 237):

2. Ա. Տիգրանյանի մասին տես աստ, նրան գրված նամակի ծան:

3. Խոսքը Բենիկ վարդապետ Եղիազարյանի մասին է:

4. Մարադբեգեան Վարդապետ – հետագայում՝ խորեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս (1911-1930):

5. Երեմիա եպիսկոպոս – Մկրտիչ Խրիմյանի գահակալությունից առաջ կաթողիկոսի տեղապահ:

29 (Էջ 183)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ֆ, 3414: Տես ԽՍ, 1971, թիվ 1, էջ 51):

Ա. Չոպանյանի վկայությամբ, Կոմիտասը 1910 թ. մի նամակ է գրել իրեն (բնագիրը մեզ Հայտնի չէ), հայտնելով, թե «Պոլսէն փափաք յայտնողներ եղած էին որ Հոն Երթար, յոյս տալով որ իր գործունէութեան համար լաւ պայմաններ պիտի գտնէր Հոն, նոյն ատեն Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսիսեան, որ Թիֆլիսի առաջնորդ էր այդ միջոցին, իրեն առաջարկած էր գալ Ներսիսեան դպրանոցի երաժշտութեան ուսուցչութիւնը եւ կարծեմ նաեւ քաղաքին աւագ եկեղեցւոյն դպրապետութիւնը

ստանձնել։ Երկուքէն ո՞րը նախընտրել, կը վարանէր որոշում տալ, եւ ինծի խորհուրդ կը հարցնէր» («Անահիտ», 1931, թիվ 1-2, էջ 119-120)։ Շարունակելով՝ Զոպանյանն ասել է. «Մղեցի զինքը Պոլիս նախընտրել»։ Եվ, իրոք, Կոմիտասը նախընտրել է Պոլիսը։

30 (էջ 183)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ֆ, 3415)։

31 (էջ 184)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ֆ, 3416)։

1. Նկատի ունի Ռուսաստանի պարտութիւնը 1904-1905

թթ. ռուս-ճապոնական պատերազմում։

2. Փերպուրի - այսինքն՝ Պետերբուրգի։

32 (էջ 188)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.Զ.Ֆ, 3417)։

1. Նկատի ունի Հայկական կուսակցությունների արկածախնդրությունները (Բանկ Օտոմանի գրավում և այլն), որոնց հետեւցին Համիդյան կոտորածները։

2. Նկատի ունի 1911-ից Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ

ե. Տիգրիսի Սուլեյմանցին։

33 (էջ 190)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Կ.Ֆ, 1447)։

1. 1914 թ. Հունիսին Փարիզում երաժշտության միջազգային ընկերության Համագումարին մեծ հաջողությամբ մասնակցելուց հետո Կոմիտասը վերադարձել է Պոլիս։ Մինչ վերադր նա այցելել է Վիեննա և Ֆիլիպ' ներկայացնելով՝ հայոց կեղծուկ երաժշտությունը։

2. Եղիշե եպիսկոպոս Դուրյան (1860-1930) - եկեղեցական գործիչ, բանասեր, բանաստեղծ։ 1909-1910 թթ.՝ կ. Պոլսի պատրիարք, 1911-1921 թթ.՝ ուսուցիչ կ. Պոլսի գպողոցներում։ Պոլսարիարք, 1921-1922 թթ.՝ ուսուցիչ կ. Պոլսի գպողոցներում։ Կոմիտասին, Հայ որոշ հետադեմ հոգեկորականներ մեղադրել են Կոմիտասին, որ նա իր նվագակցությամբ և Ա. Շահմուրադյանի կատարմամբ

ձայնասկավառակի վրա գրանցել էր «Աստծոյ տաճարին յատկացեալ սրբազն երգելը» և հանել վաճառքի: Կոմիտասի այդ «անվայել ընթացքը» դատապարտել է կրոնական ժողովը հատուկ որոշմամբ: Դա առթել է ժողովրդի և մի շարք մտավորականների արդարացի զայրութը, որոնց ճնշման տակ պատրիարքը չեղյալ է հայտարարել այդ որոշումը:

34 (էջ 191)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՅ, 3418): Գրված է բացիկի վրա:

35 (էջ 191)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՅ, 3407):

36 (էջ 192)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Ա.ԶՅ, 3420):

ՊԵՏՐՈՍԻՆ (էջ 192)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՅ, 1749): Հասցեատերը մեզ անհայտ է: Թերևս նույն անձնափորությունն է, որին Կոմիտասը հիշել է Կ. Կոստանյանին գրած Յ-րդ նամակում: Խ. Սամվելյանը սիալմամբ նամակի հասցեատեր է համարել Ղորդանյանին (տես ԽԱ, 1969, թիվ 12, էջ 61):

1. 1904 թ. սեպտեմբերի 24-ին Գևորգյան ճեմարանի հիմնադրման երեսնամյակի առիթով Մայր Տաճարում տեղի է ունեցել հանդիսավոր պատարագ՝ Կոմիտասի գլխավորած քառաձայն երգչախմբի մասնակցությամբ:

2. Խրիմյան Հայրիկն Ամենայն հայոց կաթողիկոս է օծվել 1894 թ. սեպտեմբերի 26-ին Էջմիածնում:

ՍԻՐԱՆՈՅՑԻՆ (էջ 193)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԱՅ, 225): Հրապարակվել է «Գրական թերթ»ում (1936, թիվ 9):

1. 1909 թ. Բաքվում նշվել է մեծ դերասանուհի Սիրանոյշի (1857-1932) բեմական գործունեության 35 ամյակը:

2. Նկատի ունի Սիրանոյշի դուստր Աստղիկ Նիկոսյանին, որը հետագայում բնակվել է Եգիպտոսում, ապա Զիլիում:

ՄԵՍՐՈՊ ՍՄԲԱՏԵԱՆԻՆ

1 (էջ 195)

Տպագրվում է ըստ բնագրի (Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 236, ԺԱ, վավ. 169): Այս և Հաջորդ նամակը հրապարակվել են՝ «Տեղեկադիր», 1956, թիվ 9, էջ 104-105:

Մեսրոպ արք. Սմբատեան (1833-1911) – եկեղեցական գործիչ բանասեր-պատմաբան: Եղել է Գևորգյան ճեմարանի վերաբեսուչ, 1805-ից՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության տեղապահ: Նա է 1895 թ. փետրվարի 25-ին, «դրոշմամբ անուանական կնքոյ», Կոմիտասին շնորհել վարդապետական աստիճան ստանալու մասին վկայական:

2 (էջ 196)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, Հայ գրողների նամակների հավաքածու, անձմշակ): Նամակի ըրջերեսին՝ «Ամենապատիւ Սրբազն Հօրն Մեսրոպ արքեպիսկոպոսի Սմբատեան, Տեղակալի Հայրապետի Ամենայն Հայոց»:

ՄԱՐԻՆԱ. ՍՏԱՄՊՈԼՅԵԱՆԻՆ (էջ 197)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՖ, 711, էջ 16: ԽՍ, 1974, թիվ 5, էջ 52):

Կոմիտասի այս աշակերտուհին հավանաբար մշակութային գործիչ Մարինոս Ստամպոլյանն է, որը անգլերենից թարգմանել է Շառլոթ Բրոնթեի «Ձերն էյր» վեպը:

ԿԻՒՐԵՂ ՍՐԱՎՊԵԱՆԻՆ (էջ 197)

Տպագրվում է ըստ բնագրի (Մատենադարան, Կյուրեղ Սրապյանի Փ., թղթ. 82, վավ. 811): Հրապարակվել է «Տեղեկադիր», 1956, թիվ 9, էջ 104-105:

ՎԱՐԻԿՕ ՎՐԱՑԵԱՆԻՆ

1 (էջ 198)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԿՖ, 1630): Գրված է

բացիկի վրա: (Տես, ԽՍ, 1971, թիվ 2, էջ 58):

Վառիկո Վրացյան – Կոմիտասի էջմիածնի խմբի երգչուհի:

1. Լեռն երամեան (1892-1938) – դերասան: Կրթությունն

ստացել է Ներսիսյան դպրոցում, աշխատել է Թիֆլիսի «Նոր դրամայի ընկերություն» թատրոնում և Զուբալովի ժողովրդական տան հայկական թատրոնում:

2. Շուրջ երկու ամիս իր ծննդավայր Քյոթահայում հարազատների ու մանկության ենկերների հետ հանգստանալուց և հայրենակիցների համար համերգներ ու պատարագ տալուց հետո Կոմիտասը 1910 թ. օգոստոսի 20-ին մեկնել է Աֆրոն-Գարահիսար:

2 (էջ 198)

Տպագրվում է ըստ նույն աղբյուրի: Նույնպես գրված է բացիկի վրա: (Տես ԽՍ, 1973, թիվ 3, էջ 55):

1. 1911 թ. հուլիս-օգոստոս ամիսների մեջ Կոմիտասը շուրջ երկու շաբաթ հանգստացել է Անգլիայի Ուայթ կղզու Շենքլին քաղաքում:

ՂԵԻՌՆԴ ՏԱՅԵԱՆԻՆ

1 (էջ 199)

Տպագրվում է ըստ «Բազմավիճ» հանդեսի (1936, թիվ 1-2, էջ 8):

Աւոնդ Տայան (1884-1968) – երաժտագետ, Միսիթարյան միաբանության անդամ: 1921-1927 թթ. «Բազմավիճ»ի խմբագիր:

1. Կոմիտասը Վենետիկում եղել է 1907 թ. հուլիսին, որտեղ տեղի են ունեցել նրա հետ հանդիպումներ Վենետիկի Ս. Ղազարի միաբանության դահլիճում և Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում: Այստեղ Կոմիտասը խոսել է իր կատարած աշխատանքներին, ինչպես նաև հայ ժողովրդական երգի ծագման խնդրի շուրջ: Ղ. Տայանը Ս. Ղենոն կղզում գտնվելու պատճառով չի հանդիպել Կոմիտասին: Շուրջ մեկուկես տարի հետո նա նամակով հայտնել է իր համակրանքը Կոմիտասի անձի և գործի հանդեպ, ցավելով, որ զրկվել է գասալխոսությունները լսելուց: Խնդրել է Կոմիտասի երկասիրությունների ցանկը՝ նրանից օգտվելու համար և փափագ է հայտնել մի նմուշ ունե-

նալու «իր երգերէն, որոնց արձագանքը այնքան վառեր էր զիս»:

2 (էջ 200)

Տպագրվում է ըստ նույն աղբյուրի:

1. Նկատի ունի Կովկասի փոխարքա, գեներալ-լեյտենանտ, կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովին (1837-1916):

2. Թիֆլիսի Արքունական թատրոնի դահլիճում, 1909 թ. մարտի 3-ին տեղի է ունեցել Սկոբելյան կոմիտեի (բարեգործական նպատակով) կազմակերպած տարբեր դավանանքի պատկանող երգչախմբերի համերգը: Խուսական խումբը վարել է Դանովսկին, վրացականը՝ Սուլխանովը, կաթոլիկականը՝ Ավենիցին, իսկ հայկականը՝ Կոմիտասը (Տես նաև Ա. Թոպանյանին գրած 26-րդ նամակի 7-րդ ծան.):

3. Կոմիտասը պատասխան նամակի հետ մեկտեղ Ղ. Տայանին է ուղարկել «Ախ, մարալ ջան» երգի ինքնազիր նոտագրված տեքստը և իր լուսանկարը՝ հետևյալ մակագրությամբ. «Գեր. Ղ. Ղևոնդ Տայեանին - լիշտակ բարեկամութեան. Կոմիտաս Վարդապետ. 1909, 12, Զ.Ս. Էջմիածին»:

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍԻՍԵԱՆԻՆ (էջ 202)

Տպագրվում է ըստ բնագրի (ՊՊԿԱ, ֆ. 312, ց. 1, գ. 173):
Հրապարակվել է ԲՀԱ, էջ 162:

Մեսրոպ Տեր-Մովսիսյան (1865-1939) – եկեղեցական գործիչ, մանկավարժ, մատենագետ: Նրա մասին տե՛ս Գ. Տէր-Վարդանեան, Մեսրոպ Մագիստրոս, արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան, Երևան, 1999:

1. Մ. Տէր-Մովսիսյանը 1906 թ. հունիսի 17-ին նշանակվել է Գևորգյան ճեմարանի տեսուչ: Այդ լրջանում բազմաթիվ ուսումնական հաստատություններում, այդ թվում նաև Գևորգյան ճեմարանում, ուժեղանում էին հեղափոխական խմբում: Ճեմարանում կազմակերպվել էին մի շարք ցույցեր: Ները: Ճեմարանում կազմակերպվել էին մի շարք ցույցեր: Ուսանողությունը պահանջում էր հիմնովին վերանայել ուսուց- ության մեջողները: Կոմիտասը լավ գիտակցում էր, որ տեսչի ման մեթոդները: Կոմիտասը լավ գիտակցում էր, որ տեսչի պաշտոնում կարգվողը չէր կարող ճեմարանի ուսանողության պաշտոնում

կյանքում նորմալ պայմաններ ստեղծել:

Մ. Տեր-Մովսիսյանից առաջ՝ 1905-1906 թթ. ճեմարանի տեսուչ է եղել Գ. Հովսեփյանը, որին 1906 թ. փետրվարի 15-ին կոմիտասը խնդրագրով դիմել է. «Արտասահման եմ գնալու անձնական անհրաժեշտ գործերով, խնդրեմ յայտնեցէք նորին Վեհափառութեան ի բարեհաճ տնօրինութիւն» («Տեղեկագիր», 1956, թիվ 9, էջ 107):

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆԻՆ (Էջ 203):

Տպագրվում է ըստ բնագրի ֆոտոպատճենի (ԳԱԹ, ՆՏՁ, անմշակ):

Նիկողայոս Տիգրանյան (1856-1951) – կոմպոզիտոր, հայկական ազգային դաշնամուրային երաժշտության հիմնադիրներից: Կոմիտասը բարձր է գնահատել նրա գործունեությունն ու մշակումները և իր կազմակերպած համերգների ծրադրերում մտցրել է հայկական պարերի նրա կատարած մշակումները:

1. Խոսքը Ն. Տիգրանյանի եղբոր՝ Սիրական Տիգրանյանի մասին է (տես աստ, Ա. Թոպանյանին ուղղված 28-րդ նամակը և Ա. Տիգրանյանի գրած նամակի ծան):

ՍԻՐԱԿԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻՆ (Էջ 204):

Տպագրվում է ըստ բնագրի ֆոտոպատճենի (ԳԱԹ, ՆՏՁ, անմշակ):

Սիրական Տիգրանյան (1877-1947) - իրավաբան, խմբագիր, մանկավարժ Ն. Տիգրանյանի եղբայրը:

1. Խոսքը հավանաբար հրապարակախոս Գևորգ Եվլանդուլյանի (1843-1901) մասին է:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ (Էջ 205):

Տպագրվում են ըստ բնագրերի (Մատենադարան, Տիրայրի ֆոնդ, թղթ. 132, վագ. 43 և 90): Հրապարակվել են՝ «Տեղեկագիր» 1956, թիվ 9, էջ 110-111:

Տիրայր Վարդապետ (Տեր-Հովհաննիսյան Մելիք-Մուշկամբարյան Տիգրան. 1867-1956)-բանասեր, ճեռագրագետ, թարգ-

մանիչ, Հոգևոր գործիչ: 1890-ից՝ էջմիածնի միաբանության անդամ: 1895 թ. Տիրայր վարդապետը եղել է Պետերբուրգի հայկական եկեղեցու Հոգևոր խորհրդի անդամ: Այդ թվականի Հոկտեմբերի 14-ին Կոմիտասը նրան գրել է մի նամակ (բնագիրը հայտնի չէ), ցանկություն հայտնելով որոշ ժամանակ աշխատելու Պետերբուրգում (տես «Տեղեկագիր», 1956, թիվ 9, էջ 105):

1. 1910 թ. Սոլքոնի համալսարանն ավարտելուց հետո Տիրայր վարդապետը միաբանակ գործել է Քիչնեռում Բեսարաբիայի հայոց թեմում:

2. Կոմիտասը 1911 թ. օգոստոսին մեկնել է Ֆրանսիա և Սեն-Մալո քաղաքում Հյուրընկալվել է Համբարձում Մելքիքյանի տանը: Տիրայր վարդապետին Հ. Մելքիքյանի գրած նամակի վերջում էլ Կոմիտասը գրել է սույն երկտողը:

Կ. ՊՈՂԾԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ

ՓՈԽԱՆՈՐԴԱՐԱՆԻՆ (Էջ 207)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ԳԿՁ, անմշակ):
ՍՊՐՈՒՅ ԳԱՅՐԱՆԻ ՎԱՐԴԱՐԱՆԻ

1 (Էջ 207)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՔՖ, 833): Այս և Հաջորդ չորս նամակները գրված են բացիկների վրա: 1-ին և 3-րդ նամակները հրապարակվել են «Սովետական արվեստ» ամսագրում (1962, թիվ 10, էջ 52):

Սարգիս Քամալյան (1860-1934) – բանահավաք, գրող, թարգմանիչ, մանկավարդ: 1898-1903 թթ. ուսանել է Գերմանիայում:

1. 1901 թ. ամռան սկզբին Կոմիտասը ելույթ է ունեցել Գերմանիայի հայ ուսանողական կրթական ժողովի անդրանիկ նիստին՝ զեկուցելով հայ ժողովրդական երգերի մասին՝ միաժամանակ կատարելով մի շարք երգեր:

2 (Էջ 208)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՔՖ, 830): Բացիկի

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՔՖ, 830): Բացիկի

վերջում այլ ձեռագրով՝ լատինատառ դժվարընթեռնելի նախա-
դասություն և ստորագրություն:

3 (Էջ 208)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՔՖ, 829):

1. 1901 թ. հուլիսի 15-ին Կոմիտասը տեսակցել է
Փրանսիացի «Վարպետներ և երաժշտասէրներ» Սեն-Սանսի, Շ.
Պորտի, Դյուլվալի և Պ. Օբրիի հետ, որոնք հիացել են Հայ մեծ
երգահանի ծրագրերով (տես «Անահիտ», 1901, թիվ 6-7, էջ
144):

4 (Էջ 208)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՔՖ, 831):

5 (Էջ 209)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՔՖ, 832):

6 (Էջ 209)

Տպագրվում է ըստ բնագրի (ԳԱԹ, ՍՔՖ, 828):

1. Խոսքը «Հազար ու մի խաղ» երգարանի առաջին հատորի
մասին է:

ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆԵԱՆԻՆ (Էջ 211)

Տպագրվում են ըստ բնագրերի (ԿՖ, 1701-1702, ԳԿՖ,
անմշակ): 3-րդ և 5-րդ նամակները հրապարակվել են «Շողա-
կաթ» տարեգրում (1970, էջ 15-16):

Մաղաքիա Օրմանյան (1841-1918) – պատմաբան, բանա-
սեր, Կ. Պոլսի պատրիարք (1896-1908):

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- Արեղիսան Մանուկ 63,145,199
Աղամեան քորեր
(Հեղինէ և Եւգինէ) 125
Ակայեան Ստեփան 15
Անահիտ (Անահիտիկ) 198
Աշճեան Սիսոակ 15,122
Աստղիկ 195
Աստուածատրեան Ասկարեանց
Կարապետ 197
Ատոմ 93
Արազեան 139
Արմաջու Համբարձում - տես
Զերչեան Համբարձում
Արմենակ - տես Շահմուրադեան
Արմենակ
Արմենուհի - տես Բարայեան
Արմենուհի
Արշարունի Յովհաննէս 18
Բաբամեան Անդրուշ 20
Բաբայեան Աւետիք 97
Բաբայեան Արմենուհի 32,35,36,50,51
Բաբայեան Մարգարիտ 20,21-23,
26-30,32,35,36, 38-43,45,47,50,
51-54,56,152,160
Բաբայեան Շուշիկ 22,26,30,32,34-
36,38,41,50,51,55,160
Բաբայեան Սոֆիե 56
Բաբդէս 180
Բաբկէն Վարդապետ 57
Bastin (Բաստեն) 35
Bellerman (Բելերման) 107,109,111
Բենիկ - տես Եղիազարեան Բենիկ
Բերբերեան Մինստ 59,171,172
Բժշկեան Արամ 128,131
Բրուտոս 94
Գարակէօզեան Եղուարդ 122
Գարեգին (սարկաւագ, վարդապետ) -
տես Յովհաննէս Գարեգին
Գարիք, Գարիքեան Օննիկ 47,176
Գաւանող (Գաւանոզեան) - տես
Ղաւանոզեան Խակուհի
Գէորգ արքեպիսկոպոս -
տես Սուրէխնեան Գէորգ
Գէորգ Դ կաթողիկոս 187
Գոհար 27
Գրիգոր Նարեկացի 145
Գեւօ 170,176,192
Դափիդօվ Սաշա 27
Demets E. 163,165
Դուրեան Եղիշէ 190
Եգինիկ 210
Եկմալեան Մակար 76,97-99,132-135
Եղիազարեան Բենիկ 59,180,181
Ենգիբարեան Հովհանիմէ 62
Երամեան Լեռն 198
Երեմիա Եպիսկոպոս 181
Երէցեան Միքայէլ 93
Երուանդ Վարդապետ -
տես Տեր-Մինասեան Երուանդ
Եւանգուլեանց Գեւորգ 205
Զօհրապեան Յուսիկ 97,100, 172,177,
189,210

- Էդգար - տես Շահին Էդգար
 Endy (Էնդի Վենսան դը) 16
 Էպիկեան Աբրահամ 89

 Թաշճեան Նիկողայոս 131
 Թերլեմեզեան Փանոս 51
 Թոքաթլեան Գրիգոր 119
 Թումանեան Մարիամ 62,64,65,68
 Թումանեան Ցովհանէս 62,66,68,69

 Joachim (Յոախիմ Յովեֆ) 99

 Իզմիրիեան Մատթէոս 70,72,74,75,83,
 173,175
 Իշխան 165-167
 Իսկուկի, Իսկուչի - տես
 Ղաւանողեան Իսկուչի
 Իսմայիլ Ճէնան պէյ - տես
 Ճէնան Իսմայիլ
 Իփէկեան Գասպար 166

 Լալուա Լուի (Lalois) 22,30,32,35,36,
 47,50,51,55,86
 Լեպսիոս 93
 Լիպարիտ 69
 Լիսիցեան Ստեփան 67
 Լուսիկ (Լոյս) - տես Լալուա Լուի
 Լոռիս Մելիքով -
 տես Մելիքով Լոռիս
 Լեռն 88
 Լեռնեան Գարեգին 86-89

 Խաչատրեան Գարեգին 89
 Խորէն Էֆէնտի - տես
 Խորէն Խորէն
 Խրիմեան Խորէն 119,210

 Խրիմեան Մկրտիչ 60,91,99,119,177,
 178,181

 Կարագեան 171
 Կարախիւմեան Ներսէս 171
 Կարաւ-Մուռզա Քրիստափոր 147
 Կարավետ - տես
 Տէր-Մկրտչեան Կարավետ
 Karapetian (Կարապետեան)
 Կէվէք 170
 Կիւլինէ - տես Սողոմոնեան Կիւլինէ
 Կիւրեղ - տես Սրապեան Կիւրեղ
 Կոստանեան Կարապետ 93,95-99,101,
 103,106,107,110,113-117,165
 Կոստանեան Տիրուհի 100,102,105,
 107,108,112,115
 Կորգանեան Բարսեղ 118
 Կորիւն 119

 Համազասպ 98
 Համբարձում - տես
 Մելիքեան Համբարձում
 Հարէնց Աստուածատուր 15,122
 Հեքիմեան Մատթէոս 206
 Հեքիմեան Ստեփան 206
 Հոփիսիկ - տես
 Ենդիրարեան Հոփիսիմէ

 Համբարեան Ն. 64
 Հաւանողեան Իսկուչի 43,49,52,55
 Հեւոնդ Գարդապետ 195

 Ճէմէլ Փաշա 190
 Ճէնան Իսմայիլ 123

 Մագսուտեան Մեսրոպ 150

- Մալիզեան Վահան 122
 Մալումեան Խաչատրուր 164,165
 Մայիլեան Անտօն 124-126
 Մանթաշեան Ալեքսանդր 21, 105, 113,
 138,155,158,160
 Մանթաշեան Դարիա 140,179
 Մանկունի Վահրամ 63,126,132
 Մաննիկ - տես Պերպերեան Մաննիկ
 Մանուէլեան Երուանդ 170,176,192
 Մելիքեան Արմինէ 137
 Մելիքեան Համբարձում 27,166,206
 Մելիքեան Սպիրիդոն 36,138,139, 169
 Մելիք-Հայկագեան 164
 Մելիքով Լոռիս 187
 Մեսրոպ - տես Սմբատեան Մեսրոպ
 Մեսրոպ 87
 Միասնիկեան Ալեքսանդր 140
 Մկրտիչ - տես Խրիմեան Մկրտիչ
 Մովսէս Խորենացի 176
 Մովսիսիսեան Յուսիկ 172,181,182
 Մութափեանց Յովհաննէս 141
 Մուղուսեան Յովակիմ 160,166,167
 Մուրադբեգեան (Խորին Ա) 180

 Ցակոր 142
 Ցակորեան Գրիգորիկ - տես
 Քարաօղանեան-Ցակորեան
 Գրիգորիկ
 Ցակորեան Երուանդ 143,144
 Ցակորեան Մարթէն 142
 Ցովակիմեան 166,170,176
 Ցովհաննիսեան Ցովհաննէս 35,88,
 111,120,121,180
 Ցովսեփեան Գալեգին 34,59,172, 177,
 179,189
 Ցուսիկ - տես Զօհրապեան Ցուսիկ

Ցուսիկ արքեպիսկոպոս -
 տես Մովսիսեան Ցուսիկ

 Նազարեանց Տիգրան 63
 Նաբրանդեան Մարտիրոս 165
 Նալբանդեան Տիգրան 48
 Նահապեան սրբազն - տես
 Նահապետ Արշակ
 (Նահապետ)
 Նահապետեան Արշակ (Նահապետ) 117
 Ներսէս Շնորհալի 145
 Ներսէս սարկաւագ 209
 Նիկոլէտտ 86
 Նիկոլ 198
 Նորայր 166.

 Շահին Եղիար 176,192
 Շահ-Մուրադ - տես Շահմուրադեան
 Արմենակ
 Շահմուրադեան Արմենակ 49,51,54
 55,123,138,150,153,155,160,
 163,164,166,168,170,176,182
 Շանթ Լեւոն 67
 Շարլ - տես Քարենիկ Շառլ
 Շերիճեան 165
 Շէքպիր 35
 Schmidt Richard (Շմիդտ Ռիխարդ)
 60,101,106,108,109,111
 Strauss (Շտրաուս) 205

 Զերշեան Համբարձում 146
 Զէօրէքչեան Գէորգ 59
 Զօպանեան Արշակ 29,53,117, 138,
 144,148,160-166,169,170,172,
 177,178,183,184,188,191,192

- Պալեան Տրդատ 57,73
 Պապի 34,35
 Պետրոս 98,192
 Perier J. (Պերիէ) 35
 Պերպերեան Մաննիկ 47,55
 Պոյաճեան Բիւզանդ 147
 Radecke (Ռադեկ) 100
 Սաթիկ 139
 Սամուէլ Անեցի 105
 Սիրանուչ 193
 Սմբատեան Մեսրոպ 195
 Սողոմոնեան Կիւլինէ 211-213
 Staal (Ստաալ) 28,29,163
 Ստամպուցեան Մարինա 197
 Ստեփան - տես Հեքիմեան Ստեփան
 Ստեփան սարկաւագ - տես
 Մելքեան Սպիրիդոն
 Սրապեան Կիւրեղ 197
 Սուլքինեան Գէորգ 59,97,172,177,181
 Սուլքիս արքեպիսկոպոս 22
 Վագներ Ոլխարդ 50,166
 Վահագն 172
 Վաղինակ 144
 Վարդուկ 62
 Վերդեան Գ. 125
 Վերդի Զուզեպէ 50
 Վուամշապուհ - տես
 Քիպարեան Վուամշապուհ
 Վրացեան Վառիկօ 198
- Տայեան Ղեւոնդ 199,200
 Տէր-Ցովհաննիսեան Գաբրիէլ - տես
 տես Քաջբերունի առ մասնաւութէ
 Տէր-Մինասեան Երուանդ 172,177,180
 Տէր-Մկրտչեան Կարապետ 99,105,
 181,189
 Տէր-Մովսիսեան Մեսրոպ 180,182,202
 Տիգրանեան Նիկողայոս 203
 Տիգրանեան Սիրական 179,180,182,
 203,204
 Տիրայը վարդապետ 205,206
 Տիրուհի - տես Կոստամեան Տիրուհի
 Փանոս - տես Թերլեմեզեան Փանոս
 Փոլադ Հրանուչ 52
 Փոլար 176
 Քամալեան Սարգս 207-209
 Քաջբերունի 117,165
 Քարաօլանեան - տես Արքանեան
 Յակոբեան Գրիգորիկ 211-213
 Քարքօնէլ Շառլ 47,50,51
 Քիպարեան Վուամշապուհ 148,155
 Քոչար 89
- Օբրի Պիեռ 20,21,149,152,155,157
 Օրմանեան Մաղաքիա 173,211,212
- Ֆաւր Լէօպոլդ 165
 Fetis 97,99
 Fleischer (Ֆլյաշեր) 61,107-111,115
 Friedländer (Ֆրիդլանդեր) 108-110
 Ֆրայտ 160

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թանգարանի կողմից	7
Կոմիտասի նամակները - Յ. Բեքարյան	8
Ստեփան Ակայեանին	.15
Աշակերտներին	.15
Յովհաննէս Արշարունուն	.18
Անդրուշ Բաբամեանին	.20
Մարգարիտ Բաբայեանին	.20
Սոֆեա Բաբայեանին	.56
Բաբկէն վարդապէտին	.57
Մինաս Բերքերեանին	.59
Գէորգ արքեալիսկոպոսին	.59
Գէորգեան Հոգեւոր ճեմարանի Վարչութեանը	.60
Հոփիսիմէ Ենգիբարեանին	.62
Մարիամ Թումանեանին	.62
Յովհաննէս Թումանեանին	.66
Մատթէոս Իզմիրեանին	.70
Լալուաներին	.86
Գարեգին Լեւոնեանին	.86
Գարեգին Խաչատրեանին	.89
Մկրտիչ Խրիմեանին	.91
Կարապետ Կոստանեանին	.93
Բարսեղ Կորդանեանին	.118
Կորիւնին	.119
Հայոց Դրամատիկական Ընկերութեան	.120
Վարչութեանը	.121
«Հովհան»ի խմբագրութեանը	.122
Վահան Մալէզեանին	.124
Անտօն Մայիլեանին	.126
Վահրամ Մանկունուն	.137
Արմինէ Մելիքեանին	.139

Ապիրիդոն Մելիքեանին	138
Ալեքսանդր Միասնիկեանին	140
Յովհաննէս Մութմափեանցին	141
Յակոբին	142
Երուանդ Յակոբեանին	143
Արշակ Զօմանեանին	144
Պետրոսին	192
Արքանոյշին	193
Մեսրոպ Սմբատեանին	195
Մարինա Ստամպոլցեանին	197
Կիւրեղ Սրապեանին	197
Վառիկօ Վրացեանին	198
Ղեւոնդ Տայեանին	199
Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեանին	202
Նիկողայոս Տիգրանեանին	203
Արքական Տիգրանեանին	204
Տիրայը Վարդապետին	205
Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի	
Գոխանորդարամին	207
Սարգիս Քամալեանին	207
Մաղաքիա Օրմանեանին	211
Ծանոթագրություններ	214
Անվանացանկ	265

KOMITAS
LETTERS

ԿՈՄԻՏԱՍ
ՆԱՄԱԿՆԵՐ

Դամակարգչային էջադրումը՝
Գոհար Դովիաննիսյանի

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:
Երևան, Տերյան 44: